Ֆակուլտետի ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
Բանասիրական ֆակուլտետը շարունակում է հետևողական աշխատանքներ իրականացնել բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման գործընթացի կատարելագործման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման բարձրացման, կրթական հաստատությունների ու գործատուների հետ համագործակցության, արդի գիտական հետազոտությունների իրականացման, կրթական գործընթացում ՏՀՏ-ի ներդրման և կրթական աշխատանքների բարելավման, միջազգային կապերի ընդլայնման ուղղություններով: Ֆակուլտետի առջև ծառացած խնդիրները նպատակային և հետևողական աշխատանքներ են պահանջում. Ապահովել ֆակուլտետի կրթական ծրագրերի որակը՝ համալսարանում իրականացվող բարեփոխումներին և արդի կրթական պահանջներին համահունչ: Ապահովել սովորողների ներգրավվածությունը ֆակուլտետի գործունեության տարբեր ոլորտներում: Նպաստել ֆակուլտետի դասախոսական կազմի մասնագիտական, հետազոտական, ստեղծագործական նախաձեռնության աճին, ամբիոնների գիտահետազոտական գործունեությանը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ: Ընդլայնել ֆակուլտետի արտաքին կապերը և նպաստել միջազգային համագործակցության զարգացմանը: Պատրաստել կոմպետենտ մասնագետներ և մատուցել որակյալ բարձրագույն մասնագիտական կրթական ծառայություն, դասավանդման ժամանակակից մոտեցումների, մեթոդների, ուսուցման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման ընդլայնում ու զարգացում, համալսարան-գործատու, համալսարան-կրթական հաստատություն, համալսարան-ծնողական համայնք համագործակցության խթանում:
Արդեն երկու տարի է՝ ֆակուլտետում ստեղծված է Բանասիրական ֆակուլտետը ներկայացնող (գովազդող) խումբ դասախոսների և ուսանողների մասնակցությամբ՝ դոցենտ Ռուզան Դոլուխանյանի ղեկավարությամբ: Աշխատանքային խումբը գրաֆիկի համաձայն լինում է ուսումնական հաստատություններում, մարզպետարանների կրթության և մշակույթի բաժիններում, ուսումնասիրում արտաքին շահակիցների կարիքները:Նրանց հրավիրում ենք բանասիրական ֆակուլտետ՝ մասնակցելու տարաբնույթ միջոցառումների՝ գիտաժողովներ, կլոր սեղաններ, աշխատանքներ ֆակուլտետի գիտխորհրդում: Աշակերտական խորհուրդները համագործակցում են ֆակուլտետի ուսխորհրդի հետ, մասնակցում տարբեր նախաձեռնությունների:
Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:
Բանասիրական ֆակուլտետի ուսումնառողներն ու դասավանդողները գործուն մասնակցություն ունեն ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացին: Ֆակուլտետի ուսանողները մասնակցում են տարբեր միջոցառումների՝ գիտաժաղովներ, ծառատունկեր, գրքահավաքներ, լինում են ուսումնական մի շարք հաստատություններում, կամավորական աշխատանքներ իրականացնում դպրոցներում, մանկական կենտրոններում: Մի քանի ուսանողներ կամավորական աշխատանքներ են իրականացնում ՀՊՄՀ հիմնական դպրոցում, Էջմիածնի Էօրնեկեան վարժարանում /առկա են տնօրենների գրությունները/:

Դասագործընթացին զուգահեռ՝ դասավանդողները պարբերաբար լինում են դպրոցներում, իրականացնում գիտափորձեր, ղեկավարում ավարտական և մագիստրոսական աշխատանքներ, հրատարակում ուսումնական նյութեր:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, որքանով դրանք համապատասխանում մասնագիտական որակավորմանը ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:
Հայտնի է, որ բուհի դասախոսներից պահանջվում է հոդվածներով հանդես գալ ակադեմիական հանդեսներում և միջազգային շտեմարաններում: Այս ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել: Պրոֆ. պրոֆ. Դոլուխանյանը և Դանիելյանը, դոց. Ա.Գալստյանը Սերբիայում հրատարակել են հոդվածներ, պրոֆ. Խաչատրյանը РИНЦ միջազգային շտեմարանում հրատարակել է 3 հոդված, Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի դասախոսներ Գայանե Խալաթյանը, Սուսաննա Ամիրջանյանը, Լ. Գալստյանը, Սոֆի Թորգոմյանը, և Ռուբինա Հարությունյանը 1-ական հոդված: Ֆակուլտետի դասախոսները մասնակցել են գիտաժողովների, որոնց նյութերը տպագրվել են տարբեր պարբերականներում: Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Դոլուխանյանն ունի 34 միավոր հրապարակում, այդ թվում միջազգային հանդեսներում և ակադեմիական հրատարակություններում: Ամբիոնը հրատարակել է ժողովածու՝ նվիրված Վ.Բրյուսովի կազմած “Поэзия Армении” ժողովածուի լույս տեսնելու 100-ամյակին և ՀՀ անկախության 25-ամյակին: Ամբիոնի դասախոսների հոդվածների քանակը 47-ն է: Դեկտեմբերին Ա. Դոլուխանյանի թարգմանությամբ լույս է տեսել Սոնա Վայցի «Խոստացա, ես կպատմեմ» հուշագրությունը: Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներն ունեն 29 միավոր հրապարակում: Պրոֆ. Դավթյանը հաշվետու ժամանակահատվածում հրատարակել է 4 գիրք: Պրոֆ. պրոֆ. Լ. Խաչատրյանը և Էդ. Մկրտչյանը հրատարակել են <<Հայոց լեզվի պատմություն>> բուհական դասագիրքը: Լ. Խաչատրյանը զեկուցմամբ հանդես է եկել Լոմոնոսովի անվան համալսարանում: Տպագրվել է դոց.դոց. Գայանե Խալաթյանի, Ռուզան Ջուլֆայանի և Սուսաննա Ղարիբյանի կազմած <<Ձևաբանություն>> դասընթացի ծրագիրը՝ նախատեսված բակալավրի կրթական ծրագրի առկա և հեռակա համակարգերի համար: Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հրատարակության է երաշխավորել ասիստենտ Լիլիթ Ավետիսյանի և դոցենտ Մանուշակ Սողոմոնյանի <<Հայոց լեզվի գործնական դասընթաց. հնչյունաբանություն>> ուսումնական ձեռնարկը բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Ֆակուլտետը կազմակերպել է թեկնածուական ատենախոսությունների նախապաշտպանություններ, տվել է առաջատար կազմակերպության կարծիք 4 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսության: Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել էր մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել էր մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:
Բանասիրական ֆակուլտետի նախաձեռնությամբ տեսահաղորդակցություն է հաստատվել չեռնոգորաբնակ սերբ անվանի գիտնականներ դոկտոր, պրոֆեսորներ Ելիցա Ստոյանովիչի և Բուդիմիր Ալեքսիչի հետ: Վերջիններս դասավանդում է Նիկշիչի համալսարանի բանասիրության ֆակուլտետում: Սերբերի համար այդ դժվարին պայմաններում աշխատող պրոֆեսորները ՀՊՄՀ դասախոսներին և ապագա բանասերներին ներկայացրին սերբերենի զարգացման ուղիները՝ սկսած 12-րդ դարից մինչև կիրիլատառ սերբալեզու առաջին գրքի հրատարակումը՝ ներառյալ Վուկ Կարաջիչի լեզվական բարեփոխումները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակական համագործակցության: Հետադարձ կապը չուշացավ. տեսակապի միջոցով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանն օտար լեզվով սերբական լսարանի առաջ հանդես եկավ հինավուրց հայոց լեզվի, գրականության ու մշակույթի մասին դասախոսությամբ, որն ուղեկցվեց նաև հետաքրքիր սահիկահանդեսով: Ներկաներին ողջունեց Չեռնոգորիայի Ցետինյե քաղաքի Սուրբ Պետրոս Ցետինսկու հաստատության ռեկտոր Գաիկո Պետրովիչը: Ավարտին սերբ ուսանողները կատարեցին հոգևոր երգեր: «Գրական թերթ»-ի աշխատակազմի հետ արդեն ավանդական դարձած հանդիպումը, որը կազմակերպել էր Հայ հին և միջնադարյան գրականության և հրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը: Թերթի անցած ճանապարհի, խորագրերի, մատուցվող նյութերի մասին ներկայացրեց ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Դոլուխանյանը: Բանասիրական ֆակուլտետի ուսանողների զգալի մասը «Գրական թերթի» հավատարիմ ընթերցողներն են: Նրանք համոզված են, որ թերթը ծառայում է երիտասարդների գրական մտածողությանը, որը բացահայտում է երևույթների ներքին, էական կապերը, տալիս բանիմացություն, զարգացնում է սերնդի գրական ճաշակը, օգտակար տեղեկատվություն տալիս ժամանակի գրական ու մշակութային դեմքերի, իրադարձությունների մասին: Մայիս ամսին ֆակուլտետը հյուրընկալել էր ՀՀ-ում Սերբիայի Հանրապետության պատվո հյուպատոս, գրող Բաբկեն Սիմոնյանին: Ուսանողների և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպման ընթացքում նա ներկայացրեց հայ և սերբ ժողովուրդների մասին իր մտորումները, երկու ժողովուրդների դարավոր հարաբերությունները: Խոսելով Սերբիայում դեռ 13-րդ դարում ձևավորված հայկական գաղթօջախի, հայ և սերբ ժողովուրդների նմանությունների մասին՝ բանախոսը ափսոսանքով նկատեց, որ երկուսն էլ տառապել են նույն թշնամուց. «Ես հանդիպումներում հաճախ եմ ասում՝ Կոսովոն սերբական Արարատն է»: Հյուպատոսը խոսեց նաև տարբեր բնագավառներում հայ և սերբ ժողովուրդների համագործակցության մասին և ընդգծեց, որ ամենամեծ շեշտադրումը կատարվում է մշակույթների երկխոսության առումով: Հունիսի 26-ին հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի նախաձեռնությամբ ֆակուլտետում կայացավ հանրապետական գիտաժողով նվիրված պրոֆ. Վ. Քոսյանի ծննդյան 90-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էին տարբեր բուհերի ներկայացուցիչներ, հյուրեր հարազատ ծննդավայրից, Քոսյանի ընտանիքի անդամները: Ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվեց Վաղարշակ Քոսյանի անունով:

Գիտական նստաշրջանն ընթացավ 3 մասնաճյուղերով, որոնց ընթացքում ներկայացվեցին մասնագիտական հետաքրքիր զեկուցումներ, որոնց նյութերը պրոֆ. Վազգեն Համբարձումյանի նախաձեռնությամբ առաջիկայում կհրատարակվեն: Նոյեմբեր ամսին ֆակուլտետում տեղի ունեցավ գիտաժողով նվիրված հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման հիմնախնդիրներին, որին մասնակցում էին խատվիրակներ Արցախից, Վանաձորից, ՀՀ կրթության ազգային ինստիտուտից, տարակարգ ունեղող ուսուցիչներ հանրապետության տարբեր դպրոցներից Ֆակուլտետի դասախոսները տարվա ընթացքում մասնակցել են տարբեր գիտաժողովների:
Ուսանողների գնահատման համակարգը ֆակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:
Հաշվետու ժամանակահատվածում վերլուծվել են ուսանողների գնահատման համակարգը, մեթոդներն ու չափանիշները: Այդպիսի քննարկումներ տեղի են ունեցել ֆակուլտետի բոլոր ամբիոններում: Վերանայվել է միջանկյալ քննությունների հարցատոմսերի կառուցվածքը՝ այն համապատասխանեցնելով ուսումնառողների գիտելիքների պաշարին: Նշվել է այն հանգամանքը, որ տեսական և գործնական հարցադրումները պիտի ներառվել հայոց լեզվի առաջին միջանկյալ քննության հարցատոմսում թելադրություն բաղադրիչի հետ միասին: Ամբիոններում մշակվել են գնահատման նոր գործիքներ՝ աշխատանքների վերջնարդյուքը ճիշտ չափելու համար:
Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու և ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Ֆակուլտետի մագիստրատուրայում սովորում է Լյու Կեսինը, որը Չինաստանի Հանրապետության քաղաքացի է, և ավարտական աշախատանքը իրացնում է հայոց լեզու առարկայից: Հայոց լեզվի ամբիոնում իրականացվում են աշխատանքներ՝ պատրաստելու մասնագետներ /դասախոսների շրջանից/ հայոց լեզուն իբրև երկրորդ լեզու դասավանդելու համար: Այս գործընթացին կարող են ներգրավվել արտասահմանյան ուսանողներ, ովքեր ցանկություն ունեն սովորելու հայոց լեզու, հատկապես որ ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում ունեցել է այդպիսի փորձ: Փետրվար-մայիս ամիսներին ֆակուլտետում հայոց լեզու են ուսումնասիրել Հունգարիայի Պիտեր Պազմանի համալսարանի ուսանողներ Դանիել Պիտեր Լանգերը և Բալաշ Յանչիկը: Ֆակուլտետում այս ուստարվանից դասավանդվում է «Գիտական գրավոր խոսք» առարկան, որը հնարավորություն կտա ուսանողներին մոտիկից ծանոթանալու գիտական խոսքին, նրա կառուցվածքային հիմքերին, ինչպես նաև ակադեմիական ազնվության դրույթներին:
Ֆակուլտետում հաշվետու տարում իրակակացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:
Կրթական ծրագրերը պարբերաբար ներկայացվում են դպրոցների մանկավարժական կոլեկտիվներին: Նրանց կողմից կատարված շահագրգիռ քննարկումների արդյունքների որոշակի դրույթներ ներառվում են համապատասխան ծրագրայիին փաթեթում: Ֆակուլտետում աշխատանքներ են տարվում ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրման ուղղությամբ:Այս ոլորտում ամբիոնների կողմից մշակվում են մեթոդներ և գործիքներ կարիքների ուսումնասիրման համար: Նրանց համար նկազմակերպվում են գիտական սեմինարներ, կլոր սեղաններ, վերապատրաստումներ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:						
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:						
Ուսանողների թիվը 543		1 կուրս	2կ	3կ	4կ	5կ
Բակալավրի 417	առկա 265	77	76	60	52	
	հեռակա 152	34	24	17	29	48
Մագիստրոսի 126	առկա 38	23	15			
	հեռակա 88	32	28	28		
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով						
Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	543				
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	7.3/58				
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	10.6/40				
Անբավարար առաջադիմություն:						
Ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում հաշվետու տարում:						
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը						
	Ուսումնառողներ	22				
	Բակալավր	10				
	Մագիստրոս	12				

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը

Շիրակի պետական համալսարանի ուսանողական գիտաժողով

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտաժողով

Գորիսի պետական համալսարանի ուսանողական գիտաժողով

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա

Ուսանողների հետ տարվող ուսումնագիտական աշխատանքները միտված են մասնագիտական կրթության որակի բարելավմանը: Այս նպատակն իրականացնելու համար ֆակուլտետում ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի հետ համատեղ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

աջակցել ուսանողների ուսումնական գործունեությանը,

նպաստել ուսումնական գործունեության նկատմամբ նրանց հետաքրքրության խորացմանը,

խրախուսել ուսանողների ուսումնական և գիտական գործունեությունը,

ձևավորել հետազոտական ինքնուրույն գործունեությանը միտված հմտություններ և կարողություններ:

Այս նպատակով պարբերաբար կատարվում է ուսանողների ուսումնական և գիտական պահանջների ուսումնասիրություն, կազմակերպվում են սեմինար-քննարկումներ ուսանողների և դասախոսների համատեղ մասնակցությամբ, վեր հանվում խնդիրները և հետամուտ լինում դրանց հաղթահարմանը:

Հաշվետու տարում Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողները կազմակերպել էին հրաշափառ տոնին նվիրված ցերեկույթ:

Այն իր ներկայությամբ պատվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քահանա տեր Մատաթիա Գասպարյանը: Տեր Հայրն ուսանողներին փոխանցեց Սուրբ Հարության ավետիսը և հորդորեց նրանց մաշտոցյան վառ լույսը միշտ անմար պահել: Ուսանողները պատրաստել էին

սահիկահանդես: Ուսանողների կողմից ներկայացվեց նաև, թե ինչպես են նշում Զատկի տոնը արտերկրում: Ցերեկույթի ընթացքում ուսանողների կատարմամբ հնչեցին հոգևոր երգեր, ժողովրդական խաղիկներ: Ապրիլի 15-ին ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողները մասնակցեցին Երևանի քաղաքապետարանի կազմակերպած համաքաղաքային շաբաթօրյակին: Թեքեյան մշակութային կենտրոնի հարակից աջ լանջին մեր ֆակուլտետի 20 կամավորներ տնկեցին 20 հացենի, այնուհետև ուսանողները շաբաթօրյակը շարունակեցին Օղակաձև այգում՝ ջանասիրաբար մաքրելով Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարակից տարածքները: Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ուսանողները մասնակցել են տարբեր գիտաժողովների: Նախ ֆակուլտետի տասը ուսանողներ մասնակցեցին Սկզբնական կրթության ֆակուլտետում կայացած գիտաժողովին; Այնուհետև Շիրակի պետական համալսարանի ուսանողական հանրապետական գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան բանասիրական ֆակուլտետի 3 ուսանողներ: Մայիս ամսին Բանասիրական ֆակուլտետում կայացավ ուսանողական գիտական կոնֆերանս, որին մասնակացում էին Մանկավարժական համալսարանի տարբեր ֆակուլտետների և այլ բուհերի ուսանողներ: Իրենց զեկուցումներում ուսանողները շեշտադրել էին տեսական տարբեր հիմնահարցեր, ինչպես նաև հայոց լեզվի և գրականության դասաժամին նոր մեթոդների կիրառման հիմնախնդիրներ. դրանք նախապես կիրառվել են պրակտիկայի ընթացքում, ապա մշակվելով ղեկավարի աջակցությամբ՝ ներկայացվել կոնֆերանսին:

Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը						
	Տպագրված աշխատանք					
1	Աննա Սարգսյան					
2	Էդգար Ապրեսյան					
3	Աստղիկ Բոյաջյան					

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ֆակուլտետում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության հստակ մոտեցումներ համապատասխան ՀՊՄՀ քաղաքականությանը:
Ֆակուլտետում աշխատում են 9 դոկտոր, 21 թեկնածու, որոնք հանրապետությունում հայտնի են հանրակրթական դպրոցների դասագրքաստեղծ գործունեությամբ: Բավական է նշել, որ դպրոցների մայրենիի դասագրքերի և ուսումնաօժանդակ նյութերի որոշ մասը հեղինակում են ֆակուլտետի դասախոսները
Հաշվետու տարում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման աշխատանքները ֆակուլտետում:
Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի դասախոսները հետևում են իրենց մասնագիտական որակների զարգացմանը: Ռեկտորատի կազմակերպած Մեդագրագիտություն վերապատրաստման դասընթացին (2017թ. մարտ) մասնակցել են ֆակուլտետի 3 ամբիոնների թվով 12 դասախոսներ: Դեկտեմբեր ամսին կայացել է ֆակուլտետի թվով 20 դասախոսների մասնագիտական վերապատրաստումը, որը վարել են հանրապետութան լավագույն պրոֆեսորներն ու դոցենտները: Յուրաքանչյուր չորեքշաբթի ֆակուլտետի մեծ սրահում կազմակերպմում է ֆլեշ-մոբ, որին մասնակցում են բանասիրական և հարակից ֆակուլտետների ուսանողներ, դասախոսներ:

Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ֆակուլտետում հաշվետու տարում:
Classroom համակարգի ներդրման և արդյունավետության վերահսկման նպատակով ամբիոններում կազմակերպվել են սեմինարներ, որտեղ քննարկվել են նոր համակարգի կիրառման նրբություններն ու դժվարությունները, ձևակերպվել են առաջարկություններ, որոնք ներկայացվել են համալսարանի կրթության որակի ապահովման վարչություն: Շարունակական պրակտիկայի կազմակերպման, մեթոդական ուղղորդման բարելավման, գնահատման նոր համակարգի տեղայնացման նպատակով հստակեցվել են շարունակական պրակտիկայի գնահատման բաղադրիչները, չափելի գործիքները: Մշակվել են փորձարարարական հետազոտություններ ենթադրող առաջադրանքներ, ստեղծագործական բնույթի հանձնարարություններ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը համագործակցություն է իրականացրել Սերբիայի Ցետինե համալսարանի հետ: Տեսակապի միջոցով հաղորդակցություն է իրականացվել բանասիրական ֆակուլտետի ուսանողների և սերբ ուսանողների միջև: Սերբիայում հրատարակվել են բանասիրական ֆակուլտետի դասախոսների հոդվածները:
Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ֆակուլտետում ելույթ են ունեցել տեղական և միջազգային հաստատությունների պրոֆեսորներ: Վարպետության դասեր է կարդացել ԱՄՆ Օքսֆորտի համալսարանի պրոֆեսոր Հ. Չիլինկիրյանը:

Հայ հին եվ միջնադարյան գրականության եվ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հաշվետու տարում ունեցել է նպատակները ու խնդիրները իրականացնող կադրային ներուժ, գործել է կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, իրականացրել է դասախոսների ընտրության հստակ մոտեցումներ:
Ամբիոնում հաշվետու տարում յուրաքանչյուր կրթական ծրագրի առարկայի դասավանդման համար սահմանվել են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ: Բարձրացվել են դասավանդողների մասնագիտական որակները և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները: Կատարվել է ուսումնառողների արձագանքների ուսումնասիրում, դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Ամբիոնի բոլոր դասախոսները և մասնագետը հաշվետու տարում անցել են բուհի կազմակերպած որակավորման դասընթացները և ստացել հավաստագրերը: 2017 թվականին ամբիոնի չորս դասախոսներ մասնակցել են ամերիկյան Մեդիա դասընթացների ողջ ծրագրին և ստացել հավաստագրեր: Բոլոր դասախոսները դասավանդում են էլեկտրոնային նյութերի օգտագործումով ու ինտերակտիվ մեթոդներով, ակտիվ աշխատում են նաև classroom-հարթակում: Ամբիոնի վարիչ Ա.Դոլուխանյանը ապրիլ ամսվա վերջին շաբաթ օրը skype-ով դասախոսություն է կարդացել Չեռնոգորիայի Աստվածաբանական համալսարանի 4-րդ կուրսի ուսանողության համար: Ամբիոնում հաշվետու տարում յուրաքանչյուր առարկայի ծրագրին համապատասխան դասախոսը ըստ հատուկ պահանջների է կատարել իր գործը: Ուսումնական տարվա առաջին և

երկրորդ կիսամյակների համար նախապես մշակված դասալսումների գրաֆիկի համաձայն իրականացվել են դասալսումներ և քննարկումներ, որոնց պատկերն առկա է համապատասխան մատյանում: Դասավանդողների կատարելագործման մեխանիզմը նրանց գիտական պրոդուկցիան է և այն գրքերն ու հոդվածները, որոնք նրանք հրապարակել են:
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետու տարում ծրագրված գիտական և ուսումնական աշխատանքների ծավալն իրականացվել է: Դասախոսներն իրականացրել են ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը՝ ներգրավելով տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները, ապահովելով դասագործընթացի արդյունավետությունը: Դասագործընթացի արդյունավետությանը նպաստել են նաև դասախոսությունների ինտերակտիվ և բանավիճային մեթոդները, որոնք ապահովում են ուսանողների ակտիվ մասնակցությունը դասերին: Իրականացվել է հեռավար ուսուցում հեռակա ուսանողների և մագիստրոսների համար, որը տվել է որոշակի արդյունավետություն: Կատարված ուսումնական աշխատանքի արդյունավետությունը արտահայտվել է ուսանողների ակադեմիական գիտելիքների ձեռքբերման մեջ, կատարվել է գնահատականների վերլուծություն:
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում մշակվել են գնահատման նոր չափորոշիչներ ռուբրիկի տեսքով, որոնք ապահովում են ակադեմիական ազնվության մեխանիզմներ: Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի ողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է համապատասխան ներքոհիշյալ բաղադրիչների՝ Բաղադրիչ 1- 10% (հաճախում) Բաղադրիչ 2- 30% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 3- 30% (Միջանկյալ 2) Բաղադրիչ 4- 30% (ընթացիկ ստուգում. լսարանային (20%) + էլեկտրոնային (10%): Յուրաքանչյուր բաղադրիչի դիմաց նշված առավելագույն տոկոսը կարելի է հավաքել ծրագրային պահանջների շրջանակներում տվյալ կետի տակ ներկայացված պահանջները 100% -ով կատարելու դեպքում: Մինչև միջանկյալ ստուգումը ուսանողներին տրվել են հարցաշարեր, որոնք տեղադրվել են համալսարանի կայքում, Classroom հարթակում՝ հնարավորություն տալով ուսանողներին նախապես ծանոթանալ հարցաշարերին և գնահատման համակարգին՝ նպաստելով գնահատման թափանցիկությանը: Ընդհանրապես բուհում մշակված մոտեցումների համաձայն ամբիոնն աշխատում է ուսանողակենտրոն ուսուցման ձևերով: Դրան նպաստում է այն, որ ամբիոնի դասախոսները բուհի էլեկտրոնային պորտալի միջոցով կապ են հաստատում ուսանողների հետ, հանձնարարարաություններ տալիս և ստանում պատասխաններ, որոնք գնահատվում են: Ամբիոնն ունի յուրաքանչյուր դասախոսի մատյան, ուր գրանցվում է, թե քանի անգամ են նրանք հանդիպել ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ գրող ուսանողի հետ և ինչ են արել այդ հանդիպման ժամանակ:
2017-2018 ուս.տարում հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը ունեցել է 10 նիստեր, որոնցում առաջնահերթ են եղել ռեկտորատից ստացված բոլոր հանձնարարությունները, ինչպես նաև դեկանատի առաջադրանքները: Քննարկվել և հաստատվել են կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաները, ամբիոնի աշխատողների գիտահետազոտական պլանները, վերահաստատվել են առարկայական նկարագրերը, միջանկյալ և ամփոփիչ ստուգումների

հարցաշարերը, հաստատվել են հարցատոմսերը, քննարկվել են դասախոսությունների թարմացված փաթեթները, գործնական պարապմունքների առաջադրանքները, դպրոցներում ընթացող տարաբնույթ պրակտիկաների նախապատրաստումը, ընթացքը, վերահսկումը և արդյունքները, ամբիոնի կիսամյակային և տարեկան ուսումնամեթոդական և գիտական հաշվետվությունները, ամփոփվել են դասալսումների և դեպի դպրոցներ քարոզարշավների արդյունքները, հաստատվել են ՈՒԳԸ նստաշրջանի թեմաները, անցկացվել է ամբիոնի հայցորդների ատեստացիա: Ամբիոնի վարիչ Ա.Դոլուխանյանը անձամբ և բազմիցս եղել է բոլոր այն դպրոցներում, որոնցում ամբիոնի դասախոսների վեկավարությամբ ընթացել է պրակտիկան, զրուցել ուսանողների, ուսուցիչների, դպրոցի տնօրինության հետ, մանկավարժության մեթոդների վերաբերյալ դասախոսություն կարդացել ուսանողների համար, քննարկել առանձին դասեր: Այդ ամենը գրանցված է նաև այն ֆիլմաշարերում, որ պատրաստել են պրակտիկա անցած ուսանողները: Բոլոր տեսակի պրակտիկաների թղթապանակները պահվում են ամբիոնում:

Հաշվետու ուս.տարում ամբիոնը կազմակերպել է 2 ֆլեշմոբ, որոնց մասնակցել են թե՛ դասախոսները, և թե ուսանողները: Նոյեմբեր ամսին պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը ֆակուլտետում կարդացել է բաց դասախոսություն ուսանողների համար. դասախոսության արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստի ժամանակ /նոյեմբերի 22-ի նիստի արձանագրություն թիվ 4/:

Ամբիոնի վարիչը քարոզարշավի շրջանակներում ֆակուլտետի դեկան Ա.Գալստյանի և դոցենտներ Ռ.Դոլուխանյանի և Պ.Սահակյանի հետ այցելել է մարզային 9 դպրոցներ՝ տանելով ամբիոնի կողմից հրատարակած ուսումնական ծրագրեր, ժողովածուներ, մենագրություններ:

Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվում են դասախոսների հաշվետվությունները՝ կապված սեփական գիտական աշխատանքների և ուսանողների հետ կատարված աշխատանքների հետ: Ամբիոնի նիստերում քննարկվում են գիտաժողովների (ուսանողական և դասախոսական) կազմակերպման և անցկացման խնդիրները: Ամբիոնը հրատարակել է հոբելյանական երկու ժողովածու՝ նվիրված Վենետիկում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյակին և ֆակուլտետի լավագույն շրջանավարտներից ու ժամանակակից նշանավոր արձակագիր Գևորգ Դևրիկյանի ծննդյան 80-ամյակին և հայոց ազատամարտերի 100-ամյակներին, որոնք երաշխավորվել են ամբիոնի և ֆակուլտետի խորհրդի նիստերում: ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակել է պրոֆ. Ա. Դոլուխանյանի կենսամատենագիտությունը: Ամբիոնի նիստերում նախապատրաստվել են ամեն կիսամյակի քննությունները և հաստատվել հարցատոմսերը: Հունիս ամսին անցկացվել է արտագնա սեմինար Ամբերդում՝ “Պատմությունը և գրականությունը” թեմայով: Դեկտեմբերի 20-ին նախատեսվում է ամբիոնի երկրորդ սեմինարը՝ նվիրված հայ հին գրականության դասավանդման մեթոդիկայի խնդիրներին:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանոն	Մասնակ.	Մասնագ.	Ասիստ.	Դոցենտ	Պրոֆես.	Ավագ.	Ընդ-ում
Հաստիքային	4	1	1	4	4			5
Համատեղող								
Ժամավճարային								
Ընդամենը	4	1	1	4	4			5

ՊԴԱ-ի միջին տարիք	Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
			50				50

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին և համալսարանի կողմից ներկայացված ձևաչափին և համապատասխանում են որակի մեթոդական պահանջներին: ԱՈՒՄՓ-ները վերանայվել և վերահաստատվել են ամբիոնի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի նիստում (արձանագրություն №2): Ամբիոնը ունի դասավանդվող կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ: Փաթեթները ներբեռնված են համալսարանի կայքում: Նաև ստեղծված են տեսադասեր, շնորհանդեսներ, համապատասխան էլեկտրոնային բազա՝ դասերը արդյունավետ անցկացնելու համար՝ օգտագործելով համացանցի հնարավորությունները:Որպես լրացուցիչ նյութ տեղադրվում են տեսաֆիլմեր, ռադիո և հեռուստահաղորդումների ձայնագրություններ և այլն: Բոլոր առարկաներից անց են կացվել սեմինարներ: Այդ սեմինարները եղել են նաև բացատրական, լսվել են ուսանողների սեփական բացատրությունները՝ համապատասխան խնդիրների վերաբերյալ: Տե՛ս թեմատիկ փաթեթները, և, ամենակարևորը, կուրսերի մատյանները:
Յուրաքանչյուր դասախոս սահմանված ժամանակում ամբիոն է ներկայացնում առարկայական նկարագրերը՝ ըստ առանձին ֆակուլտետների: Առարկայական նկարագրերը, ընթացիկ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերը վերահաստատվում են ամբիոնի նիստում և ժամանակին տեղադրվում Classroom հարթակում: Հերթական լսարանային հանդիպումից առաջ տեղադրվում են դասախոսությունների փաթեթը, գործնական և գնահատվող առաջադրանքների հարցերը:
Բոլոր դասընթացների համար հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն ունի նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ, որոնք ամեն տարի թարմացվում ու նորացվում են:

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը

Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
									2

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2017 թվականին ամբիոնն ունեցել է իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն: 2016-2017 ուս.տարում ամբիոնը հրատարակել է. Աելիտա Դոլուխանյան- 32 հոդված,1 գիրք Լիլիթ Հովսեփյան – 5 հոդված, Ռուզան Դոլուխանյան – 3 հոդված, 1 մենագրություն Պարույր Սահակյան - 3 հոդված, Գայանե Մարդյան – 3 հոդված:

Ամբիոնի վարիչ Ա.Դոլուխանյանի մեկ հոդվածն անգլերենով լույս է տեսել Չեռնոգորիայում: Նա ապրիլ ամսվա վերջին շաբաթ օրը skype-ով դասախոսություն է կարդացել Չեռնոգորիայի Աստվածաբանական համալսարանի IV կուրսի ուսանողների համար: Ա.Դոլուխանյանի հրապարակումներից են՝ Великий урок нравственности. Этнокультурное значение французского перевода эпоса «Давид Сасунский», «Литературная Армения», N 2, 2017, стр.142-147, "The Theory of Vital Energy According to Well-Known Modern Armenian Writer", WISDOM, 2017, №1, p.77-80, Victor Lánglois sur Mkhitaryan Congrégqtion de Venise, Journal of Armenian studies, 2017, №1, 21 էջ, The book of flowers by D.Demirjian and Armenian medieval literature, ЧАСОПИС ИНСТИТУТА ЗА СРПСКУ КУЛТУРУ БАШТИНА, Никшић, II/1 (2017) (Չեռնոգորիա) ISSN 2337-0939, p.85-91, Армянский перевод романа <<Мастер и Маргарита>> (отрывок Иисуса и Пилата), М.А.Булгаков: Русская и национальные литературы /Материалы международной научно-практической конференции 9-11 октября 2017г.Светоч просвечения /300 лет назад на острове Святого Лазаря была создана Конгрегация мхитаристов, «Литературная газета», Москва, 25-31 октября, №42, Մ.Շաթիրյանի «Արծաթե դար» պատմավեպի արդիականությունը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, N2, էջ 256-262, Ֆրեդերիկ Մակլերը հայ հին և միջնադարյան պատմության ու մշակույթի հետազոտող, Օտարազգի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում (միջազգային գիտաժողովի նյութեր), էջ 101-117, Վիկտոր Լանգլուայի գիրքը՝ նվիրված Վենետիկի Մխիթարյան միաբանությանը (հիմնադրման 300-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2017, №3, 18 էջ, Սոնյա Վայց Շրայբեր, Խոստացա, ես կպատմեմ,մանկավարժական ուղղվածությամբ գրքի թարգմանություն անգլերենից, <<Զանգակ>> հրատ, Երևան, 2017, 160 էջ և այլն:Ամբիոնի՝ 2017 թվականի գիտական հրապարակումները ներկայացված են ստորև:

Ամբիոնի վարիչ Ա.Դոլուխանյանը մասնակցել է 5 միջազգային և 2 հանրապետական գիտաժողովների՝ զեկուցումներ կարդալով պլենար նիստերում: Բոլոր զեկուցումները տպագրվել են:

Ամբիոնի բոլոր դասախոսները լիովին տիրապետում են համակարգչին, անգլերեն ու ռուսերեն լեզուներին և անցել են որակավորման դասընթացներն ու ստացել համապատասխան հավաստագրերը: 2017 թվականի մարտ ամսին ամբիոնի վարիչ Ա.Դոլուխանյանը և դասախոսներ Լ.Հովսեփյանը, Ռ.Դոլուխանյանը, Գ.Մարդյանը մասնակցել են ամերիկյան ծրագրով Մեդիա դասընթացներին և ստացել հավաստագրեր: Դեկտեմբերի 3-ից ամբիոնը ողջ կազմով մասնակցելու է ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում կազմակերպված որակավորման երկշաբաթյա դասընթացներին: Ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը դասընթացների ժամանակ կարդալու է դասախոսություններ:

Ամբիոնը հրատարակել է ժողովածու՝ նվիրված Մխիթարյան միաբանության Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հաստատվելու 300-ամյակին: Ժողովածուում ամբիոնի բոլոր դասախոսներն ունեն գիտական հոդվածներ:

Ամբիոնը հրատարակել է ժողովածու՝ նվիրված տաղանդավոր արձակագիր Գևորգ Դևրիկյանի ծննդյան 80-ամյակին և Հայոց ազատամարտերի 100-ամյակներին:

Ամբիոնի հայցորդները ջանադիր աշխատում են Մաշտոցի անվան Մատենադարանում: Այդ հայցորդներն են Մարի Մնացականյանը, Օվսաննա Խաչատրյանը և Լիլյա Հարությունյանը: Աննա Երկանյանը ավարտել է իր թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված է Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությանն ու նվիրվում է գրողի 80-ամյակին: Նա գերազանց հանձնել է որակավորման քննությունը:

Ամբիոնի մագիստրանտները մասնակցում են հանրապետական գիտաժողովներին: Իսկ հեռակա մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Նարինե Շահբազյանը <<Հայագիտական հանդեսում>> տպագրել է 2 գիտական հոդված: «Հայագիտական հանդես»-ի 2017 թ. առաջին համարում (էջ 46-48) լույս է տեսել հեռակա բակալավր երրորդ կուրսի

ուսանողուհի Հասմիկ Հակոբյանի «Ժամանակակից հայ բանահյուսության մի պատառիկ» հոդվածը (Ա.Դոլուխանյանի համահեղինակությամբ): «Հայագիտական հանդեսին» տպագրության է հանձնված մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Էդգար Ապրեսյանի հոդվածը՝ նվիրված Ամիանոս Մարկելիոսի պատմությանը և Ստ.Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպին: Էդգար Ապրեսյանը հոկտեմբեր ամսին զեկուցում է կարդացել Գորիսի պետական համալսարանի 50-ամյակին նվիրված գիտաժողովում: Տպագրության են հանձնված Էդգար Ապրեսյանի, Նարինե Շահբազյանի (գիտական ղեկավար՝պրոֆ.Ա.Դոլուխանյան), Սևակ Հովհաննիսյանի, Աննա Սարգսյանի (գիտական ղեկավար՝դոց.Ռ.Դոլուխանյան), Նելլի Թադևոսյանի (գիտական ղեկավար՝դոց. Լ.Հովսեփյան), Հովհաննես Սարգսյանի (գիտական ղեկավար՝դոց. Պ.Սահակյան) զեկուցումները՝ կարդացած ՈՒԳԸ համահամալսարանական տարեկան նստաշրջանում: ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակել է պրոֆ.Ա.Դոլուխանյանի կենսամատենագիտությունը /կազմող՝ Մ.Գրիգորյան/: Ամբիոնն ունի երեք հայցորդ: Բանասիրական ֆակուլտետի առկա մագիստրատուրայի գերազանցիկ շրջանավարտ Հասմիկ Հովսեփյանը հաջողությամբ հանձնել է ասպիրանտուրայի ընդունելության քննությունները:
Ամբիոնի բոլոր միջոցառումներն արդիական են: Օրինակ՝ ամբիոնը 2017թ. ապրիլին հանդիպեց «Գրական թերթի» աշխատակազմի հետ: Հանդիպմանը մասնակցում էին «Գրական թերթ»-ի նախկին խմբագիրներ Նորայր Ադալյանը, Սամվել Կոսյանը, գործող խմբագիր Կարինե Խոդիկյանը, խմբագրակազմը, ակումբի անդամ ուսանողներն ու դասախոսները: Արդիական դիտակետից եղան ելույթներ: Շահեկան խոսք ասացին թե խմբագիրները, դասախոսները և թե ուսանողները: Հետաքրքիր խոսք ասաց «Գրական թերթի» գլխավոր խմբագիր Կարինե Խոդիկյանը: Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ, ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր: Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը նախապատրաստել է պլան՝ վերաբերող անգլիական հայագիտությանը: Սա գրեթե չուսումնասիրված բնագավառ է, և ամբիոնի դասախոսները, տիրապետելով անգլերենին, այն ի վիճակի են իրականացնել: Ալիտա Դոլուխանյանն աշխատում է «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի 8-րդ գրքի վրա: Այն կոչվում է «Ժան-Պիեռ Մահեն հայագետ» Լիլիթ Հովսեփյանը աշխատում է հայ ձեռագրացուցակների կազմվելու հիմնական սկզբունքների վրա՝ ըստ արդեն հրատարակված աշխարհի հայ ձեռագրացուցակների: Պարույր Սահակյանն աշխատում է Ֆրեդերիկ Կոնիբերի աստվածաբանական այն գործերի վրա, որոնք առնչվում են հայ միջնադարի աստվածաբանական մատենագրությանը: Ռուզան Դոլուխանյանն պատրաստում է «Մանկավարժական ու բարոյախոսական դասերը «Բազմավէպում»» շարքի 3-րդ գիրքը: Գայանե Մարդյանը պատրաստում է նոր գիրք՝ «Իմ մանկավարժական փորձից և ներկա մանկավարժության արդիական մարտահրավերները»: Ամբիոնի աշխատանքների փոխկապակցման մեխանիզմներից է այն իրողությունը, որ ամբիոնի բոլոր ավարտական աշխատանքները գրվում են Մաշտոցի անվան Մատենադարանի նյութերի հիման վրա:

Ա.Պրոֆեսորադասախոսական
ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ

Դոլուխանյան Ա.Գ., Հովսեփյան Լ.Վ., Դոլուխանյան Ռ.Վ., Սահակյան Պ.Տ., Մարդյան Գ.Ա.	Հոդվածների ժողովածու /նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյա հոբելյանին	«Լուսակն» հրատ, 2017	130 էջ
Դոլուխանյան Ա.Գ.	Սոնյա Վայց Շրայբեր, Խոստացա, ես կպատմեմ, թարգմանություն անգլերենից	«Զանգակ» հրատ, 2017	160 էջ
Դոլուխանյան Ա.Գ., Հովսեփյան Լ.Վ., Դոլուխանյան Ռ.Վ., Սահակյան Պ.Տ	Հայրենասիրության պատգամաբերը /հոդվածների ժողովածու/	Լուսակն հրատ, 2017	98 էջ
Դոլուխանյան Ռ.Վ.,	Մանկավարժական, բարոյախոսական և հայրենասիրական դասերը «Բազմավէպում» /1866-1885թթ./, գիրք 2-րդ	«Լուսակն» հրատ, 2017	86 էջ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Դոլուխանյան Ալելիտա	Հոգևոր հզոր լիցք Լեմս Ներսիսյանի հայրենասիրական նկարաշարում	3 էջ
Դոլուխանյան Ալելիտա	ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության մի պատառիկ /համահեղինակ՝ Հասմիկ Հակոբյան, հեռ.մագիստր. 3-րդ կուրսի ուս./	3 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Հայ հին թարգմանական գրականությունը Ժան-Պիեռ Մահեի գնահատմամբ	7 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Գիտականն ու գեղագիտականը մեկտեղված /Ա.Հակոբյանի «Հայազգի ծովանկարիչները» պատկերագիրք-հետազոտության գրախոսականը	4 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300 ամյա հոբելյանին նվիրված Հոդվածների ժողովածուի նախաբանը /հայերեն, ռուսերեն, անգլերեն/	6 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Վիկտոր Լանգլուան Վենետիկի Մխիթարյան միաբանության մասին	30 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Великий урок нравственности. Этнокультурное значение французского перевода эпоса «Давид Сасунский»	6 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Հայաստան, իմ սեր»-ը որպես խոստովանություն և դաս	6 էջ
Դոլուխանյան Ալելիտա	«Հայրենասիրության պատգամաբերն առաջին հերթին հայ գրողն է» /Ծաղկաձոր-2017 երիտասարդ գրողների 15-րդ համաժողովում կարդացած զեկուցումը/	2 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Դասական գրականագետը /նվիրվում է Սերգեյ Սարինյանի հիշատակին/	4 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Ամենադժվարը զգացածը բառի վերածելն է /Կարինե Խոդիկյանի «Մեծ եռագրություն» գրքի գրախոսականը	3 էջ
Դոլուխանյան Ալելիտա	Սյունյաց աշխարհի նորօրյա տրուբադուրը /խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով/	6 էջ

Դոլուխանյան Ալիտա	300 տարի առաջ Սուրբ Ղազար կղզում վառված լուսավորության կանթեղը	7 էջ
Դոլուխանյան Ալիտա	Հավայան կղզիները կախարդական աշխարհ են /ուղեգրություն/	4 էջ
Դոլուխանյան Ալիտա	Իրականի, անձնականի և հորինվածքի կապը	3 էջ
Դոլուխանյան Ալիտա	Армянский перевод романа «Мастер и Маргарита» (отрывок Иисуса и Пилата)	7 էջ
Դոլուխանյան Ալիտա	«The Theory of Vital Energy According to Well-Known Modern Armenian Writer»	4 էջ
Դոլուխանյան Ալիտա	Մ.Շաթիրյանի «Արծաթե դար» պատմավեպը	8 էջ
Դոլուխանյան Ալիտա	Հայկական միջնադարյան մշակույթին նվիրված ուշագրավ աշխատություն	4 էջ
Դոլուխանյան Ալիտա	Հայրենասիրության պատգամաբերը /հոդվածների ժողովածու, նվիրվում է Գևորգ Դևրիկյանի ծննդյան 80 և Հայաստանի հերոսամարտերի 100-ամյակներին/, նախաբան՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն	6 էջ
Դոլուխանյան Ալիտա	Գևորգ Դևրիկյանի «Հայոց մեծերը» գրքի Ա հատորը /հոդվածների ժողովածու/	14 էջ
Դոլուխանյան Ալիտա	Светоч просвечения /300 лет назад на острове Святого Лазаря была создана Конгрегация мхитаристов	8 էջ
Դոլուխանյան Ալիտա	Հայկական միջնադարյան մշակույթին նվիրված ուշագրավ աշխատություն (նվիրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյա հոբելյանին)	3 էջ
Դոլուխանյան Ալիտա	Ֆրեդերիկ Մակլերը հայ հին և միջնադարյան պատմության ու մշակույթի հետազոտող- Օտարազգի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում (միջազգային գիտաժողովի նյութեր)	16 էջ
Դոլուխանյան Ալիտա	Վիկտոր Լանգլուայի գիրքը՝ նվիրված Վենետիկի Մխիթարյան միաբանությանը (հիմնադրման 300-ամյակի առթիվ)	18 էջ
Դոլուխանյան Ալիտա	Աշխարհի հնագույն իմաստությունը իր մեջ ամբարած գիտնականն ու պրոֆեսորը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանի ծննդյան 115-ամյակի առթիվ)	5 էջ
Դոլուխանյան Ալիտա	Սոնյա Վայց Շրայբեր, Խոստացա, ես կպատմեմ, թարգմանություն անգլերենից	160 էջ
Դոլուխանյան Ալիտա	Պ.Պռոշյանի <<Հացի խնդիր>> վեպը որպես բանահյուսական ժանրերի շտեմարան	8 էջ
Դոլուխանյան Ալիտա	Խորհրդահայ թատրոնի յուրօրինակ տարեգրությունը	7 էջ
Դոլուխանյան Ալիտա	Истинный облик времени в прекрасном художественном представлении	5 էջ
Հովսեփյան Լիլիթ	Հայագիտության նվիրյալը.Ալիտա Դոլուխանյան	4 էջ
Հովսեփյան Լիլիթ	Երբ ուսուցչի հետ հանդիպումը ճակատագրական է. Ալիտա Դոլուխանյան, Բանասերը, գիտնականը, մանկավարժը. Կենսամատենագիտություն ծննդյան 75-ամյակի առթիվ	6 էջ
Հովսեփյան Լիլիթ	Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրացուցակը. Հոդվածների ժողովածու /Նվիրվում է	27 էջ

	Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300 ամյա հոբելյանին/	
Հովսեփյան Լիլիթ	История армянского народа в оценке Валерия Брюсова-Брюсовские чтения	10 էջ
Հովսեփյան Լիլիթ	Գ.Դևրիկյանի «Տրդատ ճարտարապետ» վեպը /հոդվածների ժողովածու, նվիրվում է Գևորգ Դևրիկյանի ծննդյան 80 և Հայաստանի հերոսամարտերի 100-ամյակներին/	17 էջ
Դոլուխանյան Ռուզան	Հռոմի ակավոր կայսր Մարկոս Ավրելիոսը աղջիկների դաստիարակության մասին. Հոդվածների ժողովածու /Նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300 ամյա հոբելյանին/	10 էջ
Դոլուխանյան Ռուզան	Խոսք հորաքրոջս մասին . Ալիտա Դոլուխանյան, Բանասերը, գիտնականը, մանկավարժը. Կենսամատենագիտություն ծննդյան 75-ամյակի առթիվ	2 էջ
Դոլուխանյան Ռուզան	Գևորգ Դևրիկյանի «Վերջին խոսքերը» պատմվածքի ուսուցումը /հոդվածների ժողովածու, նվիրվում է Գևորգ Դևրիկյանի ծննդյան 80 և Հայաստանի հերոսամարտերի 100-ամյակներին/	12 էջ
Դոլուխանյան Ռուզան	Մանկավարժական, բարոյախոսական և հայրենասիրական դասերը «Բազմավէպում» /1866-1885թթ./, գիրք 2-րդ	86 էջ
Սահակյան Պարույր	Ղևոնդ Ալիշանի «Սիսական» աշխատության մատենագրական ու գրական արժեքը Հոդվածների ժողովածու /Նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300 ամյա հոբելյանին/	13 էջ
Սահակյան Պարույր	Իմ գիտական ղեկավարը. Ալիտա Դոլուխանյան, Բանասերը, գիտնականը, մանկավարժը. Կենսամատենագիտություն ծննդյան 75-ամյակի առթիվ	2 էջ
Սահակյան Պարույր	Գ.Դևրիկյանի «Վիրավոր կռունկ վեպի պատմական և բանահյուսական արժեքը» /հոդվածների ժողովածու, նվիրվում է Գևորգ Դևրիկյանի ծննդյան 80 և Հայաստանի հերոսամարտերի 100-ամյակներին/	20 էջ
Մարդյան Գայանե	Ղևոնդ Ալիշանի բանաստեղծությունների մանկավարժական և ճանաչողական արժեքը Հոդվածների ժողովածու/Նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300 ամյա հոբելյանին/	26 էջ
Մարդյան Գայանե	Իմ սիրելի գիտնական-մանկավարժը. Ալիտա Դոլուխանյան, Բանասերը, գիտնականը, մանկավարժը. Կենսամատենագիտություն ծննդյան 75-ամյակի առթիվ	3 էջ
Մարդյան Գայանե	Քրիստոնեական գիտելիքների ուսուցումը ըստ Գ.Դևրիկյանի «Հավատի զորությունը» պատմվածքի /հոդվածների ժողովածու, նվիրվում է Գևորգ Դևրիկյանի ծննդյան 80 և Հայաստանի հերոսամարտերի 100-ամյակներին/	14 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը,օրը
Պատմությունը և գրականությունը.Ամբերդ	Ամբերդ, 2017 թվականի հունիսի 3
Հայ հին և միջնադարյան գրականության դասավանդման մեթոդիկայի նորացված մեթոդները	Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դաս.մեթ.ամբիոն /307 սենյակ/, 20-ը դեկտեմբերի

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք
Դոլուխանյան Ա.Գ.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ	2017թ.մարտ	հավաստագիր
Հովսեփյան Լ.Վ.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ	2017թ.մարտ	հավաստագիր
Դոլուխանյան Ռ.Վ.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ	2017թ.մարտ	հավաստագիր
Մարդյան Գ.Ա.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ	2017թ.մարտ	հավաստագիր
Դոլուխանյան Ա.Գ.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, բանասիրական ֆակուլտետ	2017թ. դեկտեմբեր	որակավորման բարձրացում
Հովսեփյան Լ.Վ.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, բանասիրական ֆակուլտետ	2017թ. դեկտեմբեր	որակավորման բարձրացում
Դոլուխանյան Ռ.Վ.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, բանասիրական ֆակուլտետ	2017թ. դեկտեմբեր	որակավորման բարձրացում
Մարդյան Գ.Ա.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, բանասիրական ֆակուլտետ	2017թ. դեկտեմբեր	որակավորման բարձրացում
Սահակյան Պ.Տ.	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, բանասիրական ֆակուլտետ	2017թ. դեկտեմբեր	որակավորման բարձրացում

Բ. Ուսանողական
Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ

“Գրական թերթի” խմբակ	ղեկ.՝Աբրահամյան Ա.Ա.	31 անդամ
ՈՒԳԸ		

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ

Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվմ
Դոլուխանյան Ա.Գ.	Հասմիկ Հակոբյան, հեռ. մագիստր. 3-րդ կուրսի ուս.	ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության մի պատառիկ	«Հայագիտական հանդես», N1, Երևան, 2017թ.

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. Զեկույցներ

Կոնֆերանս/ միջազգ.,հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ

բուհական	ՈՒԳԸ նստաշրջան	չորս
հանրապետական	Գորիսի պետական համալսարանի 50-ամյակին նվիրված ուսանողական գիտական նստաշրջան	մեկ

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ

Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնում իրականացվում են զրույցներ ապագա դիմորդների հետ, որոնց կողմնորոշում են ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի բակալավրիատ կամ մագիստրատուրա ընդունվելու համար:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Դոլուխանյան Ա.Գ.,	Վարպետության դասեր, քարոզարշավ	Սեպտեմբեր, հոկտեմբեր,նոյեմբեր
	Սահակյան Պ.Տ.	Քարոզարշավ	Սեպտեմբեր, հոկտեմբեր,նոյեմբեր
	Դոլուխանյան Ռ.Վ.	Քարոզարշավ, վարպետության դասեր	Սեպտեմբեր, հոկտեմբեր,նոյեմբեր
Մեթոդական	Դոլուխանյան Ռ.Վ., Հովսեփյան Լ.Վ., Սահակյան Պ.Տ,Մարդյան Գ.Ա.	Բակալավրիատի մանկավարժական պրակտիկաների շրջանակներում	հոկտեմբեր, նոյեմբեր, փետրվար,մարտ,ապրիլ
Դաստիարակչական	Դոլուխանյան Ռ.Վ., Հովսեփյան Լ.Վ., Սահակյան Պ.Տ,Մարդյան Գ.Ա.	Բակալավրիատի մանկավարժական պրակտիկաների շրջանակներում	հոկտեմբեր, նոյեմբեր, փետրվար,մարտ,ապրիլ

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ռադիոհաղորդումներ	Դոլուխանյան Ա.Գ.	Հայոց մեծերը. Վէմ ռադիոկայան	սեպտեմբեր
Հեռուստահաղորդումներ	Դոլուխանյան Ա.Գ.	Մեր մեծերը. Գրիգոր Ղափանցյան, Սերգեյ Սարինյան- Ար հեռուստաընկերություն	ապրիլ, հոկտեմբեր

Հայոց լեզվի եվ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ուսումնառության արդյունքները բավարար են, համապատասխան դասավանդումը և ուսումնառության մոտեցումներն ընթացել են ճիշտ հունով, կիրառվել են ուսուցման նախատեսված մեթոդները, փորձել ենք պարբերաբար արդիականացնել դասավանդման մոտեցումների և մեթոդների հիմունքները: Եղել են համապատասխոն քննարկումներ, ներառվել են դասավանդման նյութերի և միջոցների (ռեսուրսների) ժամանակակից հնարավորությունները, իրականացվել է դրանց շուրջ կատարված աշխատանքների բարելավվում: Ուսումնական մեթոդների արդյունավետությունը հնարավորություն է տալիս գրանցելու ուսումնամեթոդական ձեռքբերումների բարձր աստիճան:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնում աշխատանքները իրականացվել են ըստ սահմանված գնահատման մեթոդների և չափանիշների, սակայն առաջիկայում կատարվելու են ուսանողների (ուսումնառողների) գնահատման մոտեցումների վերանայումներ՝ կապված ոչ միայն արդյունավետությունն ապահովվող մեխանիզմների կատարելագործման, այլև ակադեմիական ազնվությունն ապահովվող միջոցառումների հետ. նկատի ունենք միջանկյալ գրավորների օբյեկտիվ իրականացումը թերացումների և այլաձևումների կանխումը, գնահատման առավել ճշգրտության ապահովումը:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
ընթացիկ տարում ամբիոնի նիստերում քննարկվել են հետևյալ հարցերը և կայացվել համապատասխան որոշումներ:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանայք	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ավ.դասախ.	դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	10	4	4	10	9		1	18
Համատեղող		1	1				1	1
Ժամավճարային	1			1			1	1
Ընդամենը	10	4	4	10	9		1	18
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
51,2			2	5	6	4	2	

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում

Ամբիոնը իր ամենօրյա գործունեության մեջ է ներառել ուսուցման մեթոդական նպատակահարմարությունը՝ ճիշտ դասաբաշխում դասախոսների մասնագիտական կարողությունների նկատառումով, բակալավրիատում դասավանդում են տվյալ առարկայի երկար տարիների փորձ ունեցող մասնագետները, մագիստրատուրայում, որտեղ առարկաների մեծ մասը կամընտրական է, գրեթե ամբողջովին ընդգրկված են ամբիոնի պրոֆեսորները: Հաշվետու ամիսներին չենք ունեցել դասաժամերի որևէ բացթողում: Ի դեպ, ամբիոնի նիստերում մշտապես քննարկվում է կարգապահության հարցը՝ կապված ոչ միայն դասաժամերի ռեալ օգտագործման, այլև ուսանողների հետ տարվող աշխատանքների առումով: Ցածր կուրսերի ուսանողների հետ տարվում են թերացումների և բացթողումների վերացման աշխատանքներ
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնը հետևողական ձևով իրականացրել է դասախոսական կազմի դասավանդվող առարկաների թեմաների նկարագրերի կազմումը. յուրաքանչյուր դասախոս իր առարկայի նկարագրերը ժամանակին ներկայացրել է ամբիոն, և ամբիոնի մասնագետի անմիջական նախաձեռնությամբ դրանք տեղադրվել են cllassroom հարթակում:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Հայոց լեզվի ամբիոնը ևս իրականացնում է նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ դասապրոցես. ուսանողներին ուղարկվում է համապատասխան դասախոսության թեմայի փաթեթը, իսկ լսարանում տեսաժապավենի վրա իրականացվում է թեմայի ուսուցումը՝ ընդ որում ինտերակտիվ ուսուցման պայմաններում: Վերջում ամփոփվում է թեման և նախապատրաստվում անցում հաջորդ թեմային: Մեկ կիսամյակում կազմակերպվում է միջանկյալ երկու աշխատանքի անցկացում՝ նախապես կազմված համապատասխան հարցաշարերով, մի քանի տարբերակով քննական տոմսեր կազմելով. խստագույնս հետևում ենք գրավորների օբյեկտիվ անցկացմանը:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
Ճարտասանության ձեռնարկ			Ուղեցույց մանկավարժական պրակտիկայի (բանասիրական ֆակուլտետ) բակալավրիատ		
Ուղղագրության ձեռնարկ			Հայոց լեզու և հայ գրականություն 2017թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 4		

Բարդ նախադասության գծապատկերներ			ԾՐԱԳԻՐ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրեր		
Հայ գրականության համառոտ տեղեկատու – ձեռնարկ			ԾՐԱԳԻՐ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրեր		
Ընդհանուր լեզվաբանության դասընթաց			ԾՐԱԳԻՐ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրեր		
Ճարտասանության ձեռնարկ			Ուղեցույց մանկավարժական պրակտիկայի (բանասիրական ֆակուլտետ) բակալավրիատ		
Ուղղագրության ձեռնարկ			Հայոց լեզվի գործնական դասընթաց: Հնչյունաբանություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար		
Բարդ նախադասության գծապատկերներ			Հայոց լեզվի գործնական դասընթաց: Հնչյունաբանություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար:		
Հայ գրականության համառոտ տեղեկատու – ձեռնարկ			Ուղեցույց մանկավարժական պրակտիկայի (բանասիրական ֆակուլտետ) բակալավրիատ		

Ընդհանուր լեզվաբանության դասընթաց			Հայոց լեզու և հայ գրականություն 2017թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 4		
Ճարտասանության ձեռնարկ			ԾՐԱԳԻՐ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրեր		

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը

Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
-	-	2	-	-	-	-	-	-	-

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Աշխատանքները բավարար ծավալով կատարված են (մենագրություններ, գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և ծրագրեր):
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնում պարբերաբար անցկացվել են թեմատիկ քննարումներ՝ ոչ միայն ՊԴԱ, այլև ուսանողների կողմից, կարդացվել են զեկուցումներ, մշակվել են ծրագրեր, որոնք դրվելու են հետագա աշխատանքների հիմքում: Աշխատակիցների և ուսանողների մասնակցությունը բավարար է և արդյունավետ:

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Վազգեն Հաբմարձումյան, բ.գ.դ., պրոֆեսոր	ՀՊՄՀ բանասիրական	2017- ի դեկտ. 11-21	մասնագիտական որակավորման բարձրացում
Աշոտ Գալստյան, բ.գ.թ., դոցենտ	ՀՊՄՀ բանասիրական	2017- ի դեկտ. 11-21	մասնագիտական որակավորման բարձրացում
Հովհաննես Նազարեթյան, բ.գ.թ., պ/պ	ՀՊՄՀ բանասիրական	2017- ի դեկտ. 11-21	մասնագիտական որակավորման բարձրացում

Գայանե Խալաթյան, մ.գ.թ., դոցենտ	ՀՊՄՀ բանասիրական	2017- ի դեկտ. 11-21	մասնագիտական որակավորման բարձրացում
Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հաշվետու տարում սահմանված ժամանակացույցին համապատասխան կազմակերպել է առկա և հեռակա ուսուցման համապատասխան կուրսերի մանկավարժական պրակտիկան: Պրակտիկայի խմբերի ղեկավարները ապահովել են ակտիվ համագործակցություն դպրոցի և բուհի միջև՝ աշակերտների ակտիվ մասնակցությամբ կազմակերպելով միջոցառումներ (այդ թվում ՀՊՄՀ-ի շրջանակներում, ինչպես օրինակ՝ այցելություն ՀՊՄՀ թանգարան), բաց դասեր և էլ ավելի մեծացրել աշակերտների հետաքրքրությունը բուհի և պատմություն մասնագիտության նկատմամբ:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտ Կ. Փահլևանյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 1-15
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտ Ն. Մինասյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 1-15
Ուսումնական	Պ.գ.թ. Հ. Գրիգորյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 1-15
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտ Ա. Մարտիրոսյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 1-15
Ուսումնական	Մ.գ.թ., դոցենտ Հ. Պապոյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 1-15
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտ Մ. Մարտիրոսյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 1-28
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտ Կ. Փահլևանյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 15-մայիսի 24
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտ Ա. Մարտիրոսյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 15-մայիսի 24
Ուսումնական	Պ.գ.թ. Հ. Գրիգորյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 15-մայիսի 24
Ուսումնական	Մ.գ.թ., դոցենտ Հ. Պապոյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. փետրվարի 15-մայիսի 24
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտԱ. Մարտիրոսյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. հոկտեմբերի 16-նոյեմբերի 24
Ուսումնական	Պ.գ.թ., դոցենտՄ. Մարտիրոսյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. հոկտեմբերի 16-նոյեմբերի 24
Ուսումնական	Պ.գ.դ., դոցենտԵ. Գրեկյան	Մանկավարժական պրակտիկա	2017 թ. հոկտեմբերի 16-նոյեմբերի 24

Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Աշխատանքներ են իրականացվել՝ ուղղված ուսումնառության արդյունքների և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումների ու մեթոդների արդիականացմանը: Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ուսումնասիրությունները և քննարկումները, դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքներն ամբիոնում, հիմք են տալիս արձանագրելու դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը: Մասնավորապես, խոսքը գնում է որակի ապահովման չափանիշների լույսի ներքո ՄԿԾ-ի առարկայական նկարագրերի վերանայմանը և Էլեկտրոնային ԱՈՒՄՓ ձևաչափերի լիարժեք ներդրմանն ուղղված միջոցառումների և ջանքերի ձեռնարկմանը: Միանշանակ է, որ նշված քաղաքականությունը նպաստել է ուսանողակենտրոն ուսուցմանը և բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերում ներդրվելու պարագայում առավել կբարելավվի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների առաջընթացը:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
2017-2018 ուստարվանից բուհում գործում է գնահատման բաղադրիչների միասնական համակարգ, և ամբիոնը ուսումնական գործընթացի գնահատումն իրականացնում է այդ բաղադրիչներով՝ գնահատման սահմանված չափորոշիչներին համապատասխան: Դա հնարավորություն է տալիս արձանագրել ուսումնական գործընթացի դրական վերջնարդյունքներ: Ակադեմիական ազնվության ապահովման նպատակով միջանկյալ և ամփոփիչ քննություններին դասավանդող դասախոսից բացի ապահովվվում է նաև ընթերակայի, գործնական պարապմունքներ անցկացնող դասախոսի, հնարավորության դեպքում նաև ամբիոնի վարիչի կամ դեկանատի ներկայացուցչի ներկայությունը
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը վերաբերել են դասավանդման գործընթացի պատշաճ կազմակերպմանն ուղղված աշխատանքներին, պրակտիկաների կազմակերպման և անցկացման արդյունքների քննարկմանը, դրանց հաշվետվությունների վերլուծությանը, ինչպես նաև դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ ապագայում կոնկրետ ջանքեր ձեռնարկելու անհրաժեշտությունը, իրավապահ մարմիններում պրակտիկայի կազմակերպման հիմնախնդիրները: Բացի դրանից, միջանկյալ ստուգողական աշխատանքների հարցաշարերի հաստատումը, քննական հարցաշարերի հաստատումը, ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերի հաստատում, երաշխավորում հրապարակման, մագիստրոսական ատենախոսությունների, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում, դրանց կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն, դրանց նախապաշտպանության իրականացում, դասալսումների արդյունքների քննարկում և ըստ անհրաժեշտության ընթացիկ հարցերի քննարկում:

Իրականացված աշխատանքները գնահատվում են դրական և բարելավման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանայք	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկնած.	դոցենտ	ավ.դասախ.	ասիստենտ	Ընդ-ում
Հաստիքային	4	-	-	3	2	-	2	7
Համատեղող	2		2	1	4	-	-	7
Ժամավճարային	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	6	-	2	4	6	-	2	14
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
		1	7	-	2	4	-	

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Հաշվետու տարում ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը գնահատվում է դրական, քանի որ դրա իրականացման ապահովմանը նպաստող տարբեր մեխանիզմներ են ներդրվել և արդիականացմանն ուղղված ջանքեր են գործադրվել: Մասնավորապես, վերանայվել են դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, պատրաստվել են հեռավար ուսուցման դասախոսությունների փաթեթներ կոնկրետ կուրսերի ուսանողների համար, աշխատանքներ են տարվել կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթների պատրաստման շարունակականության ապահովման ուղղությամբ: Դասավանդողներին լուսաբանվել են կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթների պատրաստման առանձնահատկությունները:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնը մշտապես ունեցել է դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, սակայն կրթական չափորոշիչների նոր պահանջներին համապատասխանելու անհրաժեշտությամբ պայմանավորված, դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը վերանայվել են, խմբագրվել, վերանայված նկարագրերը հաստատվել են ամբիոնի տարբեր նիստերում և արդյունքում դրանք լիովին համապատասխանեցվել են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնն ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ կոնկրետ պահանջվող կուրսերում դրանց կիրառման նպատակով: Կոնկրետ դասավանդողների կողմից պատրաստվել են ԱՈՒՄՓ ձևաչափեր կոնկրետ կուրսերի ուսանողների համար, աշխատանքներ են տարվել կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթների

պատրաստման շարունակականության ապահովման ուղղությամբ: Այս գործընթացքում դեռևս չընդգրկված դասավանդողներին լուսաբանվել են կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթների պատրաստման առանձնահատկությունները:

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը

Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
4	1	2	2	-	-		1	-	-

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Հովհաննիսյան Վոլոդյա Համբարձումի	Международные стандарты прав человека в правоприменительной практике конституционных судов	6 էջ
Հովհաննիսյան Վոլոդյա Համբարձումի	Имплементация международно-правовых норм и принципов по правам человека конституционными судами как важный фактор укрепления национальной безопасности	6 էջ
Հակոբյան Լուսինե Սերյոժայի	ՀՀ քաղաքացիության իրավունքը	25 էջ
Մարուքյան Գայանե Սոսի	The phenomenon of legal regulation of business activities	5 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը,օրը
«Վեճերի լուծման այլընտրանքային կառուցակարգերը»	ՀՊՄՀ, 20 ապրիլի 2017թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հաշվետու տարում սահմանված ժամանակացույցին համապատասխան կազմակերպել է առկա և հեռակա ուսուցման համապատասխան կուրսերի մանկավարժական պրակտիկան: Պրակտիկայի խմբերի ղեկավարները ապահովել են ակտիվ համագործակցություն դպրոցի և բուհի միջև՝ աշակերտների ակտիվ մասնակցությամբ կազմակերպելով միջոցառումներ (այդ թվում ՀՊՄՀ-ի շրջանակներում, ինչպես օրինակ՝ այցելություն ՀՊՄՀ ընթերցասրահ, գրադարան, թանգարան), բաց դասեր և էլ ավելի մեծացրել աշակերտների հետաքրքրությունը բուհի և իրավագիտություն /մանկ./, հասարակագիտություն մասնագիտությունների նկատմամբ:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Հակոբյան Լուսինե /Ի.գ.թ. դոցենտ/	Ուսումնական պրակտիկա	2017թ.Հունիսի 26-ից-հուլիսի 7-ը
Ուսումնական	Մարուքյան Գայանե /Ի.գ.թ. դոցենտ/	Ուսումնական պրակտիկա	2017թ.Հունիսի 26-ից-հուլիսի 7-ը
Ուսումնական	Մանուկյան Սահակ /Ի.գ.թ., դասախոս/	Ուսումնական պրակտիկա	2017թ.Հունիսի 26-ից-հուլիսի 7-ը
Ուսումնական	Պետրոսյան Տիգրան /Ի.գ.թ./	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Փետրվարի 15-ից-մայիսի 24-ը
Ուսումնական	Ալավերդյան Լուսինե /Ի.գ.թ. դոցենտ/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Փետրվարի 15-ից-մայիսի 24-ը
Ուսումնական	Մանուկյան Սահակ /Ի.գ.թ., դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Փետրվարի 15-ից-մայիսի 24-ը
Ուսումնական	Ալավերդյան Լուսինե /Ի.գ.թ. դոցենտ/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Ապրիլի 18-ից-մայիսի 26-ը
Ուսումնական	Մանուկյան Սահակ /Ի.գ.թ., դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Ապրիլի 18-ից-մայիսի 26-ը
Ուսումնական	Ասլանյան Գագիկ /Տ.գ.թ., դոցենտ/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Ապրիլի 18-ից-մայիսի 26-ը
Ուսումնական	Կարեյան Արմեն /Դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Ապրիլի 18-ից-մայիսի 26-ը
Ուսումնական	Փխրիկյան Ալինա /Ի.գ.թ. դոցենտ/	Ուսումնական պրակտիկա	2017թ. Մարտի 7-ից-14-ը
Ուսումնական	Երեմյան Արա /Ի.գ.թ. դոցենտ/	Ուսումնական պրակտիկա	
Ուսումնական	Կարեյան Արմեն /Դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Փետրվարի 1-ից-24-ը
Ուսումնական	Կոծինյան Աիդա /Դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Փետրվարի 1-ից-24-ը
Ուսումնական	Մանուկյան Սահակ /Ի.գ.թ., դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ.Փետրվարի 1-ից-24-ը
Ուսումնական	Կոծինյան Աիդա /Դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ. Սեպտեմբերի 19-ից – դեկտեմբերի 26-ը /շաբաթական 1 օր/
Ուսումնական	Հակոբյան Լուսինե /Ի.գ.թ. դոցենտ/	Մանկավարժական պրակտիկա	2017թ. Սեպտեմբերի 19-ից – դեկտեմբերի 26-ը /շաբաթական 1օր/
Ուսումնական	Տոնոյան Նարինե /Ի.գ.թ. դոցենտ/	Մանկավարժական պրակտիկա	2017թ. Սեպտեմբերի 19-ից – դեկտեմբերի 26-ը /շաբաթական 1օր/
Ուսումնական	Տոնոյան Նարինե /Ի.գ.թ. դոցենտ/	Մանկավարժական պրակտիկա	2017թ. Հոկտեմերի 16-ից- նոյոմբերի 24-ը
Ուսումնական	Կարեյան Արմեն /Դասախոս/	Մանկավարժական պրակտիկա	2017թ. Հոկտեմերի 16-ից- նոյոմբերի 24-ը
Ուսումնական	Հովհաննիսյան Վոլոդյա	Մանկավարժական պրակտիկա	2017թ. Հոկտեմերի 16-ից- նոյոմբերի 24-ը

	/Ի.գ.դ., պրոֆ./		

Քաղաքագիտություն և իրավունքի պատմության ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը համապատասխանում է բուհի և ամբիոնի առաքելությանը, առաջադրված նպատակներին և խնդիրներին: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները և գիտական հետաքրքրությունների շրջանակը համապատասխանում է ամբիոնի մասնագիտական և կրթական բովանդակությանը: Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման գործում կիրառվել են հստակ չափորոշիչներ՝ համաձայն բուհի և ամբիոնի պահանջներին: Այս հարցում առավելապես կարևորվել է դասախախոսների գիտական ներուժը և, ինչն ամենակարևորն է, դրա զարգացման և նրա կատարելագործման հեռանկարները: ՀՊՄՀ և ամբիոնի կողմից խրախուսվում է գիտական կոչումներ և աստիճաններ ստանալու գործընթացը: Այս համետեքստում նշենք, որ այս տարվա ընթացքում ամբիոնի դասախոսների մեկը ստացել է դոցենտի կոչում, մեկ այլ դասախոս ներկայացրել է դոցենտի կոչման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ ամբիոնի դասախոսները աշխատում և համագործակցում են ՀՀ այլ բուհերում և գիտական հիմնարկներում: Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից առարկաները դասավանդվում են հասարակական և քաղաքական հարաբերությունների արդի զարգացումների և մարտահրավերների հաշվառումով:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական որակները համապատասխանում են քաղաքագիտության և իրավագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որոկավորումներին: Ամբիոնում հաշվեու տարում յուրաքանչյուր կրթական ծրագրի առարկայի դասավանդման համար սահմանվել են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ: Յուրաքանչյուր կրթական ծրագրի առարկա դասավանդվում է միայն համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներ և փորձառություն ունեցող մասնագետի կողմից: Դրանց հիմնական փորձը դասալսումների անցկացումն է, որի արդյունքում արձանագրվել են մասնագետների որակի բարձրացման ցուցանիշները: Այս հարցում առավելապես կարևորվել է ուսանողների հետ փոխադարձ կապը և փոխադարձ արձագանքը այդ ընթացքում ամբիոնի վարիչի կողմից արձանագրված թերությունների և աշխատանքի բարելավման առաջարկները ներկայացվել են ամբիոնի քննարկմանը, որոնք քննարկումների և նոր առաջարկների արդյունքում ընդունվել են: Դասախոսների մասնագիտական գիտելիքների կատարելագործմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են նրանց կողմից անհատապես. նրանք մասնակցում են տարբեր միջոցառումների՝ գիտաժողովներ, սեմիներներ և այլն:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերի ընթացքում քննարկվել և առաջարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

առարկայական հարցատոմսերի հաստատումը, ԱՈՒՄՓ փաթեթների ներկայացումը և հաստատումը, հարցատոմսերի հաստատումը, ամբիոնի դասախոս Լ.Սարվազյանի «Սահմանադրական և փիլիսոփայական մշակույթը XVIII-XIX դարում» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկումը, 2016-2017 ուստարում ամբիոնի կողմից դասավանդվող ընտրովի դասընթացների հաստատումը, գիտահետազոտական աշխատաքների կատարման հարցը, դասալսումների արդյուքների քննարկումը և ուսուցման վիճակի հարցը առկա և հեռակա բաժիններում:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կախյալք	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	ուսուցիչ	Ընդ-կը
Հաստիքային	1		1	1	2			4
Համատեղող								
Ժամավճարային								
Ընդամենը								
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
			1		1	2		4

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ամբիոնում մեծ ուշադրություն է դարձվում ուսանողներին ԱՈՒՄՓ փաթեթների տրամադրմանն ու դասավանդման էլեկտրոնային հարթակին: 2017թ. օգոստոսի 28-ի նիստի № 1 արձանագրությամբ քննարկվել և հաստատվել են I կիսամյակի առարկայական փաթեթները: Առարկայական նոր փաթեթներին համապատասխան կազմվել են էլեկտրոնային դիտանյութեր (սլայդներ): Դրանք պարբերաբար ցուցադրվում են լսարաններում՝ նպաստելով դասախոսությունների յուրացմանը: Google classroom ձևաչափով էլեկտրոնային հարթակում ուսանողներին հասանելի են բոլոր դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները, անհրաժեշտ գրականության ցանկը, տեղադրված ուսումնամեթոդական նոր նյութերը, որոնք դարձել են ինտերակտիվ դասախոսությունների ու սեմինար պարապմունքների տեսական հիմք: 2017թ. հոկտեմբերիի 11-ի № 3 արձանագրությամբ քննարկվել և հաստատվել են՝ I կիսամյակի դասալսումների գրաֆիկը, I կիսամյակի միջանկյալ գրավորների հարցաշարերը, ամբիոնի կողմից դասավանդվող ընտրովի դասընթացները: 2017թ. նոյեմբերի 15-ի № 4 արձանագրությամբ քննարկվել և հաստատվել է դասախոսների էլ. հարթակում /Classroom/ բովանդակային ակտիվության վերաբերյալ ամենամսյա գնահատման նախնական ցուցիչները, որոնցով մշտադիտարկելու է ամբիոնի վարիչը և էլ. հարթակի /Classroom/ վերաբերյալ առաջարկությունների և ամբիոնի կողմից ներկայացված ուսանողության ակտիվությունը խթանող մեթոդները: 2017թ. սեպտեմբերից ամբիոնը հնարավորություն է ստացել ղեկավարել ավարտական աշխատանքներ: Ուսանողների հետ քննարկվել և համաձայնեցվել են ավարտական աշխատանքների թեմաները, որոնք հաստատվել են: Ուսանողների հետ տարվում է

համապատասխան մեթոդական աշխատանքներ ավարտական թեզերը պատշաճ մակարդակի գրելու ուղղությամբ: Տրվել է համապատասխան գրականությունը, կազմվել է աշխատանքների բովանդակությունը:
Ամբիոնը մշտապես ունեցել է դասավանդվող առարկաների նկարագրերը: Կրթական նոր չափորոշիչներին ծրագրերը համապատասխանեցնելու համար ծրագրերը թարմացվել են և հաստատվել են ամբիոնի տարբեր նիստերում:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ բոլոր կորրսեորում: Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից պատրաստվել են ԱՈՒՄՓ ձևաչափեր բոլոր կուրսերի ուսանողների համար, դասախոսությունները կազմակերպվել են նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիենրի կիրառումով և տարբեր ինտերակտիվ մոթոդներով:

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը

Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
-	-	1	-	-	-	-	1	-	1

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը շարունակել է գիտական գործունեությունը՝ հրապարակելով դրանց արդյունքները տարբեր գիտական հանդեսներում, ինչպես նաև մեկ մենագրություն: Իրականացվել են հետազոտություններ աշխարհակարգի հիմնախնդրի վերաբերյալ, անկախության քաղաքակրթական հարցի վերաբերյալ, արդարադատության հիմնահարցի և ժողովրդավարության ու տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերի վերաբերյալ: Այս բոլոր ուղղություներով ամբոինի պրոֆեսորադասախոսական կազմը հանդես է եկել զեկուցումներով տարբեր գիտական կոնֆերանսներում, որոնց արդյունքները տպագրվել են համապատասխան ժողովածուներում և մեկ մենագրության տեսքով:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնը կազմակերպել և իրականացրել է հետևյալ գիտահետազոտական աշխատանքները. 2017թ. նոյեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում կազմակերպել է գիտաժողով՝ նվիրված կոնսոցիատիվ ժողովրդավարութան և հասարակության սեգմենտար կառուցվաքծի հիմնախնդրին, որին ակտիվ մասնակցությունը են ցուցաբերել ՀՊՄՀ ուսանողները: 2017թ. նոյեմբերի 28-ին ՀՊՄՀ-ում ամբիոնը կազմակերպել է քաղաքագիտական լսումների հերթական շարքը, որը նվիրված է Առաջին Հանրապետության ազգային-պատմական նշանակության այժմեականության: Այս սեմինարին ակտիորեն մասնակցել են ՀՊՄՀ տարբեր ֆակուլտետների ուսնաողները:

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքները արտացոլում են ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների հիմնախնդրային դաշտը: Ըստ այդմ՝ հրապարակված գիտական աշխատանքները նպաստգել են դասավանդվող առրակաների անընդհատական գիտատարությանը, նորարարությանը և ժամանակի պահանջներին համապատասխանությանը: Որպես հիմնվաորում ներկայացնենք դասավանդող առարկաներից մի քանիսը և դրանց թեմաների շրջանակներում հրապարակված աշխատանքները: 1.Առարկա - Աշխարհաքաղաքականության հիմունքներ Լևոն Շիրինյան - Աշխարհակարգի քիսինջերյան տեսլականը, Փիլիսոփայությունը արդի աշխարհում, Տարեգիրք, գիրք 6, Եվրոպրինտ 2017, էջ 218-232: 2. Առարկա – Հայաստանի պետության և իրավունքի պատմություն Սարվազյան Լիլիթ - Ազգային սահմանադրական, փիլիսոփայաքաղա-քական մշակույթը XVIII-XIX դարերում (Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ), Լիմուշ, Եր., 2017, 252 էջ: 3. Առարկա – Իրավագիտություն Բարխուդարյան Սերգեյ - Արդարադատության մատչելիությունը որպես դատական պաշտպանության իրավունքի իրագործման երաշխիք ՀՀ քաղաքացիական դատավարությունում, Փիլիսոփայությունը արդի աշխարհում, Տարեգիրք, գիրք 6, Եվրոպրինտ 2017, էջ 340-351:

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Սարվազյան Լիլիթ Սերյոժայի	Ազգային սահմանադրական, փիլիսոփայաքաղա-քական մշակույթը XVIII-XIX դարերում (Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ)	Լիմուշ 2017	252 էջ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Շիրինյան Լևոն Ղազարի	Աշխարհակարգի քիսինջերյան տեսլականը	218-232
Շիրինյան Լևոն Ղազարի	Ընկերակցային (consociational) ժողովրդավարության այսրկովկասյան տրենդը	6-14
Շիրինյան Լևոն Ղազարի	Շրջադարձային կետ Հայաստանի քաղաքական պատմության մեջ. Արմենական կուսակցության քաղաքական պլատֆորմի ֆենոմենը	10-20
Սարվազյան Լիլիթ Սերյոժայի	Անկախության՝ որպես ազգային-հոգևոր և քաղաքակրթական գործոնի Լևոն Շանթի փաստարկումները	282-303
Սարվազյան Լիլիթ Սերյոժայի	Կրոնական դաստիարակության հիմնախնդիրը Մարկոս Աղաբեկյանի ազգային պահպանողական հայեցակարգում	82-98
Սարվազյան Լիլիթ Սերյոժայի	Պառլամենտարիզմի սկզբունքները արևմտահայ սահմանադրականության համատեքստում	72-95

Բարխուդարյան Սերգեյ Վլադիմիրի	«Բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը կրթության մատչելիության համատեքստում»	122-130
Բարխուդարյան Սերգեյ Վլադիմիրի	Էվթանազիայի հիմնախնդրի գնահատումը իրավական և այլ տեսանկյուններից	Էջ 38-46
Բարխուդարյան Սերգեյ Վլադիմիրի	Արդարադատության մատչելիությունը որպես դատական պաշտպանության իրավունքի իրագործման երաշխիք ՀՀ քաղաքացիական դատավարությունում	էջ 340-351
Սուքիասյան Հայկ Հրահատի	Կոնսուցիատիվ ժողովրդավարությունը Հարավային Կովկասի բազմական հասարակություններում	273-283
Սուքիասյան Հայկ Հրահատի	Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը արդի քաղաքագիտական խոսույթում	15-35

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը,օրը
Քաղաքագիտական լսումներ – Առաջին Հանրապետության ազգային-պատմական նշանակության այժմեականությունը	ՀՊՄՀ, ռեկտրատի նիստերի դայլիճ, 28.11.2017

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Սուքիասյան Հայկ Հրահատի	ԲՈՀ	2017	Դոցենտ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
2017թ. նոյեմբերի ութին ամբիոնի աշխատակիցները իրականացրել են մարքետինգային գործունեություն ՀՊՄՀ իրազեկման ծրագրի շրջանակներում Արմավիրի մարզի ք.Վաղարշապատի թիվ 10 ավագ, գ.Արտիմետի և գ.Բաղրամյանի միջնակարգ դպրոցներում: Հասարակության հետ կապերի և ամբիոնի գիտական ուղղություննրի վերբերյալ Լևոն Շիրինյանի կողմից պարբերաբար իրականացվել է վերլուծական աշխատանքներ: Հասկապես կարևոր ենք համարում Iratvakan.am ռադիոյում Լևոն Շիրինյանի հեղինակած QOU VATIS կամ Ու՞ր ես գնում Հայաստան գիտավերլուծական հաղորդումը, որտեղ քաղաքագիտկության շրջանակներում վերլուծվում է ՀՀ, ԱՀ և միջազգային հանրության հետ առնչվող թեմաներ: Հարկ է նշել, որ այս հաղորդումը ունի մեծ ընդգրկում հանրության շրջանում, ունի ինչպես նաև միջազգային ընդգրկում:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Մեթոդական	Շիրինյան Լևոն Ղազարի	Իրազեկման ծրագիր	նոյեմբերի 8-ին

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Գիտավերլուծական	Շիրինյան Լևոն Ղազարի	QOU VATIS կամ Ու՞ր ես գնում Հայաստան	Շաբաթական մեկ անգամ /Երկուշաբթի/

16. Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի ծավալած գործունեությունը ընթացել է համապատասխան ռազմավարական ծրագրին: Ըստ նախատեսվածի կատարվել են ֆակուլտետի ամբիոնների կողմից պլանավորված և մշակված բոլոր միջոցառումները: 1.Ստեղծվել են մենագրություններ, կրթական ծրագրերին համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներ: 2.Իրականացվել են ազգային ավանդույթների և պահանջներին համապատասխան ցուցադրություններ: 3.Ապահովվել են մագիստրոսների գիտահետազոտական գործունեությունն ապահովող միջավայրը: 4.Մասնակցել են հանրապետական գիտաժողովներին, մրցույթներին: 5.Միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում ամբիոնների դասախոսները հրատարակել են գիտական նյութեր:
Համալսարանի ներքին շահակից կողմերը ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում: Բացահայտող մեխանիզմները ի հայտ են եկել classroom համակարգի կիրառման պարագայում: Ամբիոնների մասնագետների կողմից կազմակերպվել են աշխատանքներ պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածությունն ապահովելու նպատակով ուսանողների պատրաստվածության աստիճանը ապահովելու նպատակով, հանձնարարականներ են ստացել կուրսերի ավագները, վերահսկումը կատարվել է առարկան դասավանդող մասնագետների կողմից:
Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:
Ռազմավարական ծրագրի իրականացման շրջանակներում ֆակուլտետի առաքելությունն ու նպատակների իրականացման ուղղությամբ ամբիոնների նիստերում քննարկվել են մասնագիտությունների գործունեությունը լուսաբանող բուկլետների և ազդագրերի հարցը: Նույն շրջանակներում իրագործվել են՝ ազդագիրը, ֆակուլտետի բուկլետը, որոնց տարածումն իրականացրել է ֆակուլտետի դասախոսական անձնակազմը, նախապես մշակված և պլանավորված ծրագրով, գովազդային արշավի շրջանակներում ներկայացվել է նաև ֆակուլտետի մասնագիտություններին նվիրված տեսանյութ:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, որքանով դրանք համապատասխանում մասնագիտական որակավորմանը ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:
2016-2017 ուս. տարում կրթության բարելավման անհրաժեշտությունից ելնելով՝ վերանայվել է առկա բակալավրի, առկա մագիստրատուրայի և հեռակա բակալավրի ուսումնական պլանները, ըստ որի համապատասխանեցվել են կրթական ծրագրերը՝ պահպանելով մասնագիտական որակավորումը:
Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել էի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:
2016-17 ուս տարում ֆակուլտետի չորս ամբիոններում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ուսումնական պլաններին և առարկայական նկարագրերին համապատասխան, պահպանվել են արդիական մեթոդները (ինտերակտիվ, հարց-պատասխան, զրույց, խաղային մեթոդներ, անհատական, խմբային), հանձնարարվող նյութերը համապատասխանել են ուսումնասիրվող առարկային ներկայացվող պահանջներին:
Ուսանողների գնահատման համակարգը ֆակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:
Առաջնորդվում ենք վերամշակված կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման դրույթներին համապատասխան: Կարգը սահմանում է գնահատման վերահսկման ձևերը, կառուցվածքը և վերահանձնումը՝ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացիկ, միջանկյալ և ավարտական եզրափակիչ գնահատման ձևերով: Համաձայն այս կարգի՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողի արդյունարար գնահատականը ձևավորվում է մի շարք բաղադրիչ գնահատումներից, որոնք սահմանում են համապատասխան մասնագիտական ամբիոնները: Գնահատման չափանիշները և ձևերը հասանելի են թե՛ դասախոսներին, և թե՛ ուսանողներին. առարկայական ծրագիր-նկարագրերի մշակման և ստեղծման, դրանցում առկա գնահատման համակարգի ներդրման պատասխանատուն դասավանդող դասախոսն է կամ դասախոսական խումբը: Գնահատականների թափանցիկությունն ապահովվելու նպատակով այն քննարկվում է ուսանողի ներկայությամբ, գունանկար, կոմպոզիցիա, գծանկար և մի շարք այլ առանձնահատուկ առարկանների ընթացիկ ստուգումները և քննությունները անց են կացվում մասնագիտական հանձնաժողովների կողմից (ամբիոնի վարիչ, դասավանդող դասախոսներ և մասնագիտական խմբի ղեկավար): Օրինակ գունանկար, կոմպոզիցիա առարկայի քննությունը անց է կացվում ֆակուլտետի ճեմասրահում՝ ցուցադրությամբ:
Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու և ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Ֆակուլտետը 2016-17 ուս տարում կատարել է մի շարք ուսումնասիրություններ միջազգայնացման շրջանակներում, ծանոթացել ենք Սանկտ-Պետերբուրգի Ի. Ե. Ռեպինի անվան պետական գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ակադեմիական ինստիտուտի, ռուսաստանի Ա. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի, Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի, Սանկտ-Պետերբուրգի պետական արդյունաբերական տեխնոլոգիաների և դիզայնի համալսարանի,

Տոմսկի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և այլ համալսարանների ուսումնական պլաններին, ծրագրերին և ըստ այդմ կատարել են մասամբ համադրություն:
Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:
Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման փաստեր: Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները: Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման մեխանիզմները: Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը, դրանց հիման վրա իրականացրած բարելավումները: Ելնելով ռազմավարության ծրագրի դրույթներից հավակնում է ընդլայնել համալսարանի ընդունելության պրոֆիլը, և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև միտված է զարգացնել ուսանողական համակազմի միջազգայնացումը: Նախատեսվում է զարգացնել ՀՊՄՀ գովազդարշավը, ակտիվացնել մարքեթինգը, ընդլայնել աշխատանքը դպրոցների հետ, դյուրացնել մուտքը համալսարան, ընդլայնել և խթանել սփյուռքահայ դիմորդների ներհոսքը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:							
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:							
Ուսանողների թիվը		981					
Բակալավրի	առկա	614					
	հեռակա	281					
Մագիստրոսի	առկա	86					
	հեռակա	-					
Հեռացումներ և վերականգնումներ							
	Ուսանողների թիվ	92					
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	56					
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	36					
Ֆակուլտետում գործող ամբիոնները համապատասխան գործընթաց են ծավալել 2016-17 ուս տարում: Աշխատանքն իրականացվել է ինչպես այցելություններ՝ դպրոցներ, միջին մասնագիտական հաստատություններ, այնպես էլ ազդագրերի և տեսանյութերի ու հաղորդումներին մասնակցելու միջոցով:							
2016-17 ուստարվա ուսանողների շարժը ակտիվ է եղել առկա և հեռակա համակարգում սովորող ուսանողների պարագայում: Ազատվել են հիմնականում ազգային բանակ մեկներու, դիմումի համաձայն և հեռացվել են կարգապահական ու ակադեմիական պարտքերի պատճառով: Ակտիվ են եղել շարունակական կրթություն ստացող ուսանողների շարժը ֆակուլտետի տարբեր բաժիններում:							
Ուսումնառողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանք-ների թիվը							
	Տպագրված աշխատանք						
1	Տիգրան Մանսուրյան «Պատարագ»						

2	Արամ Սաթյանի «Մանկական ալբոմը» դպրոցականների երաժշտական կրթության ոլորտում					

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ֆակուլտետում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության հստակ մոտեցումներ համապատասխան ՀՊՄՀ քաղաքականությանը:
Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները համապատասխանում են ՀՊՄՀ-ի քաղաքականությանը, պարբերաբար հրատարակվում են գիտական հոդվածներ, ձեռնարկներ, գրքեր:
Հաշվետու տարում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման աշխատանքները ֆակուլտետում:
Ֆակուլտետի դասավանդող մասնագետները ընթացիկ հաշվետվություններում ներկայացրել են տարեկան կատարված գիտական հրատարակումների մասին տեղեկություններ:
Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ֆակուլտետում հաշվետու տարում:
Ֆակուլտետի ամբիոններում կազմակերպվել են միջոցառումներ՝ բաց դասախոսություններ (արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն), վարպետաց դասեր (կերպարվեստի ամբիոն): Այս գործընթացը նպաստել է կատարելագործման դրական ընթացքին:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի արտաքին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքների շրջանակներում իրագործվել և իրագործվում են համապատասխան քայլեր, որոնք արտացոլված են ֆակուլտետի ռազմավարության մեջ: Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քայլերից են համապատասխան գիտաժողովների մասնակցությունները, որոնք հանգեցնում են նոր կապերի հաստատմանը և հետագա համագործակցությանը: Այդ շրջանակներում կազմվել են համապատասխան պայմանագրեր, որոնք գտնվում են համապատասխանեցման փուլում:
Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները ներառել են միջազգային կոնֆերանսներին մասնակցություն և համապատասխան հոդվածների հրատարակում, ցուցահանդեսներ, միջազգային միջոցառումների կազմակերպում:

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:

2017թ-ում ամբիոնն իրականացրել է ուսումնական պրոցեսի յուրաքանչյուր օղակի կազմակերպումն ու անցկացումը. այն է՝ ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի կատարում, կիսամյակային ստուգողական աշխատանքների, ստուգարքների և քննությունների անցկացում, մանկավարժական պրակտիկայի ղեկավարում, թանգարանային պրակտիկաների կազմակերպում, ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանություն, մագիստրոսական թեզերի պաշտպանություն:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Հաստատված առարկայական ծրագրերով կազմվել են քննական հարցաշարեր, կատարվել է առարկայական նկարագրերի վերանայում և առարկաների թվային տարբերակի տեղադրումը համալսարանի կայքում և Classroom համակարգում, հաստատված գրաֆիկի համաձայն ամբիոնի վարիչի կողմից ուսումնական տարում կազմակերպվել են դասալսումներ:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսանողների գնահատման կարգը տեղի է ունենում ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգով, որը ապահովում է ակադեմիական ազնվությունը: Գնահատման թափանցիկությունը ապահովելու նպատակով վերը նշված բոլոր գործառույթները տեղի են ունենում ամբիոնի աշխատակիցներից կազմված հանձնաժողովի ներկայությամբ /կիսամյակային ստուգողական աշխատանքներ, ստուգարքների և քննությունների անցկացում, մանկավարժական պրակտիկայի ղեկավարում, թանգարանային պրակտիկաների կազմակերպում, ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանություն և այլն/:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերն են՝ • Կերպարվեստի տեսություն, պատմություն և կառավարում ու մշակութաբանություն /հեռակա բակալավր/ ավարտական աշխատանքների թեմաների վերահաստատում, գիտական ղեկավարների և ընդդիմախոսների նշանակում • 2-րդ կիսմյակի ԱՈՒՓ-ների վերանայում և վերահաստատում • Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Մշակութաբանություն բաժնի /առկա բակալավր, մագիստրատուրա, հեռակա/ 2017-2018 ուս. տարվա պետական ավարտական քննությունների ժամանակ ուսանողների 100%-ին էլ ավարտական աշխատանք /դիպլոմային/ հանձնարարելու հարցը • Դպրոցներ կատարվելիք այցերի գրաֆիկի ներկայացում • Փետրվար ամսվա Classroom համակարգի մշտադիտարկման արդյունքների ներկայացում • Ավարտական կուրսերում կոնսուլտացիաների գրաֆիկների ներկայացում • Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Վարդիթեր Միհրանի Գամաղելյանի «Արվեստի քննության դասական մեթոդները» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակմանը երաշխավորելու հարցը • Ավարտական աշխատանքների քննարկում, դրական և բացասական կողմերի վերլուծություն: • Բաց դասերի գրաֆիկի հաստատում, թեմաների հստակեցում արտ-մենեջմենթի խնդիրների վերաբերյալ

- Ուսանողների համար մրցույթի կազմակերպում՝ «Մեր ակունքները» խորագրով, ժամանակի սահմնանում՝ մայիսի 15-ը: Լավագույն թեմաները ներգրավել դիպլոմային աշխատանքների ցանկում և հետագայում ամենահաջողված շարադրությունները ներկայացնել նախատեսվելիք կոնֆերանսում:
- «Հաջողության բանաձև» հաղորդաշարի առաջին հաղոդման նախապատրաստական աշխատանքներ:
- Կուրսղեկերի հաստատում
- Ամբիոնում դասավանդվող առարկաների 2017-2018 ուս.տարվա ԱՈՒՓՓ.ների և առարկայական նկարագրերի հաստատում:
- ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար թեկնածուի առաջադրման հարցը
- Ուսումնական պրակտիկայի անցակցման ապահովում /4-րդ կուրսերի համար Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի ինստիտուտ, 3-րդ կուրսերի համար՝ Սերգեյ Փարաջանովի թանգարան/
- «Հաջողության բանաձև» հաղորդաշարի 2-րդ հաղոդման նախապատրաստական աշխատանքներ
- Աշխատանքներ դպրոցների, քոլեջների և մասնագիտական ուսումնական հաստատությունն երի հետ /հեռակա ուսանողներ ներգրավելու նպատակով/, բուկլետների կազմում, այցելությունների գրաֆիկ
- Ամբիոնի կայքի, էլեկտրոնային հասցեի ստեղծում
- 2017-2018 ուս. տարվա Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում ու Մշակութաբանություն բաժինների մագիստրոսական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում: Թեմաներում ընդգրկվել են «Մեր ակունքները» մրցույթի ամենահաջողված աշխատանքների անվանումները, որտեղ ուսանողը ներկայացնում է իր ծննդավայրի պատմամշակութային իրավիճակը և հուշակոթողները
- Արա Հակոբյանի պրոֆեսորության հարցը
- Ղեկավարների և դիպլոմային աշխատանքների վերնագրերի որոշակի փոփոխություն: Յուրաքանչյուր ամսվա վերջում հաշվետվություն՝ ավարտական աշխատանքների և թեզերի ընթացիկ խնդիրների լուծման նպատակով:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանայք	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	դասախոս	Ընդ-վը
Հաստիքային	5	2	1	5	2	4	1	13
Համատեղող	1	2	2	2		1		
Ժամավճարային								
Ընդամենը	6	4	3	7	2	5	1	
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
			3	4	2	3	1	13

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
2017 թվականին Արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի ԴՊԱ-ի կողմից հրապարակվել են հետևյալ ուսումնամեթոդական ձեռնարկները՝ 1.Վարդիթեր Գամաղելյան «Արվեստի քննության մեթոդները » 2.Արմինե Բաղդասարյան «Արտասահմանյան երկրների ժամանակակից մշակույթի պատմություն» 2017թ-ում ամբիոնն իրականացրել է ուսումնական պրոցեսի յուրաքանչյուր օղակի կազմակերպումն ու անցկացումը. այն է՝ ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի կատարում, կիսամյակային ստուգողական աշխատանքների, ստուգարքների և քննությունների անցկացում, մանկավարժական պրակտիկայի ղեկավարում, թանգարանային պրակտիկաների կազմակերպում, ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանություն, մագիստրոսական թեզերի պաշտպանություն:2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների վերանայում և վերահաստատում 2018-2019 ուս. տարվա Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում ու Մշակութաբանություն բաժինների մագիստրոսական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում: 2017-2018 ուս. տարվա Կերպարվեստի պատմություն և տեսություն և Մշակութաբանություն բաժինների ավարտական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում: Ամբիոնում դասավանդվող առարկաների 2017-2018 ուս. տարվա ԱՈՒՓ.ների և առարկայական տրոհումների հաստատում Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Մշակութաբանություն բաժնի /առկա, հեռակա բակալավր/ 2017-2018 ուս. տարվա պետական ավարտական քննությունների ժամանակ ուսանողների 100%-ին էլ ավարտական աշխատանք հանձնարարելու հարցը:Դասախոսների 2017-2018 ուս. տարվա ծանրաբեռնվածության հարցը:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնում դասավանդվող առարկարկաները ունեն առարկայական նկարագրերի ԱՈՒՓ-ների թեմաների ու տեքստերի համապատասխանեցում: Ամբիոնում դասավանդվող առարկարկաների՝ 2017-2018ուս.տարվա ԱՈՒՓ.ների և առարկայական տրոհումների հաստատում:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Կատարվել է առարկայական նկարագրերի վերանայում և առարկաների թվային տարբերակի տեղադրումը համալսարանի կայքում և Classroom համակարգում: Առաջնորդվելով մշտադիտրկման արդյունքներով՝ վերլուծել յուրաքանչյուր դասախոսի ակտիվությունը Classroom համակարգում: Հաստատված առարկայական ծրագրերով կազմվել են քննական հարցաշարեր:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
			Վարդիթեր Գամաղելյան /Արվեստի քննության մեթոդները/		

			Արմինե Բաղդասարյան /Արտասահմանյան երկրների ժամանակակից մշակույթի պատմություն/		

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Թանգարանայի գիշեր միջոցառման շրջանակներում Ա.Բաղդասարյանի և Վ.Գամաղելյանի ուղղեկցությամբ ուսանողները մասնակցել են Սբ Էջմիածնի Ռուբեն Սևակի թանգարանում կազմակերպված «Խաչից իջեցում» կտավի ներկայացմանը և քննարկմանը :
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Հրավարդ Հակոբյանի նախաձեռնությամբ ՀՊՄՀ-ի երկշաբաթաթերթում բացվել է բաժին <<Երևելի արվեստագետ մանկավարժները>> խորագրով, որտեղ պարբերաբար տպագրվում են հոդվածներ ամբիոնի կողմից սպասարկվող բաժինների ուսանողների կողմից :
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Ամբիոնի մի քանի ուսանողներին հանձնարարվել է սեպտեմբերից մինչև նոյեմբեր ամիսը Կոմիտասի անվան թանգարանում ներկայացված հայ կոլեկցիոներների ստեղծագործություններին ծանոթանալ, վերլուծել և ուսումնասիրել արտ-մենեջմենթի ոլորտին առնչվող խնդիրները: Դեկտեմբերի 2-ին նախատեսվող աճուրդի նյութերը համալրելով նախորդ տեղեկությունների հետ՝ պատրաստել հոդված «Արվեստի շուկայի զարգացման գործընացը Հայաստանում» խորագրով: Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում մասնագիտության շրջանակներում ամբիոնի ՊԴԱ-ի կողմից կազմակերպվել են սեմինարներ՝ նվիրված արվեստի կառավարման առանձին ոլորտների. Արվեստի ստեղծագործությունների ատրիբուցիա /դաս. Ա.Առաքելյան/ Արվեստի ստեղծագործությունների ռեստավրացիա /դաս. Վ.Գամաղելյան/ Արվեստի ստեղծագործությունների աճուրդ /դաս. Ա.Գևորգյան/ Կուրատորի գործունեություն /դաս.Ա.Բաղդասարյան/

Պրոֆեսորադասախոսական
ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Արա Հակոբյան	Հայազգի ծովանկարիչները	Տիգրան Մեծ, Երևան 2017	440
Կարեն Մաթևոսյան	Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները	Մուղնի հր., Երևան, 2017	244

Վարդիթեր Գամաղելյան	Արվեստի քննության դասական մեթոդները	Ոսկան երևանցի, Երևան, 2017	59
Արմինե Բաղդասարյան	Արտասահմանյան երկրների ժամանակակից պատմություն	Անտարես, Երևան, 2017	77

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի, զեկույցի անվանումը	Ծավալ
Արա Հակոբյան /արվ. դոկտոր, դոցենտ/	Բարենպաստ հանգամանքներ Ֆրանսիայում հայ ծովանկարիչների գործունեության համար	110-115
Արա Հակոբյան /արվ. դոկտոր, դոցենտ/	Հովհաննես Այվազովսկին եվրոպական և ռուսական գեղագիտական ոլորտում	145-152
Արա Հակոբյան /արվ. դոկտոր, դոցենտ/	Роль И. К. Айвазовского в искусстве художника-мариниста Эммануила Магдесяна	64-66
Արա Հակոբյան /արվ. դոկտոր, դոցենտ/	Задача пленэра в творчестве Ивана (Ованнеса) Айвазовского	85-87
Արա Հակոբյան /արվ. դոկտոր, դոցենտ/	Искусство маринистов Оганеса Пейзата и Погоса Шашяна	61-63
Սերգեյ Աղաջանյան /բանասիրական գ/դ, պրոֆեսոր/	Աշխատանքային օր	106-112
Սերգեյ Աղաջանյան /բանասիրական գ/դ, պրոֆեսոր	Դավիթ Վ.Պետրոսյան, Պատում, մեդիատեքստ, հակառակ հեռանկար	220-226
Զառա Մալոյան /հոգ. գ/թ/	Кто отражается в зеркале: психологическая проблема двойника в искусстве	157- 169
Զառա Մալոյան /հոգ. գ/թ/	Այվազովսկու ռոմանտիկ «փոթորիկների» արքետիպերը և խորհրդանիշները	150-160
Զառա Մալոյան /հոգ. գ/թ/	Չինական մշակույթի արձագանքները Հովսեփ Փուշմանի արվեստում	
Սաթենիկ Մելիքյան /արվ. գ/թ, դոցենտ/	Первопроходцы жанра	91-94
Սաթենիկ Մելիքյան /արվ. գ/թ, դոցենտ/	У моря нет отечества	5
Սամվել Հովհաննիսյան /արվ. թեկ., ասիստենտ/	Արարման թեման Հայաստանի բրոնզեդարյան արվեստում	35-42
Արա Հակոբյան /արվ. դոկտոր, դոցենտ/	Հովհաննես Այվազովսկին՝ ազգային միասնության ջատագով	97-102
Զառա Մալոյան /հոգ. գ/թ/	Кто отражается в зеркале: психологическая проблема двойника в искусстве	157-169
Սաթենիկ Մելիքյան /արվ. գ/թ, դոցենտ/	«Ծովափնյա Հայաստանի» վարպետը	236-245
Մանե Մկրտչյան /արվ.գիտ.թեկ/	Մարտիրոս Սարյանը և ռուսական սիմվոլիզմը	
Մանե Մկրտչյան /արվ.գիտ.թեկ/	Հովհաննես Այվազովսկին և Վարդգես Սուրենյանցը	

Մանե Մկրտչյան /արվ.գիտ.թեկ/	Մարտիրոս Սարյանի «Գիսաստղը»	

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը,օրը
Արվեստի ստեղծագործությունների ատրիբուցիա	ՀՊՄՀ 05.05.17
Արվեստի ստեղծագործությունների ռեստավրացիա	ՀՊՄՀ 11.05.17
Արվեստի ստեղծագործությունների աճուրդ	ՀՊՄՀ 12.05.17
Կուրատորի գործունեություն	ՀՊՄՀ 21.05.17

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ

Ա.Ա.Հ.	թեկն/դոկտորական - մասնագիտություն	պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈՀ-ի հաստատում
Արա Հրավարդի Հակոբյան	ԺԷ.00.03- Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	23.10.17	10.10.17

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Արա Հակոբյան Հրավարդի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, 0.5	ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտ		դոկտորի գիտական աստիճան

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ

Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվմ
Հրավարդ Հակոբյան	Մարինե Ղազարյան	Նա ծնվել էր քանդակագործ դառնալու համար	Մանկավարժական համալսարան
Հրավարդ Հակոբյան	Լիլիթ Մաթևոսյան	Գեղագիտական ընկալումների ծիրուն	Մանկավարժական համալսարան
Հրավարդ Հակոբյան	Բելլա Մինասյան	Նա մնկարի մեջ հոգի ու սիրտ էր դնում	Մանկավարժական համալսարան
Հրավարդ Հակոբյան	Մարինե Ղազարյան	Ճանապարհ դեպի արվեստասերի սիրտը	Մանկավարժական համալսարան
Հրավարդ Հակոբյան	Գոհարիկ Մարտիրոսյան	Նրա վրձինը մնաց անկեղծ ու ազատ	Մանկավարժական համալսարան
Հրավարդ Հակոբյան	Տաթևիկ Աղալարյան	Գրաֆիկայի մեծ վարպետը	Մանկավարժական համալսարան

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի աշխատակազմը 2017 թվականին կազմակերպեց և իրականացրեց այցելություններ դպրոցներ: Ծրագրի շրջանակներում դասախոսական անձնակազմը հանդիպում ունեցավ Լեոյի անվան N65 ավագ դպրոցի, Մ. Գալշոյանի անվան N148 ավագ դպրոցի, Ա. Իսահակյանի անվան N16 ավագ դպրոցի, N97 ավագ դպրոցի, Գ. Շևչենկոյի անվան N42 ավագ դպրոցի աշակերտների հետ: Ծրագրի ընթացքում ներկայացվեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետը, Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դերն ու գործունեությունը: Աշակերտների հետ կապն առավել ամրապնդելու նպատակով իրականացվեց մրցույթ՝ «Իմ ակունքները» թեմայով:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Սաթենիկ Մելիքյան	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
	Վարդիթեր Գամաղելյան	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
	Լիլիթ Իսկոյան	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
Մեթոդական	Սաթենիկ Մելիքյան	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
	Առաքելյան Աշոտ	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
	Լիլիթ Իսկոյան	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
Դաստիարակչական	Սաթենիկ Մելիքյան	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
	Գևորգյան Արամայիս	Մեր ակունքները	09.11.17-21.11.17
	Լիլիթ Իսկոյան	Մեր ակունքները	09.11.17-21.11.17

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
	Վարդիթեր Գամաղելյան, Արմինե Բաղդասարյան, ուսանողներ	Թանգարանային գիշեր միջոցառման շրջանակներում այցելություն Էջմիածնի թանգարան	18.05.17

Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը և կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:

Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները, մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ուսումնասիրումները, քննարկումները, դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքները, դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը: Դասավանդման մոտեցումները և մեթոդները առավելագույն կերպով համապատասխանում են արդի ժամանակաշրջանի դասավանդման և ուսումնառության պահանջներին: Առարկայական ձևատեսությունների հիմքում դրվում են արտասահանյան բուհերի փորձը և հայաստանյան աշխատաշուկան: Ամբիոնի կայացման գործում պարբերաբար անցկացվում են քննարկումներ տվյալ հարցի պահանջներին համապատասխան:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի համար մշակված են գնահատման մեթոդներ և չափանիշներ, որոնք պարբերաբար վերանայվում են ուսումնառության արդյունավետությունը բարելավելու համար: Պարբերաբար կազմակերպվում են նաև ցուցադրություններ, մրցույթներ և կոլեկտիվ դասաժամեր:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Ամբիոնի նիստերի ընթացքում քննարկվում են ամբիոնում տիրող կարգապահությունը, գիտամեթոդական աշխատանքների հաշվետվությունը, մանկավարժական, գիտամանկավարժական և ուսումնական պրակտիկաների հաշվետությունը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի քննարկում, դասալսումների արդյունքների քննարկում, ուսումնական փաթեթների քննարկում, էլեկտրոնային կրթության ապահովում /Classroom/ և այլ ընթացիկ հարցեր:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կամուրջ	Դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն	դոցենտ	ասիստենտ	դասախոս	Ընդ-նդ
Հաստիքային	8	1	1	2	1	4	7	13
Համատեղող							1	
Ժամավճարային								
Ընդամենը	8	1	1	2	1	4	8	13

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի ուսումնական գործընթացը կազմակերպվել է՝ առաջնորդվելով համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Ամբիոնի կողմից ուսումնական գործընթացի վերահսկումը կատարվել է ամենամսյա դասալսումների միջոցով, արդյունքները քննարկվել և ամփոփվել են ամբիոնի նիստերի ժամանակ: ԱՄ և ԱԲ բոլոր դասընթացները կատարվում են ինտերակտիվ եղանակով, առարկաների ուսումնամեթոդական ԱՈՒՄՓ փաթեթները տեղադրված են Classroom տիրույթում, որտեղ և կատարվում է ուսանող-դասախոս ակտիվ շփումը: Ուսումնական գործընթացի կատարելագործման ուղղությամբ տարվել են անհրաժեշտ աշխատանքներ, արվել հետևություններ:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ներկայացնում ենք առկա ուսուցման համակարգի 2017-2018 ուսումնական տարվա ուսանողների գիտելիքների գնահատման ձևաչափը,որի համաձայն յուրաքանչյուր առարկայի ընհանուր գնահատման բաղադրիչների տրոհումը կատարել հետևյալ կերպ Ստուգարք Միջանկյալ ստուգում-30 Միջանկյալ ստուգում-30 Հաճախում 10 4.Ընթացիկ ստուգում30 Քննություն Միջանկյալ ստուգում-30 Միջանկյալ ստուգում-30 Հաճախում 10 Ընթացիկ ստուգում10 Ամփոփիչ ստուգում30
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Ամբիոնի նիստերի ընթացքում քննարկվել են տարաբնույթ հարցեր.որոնք նպաստել են աշխատանքների արդյունավետությանը:Եզրահանգումներ էկատարվել:Քննարկվող հարցերի շրջանակը վերաբերվել է ընդունելության քննությունների արդյունքներին;Ամբիոնի տեխնիկական վեազիննմանը դասալսումների գրաֆիկի հաստատմանը:Ուսումնական և մասնագիտական պրակտիկաների կազմակերպմանը:Անհատական ժամերի իրականացման գործընթացին և ինտերակտիվ ուսուցմանը:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Պրակտիկ հաշիվ	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	դասախոս	Ընդ-վոՂ
Հաստիքային	10/6		1		4		12	
Համատեղող	5/		2				3	
Ժամավճարային								
Ընդամենը	21		3		4		14	21
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
			3	5	5	8		21

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ամբիոնի աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվել ուսումնամեթոդական և ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ամբիոնի վարիչ Ռ.Երզինկյանը 2017-ի ապրիլին /Մշակույթների երկխոսություն/ միջազգային 11-րդ գիտաժողովում ելույթ է ունեցել /Առարկայական նկարագրերը որպես ժամանակակից ուսումնառության մաս / թեմայով: Ամբիոնի դասախոսները մասնակից են եղել մի շարք գեղարվեստական, վավերագրական, հեռուստաժրագրերի և ֆիլմերի նկարահանումներին:

Ուսանողները մասնակցել են, հեռուստաընկերություններում կազմակերպած հաղորդաշարերին՝ զուգահեռաբար գործնականում ծանոթանալով հաղորդումների պատրաստման առանձնահատկություններին: Ուսանողները մասնակցել են մի շարք ցուցահանդեսների, , որի շրջանակներում ստացել են պատվոգրեր մրցանակներ արժանացել խրախուսանքների:Եռամսյակը մեկ կազմակերպվել են տարբեր կուրսերի ցուահանդես-հաշվետվություններ:Անցկացվել են նաև արտագնա դասընթացներ տարբեր մարզերի պատմամշակութային վայրերում: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են վարպետաց դասեր:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից առարկայական նկարագրերը կազմվել են ըստ սահմանված կարգի:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնի բոլոր նկարագրերը տեղադրված են էլեկտրոնային հարթակում:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ/ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ, ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ, ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
մայիսի 3-ին Գեղարվեստական լուսանկարչության բակալավր և մագիստրատուրա 1-ին կուրսերի ուսանողները հանդես եկան /Սկիզբ/ խորագիրը կորող ցուցահանդեսով որը անցկացվեց ՀԱՅԱՐՏ մշակութային կենտրոնի ցուցասրահում: Ուսանողների լուսանկարները ներկա գտնվող արվեստագետները բարձր գնահատեցին: Ամբիոնի դասխոս Արմեն Համբիկի Խաչատրյանի Ֆիլմը՝<Վերջին ցանկություն>վերնագրով Մինսկում«Eurasia.DOC» փառատոնի ժամանակ արժանացել է գլխավոր մրցանակի 29.09 2017թ.
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների ստեղծագործական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, ֆիլմեր հաշվետու տարում:
Ամբիոնի աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվել ուսումնամեթոդական և ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ամբիոնի վարիչ Ռ.Երզինկյանը 2017-ի ապրիլին /Մշակույթների երկխոսություն/ միջազգային 11-րդ գիտաժողովում ելույթ է ունեցել /Առարկայական նկարագրերը որպես ժամանակակից ուսումնառության մաս / թեմայով:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ ցուցահանդես,կինոփառատոն ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Ամբիոնի ՊԴԱ –ի և ուսանողներ կողմից կատարված աշխատանքերը մշտապես ցուցադրվում են տարբեր ցուցահանդեսներում և արժանանում բարձր գնահատանքի:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Օգտագործել սոցիալական ցանցերը՝ որպես դիմորդների թիրախային խմբերի ներգրավման նորարական միջոց, ստեղծել հատուկ ինտերնետային խմբեր, քննարկման հարթակներ, առցանց խորհրդատվություն և դասախոսական անձնակազմի հետ հանդիպում, հարցերի պարզաբանում օնլայն ռեժիմում: Մշտական հանդիպում դպրոցներում աշակերտների հետ:Մշակել խրախուսման միջոցառումներ ավագ դպրոցականների հետ:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Մ.Վիրաբյան	քարոզարշավ	15.11.17 թ
Ուսումնական	Ն.Սարգսյան	քարոզարշավ	03.02.17 թ
Ուսումնական	Ա.Խաչատրյան	քարոզարշավ	30.11.17թ
Ուսումնական	Կ.Մուրադյան	քարոզարշավ	05.13.17 թ
Ուսումնական	Հ.Մանդունյան	քարոզարշավ	30.11.17 թ
Ուսումնական	Ա.Հարությունյան	քարոզարշավ	17.04.17թ

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Մասնագիտական կողմորոշում	Մ.Վիրաբյան	քարոզարշավ	15.11.17 թ
Մասնագիտական կողմորոշում	Ն.Սարգսյան	քարոզարշավ	03.02.17 թ
Մասնագիտական կողմորոշում	Ա.Խաչատրյան	քարոզարշավ	30.11.17թ
Մասնագիտական կողմորոշում	Կ.Մուրադյան	քարոզարշավ	05.13.17 թ
Մասնագիտական կողմորոշում	Հ.Մանդունյան	քարոզարշավ	30.11.17 թ
Մասնագիտական կողմորոշում	Ա.Հարությունյան	քարոզարշավ	17.04.17թ

Երաժշտության ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Երաժշտության ամբիոնը հաշվետու տարում ծրագրել և իրականացրել է հետևյալ աշխատանքները. Վերանայվել են բակալավրի մասնագիտական կրթական ծրագրի /առկա/ կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթղթերը /մասնագրեր, առարկայական նկարագրեր/: Ամբիոնում ՄԿԾ-ների առկա վիճակի գնահատում, կարիքների վերլուծություն Իրականացրել դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկում կրթական ծրագրերում: Ապահովել սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեության իրականացման բավարար պայմաններ Մշակել պրակտիկայի և ուսումնառության կողմնորոշման գործընթացների միասնականացման ծրագիր Մշակել որակի ինքնագնահատման հստակ չափանիշներ

Իրականացրել ամբիոնի կրթական ծրագրերի իրականացման որակի պարբերական ինքնագնահատում Իրականացրել որակի ներքին ապահովման մշտադիտարկում Երաժշտության ամբիոնը հաշվետու տարում իր ծրագրած ուսումնական աշխատանքների ծավալը ծրագրել է ըստ ամբիոնի նիստի կողմից նախատեսված հեռանկարի ու այն կատարել ամբողջապես: Ըստ այդմ կատարված աշխատանքն ամբիոնի նիստի կողմից գնահատվեց բավարար:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Երաժշտության ամբիոնը դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները կառուցում է հաշվի առնելով նմանատիպ բուհերի փորձն ու այն համապատասխանեցնում է ամբիոնի պահանջներին ու մոտեցումներին: Օգտագործվում են ժամանակակից տեխնոլոգիայի ընձեռնված հնարավորությունները, ժամանակին ներդնելով նոր մեթոդներ, ուսումնառության ու դասավանդման արդի մոտեցումներ:Այս ամենի կիրառումը քննարկելով և հաստատելով ամբիոնի նիստերում:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնում կատարվել են ուսանողների գնահատման համակարգի արդյունավետ ապահովմանն ուղղված աշխատանքներ. Ընդլայնվել է սովորողների գրավոր և ինքնուրույն աշխատանքների ստուգման և գնահատման ձևերում ստեղծագործական - հետազոտական աշխատանքների ծավալը: Մշակվել են ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման չափանիշներ, բողոքարկման ընթացակարգ, ապահովվել է դրանց առավել հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը, թափանցիկությունը: Ամբիոնն իր նիստերում սահմանել է գնահատման համապատասխան մեթոդներ և չափանիշներ, մասնավորապես հաշվի առնելով առարկայի իմացությունը, հաճախելությունը, ակտիվությունը, մոտեցումը, նորարարությունը, վերլուծելու և գնահատելու ունակությունը, կոլեկտիվի հետ աշխատելու, ղեկավարելու կարողությունը: Ակադեմիական ազնվությունն ապահովելու համար, ամբիոնում օգտագործվում է ընթերականների ներկայությունը:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկվել են ՝ Ծավալ-դասաբաշխման քննարկում, հաստիքակազմի վերանայում Առարակայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, էլեկտրոնային հարթակի վերանայում Պրակտիկայի անցկացման վայրերի որոշում, ժամկետների հստակեցում, նկարագրերի քննարկում Միջանկյալ քննությունների բանավոր հարցաշարերի կազմում, ծրագրի հստակեցում Դասալսումների քննարկում Համերգային ելույթների նախապատրաստում Ամփոփիչ քննությունների բանավոր հարցաշարերի կազմում, քննարկում Ընթացիկ հարցերի քննարկում:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կախյալ	Դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	ասպիրանտ	Ընդ-ում
Հաստիքային	5	-	3	-	8	-	2	14
Համատեղող	1	-	1	-	-	-	1	2
Ժամավճարային	1	-	-	1	-	-	4	4
Ընդամենը	7	-	4	1	8	-	7	20
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
		1	2	1	6	8	2	20

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Երաժշտության ամբիոնն իր ուսումնամեթոդական գործունեությունը, որը ծրագրավորված էր այս տարվա համար ու հաստատված ամբիոնի նիստում և մշակված ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից հիմնականում իրականացված է համարում: Իրականացման ապահովմանը՝ նպաստելու համար կատարվել են դասալսումներ, հարցումներ ու քննությունների ընթացքում ապահովվել է ընթերականների ներկայությունը:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնը առարկայական նկարագրերի կազմումը հանձնարարել է համապատասխան դասընթացը վարող դասախոսին, որն իր կատարած աշխատանքը ներկայացրել է ամբիոնի վարիչին, որի կողմից հավանության արժանանալուց հետո ներկայացվել ու հաստատվել է ամբիոնի նիստի կողմից:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաններին և ինտերակտիվ մեթոդների կիրառման համար, ամբիոնի դասախոսներն անցել են համապատասխան կուրսեր, որի արդյունքում վերոհիշյալ մեթոդներով աշխատանքը ամբողջապես ներդրվել է ամբիոնում:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
-	1	-	-	1	-

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Չունենք
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Չունենք

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Չունենք

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ

Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Գյումրիի Վերածնունդ միջազգային փառատոն	անսամբլ	7	Գրան պրի անսամբլ
Գյումրիի Վերածնունդ միջազգային փառատոն	դուետ	2	1-ին մրցանակ Մխիթարյան Աշխեն Ոսկանյան Գայանե

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Երաժշտության ամբիոնի դասախոսական կազմը հաճախակի հանդիպումներ է ունենում հանրապետության տարբեր մարզերում, օժանդակելով շրջանավարտներին մասնագիտական կողմնորոշմանը, ներկայացնելու Երաժշտության ամբիոնի աշխատանքըն ուգործիքային կատարողականության մասնագիտական առանձնահատկությունները, անց է կացվում որոշակի խորհրդատվություններ ոչ միայն շրջանավարտների, այլև ծնողների շրջանում, հրավիրելու նրանց մասնակցելու դասընթացներին, ծանոթանալու դասավանդման մեթոդներին: Տարբեր մարզերում կազմակերպվում են նաև դաս համերգներ:

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ճանաչողական հանդիպում	Ա.Կ.Գևորգյան	հանդիպում ծանոթացում մասնագիտությանը	Մարտ

Հեռուստառադիոլրագրության ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները, մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ուսումնասիրումները քննարկումները, դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքները, դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը:

Հաշվետում տարում ամբիոնում դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացումն ընթացել է երեք եղանակով՝ դասավանդման նորագույն մեթոդների ամբողջական կամ մասնակի կիրառմամբ, ինտերակտիվ մեթոդների ներդրմամբ և տեխնիկական նոր միջոցների օգտագործմամբ, ինչը հնարավորություն տվեց ավելի հասցեական ու արդյունավետ դարձնելու կրթական գործընթացն ու արդյունքները:
Հետևանքում ուսանողները հայեցողական ունկնդրից վերածվեցին գիտելիքակերտման գործընթացի մասնակցի:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսումնառության արդյունքներին համապատասխան ամբիոնում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ուսումնառողների գնահատման մոտեցումների վերանայումները և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները:
Սահմանվել են հետևյալ բաղադրիչները՝ Քննություն Բաղադրիչ - Միջանկյալ 1 - 30% Բաղադրիչ - Միջանկյալ 2 - 30% Բաղադրիչ – Հաճախում - 10% Բաղադրիչ – Ընթացիկ ստուգում - 10% Բաղադրիչ – Ամփոփիչ ստուգում - 20% Ստուգարք 1. Բաղադրիչ - Միջանկյալ 1 - 30% 2. Բաղադրիչ - Միջանկյալ 2 - 30% 3. Բաղադրիչ – Հաճախում - 10% 4. Բաղադրիչ – Ընթացիկ ստուգում - 30%
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԺԱՄԵՐ: Դասախոսները չսահմանափակվեցին զուտ լսարանային հանդիպումներով, այլ աշխատանքներն իրականացրեցին նաև հեռուստատեսային և ռադիոհարթակներում, ինչ արդյունքում անհատական ժամերն ավելի արդյունավետ դարձան: ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ: Բացի սահմանված գրաֆիկից, կիրառվեց փոխադարձ դասալսումների պրակտիկա: ԿՈՒՐՍԱՅԻՆ, ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ: Առաջարկվեցին և հաստատվեցին այնպիսի թեմաներ, որոնք իրենց թեմատիկ ընդգրկմամբ բացառեն մեխանիկական պատճենումների դրսևորումները: ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ: Հատուկ շեշտվեց պրակտիկայի նշանակությունն ու կազմակերպման արդյունավետության բարձրացման կարևորությունը, ինչը և ամբողջովին իրագործվեց:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կոնկուրսային տեղամաս	Դոցենտ	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-ում
Հաստիքային	7 / 8		1	2	3	2	7	

Համատեղող	5 / 2	1	1	1	1		3	
Ժամավճարային	/ 1						1	
Ընդամենը	23	1	2	3	4	2	11	23
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
Հեռուստառադիոլրագրության ամբիոն		-	2	4	11	4	2	23

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ուսումնասիրվել և գործադրվել են լրագրության արդիական ուսուցման մեթոդներ, ուսումնական գործընթացում ճշտվել և լրամշակվել են գործող մոտեցումները:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Առարկայական նկարագրերում հատկապես կարևորվել է դասախոսությունների բաղադրիչը, որոշ դեպքերում քննարկվել և վերանայվել են տեղադրված տեքստերը՝ համապատասխանեցվելով ելքայի արդյունքների պահանջներին:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Գործող ուսումնական ստուդիայում կատարելագործվել են կիրառվող էլետրոնային գրատախտակի, մոնտաժային համակարգիչների տեխնիկական հնարավորությունները:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Ամբիոնի դասախոսների մեծ մասը ստեղծագործող մարդիկ են, ովքեր այլ հարթակներում դրսևորել են իրենց լրագրողական վարպետությունը՝ հնարավորինս ծառայեցնելով դասավանդման նպատակներին:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Նշված միջոցառումները նպաստել են ուսանողների գիտահետազոտական կարողությունների զարգացմանը:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Լսարանային քննարկումների եղանակով դիտարկվել և ուսումնական գործընթաց են ներմուծվել ուսանողների հետազոտական զննումների շատ արդյունքներ:

Պրոֆեսորադասախոսական

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Բաղդասարյան Արթուր Վանիկի	Կրթական բարեփոխումներ. Հարցեր և պատասխաններ	Ոսկան երևանցի	103 էջ

		2017	
Երիցյան Սերգո Սարգսի, Արմեն Ճուղուրյանի, Ատոմ Մխիթարյանի հետ համահեղինակությամբ	Ուսումնամեթոդական ուղեցույց: Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կազմակերպական հիմունքներ»,	«Էդիթ-Պրինտ», 2017	208 էջ
Երիցյան Սերգո Սարգսի	«Թամամշյանցներ. բնիկ թիֆլիսցիների գերդաստանը»,	«Էդիթ-Պրինտ»,	208 էջ
Երիցյան Սերգո Սարգսի, Ճուղուրյան Արմենի հետ համահեղինակությամբ	«Բոլոնիայի գործընթացի ուղենիշները»,	«Էդիթ-Պրինտ»	112 էջ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Բաղդասարյան Արթուր Վանիկի	Համագործակցային միջավայրը՝ հանրակրթության կազմակերպման պայման	Էջ 35-42.
Մարկոսյան Դիանա Հովիկի	Տեղեկատվության ընկալումը և մատուցումը լրագրողի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում	Էջ 139-145
Առաքելյան Արսեն Ռուբենի	Культура как средство выживания // Сборник научных статей по материалам международной научно-практической конференции "Современные информационно-коммуникационные и коммуникативные технологии в глобальном мире: вызовы и возможности"/	с. 193-200.
Արսեն Առաքելյան Ռուբենի	Культура как средство выживания: возрождение Шуши после освобождения // Материалы научной конференции, посвященной 25-летию освобождения г. Шуш. Арцахский государственный университет. Степанакерт, 8-9 мая, 2017 г	
Արսեն Առաքելյան Ռուբենի	Тысячекрылый журавль японского кино // Материалы III Международной японоведческой научной конференции "Изменение мировоззренческой парадигмы от европоцентризма к универсализму". Российско-Армянский университет. Ереван, 22 сентября 2017 года (впечати)	
Аракелян А.Р., Ерицян А.Е.	Кинематограф как эффективное средство пропаганды и компонент мягкой силы (мировой опыт и Армения) // Материалы III Международного научно-практического форума "Проблемы национальной безопасности в условиях глобализации и интеграционных процессов (междисциплинарные аспекты)". Российско-Армянский университет. Ереван, 3-4 ноября 2017 г. (впечати)	
Արսեն Առաքելյան Ռուբենի	Китайское киноисскуство в мировой палитре кино// Материалы III Международной научной конференции "Конфуцианские чтения". Российско-Армянский университет. Ереван, 29-30 апреля 2017 года. (впечати)	
Արսեն Առաքելյան Ռուբենի	Культура как средство выживания // Сборник научных статей по материалам международной научно-практической конференции "Современные информационно-коммуникационные и коммуникативные технологии в	с. 193-200.

	глобальном мире: вызовы и возможности"/ гл. ред. Л. В. Савченко. – Симферополь: ИТ «АРИАЛ», 2017	
Վարդազարյան Գայանե Վլադիմիրի	НЕОПРАВДАННАЯ ПЕРЕВОДЧЕСКАЯ <<ОТСЕБЯТИНА>> (ЛИСТАЯ СТРАНИЦУЫ СМИ)	с.26-45

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
մասնագիտական կողմորոշում	Ամբիոնի վարիչ Լ. Գալստյան, դասախոս Վ. Օլքինյան	քարոզարշավ	13.04.2017 թ.
մասնագիտական կողմորոշում	բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Եիրցյան, դասախոս Տիտանյան Կ.	քարոզարշավ	16.02.2017թ.
մասնագիտական կողմորոշում	մ.գ.թ., դոցենտ Բաղդասարյան Ա., դասախոս Ջիրջյան Է.	քարոզարշավ	25.02.2017 թ.
մասնագիտական կողմորոշում	Տիտանյան Կ.,	քարոզարշավ	04.03.2017 թ.
մասնագիտական կողմորոշում	դասախոս Օլքինյան Վ.	քարոզարշավ	15.03.2017 թ.
մասնագիտական կողմորոշում	դասախոս Ղուկասյան Ա.	քարոզարշավ	22.03.2017 թ.
մասնագիտական կողմորոշում	դոցենտ Կ.Քոչարյան,	քարոզարշավ	20.11.2017 թ
մասնագիտական կողմորոշում	Ամբիոնի վարիչ Լ. Գալստյան, դասախոս Ա. Բախտամյան	քարոզարշավ	22.11.2017 թ.

19. Սկզբնական կրթության ֆակուլտետ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում իր գործունեությունը ծավալել է ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի համաձայն (Տե՛ս 2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիների ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանները. հաստատված 2016 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1 և 2017 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1 նիստերով), որտեղ արտացոլված և քննարկվող հարցերը բխում են ՀՊՄՀ 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրի և սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանից: Այսպես օրինակ.

Ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվել են կրթության որակի բարելավմանն ուղղված հարցերը՝ ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Հարց, որը համալսարանի ռազմավարական ծրագրի առաջին նպատակն է ՝ Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ: Այդ հարցերն օրինակ առնչվում են մասնագիտական կրթական ծրագրերի մասնագիտական և բովանդակային վերափոխումներին, ընտրովի դասընթացների թիրախավորմանը, մանկավարժական պրակտիկաների թղթապանակների բովանդակության հստակեցմանն ու հարստացմանը, ամբիոնների գիտաուսումնական և հետազոտական արդյունքների փոխանցմանը ուսումնական գործընթաց, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդների կիրառմանը ուսուցման գործընթացում, դասախոսների և ուսանողների գործունեության մշտադիտարկմանը, վերջիններիս արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկությունների ձևակերպմանը և այլն (Տես՝ ամբիոնների, ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ, դասալսումների գրանցումներ, պրակտիկայի մշտադիտարկումների հաշվետվություններ):

Ուսանողներին առնչվող հարցերի, նրանց կրթական կարիքների բացահայտման ուղիները.

1.Ֆակուլտետի խորհրդի կազմի 25% -ը ուսանողներ են, որոնց թվում ՝ ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները: Նախ՝ նրանք տարեսկզբին ֆակուլտետի խորհրդի հաստատմանն են ներկայացնում իրենց աշխատանքային պլանները(Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2016թ. հոկտեմբերի 26-ի թիվ 2 արձանագրությունը և 2017 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 2 արձանագրությունը), որոնք կառուցվում են ուսանողների կարիքների հիման վրա, ֆակուլտետի խորհրդի նիստերում ուսանողները մասնակցում են քննարկումների, հանդես գալիս առաջարկություններով: Այսպես օրինակ, ֆակուլտետի խորհրդի նիստում (2017թ.սեպտեմբերի 29, հոկտեմբերի 30 թիվ 1 և թիվ 2 նիստեր) ուսանողների կողմից բարձրացվել է և քննարկվել ամփոփիչ ատեստավորմանը ավարտական աշխատանքներ գրելու հարցը:

Որոշվել է աջակցել ուսանողներին, նաև դասախոսներին այդ հարցում:

Կազմակերպվել են սեմինարների շարք «Ինչպես գրել ավարատական աշխատանք» խորագրով (2017թ. հոկտեմբերի 3-4-ը, կից հայտարարություն, ներկայաթերթիկներ, PPt ներկայացումներ):

Հանդիպումներ առկա (2017թ. հոկտեմբեր) և հեռակա (2017թ. նեյեմբերի 17) ուսուցման համակարգերի ուսանողների հետ ամբիոնների վարիչների մասնակցությամբ (կից հանդիպման ներկայաթերթիկներ), խմբային քննարկումներ:

Վերանայել են ավարտական կուրսերում նախատեսված ընտրովի դասընթացները, նախատեսվել են հետազոտական ուղղվածությամբ ընտրովի դասընթացներ:

Ապագայի համար՝ նոր ուսումնական պլաններում ավարտական աշխատանքներին միտված ընտրովի դասընթացները նախատեսել արդեն իսկ 3-րդ կուրսերից, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան մանկավարժական պրակտիկային զուգահեռ հետազոտական աշխատանքի հմտություններ ձեռք բերել :

2. Դեկանի կողմից պարբերական շրջայցեր և հանդիպումներ ուսանողների հետ, որտեղ բացահայտվում են առկա խնդիրները: Այսպես օրինակ, սեպտեմբերին շրջայցերի ժամանակ 1-ին կուրսերի ուսանողները ցանկություն հայտնեցին առավել մանրամասն ծանոթանալ գնահատման մեթոդաբանությանը: Հանձնարարվեց ֆակուլտետի ամբիոնների հատկապես առաջին կուրսերում դասավանդող դասախոսներին իրենց դասընթացների թեմատիկ

տրոհումներում, ներածական դասախոսությունների ժամանակ մասնրամասնել առարկայական նկարագիրը՝ ակնառու ներկայացնելով գնահատման բաղադրիչները: 3.Հանդիպումներ և քննարկումներ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչների հետ: 4.Հարցումների կազմակերպում և արդյունքների վերլուծության հիման վրա գործողությունների, քայլերի մշակում: Այսպես, ՀՊՄՀ Կրթության բարեփոխումների և որակի վարչության կողմից (29.05.2017թ.) իրականացված հարցման արդյունքների վերլուծություն և քննարկում (Տես ՀՊՄՀ Կրթության բարեփոխումների և որակի վարչություն կողմից ուղարկված վերլուծությունը և ֆակուլտետի խորհրդի 2017թ. թիվ 3 նիստի արձանագրությունը): 5. Հանդիպումներ ծնողների հետ, ֆակուլտետային միջոցառումներին նրանց մասնակցության ապահովում: Արտաքին շահակիցների կարիքների բացահայտման ուղիները. 1.Այցեր Երևանի և ՀՀ մարզերի կրթական հաստատություններ.միայն 2017թվականին շուրջ 30 այց (Տես 2017թ. դեկանի հաշվետվությունները ռեկտորատի նիստերին և այցելությունների գրաֆիկները) 2.Հանդիպումներ և քննարկումներ կրթական հաստատությունների տնօրենների, վարիչների հետ (Տես «Դպրոց-բուհ միասնական պահանջներ և արդյունավետ համագործակցություն» սեմինար-քննարկում. 2017թ. մայիսի 6) 3.Մանկավարժական պրակտիկայի բազաներ հանդիսացող կրթական հաստատությունների հետ համատեղ բովանդակային աշխատանքների քննարկում.նաև Googl-classroom կրթական հարթակում 4. Սկզբնական կրթության հիմնախնդիրներին նվիրված ամենամյա գիտաժողովների կազմակերպում և արտաքին շահեկիցների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների հրավիրում (Տես« Սկզբնական կրթության հիմնախնդիրները» ուսանողական գիտաժողով 2017թ. մարտ) Ուսանողների՝ կրթական ծրագրերի բավարարվածության բացահայտմանն ուղղված ուսումնառության արդյունքների վերլուծության հիման վրա սկզբնական կրթության ֆակուլտետի և ֆակուլտետի ամբիոնների իրականացրած գործողությունները Արտաքին շահակիցների կարիքների բացահայտման ուղիները. Այցելություններ դպրոցներ, հանդիպումներ մանկավարժների և աշակերտների հետ (Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը այցելել է Երևանի և ՀՀ մարզերի թվով 30 դպրոցներ և մանկավարժական քոլեջներ) Համատեղ միջոցառումների կազմակերպում, սեմինար-քննարկումների և գիտաժողովների . գոր, թիվ Օրինակ ուսուցչի օգնականի անհրաժեշտությունը, այս համատեքստում կամավորական գործունեության շրջանակներում մեր ուսանողները որպես ուսուցչի օգնական աշխատում են դպրոցներում և մանկապարտեզներում.
Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:
Ֆակուլտետի ռազմավարական ծրագրի շուրջ աշխատանքներն իրականացվել են ամբիոնների դասախոսների ներգրավմամբ: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակմանը ներգրավված են եղել ֆակուլտետի որակի ապահովման խմբի անդամները, ինչպես նաև ուսանողներ: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակման

աշխատանքներին ներգրավված ուսանողներն ու դասախոսները առաջնորդվել են դասախոսների և ուսանողների շրջանում կատարած բանավոր հարցումների հիման վրա: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հիմնական ուղղություններն ու դրանց շուրջ կատարվող աշխատանքները քննարկվել են ամբիոնների նիստերի ընթացքում (Տես՝ 2016 թ. նոյեմբերի 28-ի թիվ 3 արձանագրություն, համալսարանի ռազմավարական ծրագրի քննարկման մասին հաշվետվություն 16.02.2016թ., նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 05.02.2016թ. թիվ 2 արձ., մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 09.02.2016թ. նիստի արձ., մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 8 արձ.): Ռազմավարական պլանի գործողությունների կատարման պլանը և իրագործման ընթացքը քննարկվել է ֆակուլտետի խորհրդի նիստերում (Տես՝ 2016 թ. հունիսի 30-ի թիվ 10, 2016 թ. նոյեմբերի 28-ի թիվ 3, 2017 թ. մարտի 29-ի թիվ 6 արձագրություններ, համալսարանի ռազմավարական ծրագրի քննարկման մասին հաշվետվություն 16.02.2016թ.):

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, որքանով դրանք համապատասխանում մասնագիտական որակավորմանը ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:
Ուսանողների կրթական կարիքների վերլուծության հիման վրա ֆակուլտետում և ամբիոններում քննարկվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի բարելավման հարցերը, արվել առաջարկություններ (Տես՝ 14.04.2017թ. դեկանի գրությունը): Վերանայվել և խորհրդի նիստով քննարկվել են ԲԿԾ և ՄԿԾ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները(Տես՝ 2016- 2017 ուստարվա ֆակուլտետի խորհրդի թիվ 11 արձանագրություն): Ուսումնասիրվել են ֆակուլտետի կրթական ծրագրերի համապատասխանությունը Եվրոպական բարձրագույն մասնագիտական կրթության և ՀՀ նոր սերնդի ՈԱԾ-ի պահանջներին՝ դասընթացների կոմպետենտային համակարգը ձևակերպելու նպատակով: ՈԱԾ-ի պահանջների հետ ծանոթանալու նպատակով ֆակուլտետը մասնակցել է գիտագործնական համաժողովների /ՈՈԱԿ, փետրվար, 2017թ.մասնակցություն որակի ապահովման շաբաթին/ ՀՄՊՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից կազմակերպված մի շարք սեմինարների /մայիս–հունիս, 2017թ./ Վերանայվել են (2017 թ. սեպտեմբեր-նոյեմբեր) ԲԿԾ և ՄԿԾ-ի կրթական ծրագրերի մասնագրերի մի շարք կետեր (հիմք ՀՄՊՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության գրությունը ուղղված դեկաններին. 20.11.2017թ.) ՈԱԾ-ի պահանջների հիման վրա փոփոխության են ենթարկվել վերջնարդյունքների ձևակերպումները, համապատասխանեցվել են վերջնարդյունքներն ու ԱՈՒՄՓ-ի դասախոսությունների դասավադման և ուսումնառության մեթոդները: Կատարված փոփոխություններով կրթական ծրագրերի մասնագրերը տեղադրվել են GOOGLE DRIVE հավելվածում: (ՄԿԾ–ների մեջ կատարված փոփոխությունները իրականացվել են նույն վարչության կողմից ներկայացված մեթոդական ցուցումներին համապատասխան:) ՝ Մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ընտրովի դասընթացները ենթարկվել են էական փոփոխության՝ հաշվի առնելով այն վերջնարդյունքները, որոնք ներառվել են մասնագրերում, ինչպես նաև մանկավարժական պրակտիկայի ընթացքում շագող կարիքները:

Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ֆակուլտետի ամբիոններում, ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են դասավանդման մոտեցումների և մեթոդների արդիականացման խնդիրները: Ամբիոնի վարիչների կողմից իրականացվող դասալսումների արդյունքների ներկայացման ժամանակ քննարկվում են նաև դասերի ժամանակ կիրառված մեթոդների արդյունավետությանը: Կազմակերպվում են սեմինարներ (Տես՝ խորհրդի նիստերի արձանագրություններ, սեմինարների ներկայաթերթիկներ.«ՏՀՏ –ի կիրառումը բուհում որպես ուսանողների առաջադիմության բարձրացման միջոց» 13.04.2017թ., «Ինչպես իրականացնել Case –stady» 31.03.2017թ., 07.04.2017թ.):
Ուսանողների գնահատման համակարգը ֆակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:
Գնահատման համակարգի, բաղադրիչների, չափանիշների հարցերը մշտապես քննարկվում են ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում (Տես՝ 2017-2018 ուստարվա ֆակուլտետի խորհրդի թիվ 1 արձանագրություն.Հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ներկայացում և քննարկում. 29.09.2017թ.): Հիմնական շեշտը դրվում է գնահատման չափանիշների մշակման և գնահատման ձևերի ստեղծագործական–հետազոտական բնույթի հիմնավորման վրա: Նկատի ունենալով ընթացիկ գնահատման մեթոդաբանությունը՝ ինչը ենթադրում է ստեղծագործական բնույթի առաջադրանքներ,ուսանողի ակտիվութունը և ուսումնական գործունեության գնահատումը միջանկյալ գնահատականների միջև ընկած ժամանակահատվածում, ֆակուլտետի խորհրդի նիստում քննարկվել է նաև ընթացիկ գնահատման նիշային տարբերակից անցնել խոսքային տարբերակի՝ ստուգված-չստուգված, հանձնել է- չի հանձնել: Ստեղծագործական բնույթի առաջադրանքները դժվար է նիշային գնահատման ենթարկել, դրան զուգահեռ նաև համեմատական գնահատել (Տես՝ ֆակուլտետի առցանց առաջարկությունները.24.11.2016թ.): Գրագողության դեմ պայքարի նպատակով մագիստրատուրայում սովորող ուսանողները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում են հաշվետվություն կատարած աշխատանքների մասին: Գրագողության բացառմանը նպաստում են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը, որոնք ստիպում են ուսանողին ինքնուրույն հետազոտություն անել:Այս հարցին նվիրված հատուկ ամբիոնային նիստեր են կազմակերպվում, թեմաների ձևակերպման և հաստատման հարցը մի քանի անգամ լսվում, որից հետո նոր հաստատվում է ֆակուլտետի խորհրդի նիստում ((Տես՝ 2017-2018 ուստարվա ֆակուլտետի խորհրդի թիվ 1, 2-րդ 3-րդ արձանագրություններ):
Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու և ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
ՄԿԾ–ների վերանայման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը, կրթական ծրագրերը համեմատվել են այլ երկրների կրթական ծրագրերի հետ: Ուսումնական պլաններում ներառված առարկաները համապատասխանեցվել են տարբեր երկրներում նույն ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունների պլանների հետ: Դրա շնորհիվ ֆակուլտետը կարողանում է իրականացնել ուսանողների փոխանակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ (Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում 2016-2017 ուստարում՝ 1 ուսանող. 2016թ. սեպտեմբերից 1 կիսամյակ, 2017-2018ուստարում՝ 2 ուսանող՝ 2018թ. հունվարից՝ 1կիսամյակ): Համադրելի և համատեղ իրականացման համար իրատեսական է

Ֆինլանդիայի Օուլու համալսարանի Միջմշակութային ուսուցիչների կրթություն մագիստրոսի կրթական ծրագիրը:
Շատ են աղերսները նաև Բելառուսի մանկավարժական, ՌԴ համալսարանների նույն կրթական ծրագրերի հետ, ինչը թույլ է տալիս իրականացնել համատեղ հետազոտություններ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում (3 մագիստրոսական թեզ, 7 ավարտական աշխատանք կունենան համաղեկավարներ.տես՝ 2017-2018 ուստարվա ֆակուլտետի խորհրդի նիստի թիվ 2 արձանագրություն և Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի՝ռեկտորին ուղղված զեկուցագիրը. 24.10.2017թ.):
Մասնագիտական ծրագրերի համադրելիությունը հնարավորություն է ընձեռում նաև մասնագետների, դասախոսների ՝
փոխադարձ այցելությունների և դասախոսությունների, վարպետաց դասերի ներկայացման (27.04.2017թ. դասախոսություններ Չիկագոյի Իլինոյսի համալսարանի պրոֆեսոր Արթին Գոնչույի կողմից, 17-18.05.2018թ. դասախոսություններ Ֆինլանդիայի Օուլու համալսարանի կրթության ֆակուլտետի դասախոս Պիրիո Սուվիլետոյի կողմից. Տես համապատասխան օրակարգերը, ներկայաթերթիկները)
վերապատրաստումների (Տես՝ Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական կրթության ֆակուլտետի դոցենտ Ելենա Ռուբլևսկայայի վերապատրաստման ծրագիրը. 04.12.-07.12.2016թ.),
գիտաժողովների մասնակցության(Տես՝ Սկզբնական կրթության հիմնախնդիրները խորագրով գիտաժողովի նյութերը.մարտ 2017)
հոդվածների տպագրության հարցերում(Տես՝ Журнал “Воспитатель ДОУ”-2017, М., Издательство,“ТЦ Сфера”,N4, N5. ամբողջ համարը կազմվել է սկզբնական կրթության ֆակուլտետի և հատկապես նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսների հոդվածներով):

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:

Ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար իրականացվել են կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ առաջնորդվելով ՀՊՄՀ և սկզբնական կրթության ֆակուլտետի 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը, որակի ապահովման չափանիշներն և չափորոշիչները, ինչպես նաև վերլուծելով միջազգային առաջավոր փորձը: կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացվել է ՀՊՄՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի հիման վրա: /Տե՛ս ՀՊՄՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ, հաստատված 2012 թ. Համալսարանի գիտխորհրդի սեպտեմբերի 20-ի նիստում/: Կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացվել է տարվա ընթացքում ամբիոնի վարիչների կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում սկզբնական կրթության ֆակուլտետի կողմից մշտադիտարկումներն իրականացվել են դասալսումների, դասախոսներկի և ուսանողների հետ իրականացրած խորհրդատվությունների, մնացորդային գիտելիքների ստուգման միջոցով /վերջինն իրականացվել է մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից, արդյունքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստում /Տե՛ս 2017թ. հոկտեմբերի 29-ի թիվ 2 նիստի արձանագրություն/
Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերի ընթացքում, կատարվում են առաջարկություններ: Դրանց հիման վրա բովանդակային փոփոխություններ են կատարվում տարբեր առարկաների դասավանդման, բովանդակության մեջ:
Կրթական ծրագրերի մշտադիտարկման նպատակով խորը վերլուծության են ենթարկվում նաև մանկավարժական պրակտիկայի արդյունքները, ուսանողների ցուցաբերած գիտելիքերը, կոմպետենցիները:

Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքում քննարկումներ են կազմակերպվում նաև պրակտիկաների բազաների ներկայացուցիչների հետ՝ նրանց կարիքները բացահայտելու, գործատուի պահանջներին համապատասխան կադրեր պատրաստելու նպատակով: Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքն ու արդյունքները պարբերաբար քննարկվում են ինչպես ամբիոնի նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում: Քննարկման արդյունքում փոփոխություններ են կատարվում դասավանդվող առարկաների բովանդակության, ինչպես նաև դրանց վերջնարդյունքների մեջ: Մշտադիտարկման արդյունքների հիման վրա փոփոխություններ և համալրումներ են կատարվում ուսանողների կողմից ընտրվող դասընթացների ցանկում: Այդ նպատակով ամբիոններում ստեղծվել են ընտրովի դասընթացների բազա, որը հնարավորություն է տալիս հետևել գիտության մեջ առկա նորություններին և դրանք հասանելի դարձնել ուսանողների համար:
Դպրոց-բուհ կրթության հիմնախնդիրներին նվիրված հանդիպումներ և քննարկումներ կրթական հաստատությունների տնօրենների, վարիչների հետ (Տես «Դպրոց-բուհ միասնական պահանջներ և արդյունավետ համագործակցություն» սեմինար-քննարկում. 2017թ. մայիսի 6):

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:						
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի: 27.11.2017թ. դրությամբ						
Ուսանողների թիվը	1375	Ընդա-մենը	Տարր.մա-նկ.և մեթ.	Տարր.մանկ. և մեթ.ռ.լ.ուս.	Ն/դ մանկ.և մեթ.	Մանկ.և հոգեբ.(ն/դ) Մանկ.հոգեբ.(մա-գիստրատուրա)
Բակալավրի	առկա	487	291	22	97	77
	հեռակա	591	376	19	118	78
Մագիստրոսի	առկա	129	58	-	35	36
	հեռակա	168	168	-	-	-

Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով						
Ուսանողների արտահոսք						
Հաստատություն/երկիր		Առկա	հեռակա			
1	Ռուսաստան	2	-			
2	Դիմումի համաձայն վերականգման նպատակով	6	11			
3	ԱՄՆ	-	1			
Ուսանողների ներհոսք						
	Հաստատություն / երկիր	Առկա	հեռակա			
1	Երևանի պետական Հումանիտար քոլեջ	4	2			
2	Ա. Բակունցի անվան պետական քոլեջ	-	1			
3	Բերդի պետական քոլեջ	-	1			
4	Աբովյանի պետական քոլեջ	2	1			
5	Արմավիրի պետական ինդուստրյալ մանկավարժական քոլեջ	-	1			
6	Սևանի պետական քոլեջ	-	2			

7	Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջ	-	1			
8	Արարատի պետական քոլեջ	1	5			
9	Մխրթար Սեբաստացի կրթահամալիր	1	-			
10	ԱՄՆ	-	1			
Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	Առկա	պետականից կտրված	հեռակա	պետականից կտրված	
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	13	22	26	15	
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	4	-	12	-	

1. Մասնագիտական կողմնորոշման նպատակով Այցեր Երևանի և ՀՀ մարզերի կրթական հաստատություններ. 2017 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ 7 մարզերի տարբեր դպրոցներից 27 դիմորդ (Տես 2017թ. դեկանի հաշվետվությունները ռեկտորատի նիստերին և այցելությունների գրաֆիկները):
2. Դպրոց-բուհ կրթության հիմնախնդիրներին նվիրված հանդիպումներ և քննարկումներ կրթական հաստատությունների տնօրենների, վարիչների հետ (Տես «Դպրոց-բուհ միասնական պահանջներ և արդյունավետ համագործակցություն» սեմինար-քննարկում. 2017թ. մայիսի 6):
3. Մանկավարժական պրակտիկայի բազաներ հանդիսացող կրթական հաստատությունների հետ համատեղ բովանդակային աշխատանքների իրականացում, քննարկումներ նաև Googl-classroom կրթական հարթակում:
4. Սկզբնական կրթության հիմնախնդիրներին նվիրված ամենամյա գիտաժողովների կազմակերպում և կրթական հաստատությունների ներկայացուցիչների հրավիրում (Տես՝ «Սկզբնական կրթության հիմնախնդիրները» ուսանողական գիտաժողով 2017թ. մարտ):

Ուսանողների և աշակերտների համատեղ քննարկումների կազմակերպում (2016թ. նոյեմբերի 7՝ բանավեճի կազմակերպում Երևանի թիվ 198 դպրոցի բանավեճի խմբի հետ.թեման՝ «Արդյոք դպրոցում ձեռք բերված գիտելիքները բավարար են բուհ ընդունվելու համար».տես՝ դեկանի հաշվետվությունը ռեկտորատի նիստին՝ 10.01.2017թ.), մասնագիտական կողմնորոշմանն աջակցող տարաբնույթ միջոցառումներ (2016թ. դեկտեմբեր՝ Երևանի թիվ 198 դպրոցի 12 աշակերտների մասնակցությունը «Համալսարանի լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը, 2017թ. մարտի 22՝ սկզբնական կրթության ֆակուլտետի մանկական նվագարանների խմբի համերգը Արմավիրի մարզի Թաիրով և Փարաքար գյուղերի միջնակարգ դպրոցներում, 2017թ. նոյեմբերի 8՝ ամենամյա ցուցահանդես ֆակուլտետում Երևան քաղաքի 8 դպրոցների աշակերտների մասնակցությամբ.լուսաբանումները համալսարանի կայքէջում և դեկանի հաշվետվությունները ռեկտորատի նիստին՝ 14.03.2017թ., 27.06.2017թ., աշակերտների՝ բուհ, ֆակուլտետ այցերի կազմակերպում (01.12.2017թ.Երևանի թիվ 1 հատուկ կրթահամալիրի ավագ դասարանների աշակերտների մասնակցությունը ուսանողների դասապրոցեսին. լուսաբանումը՝ տես՝ համալսարանի պրակտիկաների Facebook-յան էջում) ֆակուլտետի ուսանողների կամավորական աշխատանքը դպրոցներում՝ որպես մոտիվացիա, որպես մասնագիտությունը ներկայացնելու լավագույն օրինակ. 50 կամավոր, որից 20-ը ՀՊՄՀ Վահան Թոթովենցի անվան թիվ 57 դպրոցում (Տես՝ Google classroom կրթական հարթակում բացված «Աշխատող կամավորներ» դասընթաց-էջը), հասարակական կազմակերպություններում (2017թ. հունիս-օգոստոս ամիսներ՝ մասնակցություն «Արի տուն» ծրագրին՝ 5 կամավոր, տես՝ հավաստագրերը և համալսարանի գիտական խորհրդի 2017թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 8-Լ հրամանը), ամառային ճամբարներում (2016-17 ուսումնական տարում ամառային ճամբարներում ցանկացել են աշխատել ֆակուլտետի 23 ուսանող): Օլիմպիադաների կազմակերպում և աշակերտներին մրցանակների տրամադրում

(2017թ. մայիսի 5՝ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ լավագույն ստեղծագործությունների մրցույթ. լուսաբանումները համալսարանի կայքէջում)

5. Մեդիա միջոցների օգտագործում. «Հաջողության բանաձև» հաղորդաշար հեռուստատեսությամբ, «Մանկավարժական համալսարան» թերթ, ռադիո «Ֆամա» ընդունելության վերաբերյալ տեղեկատվության տեղադրում համալսարանի և ֆակուլտետի կայքէջում, ֆակուլտետի ձեռքբերումների, ուսանողների հաջողությունների ներկայացում, քննարկումների կազմակերպում սոցցանցերում, Facebook-յան էջերում (Տես՝ ֆակուլտետի դասախոսների, ուսանողական խորհրդի, գիտական ընկերության, կամավորական գործունեության վերաբերյալ Facebook-յան էջերը), նամակ-հրավերքների տրամադրում ՀՀ կրթության վարչություններին, տեղեկատվական նամակների, ֆակուլտետի ուսանողների ձեռքի աշխատանքների, համալսարանի և ֆակուլտետի բուկլետների, բացիկների տարածում Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներում, կրթական և հասարակական կազմակերպություններում:

6. Ֆակուլտետում աշխատող դասախոսների՝ դիմորդների ուղղորդմանն ուղղված անհատական աշխատանքը;

Այս աշխատանքների արդյունավետությունը ֆակուլտետ դիմող դիմորդների թիվն է ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսի կրթական ծրագրերով((Տես aspu.am «Դիմորդ» էջը):

Ֆակուլտետն այս ուղղությամբ պլանավորում է մի շարք արդյունավետ աշխատանքներ՝

- դպրոցների հետ համատեղ ծրագրերի, նախագծերի և հետազոտությունների իրականացում,
- աշխատանք ծնողների հետ՝ նկատի ունենալով մասնագիտական կողմնորոշման գործում ծնողների դերը հայկական իրականության մեջ. մասնակցություն ծնողական ժողովների, ծնողական օրերի հայտարարում համալսարանում և այլն:

Հեռացում.
1.ուսման անբավարար առաջադիմություն
2.անհարգելի բացակայություններ
3.ուսման վարձի պարտք

Վերականգնում.
1.կրթությունը շարունակելու և բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն
2.աշխատաշուկայում պահանջված մասնագիտությամբ աշխատանք ունենալու հեռանկար
3.համալսարանում անհրաժեշտ մեխանիզմների առկայություն վերականգնվելու համար

Ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում հաշետու տարում:

Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը

	Ուսումնառողներ	2017թ.				
	Բակալավր	2				
	Մագիստրոս	5				

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը

	Գիտահետազոտական ծրագիր					
1	Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիա	1				
2	Խաղերի և խաղալիքների գիտաուսումնական կենտրոն	5				
3	Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիա	1				
4						

Ուսումնառողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանք-ների թիվը						
	Տպագրված աշխատանք					
1	Հոդված	39				
2	Հոդված (մինչև տարեվերջ տպագրվող)	24				
3	Զեկուցում	3				

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ֆակուլտետում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության հստակ մոտեցումներ համապատասխան ՀՊՄՀ քաղաքականությանը:
Հաշվետվետու ժամանակաշրջանում ամբիոններում իրականացվել են. 1 հայցորդի ընդունելություն /նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոն/, 3 նախապաշտպանության /մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն, մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն/, 1 գիտական ատենախոսության պաշտպանություն /նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոն/: Ամբիոններում աշխատանքներ են իրականացվում դասախոսների մասնագիտական գիտական ներուժը կատարելագործելու ուղղությամբ: Ամբիոններում կազմակերպվում են սեմինարներ/18/, որոնց ընթացքում քննարկվում են ժամանակակից գիտության նվաճումները, նորարարությունները, տվյալ բնագավառի հետազոտության արդյունքները /Տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրություններ/, ամբիոնային նիստերում քննարկվում են նաև փոխադարձ դասալսումների արդյունքները: Ֆակուլտետի դասախոսները հաշվետու ժամանակահատվածում իրականացրել են գիտական, մանկավարժական արդյունավետ աշխատանքներ: Google classroom կրթական հարթակում ֆակուլտետի ամբիոնների արդյունավետությունը գնահատվել է համապատասխան բաժնի կողմից, արդյունքները ներկայացվել և քննարկվել են ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերում /Տե՛ս ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի մշտադիտարկման տվյալները Google classroom հարթակում/: Ֆակուլտետի դասախոսական անձնակազմը մասնակցել է նաև տարբեր գիտաժողովների, ինչպես ներհամալսարանական/8/, այնպես էլ համալսարանից դուրս/18/:
Հաշվետու տարում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման աշխատանքները ֆակուլտետում:
Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի դասախոսական անձնակազմի աշխատանքի գնահատումն իրականցվել է համալսարանում գործող կարգի համաձայն /Տե՛ս http://qa.armspu.am/: Ֆակուլտետի ՊԴԱ- ի համար վարկանիշավորումն իրականացվել է . դասախոսների գործունեության արդյունավետության գնահատականի հիման վրա, ուսանողների կողմից դասախոսներին, նրանց դասավանդման որակին տրված գնահատականի հիման վրա, ամբիոնի կողմից դասախոսներին տրված գործընկերային գնահատականի հիման վրա: Դասախոսների վարկանիշավորումն իրականացվել է ըստ հետևյալ բաղադրիչների. որակական ցուցիչ ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական տարեկան աշխատանք, գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական տարեկան աշխատանք,

աշխատանք ուսանողների հետ, ներհամալսարանական և հանրային ծառայություններ/ տարեկան աշխատանք/, գործընկերային և ուսանողական համակազմի գնահատում / տարեկան աշխատանք/: Դասախոսների վարկանիշավորման արդյունքները քննարկվել և վերլուծության են ենթարկվել ինչպես ամբիոնների նիստերի ընթացքում, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստում:
Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ֆակուլտետում հաշվետու տարում:
Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի դասախոսական անձնակազմը ըստ ֆակուլտետի ռազմավարական ծրագրի և ամբիոնների աշխատանքային պլանների մշակել է անհատական տարեկան պլաններ, որոնց համաձայն իրականացրել է համապատասխան աշխատանքներ: /Տե՛ս դասախոսների անհատական թղթապանակներ/: Դասախոսների կատարելագործմանն են ուղղված նաև՝ ներամբիոնային սեմինարները և գիտական լսումները, ֆակուլտետային սեմինարները համագործակցող համալսարանների մասնագետների կողմից դասախոսների համար դասախոսություններն ու վարպետած դասերը. (27.04.2017թ. դասախոսություններ Չիկագոյի Իլինոյսի համալսարանի պրոֆեսոր Արթին Գոնչույի կողմից, 17-18.05.2018թ. դասախոսություններ Ֆինլանդիայի Օուլու համալսարանի կրթության ֆակուլտետի դասախոս Պիրիո Սուվիլետոյի կողմից, Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական կրթության ֆակուլտետի դոցենտ Ելենա Ռուբլևսկայայի կեղմից 04.12.-07.12.2016թ.(Տես համապատասխան օրակարգերը, ներկայաթերթիկները), Վերապատրաստումները (1 ասպիրանտ՝ Մեծ Բրիտանիա, Կիլե համալսարան 15.07.-15.11.2017թ., 1 դասախոս՝ ՀՀ Ամերիկյան համալսարան. «Online Tools For Language devolopment», 18-19.02.2017թ.,) Ամառային դպրոցները. (2 դասախոս՝ Բիշկեկ «Ներառական կրթության հիմնահարցերը» 2017թ. հուլիսի 2-8-ը)

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը: 1. Այցեր Երևանի և ՀՀ մարզերի կրթական հաստատություններ.միայն 2017թվականին շուրջ 30 այց (Տես 2017թ. դեկանի հաշվետվությունները ռեկտորատի նիստերին և այցելությունների գրաֆիկները) 2. Հանդիպումներ և քննարկումներ կրթական հաստատությունների տնօրենների, վարիչների հետ (Տես «Դպրոց-բուհ միասնական պահանջներ և արդյունավետ համագործակցություն» սեմինար-քննարկում. 2017թ. մայիսի 6) 3. Մանկավարժական պրակտիկայի բազաներ հանդիսացող կրթական հաստատությունների հետ համատեղ բովանդակային աշխատանքների իրականացում , քննարկումներ նաև Googl-classroom կրթական հարթակում 4. Սկզբնական կրթության հիմնախնդիրներին նվիրված ամենամյա գիտաժողովների կազմակերպում և կրթական հաստատությունների ներկայացուցիչների հրավիրում(Տես՝ «Սկզբնական կրթության հիմնախնդիրները» ուսանողական գիտաժողով 2017թ. մարտ) 5. Համատեղ քննարկումներ (2016թ. նոյեմբերի 7՝ բանավեճի կազմակերպում Երևանի թիվ 198 դպրոցի բանավեճի խմբի հետ.թեման՝ «Արդյոք դպրոցում ձեռք բերված գիտելիքները բավարար են բուհ ընդունվելու համար».տես՝ դեկանի հաշվետվությունը ռեկտորատի

նիստին՝ 10.01.2017թ.), տարաբնույթ միջոցառումներ (2016թ. դեկտեմբեր՝ Երևանի թիվ 198 դպրոցի 12 աշակերտների մասնակցությունը «Համալսարանի լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը, 2016թ. դեկտեմբերի 7՝ Երևանի թիվ 122 դպրոցում համերգ-ցուցահանդեսի կազմակերպում, 2017թ. մարտի 22՝ սկզբնական կրթության ֆակուլտետի մանկական նվագարանների խմբի համերգը Արմավիրի մարզի Թաիրով և Փարաքար գյուղերի միջնակարգ դպրոցներում, 2017թ. նոյեմբերի 8՝ ամենամյա ցուցահանդես.լուսաբանումները համալսարանի կայքէջում և դեկանի հաշվետվությունները ռեկտորատի նիստին՝ 14.03.2017թ., 27.06.2017թ.),

6. Կամավորական աշխատանք մանկապարտեզներում և դպրոցներում. 50 կամավոր, որից 20-ը ՀՊՄՀ Վահան Թոթովենցի անվան թիվ 57 դպրոցում (Տես՝ Google classroom կրթական հարթակում բացված «Աշխատող կամավորներ» դասընթաց-էջը),հասարակական կազմակերպություններում(2017թ. հունիս-օգոստոս ամիսներ՝ մասնակցություն «Արի տուն» ծրագրին՝ 5 կամավոր, տես՝ հավաստագրերը և համալսարանի գիտական խորհրդի 2017թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 8-Լ հրամանը),), ամառային ճամբարներում (23 ուսանող)
7. Օլիմպիադաների կազմակերպում (2017թ. մայիսի 5՝ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ լավագույն ստեղծագործությունների մրցույթ. լուսաբանումները համալսարանի կայքէջում)
8. Նամակ-հրավերքների տրամադրում ՀՀ կրթության վարչություններին, տեղեկատվական նամակների, ֆակուլտետի ուսանողների ձեռքի աշխատանքների, բուկլետների և բացիկների տարածում Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներում, ինչպես 10.Համագործակցություն հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ (2017թ. փետրվարի 24. հանդիպում- սեմինար «Կրթություն Հայաստան» կազմակերպության հետ)
9. Մասնակցություն գործատուների ամենամյա ցուցահանդեսներին (CAREER AND ENTREPRENEURSHIP FAIR խորագրով ցուցահանդես. 13.11.2017թ.59 ուսանող):

Ֆակուլտետի միջազգայնացմանը նպաստող աշխատանքներ.

1. Աշխատաշուկայում բարձր պահանջարկ ունեցող և ՀՊՄՀ-ի առաքելությանը չհակասող նոր մագիստրոսական կրթական ծրագրի մշակում Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի հետ համատեղ:
2. Օտարերկրյա բուհի հետ համատեղ կրթական ծրագրի իրագործման նախագծում և մեկնարկ՝ մեկ կամ երկակի դիպլոմի շնորհմամբ. Ֆինլանդիայի Օուլու համալսարան. Intercaultural Teacher education:
3. Մասնակցություն կրեդիտային շարժունության ծրագրերի. Erasmus Plus ծրագրի շրջանակներում՝
4. 2016-2017 ուստարի՝ 1 ուսանող, 2017-2018 ուստարում՝ 2 ուսանող. Ֆինլանդիա, Օուլու համալսարան
5. 15.07.-15.11.2017թ.՝ 1 ասպիրանտ. Մեծ Բրիտանիա, Կիլե համալսարան
6. Օտարերկրյա բուհի հետ համատեղ առարկայախմբի դասավանդում Մինսկի պետական համալսարանի հետ համատեղ
7. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների համատեղ ղեկավարում. Օուլուի համալսարան, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան
8. Փոխադարձ այցելություններ և դասախոսություններ, վարպետաց դասեր (27.04.2017թ. դասախոսություններ Չիկագոյի Իլինոյսի համալսարանի պրոֆեսոր Արթին Գոնչոյի կողմից, 17-18.05.2018թ. դասախոսություններ Ֆինլանդիայի Օուլու համալսարանի կրթության ֆակուլտետի դասախոս Պիրիո Սուվիլետոյի կողմից. Տես համապատասխան օրակարգերը, ներկայաթերթիկները)

9. Վերապատրաստումներ(Տես՝ Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական կրթության ֆակուլտետի դոցենտ Ելենա Ռուբլևսկայայի վերապատրաստման ծրագիրը. 04.12.-07.12.2016թ.),
10. Միջազգային գիտաժողովների փոխադարձ մասնակցություն (Տես՝ Սկզբնական կրթության հիմնախնդիրները խորագրով գիտաժողովի նյութերը.մարտ 2017)
11. Հոդվածների տպագրություն (Տես՝ Журнал “Воспитатель ДОУ”-2017, М., Издательство,“ТЦ Сфера”,N4, N5. ամբողջ համարը կազմվել է սկզբնական կրթության ֆակուլտետի և հատկապես նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսների հոդվածներով):
12. Ուսանողների և դասախոսների մասնակցություն ամառային դպրոցներ ծրագրերին: Այսպես՝

• ուսանողների մասնակցություն ՀՊՄՀ«Ամառային դպրոց» ծրագրին և ուսանողների փոխանակում (2016 թվականին ծրագրին մրցույթին դիմել են ֆակուլտետի 48 ուսանող, որոնցից 13-ը արտասահմանյան բուհեր մեկնելու հնարավորություն են ստացել, 2017թ.43-ից մրցույթով անցել են 12-ը. տես ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի կայքէջ):
• դասախոսների մասնակցություն Բիշկեկում կազմակերպվող ամենամյա ամառային դպրոցի(20172 հուլիսի 2-8-ը «Ներառական կրթության հիմնահարցերը». 2 դասախոս):

Տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցության արդյունքում, մեծացել է ուսանողների ուսումնական մոտիվացիան, արտասահմանյան առաջնակարգ բուհերում լինելու նրանց հնարավորությունը, աշխատաշուկայում առկա է սկզբնական կրթության ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրվածություն և մեծ պահանջարկ:Այդ մասին են վկայում՝

• ընդունելություններին առկա մրցույթները. 2017 թվականին օրինակ՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության համար նախատեսված 62 տեղի համար դիմել են 148 դիմորդ, իսկ Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության համար նախատեսված 25 տեղի համար դիմել են 49 (Տես aspu.am «Դիմորդ» էջը): Աշխատանքի տեղավորվող ուսանողների թիվը դեռևս արդեն ուսումնառության շրջանում (Օրինակ 2017թ. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսի 37 ուսանողներից միաժամանակ նաև աշխատում են 11-ը)

Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը և կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում մշակվել են նոր կրթական ծրագրեր, Նորացվել է ուսումնական գործընթացը՝ շնորհիվ կրեդիտային- մոդուլային և ոչ գծային ուսուցմանն անցնելու,

Կատարելագործվել է ուսումնական գործընթացի տեղեկատվական ապահովումը՝ մշակվել են կրթական էլեկտրոնային պաշարներ, որի արդյունքում ամբիոնը ունի 90-98% մշտադիտարկման ցուցիչ: Միջանկյալ և հանրագումարային ստուգումներում ուսանողները ցուցաբերում են կայուն արդյունքներ:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսանողների մեթոդամամթեմատիկական կոմպետենտության մակարդակի գնահատման ստուգիչ- չափիչ գործիքները, որոնց միջոցով սահմանել ենք գնահատման հետևյալ բաղադրիչները. Բակալավրի կրթական աստիճան Ստուգարքային առարկաներ. Քննական առարկաներ Միջանկյալ ստուգում 1- 30% Միջանկյալ ստուգում 1 -30% Միջանկյալ ստուգում 2- 30% Միջանկյալ ստուգում 2- 30% Հաճախում - 10% Հաճախում - 10% Ընթացիկ ստուգում - 30% Ընթացիկ ստուգում - 10% Ամփոփիչ ստուգում- 20%
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
1.Ամբիոնի նիստերի շրջանակներում անրադարձ է արվել աշխատանքային պլանով նախատեսված առանցքային հարցերին: Դրանցից առանձնացվել և խորությամբ քննարկվել են. Մագիստրոսական, ավարտական, կուրսային աշխատանքների թեմաները: 2.Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում տեղադրված նյութերի ակադեմիական մակարդակը: 3.Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պրակտիկայի աշխատանքների վերլուծություն: 4.Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի «Առարկայական նկարագրերի» քննարկումներ, վերլուծություններ: 5.Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: 6.Դասալսումների քննարկումներ և վերլուծություններ:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կախյալք	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ավ.դասախ.	դասախոս	Ընդ-ում
Հաստիքային	10	-	1	8	4	-	4	
Համատեղող	-	3	4	1	-	-	-	
Ժամավճարային	-	-	-	-	-	-	-	
Ընդամենը	10	3	5	9	4	-	4	
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
		-	3	6	2	4	3	

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ամբիոնում կատարվում է հիմնարար և կիրառական հետազոտություններ հետևյալ ուղություններով. Կրթական գործընթացում մեթոամաթեմատիկական աշխատությունների ձևավորում-զարգացում Գիտամանկավարժական գործունեության զարգացման վերաբերյալ ամբիոնի դասախոսները հաշվետու տարում հրատարակել են 3 ուսումնամեթոդական ձեռնարկներ. Մաթեմատիկական տերմինների բացատրական բառարան 1-6-րդ Մաթեմատիկայի հանրակրթական դասընթացի 1-12 դասարաններ Ժամանակակից կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնում առկա են բոլոր առարկայական նկարագրերը: Պարբերաբար քննարկվում, լրամշակվում են ամբիոնի կողմից դասավանդվող դասընթացները,ծավալը, բովանդակությունը, չափորոշչային պահանջները և ակնկալվող արդյունքները:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնի բոլոր ուսումնամեթոդկան ձեռնարկներն ընդգրկված են Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում և գործնական և լաբորատոր աշխատանքների և PPP –ի, և այլ միջոցների տեսքով:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
			2	1	1

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ

Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
Դասագրքերի և ուսուցիչների ձեռնարկի որակի գնահատման պահանջների (չափորոշիչների) միջազգային փորձի ուսումնասիրություն	2017 թ ընթացքում	1000000	1

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:

Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի կազմակերպած սեմինարները, միջոցառումների արդյունավտությունը և արդիականությունը, տպագրված հոդվածները, ուսումնամեթոդական ձեռնարկները, դասագրքերը նպաստում են ամբիոնի գիտական զարգացմանը: Ամբիոնի դասախոսները համատեղ գիտահետազոտական աշխատանքներ են կատարում և բակալավրի և մագիստրատուրայի կուրսերում սովորող ուսանողների հետ: Զեկուցումներով ուսանողները հանդես եկան Սկզբնական կրթության ֆակուլտետի կողմից կազմակերպված «Սկզբնական կրթության զարգացման միտումները» բուհական կոնֆերանսին
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Ամբիոնի դասախոսների գիտահետազոտական գործունեության արդյունքում հրատարակված գիտամեթոդկան աշխատանքներն իրենց գործնական պրոյեկտումներն են ունեցել ուսումնական գործընթացում:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝տնտ. պայմանագրային, դրամաշնորհային/

Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
Մաթեմատիկայի պատմության ուղղություններ	Հիմնարար			
Տարրական դպրոցի մաթեմատիկայի ուսուցման գործընթացը ՏՀՏ և ինովացիոն տեխնալոգիաների հիմնահարցեր				
Մաթեմատիկայի 1-6-րդ դասարանների ծրագրերի, չափորոշիչների դասագրքերի վերլուծությունները:				
«Ստոխաստիկա» Բովանդակային գծի՝ հանրակրթական դպրոցի ներգրավվածությունը				

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.		Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
1.	Նահապետյան Բ. Խաչատրյան Լ.	О некоторых функционалах на пространстве конфигураций, ассоциированных со спецификациями	4

		случайных полей. Труды Математического центра имени Н. И. Лобачевского, Казанское математическое общество.	
2.	Ղազարյան Հ	"Comparison of power of generalized - homogeneous polynomials",	2
3.	Մարգարյան Վ. Ղազարյան Հ.	Lower bounds for polynomials of many variables	15
4.	Ղազարյան Հ.	Semilocality and Density of Multy - Anisotropic Sobolev Spaces	19
5.	Հովհաննիսյան Ք.	The basic problem of formation of multidisciplinary competences in the process of mathematics teaching	2
6.	Հարությունյան Հ.	О построении одного отборочного курса математического или экономического потока старшей школы	3
7.	Հարությունյան Հ. Հովհաննիսյան Ք.	Интеграция дискретной математики в программу математики средней и старшей школы	4
8.	Հարությունյան Հ. Հովհաննիսյան Ք.	Psychological and Pedagogical Grounds of Applying Modelling Method in Teaching Students at Teacher Training (Pedagogical)	4
9.	Հովհաննիսյան Ք.	Самостоятельные работы как форма развития творческого мышления учащихся	4
10.	Ղուշչյան Ա. Հովհաննիսյան Ք.	Педагогические условия внедрения инновационных технологий	3
11.	Հայրապետյան Գագիկ	Առաջին դասարանցի ների տնտեսագիտական գրագիտությունը տարրական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում	5
12.	Գագիկ Հովհաննիսյան Մարիամ	Ուսուցման մեթոդական համակարգի հայեցակարգային մոտեցումների վերլուծություն	5
13.	Հայրապետյան Գագիկ Ալեքսանյան Գայանե	Տարրական դպրոցում Պյութագորասի հետքերով	5
14.	Աբաջյան Ս. Կարապետյան Ա.	Ծնորդ ֆունկցիան և կոմբինատորիկայի որոշ հարցեր	4
15.	Կարապետյան Ա.	Կոմբինատորային բովանդակային գիծը մաթեմատիկայի դպրոցական դասընթացում	5
16.	Իսկանդարյան Սվ Իսկանդարյան Ս.	Կրրտսեր դպրոցականների ընդհանուր զարգացման ապահովումը խնդիրների լուծման միջոցով	5
17.	Իսկանդարյան Սվ	НЕКОТОРЫЕ МЕТОДИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ПОДГОТОВКЕ БУДУЩИХ УЧИТЕЛЕЙ НАЧАЛЬНЫХ КЛАССОВ К ОСУЩЕСТВЛЕНИЮ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ	5
18.	Այվազյան Էդվարդ	Об одном способе нахождения множества (области) значений функции	3
19.	Այվազյան Էդվարդ Ե.Լոդատկո,	Դպրոցական ու-սուցման պրոբլեմ-ները Վ. Ֆիրսովի գիտամանկավար-ժական ժառանգու թյունում	13
20.	Այվազյան Էդվարդ	Պատմական ակ-նարկ քառակուսային հավասարման լուծման մասին	3
21.	Բաբաջանյան Ա.	Բաց խնդիրները տարրական դասարաններում	3

	Բարսեղյան Մ.		
22.	Բարսեղյան Մ.	Открытый урок игрового типа обучения математике в начальных школах как одна из форм технологии личностно-орентированного обучения	5
23.	Բաբաջանյան Ա.	Основные модели профессионального становления будущего учителя начальной школы в целостном контексте педагогики	5
24.	Ներսիսյան Բ. Ծատուրյան Գ. Առաքելյան Լ.	Бесконечно убывающаяся геометрическая прогрессия как ядро изучения стереометрических задач	10
25.	Ներսիսյան Բ. Ծատուրյան Գ. Մաթևոսյան Ն.	Построение графиков функций как средство развития исследовательских навык учащихся	7
	Ներսիսյան Բ. Ծատուրյան Գ.	Стимул образования-аналитическое мышление учащегося при изучении темы «Геометрическое место точек»	8
26.	Նահապետյան Արեքնազան Այվազյան Է.	The Humanistic Principles of the Education: the Case of Social-oriented Teaching	5

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը,օրը
Հավանականության տեսության ուսուցումը դպրոցում,դրա կարևորության մասին	20.03.2017 ՀՊՄՀ
Անանիա Շիրակացու մեթոդամանկավարժական գործունեության նշանակելիությունը	23.06.2017 ՀՊՄՀ
Թվի հասկացության գաղափարը	30.08.2017 ՀՊՄՀ

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Հայրապետյան Գագիկ	Ամիրիկյան համալսարան Using Online vidio	18.02.2017	
Հայրապետյան Գագիկ	Անի պլազայում Online Tools For Language devolopment	19.02.2017	

Բ. Ուսանողական
Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ

Արզումանյան Վիկտոր	Հարությունյան Հայկուշ	Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիա	Հայկական և ֆիննական տարրական դպրոցներում իրականացվող կոտորակների ուսուցման և ուսումնառության

			համեմատական վերլուծություն
Հայրապետյան Գագիկ	Գևորգյան Լիլիթ	Ապագա ,,դասվար,, մաթեմատիկոս խմբակ	Առնչությունները տարրական դասարանների ,,մաթեմատիկա դասընթացում

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ

Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվմ
Հարությունյան Հայկունի	Պողոսյան Աննա		Տպագրության մեջ է
Հայրապետյան Գագիկ	Հովհաննիսյան Մարիամ	Ուսուցման մեթոդական համակարգի հայեցակարգային մոտեցումների վերլուծություն	Տպագրության մեջ է
Հայրապետյան Գագիկ	Ալեքսանյան Գայանե	Տարրական դպրոցում Պյութագորասի հետքերով	Տպագրության մեջ է
Իսկանդարյան Սվետլանա	Նահապետյան Արեքնազան	Տարրական դպրոցում համեմատական մեծություններին վերաբերող խնդիրների հետ տարվող աշխատանքների մեթոդիկան	Տպագրության մեջ է

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. Ձեկույցներ

Կոնֆերանս/ միջազգ.,հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ոուսանողական զեկույց / քանակ
Բուհական	Սկզբնական կրթության զարգացման միտումներ Սկզբնական կրթության ֆակուլտետ	4

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, Սկզբնական կրթության ֆակուլտետի համալսարան- գործատու համագործակցության խմբի ղեկավար Ա. Բաբաջանյանը, 2017թվականին իր աշխատանքային խմբի հետ եղել է Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի, և Վայոց Ձորի մարզերում: Աշխատանքային խումբը ներկայացրել է Սկզբնական կրթության ֆակուլտետը, ուղղորդելով աշակերտներին մասնագիտության ընտրության հարցում:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Բաբաջանյան Ա.	Ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշում	2017թ ընթացքում

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
PR	Բաբաջանյան Ա.	Ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշում	2017թվականի ընթացքում

Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում ուսումնական աշխատանքների գծով ծրագրավորած ծավալն ամբողջությամբ կատարված է ինչպես առկա այնպես էլ հեռակա կրթության համակարգերում (ԲԿԾ և ՄԿԾ):Ամբիոնի գծով դասավանդվող բոլոր առարկաների բովանդակության արդիականացման նպատակով ստեղծվել են «մասնագիտական-առարկայական» խմբեր,որոնք մշտապես ուսումնասիրում են առարկայական փաթեթները, աշխատանքային գործընթացը. Փոխադարձ դասալսումներ են կազմակերպում, մշակում դասավանդող առարկաների փաթեթների և միջոցների արդիականացմանը նպաստող հնարներ:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսանողների ուսումնական գործունեության արդյունքների գնահատման մեթոդներն ու չափանիշները հիմնականում համապատասխանում են համալսարանում ընդունված և առարկայական փաթեթներում նշված բաղադրիչներին:Գնահատման ակադեմիական ապահովման նպատակով միջանկյալ գրավորների և ամփոփիչ քննությունների առարկայական թեստերն ու տարբերակները քննարկվում են մասնագիտական խմբերում, արդյունքները մշտադիտարկվում և քննարկվում ամբիոնի նիստերում:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Ամբիոնի նիստերում քննարկվել են ամբիոնի գործունեությանը վերաբերող հարցեր,մշակվել են իրականացման ապահովմանը միտված աշխատանքային քայլերը:Օրինակ, քննարկվել բակալավրի ավարտական կուրսերի ուսանողների (հեռակա առկա)՝ պետական քննություններին ոչ բավարար պատրաստվածության, մ,ագիստրոսական թեզերի թեմաների խրթինության և ոչ արդիականության, միջանկյալ և ամփոփիչ քննությունների ընթացքում ցուցաբերած անբավարար առաջադիմության հետ կապված հարցերում: Նշված խնդիրների առնչությամբ որոշումներ են ընդունվել, որոնց կապակցությամբ ՝ -մանկավարժություն և տարրական ուսուցման բաժնի 2-րդ և 3-րդ կուրսերում կազմակերպել ենք «Մնացորդային գիտելիքների»ստուգումները Հայոց լեզու և Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայից:

-Ավարտական կուրսերի ուսանողների համար ամբիոնի դասախոսների ուժերով ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում կազմակերպվել են խորհրդատվություններ պետական որակավորման քննությունների առարկաներից:
-Մագիստրոսական թեզերի առնչությամբ ֆակուլտետի գիտխորհրդում և ամբիոնի նիստերում բարձրացրած քննադատական դիտողությունների վերաբերյալ վերանայվել և արդիականացվել են թեզերի թեմանները՝ դրանք առավել գործնականացնելով և կապելով արդի տարրական դպրոցի հիմնախնդիրներին:
Ի վերջո, հաշվետու տարում ամբիոնի բոլոր նիստերում բարձրացված հարցերը, ընդունված որոշումները ընթացք են ստացել:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կիսադրույք	Դոկտոր	Պրոֆեսոր	Դոցենտ	Ավագ դասախոս	Դասախոս	Ընդ-ում
Հաստիքային	17	1	1	15	13		2	
Համատեղող	-							
Ժամավճարային	-							
Ընդամենը	17							
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
		1	5	4	2	3	1	

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ամբիոնի գծով դասավանդվող դասընթացները ԲԿԾ-ում ունեն ժամանակակից հայոց լեզվի և մայրենիի դասավանդման մեթոդիկայի հիմնահարցերին միտված ուղղություններ, իսկ ՄԿԾ-ում՝ միայն մայրենիի դասավանդման արդի խնդիրների, մայրենիի դասի կառուցվածքի և բովանդակության մանկավարժահոգեբանական հիմնախնդիրներին առնչվող հիմնարար հարցեր:Այս դասընթացների փաթեթները մշտապես քննարկվում են առարկայական մասնախմբերում, ապա նոր երաշխավորվում ներբեռնման:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Դասավանդվող դասընթացների փաթեթները ստեղծվում են աշխատանքային խմբերով, որոնց կազմում ընդգրկված են դասախոսության նյութերի հեղինակը և գործնական վարող հեղինակները: Բոլոր փաթեթները դիտարկվում են մասնագիտական ելքային արդյունքների տեսանկյունով, առաջարկությունների հիման վրա լրամշակվում են, ապա՝ներբեռնվում:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնի կողմից մշակված բոլոր էլեկտրոնային փաթեթներում արտացոլված են փոխգործուն , ուսանողակենտրոն մեթոդներով հագեցած նյութեր, գործնական պարապմունքների բովանդակության մեջ նախատեսված են տարրական դպրոցի խնդիրները ներկայացնող բաղադրիչներ

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը

Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
6									

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Ամբիոնի դասախոսական կազմի գիտական հետաքրքրություններն ու հետազոտական գործունեությունը իրականացվել է հետևյալ ուղղություններով. 1.Հայոց լեզվի արդի հիմնախնդիրները և դրանց լուծման միտումները 2.Տարրական դպրոցում մայրենիի դասավանդման մեթոդիկայի կատարելագործման ուղիների մշակում 3.Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների ձևավորման մեթոդական համակարգի ստեղծում: Այս խնդիրների շուրջ ամբիոնի դասախոսներն իրականացրել են ոչ միայն հետազոտական աշխատանք այլև արդյունքները հրատարակել են տարբեր ձևաչափերով(հոդվածներ, մենագրություններ, գիտամեթոդական դասագրքեր):
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ուսանողների գիտահետազոտական կարողությունների զարգացման նպատակով ամբիոնի դասախոսները ղեկավարել են ուսանողներին գիտական ինքնուրույն աշխատանքները. 10ուսանող ֆակուլտետի ՈւԳԸ կոնֆերանսում հանդես են եկել զեկուցումներով,2ուսանող մասնակցել են Գյումրու Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի կազմակերպած հանրապետական կոնֆերանսին և շահել մրցանակայի տեղեր(Ա.Հովակիմյան՝ ԲԿԾ, Ռ.Ղուկասյան ՄԿԾ)
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Հայոց լեզու և մայրենիի դասավանդման մեթոդիկա դասընթացներից 2-րդ և 3-րդ կուրսի ուսանուղների մնացորդային գիտելիքների ուսումնասիրման և արդյունքների վերլուծության հիման վրա առարկայական-մասնագիտական խմբերը նշված դասընթացների տեսական և գործնական աշխատանքների փաթեթները՝ առավելապես շեշտադրելով ուսանողների մտահաղորդակցական կարողության և վերլուծահամադրական մտածողության ձևերի զարգացման ուղղությամբ աշխատանքը:

Ա. Պրոֆեսորադասախոսական
Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝տնտ.պայմանագրային,դրամաշնորհային/

Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
«Մանկավարժագիտական առողջագիտությունը տարրական դպրոցում»	Հիմնարար	ՀՀ ԳՊ կոմիտե		Ջ.Գյուլամիրյան
Մայրենիի դասավանդման բովանդակության կատարելագործում	Կիրառական	-	-	Գյուլամիրյան Ջ. Միրումյան Մ. Խարազյան Ռ. Բալայան Ա.

Ժամանակակից հայոց լեզվի բուհական դասընթացի արդիականացում	Կիրառական			Տեր-Գրիգորյան Լ. Ավագյան Լ. Մնացականյան Ե. Մխիթարյան Ա. Ավագիմյան Ա.

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Սիրարփի Խաչատրյան	Աճականի բառաքերականական կարգերի ուսոցումը միջին դպրոցում»	Մեկնարկ»	163 էջ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Գյուլամիրյան Ջուլիետա	Սովորողների առողջությունն ապահովող դասի բնութագրիչները	
Գյուլամիրյան Ջուլիետա	Մանկությունն մարդու առողջության բնօրրանն է	
Միրումյան Մարգուշ	Օտար բառագործածություններ ժամանակակից մամուլում	
Լ. Խաչատրյան. Միրումյան Մարգուշ	Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանի կազմման սկզբունքները	
Միրումյան Մ, Ն.Մնացականյան	Բնագրի շուրջ տարվող բառային աշխատանքը տարրական դպրոցում	
Միրումյան Մարգուշ	Նորակազմ բայական կայուն կապակցությունները «Ազգ» շաբաթաթերթում	
Միրումյան Մարգուշ, Լ.Խաչատրյան	Вопросы полифункциональности лингвистических терминов	
Մխիթարյան Ա.,	Հոդակապ, արժեքը բառի կառուցվածքում,	
Մնացականյան Եվա	«Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը ժամանակի գրաքննադատության գնահատմամբ»,	
Մնացականյան Եվա	«Թումանյանի 50-ամյակի հոբելյանական հանդիսություննե–րի արձագանքները մամուլում»,	
Մնացականյան Եվա	Путешествие Валерия Брюсова на Кавказ, атнология «Поэзия Армении» и Ованес Туманян,	
Մնացականյան Եվա	«The Armenian translations of "Hamlet" in the Appraials of Great Armenian Poet Hovhannes Toumanyan»	
Ավագիմյան Արինե	Ժամանակակից հայերենի ածականի դասանշային կապակցելությունը	9 էջ
Վ. Ոսկանյան, Լ. Ավագյան	Բուհական կրթության արդյունավետության կախվածությունը ուսումնաիմացական գործունեության կազմակերպման ձևից	
Գյուլամիրյան Ջուլիետա, Ենոքյան Տաթևիկ	Միջանձնային հարաբերությունները որպես հաղորդակցական կարողության ձեվավորման խթան	
Ենոքյան Տաթևիկ	Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողության ձևավորման հիմնախնդիրը	

Տեր-Գրիգորյան Լիլիթ	«Արև» բառի փոխաբերական իմաստները և դրանց արտացոլումը դարձվածային իմաստում	
K.H. Aghababyan	Investigation of dynamics of students' civicism formation by word associative experiment method Int. peer rev. sci. j	

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը,օրը
1.Ամբիոնի գծով դասավանդվող առարկայական փաթեթները նոր ձևաչափով մշակման և համակարգչային ներբեռնման ընթացքի մասին:	Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբոն, 25.08.2017 Զեկուցող՝ Մ. Գյուրունյան
2.Մանկավարժական պրակտիկայի արդի խնդիրները և դրանց արտացոլման ձևերը ավարտական փաթեթում:	Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբոն, 21.04.2017 Զեկուցող՝ Ա. Միքայելյան
3.Տարրական դպրոցի մայրենիի դասի բովանդակությունն ու կառուցվածքը և դրա արտացոլումն ձևերը պրակտիկանտ-ուսանողի ամենօրյա աշխատանքային պլանում	Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբոն, 19.05.2017 Զեկուցող՝ Մ.Միրումյան
4.Օտարալեզու երեխաների հայոց լեզվի ուսուցման մեթոդական համակարգը	Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբոն, 7.07.2017 Զեկուցող՝ Լ. Մուրադյան

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ

Ա.Ա.Հ.	թեկն/դոկտորական_-մասնագիտություն	պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈՀ-ի հաստատում
2017 թվականին ամբիոնում ատենախոսության պաշտպանություն չի իրականացվել			

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
«Ուսուցչի կոմպետենցիաների զարգացումը որպես ժողովրդավարական մշակույթի ձևավորման հիմք» Մինսկ	Մինսկ	Մարտի 18 - 20	
«Ֆինանսական կրթումը դպրոցում	Կենտրոնական բանկ)	(Օգոստոս, 2017,	

Բ. Ուսանողական
Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ

Մնացականյան Եվա բ.գ.թ.,դոցենտ	Ուսանողական գրական ակումբ	25 ուսանող	Ուսանողների գրական հետաքրքրությունների բացահայտում և բավարարում

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ

Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվմ
Գյուլամիրյան Ջ	Հովակիմյան Ա.		ՈւԳԸ զեկուցումների ժողովածու
Գյուլամիրյան Ջ.	Ղուկասյան Ռ.		
Միրումյան Մ.	Մելքոնյան Գ.		
Մխիթարյան Ա	Եղիազարյան Ս.		
Ավագյան Լ.	Զարոյան Ն.		

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. Զեկույցներ

Կոնֆերանս/ միջազգ.,հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
Ֆակուլտետային ՈՒԳԸ կոնֆերանս	ՍԿզբնական կրթության զարգացման միտումներ	13

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ

Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
2017 թվականին ամբիոնը չի կազմակեպել ուսանողական-առարկայական օլիմպիադաներ:			

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Աշխատանքներն իրականացվել են երեք ուղղություններով՝ մանկավարժական պրակտիկայի երեք տեսակների կազմակերպում I-IV դասարաններում, որն ապահովում է ոչ միայն ուսանող-դպրոց կապը, այլև ուսանողներիև ամբիոնի կողմից դպրոցներին կցված մեթոդիստների միջոցով մանկավարժամեթոդական նորարարությունները պրոպագանդվում և ներդրվում են դպրոցներում: Դասախոսները մասնակցում են հենակետային դպրոցների մեթոդմիավորման նիստերում, հանդես են գալիս զեկուցումներով: Մեթոդիկայի գծով ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր գրող ուսանողները ոչ միայն իրենց գիտափորձերն

են կազմակերպում այն դպրոցներում, որտեղ անցկացնում են իրենց պրակտիկան, այլև գիտափորձերին մասնակից են դարձնում ուսուցիչներին: Հետադարձ կապ գիտահետազոտական համագործակցություն: Ամբիոնը հետադարձ կապի մեջ է մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկաներ բաժնի շրջանավարտների հետ՝ նրանց հետ կատարելով ամբիոնի գիտական ուսումնասիրությունները: Շրջանավարտները մշտապես մասնակցում են ամբիոնի կազմակերպած գիտական կոնֆերանսներին, կլոր սեղաններին և այլն: Դասախոսները նախկին շրջանավարտների կողմից հրավիրվում են դպրոցներ՝ հանդիպումների, սեմինարների, կլոր սեղանների: Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը աշխատում է նաև հանրապետության մի շարք ավագ դպրոցների աշակերտների հետ՝ մասնավորապես մանկավարժի մասնագիտության քարոզչության կազմակերպման նպատակով: Կազմակերպվել է նաև շարադրությունների մրցույթ հայրենասիրական թեմաներով, որին մասնակցել է Երևան քաղաքի չորս ավագ դպրոցի 19 աշակերտ: Նախապատրաստվում է շարադրությունների երկրորդ մրցույթը «Եթե ես մանկավարժ դառնամ» թեմայով:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Ջ.Գյուլամիրյան	Շարադրութունների մրցույթ	2017թվականի մայիս

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
	Ջ.Գյուլամիրյան Լ.Ավագյան Ա.Միքայելյան	Ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշում ավագ դպրոցում:	2017թվականի ընթացքում

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը,կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը համապատասխանում է կատարված ուսումնական աշխատանքի ծավալին: Ամբիոնի դասախոսներն առանց բացթողումների կատարել են ծանրաբեռնվածությամբ նախատեսված ժամերը:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Մասնագիտական առարկաների դասավանդման ընթացքում դասախոսներն առաջնորդվում են համագործակցային և ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքներով: Ամբիոնի բոլոր դասախոսները դասերն անցկացնում են համակարգիչներով և օգտվում են PP սահիկացուցադրման ծրագրից, հետևողական են և բավականին ակտիվ <<Google classroom>> հարթակում:

Սկզբունքորեն վերանայվել է դասավանդման մեթոդիկան՝ նախկինում գերակայող ավանդական թելադրությունը փոխարինվել է դասավանդման համագործակցային տեխնոլոգիաներով՝ ուսումնառության փոխգործուն մեթոդների կիրառմամբ: Խնդրահարույց դասախոսությունները կազմակերպվում են «Մտքերի տարափ», «Բանավեճ», «Դերային խաղ» մեթոդներով: Ուսուցանվող նյութի յուրացումն իրականացվում է խմբային առաջադրանքների միջոցով՝ «Ջիքսոյի», «Իրավիճակների վերլուծություն», «Գործնական խաղ» համագործակցային ուսուցման մեթոդներով: Ուսանողների ուսումնական ձեռքբերումները քննարկվում են «Հեղինակի աթոռ», «Վեննի դիագրամ», «ԳՈՒՍ», «Կարճ շարադրություն» ինքնագնահատման մեթոդներով: Ամբիոնում ընդունված կարգ է դարձել նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաների հիմնախնդիրների քննարկումը «նախագծի մեթոդով»՝ պարտադիր հետազոտական աշխատանքների կատարմամբ և դրանց արդյունքների ներկայացմամբ /պրեզենտացիաներ/: Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները կատարում են նախագծային տարբեր աշխատանքներ և տիրապետում սեփական դիտարկումները վերլուծելու և PP ծրագրով ներկայացնելու հմտություններին:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ուսումնառողների գնահատման մոտեցումներն ուղղված են ուսումնառության արդյունքների բարելավմանը: Մասնավորապես. գործնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման նպատակով շարունակվում է ժամանակակից մանկավարժական մեթոդներով և տեխնոլոգիաներով անցկացվող պարապմունքների բազայի ստեղծումը: հավաքագրվում ու համակարգվում է համացանցում տեղակայված նախադպրոցականի դաստիարակության առաջավոր փորձը; կազմակերպվում է հանրապետության նախադպրոցական հաստատություններում ժամանակակից մանկավարժական մեթոդներով և տեխնոլոգիաներով անցկացվող պարապմունքների դիտում ու քննարկում; տեսագրվում են մանկավարժական ակտիվ պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից իրականացվող հաջողված պարապմունքները: շարունակական պրակտիկայի կազմակերպման բարելավման, գնահատման նոր համակարգի տեղայնացման նպատակով հստակեցվել են շարունակական պրակտիկայի գնահատման բաղադրիչները, մշակվում են չափելի գործիքներ և ռուբրիկներ: Պարբերաբար վերանայվում և թարմացվում են ուսումնաճանաչողական, մանկավարժական և շարունակական պրակտիկաների փաթեթները: մանկավարժական պրակտիկան /3-րդ և 4-րդ կուրսերում/ ավարտվում է ուսանողների թղթապանակների ներկայացմամբ և գնահատմամբ՝ հանձնաժողովի կողմից: Առարկայական նկարագրերում ընթացիկ ստուգման բաղադրիչի մեջ հաշվառվում է նաև կիսամյակի ընթացքում 2 անգամ Google classroom էլեկտրոնային հարթակում տրվող ընթացիկ առաջադրանքների գնահատումը /ընթացիկ ստուգման 30%-ը հաշվարկել հետևյալ կերպ՝ 15% լսարանային ընթացիկ ստուգում, 15% էլեկտրոնային առաջադրանք/: Ըստ ՀՊՄՀ կանոնադրության շարունակական և մանկավարժական պրակտիկաների արդյունքները ներառվել են ամփոփիչ ավարտական քննությունների գնահատման համակարգում՝ կազմելով 30%-ը:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:

Ավարտական աշխատանքների թեմաների հաստատում՝ փոխադարձ պայմանավորվածություն ՄՊՄՀ-ի Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի համապատասխան ամբիոնների հետ ավարտական աշխատանքների համահեղինակներ նշանակելու հարցով: Ստորև ներկայացված է նամակագրությունից մի հատված որպես հիմք: /Уважаемые коллеги! Есть еще одно уточнение от Изотовой Елены Ивановны, зев.кафедрой возрастной психологии Факультета дошкольной педагогики и психологии МПГУ! Е.И. Изотова сможет взять только одну тему (в таблице ее выделила зеленым цветом). Она немного скорректировала формулировку, но если темы уже утвердили, то можно и так оставить. Тема, которую Елена Ивановна не сможет сейчас взять, выделена красным. Просим учесть уточнения Е.И. Изотовой и Авдуловой Т.П., обозначенные в предыдущем письме. Спасибо! С уважением, Маргарита Юрьевна Парамонова/ Ամբիոնի հայցորդներ՝ Գ.Խաչատրյանի, Գ.Գասպարյանի ատեստավորման հարցը:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանայք	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	11,25	2	1	2	4	1	3	13
Համատեղող	0.75				0,75			0.75
Ժամավճարային							0.25	0.25
Ընդամենը	12	2	1	2	4.75	1	3.25	14
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
			5	2	1	5	2	15

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
ԲԿԾ 1-4-րդ կուրսերում դասավանդվող առարկայական նկարագրերը նոր ձևաչափերով վերանայվել և լրամշակվել են ըստ ուսումնական պլանների, վերանայվել են նաև ՄԿԾ ուսումնական պլաններով նախատեսված 1-ին և 2-րդ կուրսերում դասավանդվող առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, դասավանդման մեթոդները, ուսումնառության առաջադրանքները և գնահատման ձևերը, որոնց հիման վրա կառուցվել են առարկայական փաթեթի հետադարձ կապի բաղադրիչները:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը համապատասխանում են մասնագիտական ելքային արդյունքներին: Առարկայական նկարագրերը ըստ նոր ձևաչափի վերանայվում և լրամշակվում են, առավել շեշտադրելով մասնագրից բխող վերջնարդյունքները: Աշխատանքները վերահսկվում են ուսումնա-մեթոդական հանձնախմբի կողմից:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնի դասախոսները ներկայացրել են կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ, որոնք պարբերաբար վերանայվում և լրամշակվում եննև

տեղադրված են Google classroom հարթակի համապատասխան առարկաների էջերում, ընթացքում տրամադրվում են նաև լրացուցիչ ուսումնական նյութեր, տեսահոլովակներ:

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ

Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
Ուսումնաօժանդակ նյութերի էլեկտրոնային հարթակի ստեղծում	2 տարի	-	2

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում իրականացրել են շարունակական հետազոտական գործունեություն՝ նախադպրոցական կրթության հիմնահարցերի պարզաբանման ուղղությամբ: Ամբիոնի դասախոսներ՝Ս.Մարությանը, Ի.Պոնոմարենկոն, Ա.Խուգեյանը, Մ.Ամիրաղյանը ս.թ. մայիս ամվա ընթացքում ներառական կրթությանն ուղղված հետազոտական աշխատանքներ են իրականացրել Երևանի թիվ 101, 109 մանկապարտեզներում: «Հույսի կամուրջ» ԿՀ-ի հետ համագործակցության արդյունքում մեր դասախոսները նշված մանկապարտեզներում վերապատրաստել են դաստիարակներին: Արդյունքում ստացել են հավաստագրեր:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Սկզբնական կրթության ֆակուլտետի կողմից կազմակերպված «Սկզբնական կրթության զարգացման միտումներ» խորագրով ուսանողական գիտաժողով:

Ա. Պրոֆեսորադասախոսական
ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Amiraghyan Marianna	The linguistic analysis of preschooler's speech as a basis of designing educational curriculum	Lap Lambert Academic publishing, 2017	40

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի, զեկույցի անվանումը	Ծավալ
Карапетян Владимир Геворгян Србуи	Диссонанс и консонанс в сфере аргументаций	6 էջ
Карапетян Владимир Даллакян Алла	О методологии стимулирования личностного роста дошкольника	3 էջ
Марутян Светлана	Актуальные подходы армянских педагогов XIX века к образованию дошкольников	4 էջ

Марутян Светлана Хачатрян Эгине	Краткая история АГПУ им. Х. Абовяна и кафедры дошкольной педагогики и методик	4 էջ
Даллакян Алла, Саргсян Сюзанна	Особенности применения игровых технологий В.В. Воскобовича в старшем дошкольном возрасте	6 էջ
Даллакян Алла Налбандян Тамара	Применение методики Эдварда де Боно в развитии личности дошкольников	5 էջ
Хачатрян Эгине Погосян Лусине	Новые подходы к педагогической практике студентов специальности дошкольная педагогика и методика АГПУ им.Х.Абовяна	6 էջ
Amiraghyan Marianna	The description of scientific approaches to preschooler's speech development	3 էջ
Amiraghyan Marianna	The development of linguistic units in child's speech during communication and different types of activities	4 էջ
Амирагян Марианна	Инклюзивное образование в детских садах Армении	4 էջ
Восканян Шохик	Основоположница первого детского сада в западной Армении	10 էջ
Казарян Лусине	Современные аспекты физического воспитания дошкольников	4 էջ
Ղազարյան Արմենուհի	Ընտանիքի և նախադպրոցական հաստատության ֆունկցիոնալ կառուցվածքային ուղղությունները	4 էջ
Казарян Арменуи, Макоян Маргарита	Особенности национально-патриотического воспитания дошкольников в Армении	8 էջ
Хугеян Аревик	Համակարգչային խաղերին և պարապմունքներին ներկայացվող պահանջները նախադպրոցական տարիքում	2 էջ
Асмарян Кнарик	Рисование, лепка, аппликация, композиция в развитии художественного мышления детей	3 էջ
Овсепян Саак	Конструктор как средство развития технического творчества учащихся начальной школы	5 էջ
Հակոբյան Սիլվա	Ժամանակի զգացողության ձևավորումը <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման ընթացքում	2 էջ
Հակոբյան Սիլվա	Մանկապարտեզում կառուցողական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները ներառական կրթության պայմաններում	3 էջ
Пономаренко Ирина, Манучарян Сатеник	Сюжетные дидактические игры в развитии математических способностей дошкольников	4 էջ
Пономаренко Ирина	Խաղալիքի ծագման պատմությունը	2 էջ

Բ. Ուսանողական
Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ

Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվմ
Ս.Մարության	Ս.Գալստյան	Ավագ նախադպրոցականի սեռային դաստիարակությունը մանկական ստեղծագործությունների միջոցով	
Վ.Կարապետյան	Մ.Ղարիբյան	Մանկական վախերի բնութագրիչների շարժընթացը	

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոնի աշխատակիցները պարբերաբար այցելում են դպրոցներ աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու: Ներկայացնում են մասնագիտության բովանդակությունը:

20. Հատուկ կրթության ֆակուլտետ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
Հաշվետու ժամանակահատվածում Հատուկ կրթության ֆակուլտետի ծավալած գործունեությունը համապատասխան ֆակուլտետի ռազմավարական ծրագրին, նպատակներին և խնդիրներին ընդհանուր առմամբ գնահատվում է դրական: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի առջև դրված են եղել հետևյալ խնդիրները. Ուսումնական գործընթացի բովանդակության և կազմակերպման կատարելագործում Մասնագիտական պրակտիկայի բարելավում Մասնագիտական իրազեկման շարունակականության և ընդլայնման ապահովում Միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնում Գիտահետազոտական աշխատանքի խթանում Ուսանողական և ուսանողական գիտական խորհրդի աշխատանքների կազմակերպում Կամավորական դպրոցի հիմնում Ներառական կրթության գիտահետազոտական լաբորատորիայի հիմնում: Ելնելով դրված խնդիրներից իրականացվել են հետևյալ գործողությունները. Ուսումնական պլանների բովանդակության հստակեցում և համապատասխանեցում ՈԱԾ-ի կողմից առաջարկվող մասնագիտացման կրթական չափորոշիչների սկզբունքներին: Առարկայական ծրագրերի բովանդակության վերանայում և համապատասդխանեցում ՈԱԾ-ի պահանջներին: Մագիստրոսական և բակալավրիատի մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում, նպատակների հստակեցում: ՀՊՄՀ-ի էլեկտրոնային հարթակի միջոցով ուսանողների ակտիվության և ներգրավվման խթանում, ինքնուրույն աշխատանքների վերահսկման գործընթացի կատարելագործում: Միջազգային համագործակցության շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ձեռք բերված մասնագիտական, կազմակերպչական և դասավանդման փորձի ներկայացում, տեղայնացում և կիրառում ամբիոններում և ֆակուլտետում իրականացվող կլոր սեղանների, սեմինարների և ամբիոնների նիստերի ժամանակ, ինչպես նաև դասապրոցեսներում: Ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման վայրերի վերանայում, հիմք ընդունելով հաստատությունների մասնագետների գիտագործնական, որակական ներուժը, գործող կանոնադրությունը և նյութատեխնիկական հագեցվածությունը և այլն: Ֆակուլտետում կլոր-սեղան քննարկման կազմակերպում ֆակուլտետի ուսանողների պրակտիկաների վայրերի ղեկավարության հետ, հստակ կարիքների և պահանջների ներկայացում:

Պրակտիկայի արդյունավետ կազմակերպում՝ ուսանողի տեսական և գործնական գիտելիքների ու կարողությունների համադրմամբ՝ պրակտիկայի մեթոդիստների շարունակական հսկողության տակ:
Պարբերաբար մասնագիտության լուսաբանում սոց.կայքերի միջոցով
Մասնագիտությունը լուսաբանող հանդիպումներ համայնքների ղեկավարների, շրջանավարտների և նրանց ծնողների, տնօրենների, ուսուցիչների հետ
Մասնագիտական բուկլետների տարածում հատուկ կրթության ոլորտին հարող այլ մինակարգ կրթական հաստատությունների ավարտական կուրսերի ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների շրջանում
Ոլորտի արտասահմանյան առաջատար հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների հետ համագործակցություն՝
Էրասմուս պլյուս ծրագրի շրջանակներում մեկ դասախոսի այցելություն դասախոսություններով
Էրասմուս պլյուս ծրագրի շրջանակներում վեց դասախոսի մեկնում դասախոսություններով արտերկիր
Ավստրալիայի վարչապետի օգնականի այցելություն երկօրյա դասախոսություններով
Միննեսոտայի համալսարանի չորս դասախոսի այցելություն ՀՊՄՀ
Ֆակուլտետի դասախոսական անձնակազմի հինգ հոգանոց խմբի այցելություն Միննեսոտայի համալսարան
Էրասմուս պլյուս ծրագրի շրջանակներում երկու ուսանողի այցելություն Ռուսեի համալսարան՝ հինգ ամիս տևողությամբ, երկու ուսանողի այցելություն Պորդուբիցեի համալսարան երեք ամիս տևողությամբ
Էրասմուս պլյուս ծրագրի շրջանակներում Պորդուբիցեի համալսարանից երկու ուսանողի այցելություն ՀՊՄՀ՝ չորս ամիս տևողությամբ:
Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների փոխանակման ծրագրերի շարունակականության ապահովում:
Հատուկ կրթության ոլորտի կլոր սեղանների, սեմինարների, վերապատրաստումների կազմակերպում:
Մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, բովանդակություն նոր ձևաչափի մշակում ներդնում ամբիոնների և ֆակուլտետի մակարդակով:
Մագիստրոսական թեզերի ղեկավարում՝ միայն գիտական աստիճան և գործնական փորձառություն ունեցող դասախոսական անձնակազմի կողմից:
Գիտաուսումնամեթոդական խորհրդի հիմնադրում ֆակուլտետի ներսում:
Հայցորդների և ասպիրանտների գիտական թեմաների ընտրության ընթացակարգի հստակեցում՝ արժևորելով հատկապես քննարկվող թեմայի հրատապությունը, արդիականությունը և յուրօրինակությունը՝ բացառելով նման թեմաների կրկնությունները և գրագողությունը:
Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտական հետազոտությունների, գիտամեթոդական աշխատանքների իրականացման, գիտաժողովների կազմակերպման և ակտիվ մասնակցության խթանում:
Ուսանողների ներգրավվում գիտահետազոտական տարբեր ծրագրեում, դասախոսների հետ համատեղ հոդվածների տպագրման գործընթացում:
Թեմատիկ զրուցների անցկացում՝ արժևորելով հատկապես մասնագիտական գիտելիքները և օտար լեզուների իմացությունը
Ուս.խորհրդի աշխատանքի արժևորում և ներգրավվածության ապահովում ֆակուլտետի ուսումնադաստիարակչական գործընթացում:
Ուսանողների դրական միջանձնային հարաբերությունների խթանում քննարկումների և ընկերական զրույցների կազմակերպման միջոցով:
Կամավորների հերթագրում, էլեկտրոնային բազայի ստեղծում:

Ակտիվ համագործակցություն կամավորական գործունեության կարիք ունեցող կազմակերպությունների հետ:
ՀՀ-ում ներառական կրթության հիմնախնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն:
Ներառական կրթության ոլորտում գիտական հետազոտությունների իրականացում, նրանում առկա խնդիրների լուծմանն ուղղված մեթոդական գործիքակազմի մշակում և այլն:
Միննեսոտայի համալսարանի հետ համագործակցության արդյունքում ներառական կրթության գիտահետազոտական լաբորատորիայի կանոնադրության մշակում, բենչմարկինգ:

Վերլուծել, թե ինչպես է ֆակուլտետը վերհանել ներքին և արտաքին շահակիցների կարիքները, պահանջները բացահայտող ինչ մեխանիզմներ է կիրառել:

Ֆակուլտետի ներքին շահակիցների, այն է ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի կարիքները հիմնականում վեր են հանվել հետևյալ մեխանիզմների կիրառման միջոցով՝ հարցազրույցներ, ֆոկուս խմբեր, քննարկումներ:
Սակավաթիվ խնդիրներ վեր են հանվել հարցաթերթերի օգնությամբ:
Արտաքին շահակիցների, այն է՝ դպրոցների, մանկատների, ուսումնազարգացնող և վերականգնողական կենտրոնների, հասարակական կազմակերպությունների ղեկավարության կարիքներն ու պահանջները վեր են հանվել ֆակուլտետի ներսում կազմակերպված հանդիպում-քննարկումների ժամանակ, կամ ֆակուլտետի պրակտիկայի մեթոդիստների՝ պրակտիկայի վայրեր կատարած այցելությունների ընթացքում:
Որպես հիմական գործող մեխանիզմ կիրառվել է հաճախակիության և առաջնահերթության սկզբունքը, այսինքն առաջնային կարևորություն է տրվել այն կարիքներին և պահանջներին, որոնք առավել հաճախ ներկայացվել է շահակիցների կողմից և վերջիններիս համար ունեցել են կարևորագույն նշանակություն կամ խոչընդոտ են հանդիսացել արդյունավետ գործունեություն կատարելու գործընթացում:

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:

Հատուկ կրթության ֆակուլտետի երկու ամբիոններում մշակվել և ներկայացվել են ռազմավարական ծրագրեր, որոնք քննարկվել և հաստատվել են ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ամբիոնի նիստերի ընթացքում /31.10.2016 Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստի արձանագրություն թիվ 3; 11.11.2016 Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի նիստի արձանագրություն թիվ 5; 11.05.2017 Հատուկ կրթության ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրություն թիվ 1/:
Մինչ ռազմավարական ծրագրերի վերջնական հաստատումը վերջիններս ներկայացվել և քննարկվել էր ամբիոններում: Դրական արձագանքի արժանացած ռազմավարական ծրագիրը ներկայացվել է համապատասխան ամբիոնի նիստի հաստատմանը:
Հաստատված տարբերակներում, հիմք ընդունելով ՀՊՄՀ-ի զարգացման ռազմավարության հիմնական ուղենիշները, առաքելությունը, և ժամանակի մարտահրավերները, հաշվի են առնվել նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հնչեցված առաջարկությունները:
Հատուկ կրթության ֆակուլտետի երկու ամբիոնների ռազմավարական ծրագրերի հիման վրա, գիտության և հետբուհական գծով դեկանի տեղակալը կազմում է ֆակուլտետի ռազմավարությունը, որը և ներկայացնում է ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:
Այսպիսով, ընդհանուր առմամբ Հատուկ կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի կազմման և իրականացման մեխանիզմները կարելի է նկարագրել հետևյալ կերպ:
Առարկայական նկարագրերում, որպես դասավանդման մեթոդներ, առանձնացված են ներկայացումները, քննարկումներն ու բանավեճը, դեպքերի վերլուծությունը, սիմուլյացիաներ և դերային խաղերը: Դասավանդման ընթացքում այս մեթոդները փաստացի կիրառվում են, և դասերն ընթանում են փոխներգործուն ուսումնառության պայմաններում: Դասավանդող անձնակազմը խրախուսում է ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքը: Դասավանդման ընթացքում լայն կիրառություն են ստանում տեղեկատվական տեխնոլոգիաները, կիրառվում են տեղեկատվության փոխանակման ժամանակակից առցանց գործիքներ /googledrive, dropbox, google classroom էլեկտրոնայն հարթակ/: Ուսումնառության ընթացքում ուսանողները կատարում են ստեղծագործական բնույթի աշխատանքներ, գրում են էսսեներ, ռեֆլեքսիվ բնույթի աշխատանքներ: Կիրառվում են դեպքերի վերլուծության, գործնական հետազոտության մեթոդներ: Նկատի ունենալով մագիստրոսական կրթության ժամանակակից պահանջները՝ մեծ տեղ է տրվում դասընթացի շրջանակներում համեմատական և էմպիրիկ հետազոտություններին: Պատշաճ ուշադրություն է հատկացվում նաև ուսանողների ծանրաբեռնվածության օպտիմալացմանը՝ լսարանային և ինքնուրույն աշխատանքի համար տրամադրվող ժամանակի հատկացմանը:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
		Գ.Ղարիբյան Ա. Խառատյան, Ռ. Իսահակյան ՀՏԴ 338.331.1 ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները	Սողոմոնյան Լ. Սոցիալ – մշակութային գործունեության տեսական հիմունքներ առարկայական ծրագրի թեմատիկ ուղեցույց ներկայացված է տպագրման		

Ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրեր

Ամբիոնի կողմից իրականացվող կրթական ծրագրերի դասընթացների առարկայական նկարագրերը վերանայվել են ի համապատասխան սահմանված պահանջների: Առկա են կրթական ծրագրերի դասախոսությունների էլեկտրոնային փաթեթները և տեսասահիկները, որոնք տեղադրված են Համալսարանի <<google classroom>> էլեկտրոնային հարթակում: Դա հնարավորություն է ընձեռում ուսանողներին ոչ միայն օգտվել համապատասխան նյութերից, այլև ակտիվորեն մասնակցել հարթակում դասախոսի կողմից կազմակերպված թեմատիկ քննարկումներին:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Հետազոտությունները իրականացվել են ըստ հետևյալ հիմնական ուղղությունների՝ • Տնտեսական իրավիճակի վրա ՀՀ ժողովրդագրական գործոնների ազդեցությունը, • Զանգվածային լրատվամիջոցները՝ որպես անհատի սոցիալ մշակութային արժեհամակարգի ձևավորման միջոց, • ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները, • Ռազմավարական կառավարման հիմնահարցերը առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում: Բարձրացված հիմնահարցերը իրենց բնույթով արդիական են և գտնվում են ոչ միայն երկրի այլև միջազգային հանրության մասնագիտական խորհուրդների դիտարկման շրջանակներում:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ուսանողների ավարտական աշխատանքներում և մագիստրոսների թեզերում կարևորվում է հետազոտական աշխատանքի բաղադրիչը, որը գործնականորեն հիմնված է պրակտիկայի ընթացքում կատարված ուսումնասիրությունների վրա: Որոշ մասնագիտությունների շրջանակում գործատուները մասնակցում են ոչ միայն թեմաների հաստատման գործընթացին այլև տալիս են խորհրդատվություն թեմայում բարձրացված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցում է նաև ներքին և արտաքին ռեսուրսների ներգրավմամբ մասնագիտական վերապատրաստման ծրագրերին: Նախորդ միջազգային ծրագրերի շրջանակում ամբիոնի 4 դասախոսներ վերապատրաստվել են թե մասնագիտական թե վարչական աշխատանքների շրջանակում: Հաշվետու տարում առավել կարևորվել են երիտասարդ մասնագետների և ուսանողների շարժունության հարցերը, իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ նրանց այդ ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ: Արդյունքները բերված են համապատասխան աղյուսակներում:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Ստորև բերված աղյուսակներում տրված է տեղեկատվություն ամբիոնում իրակացված հետազոտական աշխատանքների ուղղությունների վերաբերյալ, որոնք ամբիոնում քննարկումից հետո ներառվում են դասախոսական փաթեթում, ներկայացվում են ուսանողներին՝ դասախոսությունների և գործնական պարապմունքների ընթացքում որոշակի բաժիններով՝ առարկաների թեմատիկ տրոհմանը համապատասխան: Դրանք ներառվում են նաև որպես լրացուցիչ նյութ՝ տրվում են ուսանողներին օգտագործելու կուրսային և ավարտական

աշխատանքներում, հանդիսանում են ուղղորդիչ նյութ մագիստրոսական թեզի հեազոտական մասը առավել խորությամբ ուսումնասիրելու համար:

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Геворгян Р. Н. Ашурбеков Р. А Батаев В. В.	Разработка сбалансированной системы показателей в управлении персоналом таможенных органов.	Монография ООО <<Проспект>> 2017	142
Геворгян Р. Н. Митрофанова Е. А.	Управление персоналом в России: новые функции и новое в функциях	Монография ИНФРА-М 2017	224

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի, զեկույցի անվանումը	Ծավալ
Ս.Մելիքյան	Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի կիրառման անհրաժեշտությունը ՀՀ բարձրագույն կրթական համակարգում	զեկույց
Ս.Մելիքյան	Կրեդիտային համակարգի գործառության հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում	զեկույց
Ս. Դալլաքյան	ՀՀ աշխատանքային միգրանտների տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություններ ներկայացնող պետությունների գնահատման մեթոդաբանություն	7 էջ
Dallakyan S.	Specifics of implementing the socioeconomic policy to ensure the labor market efficiency in Armenia and Belarus	7 էջ
Ս. Դալլաքյան	ՀՀ ժողովրդագրական գործոնների ազդեցությունը տնտեսական իրավիճակի վրա	9 էջ
Р. Аванесян	Национальная культура как историко-культурный феномен	3 էջ

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Հարություն Ազգալդյան	ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական եւ մշակութային գործերի բաժին, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ,	2017 սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 4	«Տեխնոլոգիայի կիրառումը կրթական պրոցեսում»
	Ռումինիա, Լիտվա «Յասիի տեխնոլոգիական համալսարան», «Կաունասի տեխնոլոգիական համալսարան»	2016 հունիսի 19-ից հուլիսի 1	«ՀՀ և ՌԴ համալսարանների համար ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ շինությունների էներգախնայող համակարգեր

			մագիստրոսական կրթական ծրագիր»
	Իսպանիա, Լա Ռիոայի միջազգային համալսարան	2016 մայիսի 15-ից մայիսի 20-ը	«Հայաստանի բարձրագույն կրթությունում որակի ապահովման գործընթացում ուսանողների մասնակցության դերի բարձրացում»
Անահիտ Ենոքյան	Լեհաստան՝Վարշավա Էկոլոգիայի և կառավարման համալսարան, ամբիոնի մասնագետ	1 շաբաթ	Վարչական աշխատանքների իրականացում

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ

Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվմ
Սարգսյան Վահան	Փամբուխչյան Զարուհի	Internal quality assurance problems (case study)	Ներկայացված է Մահատմա նախագծի շրջանակներում ստեղծված միջազգային ամսագրում տպագրելու համար

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. Զեկույցներ

Կոնֆերանս միջազգ.,	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց /
ՏԵՄՊՈՒՍ ESPAQ	ESPAQ-Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների մասնակցության բարձրացումը Որակի ապահովման (ՈԱ) գործընթացներում Ծրագրի համակարգող՝ Մաչերատայի համալսարան, Իտալիա	Որակի ապահովման մեխանիզմները Մարտինյան Հռիփսիմե Կրթության կառավարում
2016թ -2017 գարնանային կիսամյակ	Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան	Աննա Խալաթյան Սոցիալ մշակութային գործունեություն/ ՄԳ կառ. և մենեջ./

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները Նշված խնդիրների լուծման նպատակով ամբիոնում կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ պոտենցիալ գործատուների մասնակցությամբ: Մյուս կողմից, ԵՄ <<Տեմպուս>> և այլ ծրագրերի շրջանակում ամբիոնում իրականացվել և իրականացվում են համապատասխան աշխատանքներ կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին մոտեցնելու ուղղությամբ: Ուսումնասիրվել է միջազգային փորձը և այն տեղայնացնելով՝ կիրառվել է կրթության կառավարում կրթական ծրագրի շրջանակներում: Համագործակցում

ենք նաև <<Դպրոց-կենտրոնների միության>> հետ: Իրականացվում են հանդիպումներ և շահագրգիռ քննարկումներ սոցիալ–մշակութային ոլորտի մասնագետների հետ կապն ամրապնդելու համար: Ամբիոնը մասնակցել է Ամերիկայի դեսպանատան և Կարիերայի լաբի աջակցմամբ կազմակերպված «Կարիերայի և ձեռնարկատիրության » տոնավաճառին: Միջոցառման շրջանակներում ուսանողները մասնակցեցին կազմակերպված վարպետաց դասերին, պանելային քննարկումներին, սեմինարներին՝ ուղղված հմտությունների ու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև գրանցվեցին թափուր աշխատատեղերի համար նախատեսված մրցույթին մասնակցելու համար: Ամբիոնը հնարավորություն ունեցավ գովազդային–տեղեկատվական նյութերի, տեսահոլովակների միջոցով դպրոցականներին և նրանց ծնողներին ներկայացնել մասնագիտությունները, կողմնորոշել ապագա դիմորդներին նրանց մասնագիտության ընտրության հարցում: Կատարված աշխատանքները մեկնաբանված են համապատասխան աղյուսակներում:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Ռ.Ավանեսյան	Հանդիպում աշակերտների հետ	22.08.2017
	Ռ.Ավանեսյան	Հանդիպում աշակերտների հետ	04.09.2017
	Ռ. Գևորգյան Լ. Մանուկյան	«Կարիերայի և ձեռնարկատիրության » տոնավաճառ	17.11.2017
Ամբիոնը ունի կառավարման բնույթի ուղղվածություն, ուստի դպրոցներում մեթոդական և դաստիարակչական աշխատանքները չեն մտում ամբիոնի գործառույթների շրջանակի մեջ:			

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Միջոցառում	Լ.Սողոմոնյան Ռ.Ավանեսյան Գ.Հովակիմյան	Առնո Բաբաջանյանին նվիրված հուշ-երեկո	7.12.2016
Միջոցառում	Ռ.Մուրադյան Ռ.Գևորգյան	Ազգային ժողով Դպրոց-կենտրոնների միություն	22.11.2017

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
2017թ. Ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են նոր ծրագրերի և չափորոշիչների հիման վրա, որոնք հաստատվել են ամբիոնի նիստում: Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները պարբերաբար

քննարկվել են ամբիոնի նիստերում և առանձին սեմինարներում՝ նվիրված դասավանդման նյութերի ու ռեսուրսների, ինչպես նաև ուսումնառության մեթոդների ու մոտեցումների արդիականացման և արդյունավետության բարձրացմանը: Ամբիոնում առկա են բոլոր առարկաներին վերաբերող ծրագրեր և մեթոդական ուղեցույցներ:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման 100 միավորանոց համակարգը գնահատման ձևավորման մոտեցումները, կապը ուսումնառության արդյունքներից հանդիսանում են ակադեմիական ազնվություն ապահովող կարևորագույն մեխանիզմ: Կապված գնահատման նոր համակարգի և ուսուցման էլեկտրոնային հարթակի ներդրման հետ վերանայվել են առարկայական նկարագրերը :
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
2017թ. ընթացքում ամբիոնի նիստերում հիմնականում քննարկվել են ուսումնական աշխատանքների բարելավմանը և կատարելագործմանն ուղղված հարցեր, մասնավորապես ՊԴԱ կողմից կազմած առարկայական նկարագրերի, առարկաների ուսումնամեթոդական փաթեթների վերանայում և քննարկում, առաջարկվել է մասնակի փոփոխությունների ենթարկել ուսանողներին տրամադրվող նյութերի բովանդակությունը, համապատասխանեցնելով այն ժամանակակից պահանջներին: Քննարկվել է նաև ուսանողներին ՀՀ ԳԱԱ-ի գիտահետազոտական կենտրոնների հետազոտական աշխատանքներում և միջազգային գիտաժողովներում ներգրավման հարցը:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ավագ.դասախ.	Դասախոս	Ընդ-ում
Հաստիքային	4	2	1	3	5			6
Համատեղող	1	1			1			1
Ժամավճարային								
Ընդամենը	5	3	1	3	6			7

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
2017թ. ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունն ընթացել է նախապես կազմած և ամբիոնի նիստում հաստատված աշխատանքային պլանների և հանձնարարականների հիման վրա:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնն ունի դասավանդվող առարկաների նկարագրերը, որոնք ամփոփված են թեմաների սկզբնամասում:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ

Ամբիոնն ունի կրթական էլեկտրոնային և ինտերակտիվ մեթոդներով գործող ուսումնամեթոդական ուղեցույց, որը հիմք է հանդիսանում դասախոսությունները կազմակերպել նորագույն տեխնոլոգիաների ու մեխանիզմների օգտագործմամբ:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
			4		

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը

Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
									3

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում իրականացրել են գիտահետազոտական գործունեություն ՀՀ ԳԱԱ-ի ֆիզիոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում, կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի, երկրագործության, նոոսֆերային հետազոտությունների գիտական կենտրոններում:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները ՀՀ ԳԱԱ գիտական կենտրոններում համատեղ իրականացնում են անհատական թեզեր, որոնք նախօրոք հաստատվում են ամբիոնի նիստում, պարբերաբար լուսաբանվում են արդյունքները: Հետաքրքիր աշխատանքները ներկայացվում են գիտական կոնֆերանսներին և հրատարակվում գիտական անսագրերում:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ,ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեություն և ուսումնական, մանկավարժական և արտադրական պրակտիկաներ: Դրանք կազմում են ամբիոնի աշխատանքների հիմնական մասը, որոնք անցկացվում են Երևանի լավագույն դպրոցներում և ղեկավարվում բազմաթիվ տարիների փորձ ունեցող դասախոսների կողմից: Նշվածին զուգահեռ ամբիոնը համագործակցել է ՄԱԿ-ի կառույցների հետ. հետազոտություններ է իրականացրել UNDP, UNICEF ծրագրերի շրջանակներում /ավելի մանրամասն նշված են 4-րդ գլխում/, որի արդյունքում ՝ • “Հետ Ռիո+20 համաշխարհային գործընթացը և Հայաստանը” թեման ընդգրկվել է “Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան” դասընթացում; • Ներմուծվել են նոր ընտրովի դասընթացներ – • “Կլիմայի փոփոխության և դեգրադացված էկոհամակարգերի ազդեցությունը բնակրության, հատկապես երեխաների, առողջության վրա “ և • “ՄԱԿ-ի մինչ 2030թ. կայուն զարգացման ծրագիրը և կայուն զարգացման նպատակները”:

Պրոֆեսորադասախոսական
Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝տնտ.պայմանագրային,դրամաշնորհային/

Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Կատարողներ
	Հիմնարար	
Կենսաբազմազանության պահպանման ժամանակակից հիմնահարցերը:		Հովհաննիսյան Վ Գասպարյան Ա.
Ընդհանուր էկոլոգիա և կայուն զարգացում		Կ.Դանիելյան Լ.Ավանեսյան Ս.Շողերյան Ս.Եղիազարյան
Էկոլոգիայի և բնապահպանության գիտակրթական առանձնահատկությունները		Լ.Ավանեսյան
Մարդու էկոլոգիա		Լ.Ավանեսյան Ս.Շողերյան Ս.Եղիազարյան
Բնապահպանություն		Ս.Եղիազարյան Լ.Ավանեսյան Ս.Շողերյան Ա.Գասպարյան
	Կիրառական	
Կենդանիների էկոլոգիա		Վ.Հովհաննիսյան
Բույսերի էկոլոգիա		Ա.Գասպարյան
Հիդրոէկոլոգիա		Վ.Հովհաննիսյան
Երկրաէկոլոգիա		Վ.Հովհաննիսյան

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի, զեկույցի անվանումը	Ծավալ
Карине Даниелян, Сирине Косян	Комплексность Целей устойчивого развития во имя гармоничного сочетания прав человека и природы	7
Карине Даниелян, Сирине Косян	Опыт Республики Армения по формированию процесса перехода к устойчивому социо-эколого-экономческому развитию РИНЦ ERIH PLUS	8
Karine Danielyan, Sirine Kosyan, Armine Nazaretyan, Liana Nersisyan	Childrens Health Challenges caused by environmental degradation and climat cange and main proposed solution approaches РИНЦ	34
Карине Даниелян, Сирине Косян	Опыт развитых стран в рамках всемирного процесса перехода к устойчивому развитию	10
Оганесян В.С.,Марджанян М.А., и др.	Экокомплексы фауны + беспозвоночных поймы реки Мармарик	9

Оганесян В.С.,Марджанян М.А., и др.	К фауне беспозвоночных животных поймы реки Мармарик	5
Ա.Ս.Գասպարյան, Ն.Ի.Սամվելյան	Ազատ գետի ավազանի ֆլորիստական բազմազանությունը եվ բուսականության կենսառեսուրսների դասակարգումը	8
S.Shogheryan N.A.Sahakyan J.S.Sarkissyan A.V.Aznauryan L.Yu.Simonyan	Impact of taurine on the variability of the cardial rhythm and morphofunctional changes of the organs of the immune system	3
С. А. Шогерян	Изучение сравнительного влияния различных музыкальных жанров на умственную работоспособность и внимательность студентов с применением современныхкомпьютерных технологий	8
Սահակյան Ն.Ա., Ավետիսյան Է. Ա., Շողերյան Ս. Ա., Ավանեսյան Լ. Գ., Թադեվոսյան Ն. Է., Մաթևոսյան Հ.Գ.	Տաուրինի դերը իմմոբիլիզացիոն սթրեսի ենթարկված առնետների սիրտ-անոթային համակարգի վեգետատիվ հավասարակշռության կարգավորման մեջ	տրված է տպագրության
С. А. Шогерян Э. А. Аветисян А. А.Петросян М. С. Хачиян Н. А. Саакян Л. Ю. Симонян	Роль таурина в процессе адаптации висцеральных систем организма при психоэмоциональном стрессе у крыс (RAT), SCOPUS, Web of Science	8
S.A.Shogheryan E.A.Avetisyan A.A.Petrosyan M.S.Khachiyan N.A.Saakyan L.Yu.Simonyan	The role of taurine in adaptation of visceral systems under psycho-emotional stress in rats, http://link.springer.com/	8
Шогерян С.А Аветисян Э.А., Петросян А.А., Аванесян Л. Г., Саакян Н.А.	Влияние стимуляции супраоптического ядра гипоталамуса на реактивность вагосенситивных нейронов ядра солитарного тракта и некоторые вегетативные показатели вариабельности сердечного ритма при развитии психоэмоционального стресса у крыс, SCOPUS	13
R. R .Sadoyan, S.A.Shogheryan	The genetic potential of south caucasus wheat	1

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը,օրը
Կայուն օրգանական աղտոտիչներ	17.04.2017
Աղետների ռիսկերի ազգային ռազմավարությունը	23.09.2017

Էկոլոգիական կրթության նոր ռազմավարության քննարկումը	26.10.2017
Տուրիզմը և շրջակա միջավայրը	16.11.2017

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները Ամբիոնը զգալի գործունեություն է ծավալում հանրության շրջանում կենսաբանության ուղղությամբ, լայն ու բազմակողմանի լուսաբանման (թերթերի, հեռուստատեսության և համակարգչի մեթոդներով), ինչպես նաև ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակով աշակերտների հետ ակտիվ կապերի ձևավորման և քարոզչության:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
	Հովհաննիսյան Վարուժան	Բաց դաս	13.11.2017
	Եղիազարյան Սևիլլա	Բաց դաս	20.11.2017
Մեթոդական			
	Ավանեսյան Լյուդմիլա	Բաց դաս	27.02.2017
	Շողերյան Սիրինե	Բաց դաս	15.03.2017
	Գասպարյան Արմեն	Բաց դաս	27.03.2017

Աշխատանք հանրության շրջանում

Աշխ-ի տեսակը	Կոորդինատոր Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Էկոլոգիկա և կայուն զարգացման խնդիրների լուսաբանում	Կարինե Դանիելյան	Համագործակցություն մամուլի հետ /ելույթներ, հոդվածներ, ասուլիսներ/: Մասնագիտական մասնակցություն ՀՀ Նախագահին, ՀՀ Կառա-վարության, ՀՀ Արդարա-դատության, Բնապահ-պանության ու Գյուղա-տնեսության նախարա-րություններին, Երևանի քաղաքապետարանին առըն-թեր գործող խորհրդների և հանձնաժողովների գործունեությանը:	Պարբերաբ ար
Ուսումնաճանաչողական	Լյումիլա Ավանեսյան	Բաց դաս	17.02.2017
Ուսումնաճանաչողական	Արմեն Գասպարյան	Բաց դաս	24.03.2017

Ուսումնաճանաչողական	Վարուժան Հովհաննիսյան	Բաց դաս	8.09.2017
Ուսումնաճանաչողական	Սևիլլա Եղիազարյան	Բաց դաս	24.11.2017

Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում (2017 թ.) 2016-2017 ուս. տարվա երկրորդ և 2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակներում ծրագրված աշխատանքները՝ ըստ նույն ժամանակահատվածներն ընդգրկող աշխատանքային պլանների սահմանված ժամանակացույցի, իրականացվել է 100 %-ով, իսկ առանձին դեպքերում, մասնավորապես՝ հրատարակությունների տեսանկյունից՝ ծրագրվածից ավելի:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Հաշվետու տարում ամբիոնում իրականացվող բոլոր դասընթացների ուսուցանումից ակնկալվող արդյունքները համապատասխանում են դրանց դասավանդման և ուսումնառության առկա փաստացի արդյունքներին, այնքանով, որքանով դա տեսանելի է Ամբիոնի ՊԴԱ-ի և սպասարկվող ֆակուլտետների դեկանատների դիտանկյունից: Այդ գործընթացի իրական պատկերը ամբողջական և ավարտուն կարող է դառնալ մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքում, ինչի կազմակերպումը Ամբիոնի իրավասության շրջանակներից դուրս է: Դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները պարբերաբար արդիականացվել են, դրանց նկատմամբ վերահսկողությունը Google Classroom-ի հարթակում մշտադիտարկվել է Ամբիոնի վարիչի, Ամբիոնի Google Classroom-ի հարթակի պատասխանատուի և ՀՊՄՀ որակի վարչության կողմից և գնահատվել է «գերազանց»: Դասավանդման և ուսումնառության մեթոդների կատարելագործման և արդյունավետության բարձրացման հարցը մշտապես քննարկվել է Ամբիոնում և այդ քննարկումների արդյունքում ընդունված որոշումները հաշվի են առնվել դասախոսների կողմից լսարանային գործընթացը կազմակերպելիս, ինչի մասին են վկայում Ամբիոնի վարիչի և Ամբիոնի դասախոսների կողմից ըստ գրաֆիկով սահմանված ժամանակացույցի իրականացված դասալսումների արդյունքները, որոնք ևս մեկնության են ենթարկվել են Ամբիոնի նիստերի ընթացքում:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Հաշվետու տարում ուսանողների գնահատման համակարգը, մասնավորապես գնահատման մեթոդները, չափանիշները ու մոտեցումները վերանայվել են և իրականացվել են մի շարք միջոցառումներ ու մեխանիզմներ գնահատման արդյունավետությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև՝ ուսանողների ակադեմիական ազնվությունը ապահովելու ուղղությամբ: Այսպես. • Մանրակրկիտ քննարկումներից հետո Առարկայական նկարագրերում ամրագրվել են գնահատման չափանիշները, վերջնական կամ ամփոփիչ գնահատականի բաղադրիչներն ու դրանց ձևավորման մեխանիզմները, սահմանվել են միջանկյալ ստուգումների (խմբային, վերլուծական, թեստային, գրավոր շարադրանքի, էսսեի) գնահատման չափորոշիչները:

• Գնահատման համակարգում որպես գնահատման առաջին, Ամբիոնում իրականացվող բոլոր դասընթացների համար ընդհանուր բաղադրիչ սահմանվել է Մասնակցությունը, որը ձևավորվում է ուսանողի դասապրոցեսին ներկայության • Գնահատման համակարգում կարևորվել է ուսանողի վերլուծական, ինքնուրույն, ստեղծագործական, աշխատանքի բաղադրիչը, որը նպատակաղուղղված է ուսանողի հետազոտական քննադատական մտածողության խթանմանը: Այդ նպատակով միջանկյալ ստուգումներն իրականացվել են էսսեների, վերլուծական աշխատանքների, խմբային (թիմային) աշխատանքների, թեստերի միջոցով, իսկ որոշ դասընթացների դեպքում՝ զուգակցվել են ավանդական գրավոր շարադրանքների հետ: • Գնահատման համակարգում կարևորվել է նաև Ընթացիկ ստուգման բաղադրիչը, որը ձևավորվում է երկու ցուցանիշներով՝ ա) խմբային աշխատանք կամ էսսե, բ) էլեկտրոնային ակտիվություն՝ (Google Classroom հարթակում ժամանակին գրանցվելու, դասընթացի էջում տեղ գտած հանձնարարությունները ժամանակին կատարելու, դասախոսի կողմից ֆորումներում առաջադրված քննարկումներին ժամանակին արձագանքելու) ցուցանիշով: Վերջնական ամփոփիչ գնահատականի «անբավարար» արդյունքի դեպքում ուսանողի նկատմամբ իրականցվել է գրավոր հարցում՝ ըստ լուծարումների հարցաշարերի, որոնք տեղադրված են դասընթացների հեռավար կայքէջերում և ներառում են կիսամյակի ընթացքում իրականացված ստուգման ձևերում ընդգրկված թեմաներն ու առաջադրանքները: Գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի իրականացման փուլում դասախոսները գործնականում անդրադարձել են ստուգման յուրաքանչյուր կոնկրետ ձևի առանձնահատկություններից բխող պահանջների իրականացման եղանակներին՝ մատնանշելով և մեկնելով գնահատման սահմանված հիմնաքարային մոտեցումները՝ տեսական հարցերի հնարավորինս ամբողջական ներկայացումը, ձևակերպումների ստույգությունը, շարադրման տրամաբանությունը, տեսական գիտելիքը ձևայնացնող առաջադրանք-վարժանքների ճիշտ իրականացնումը (մասնավորապես՝ Տրամաբանություն և Փաստարկման տեսություն առարկաների դեպքում), հետևությունների ու գնահատականների ինքնուրույնությունը, թեմայի ինքնուրույն արժևորումը, գրականության հնարավորինս ամբողջական օգտագործումը և այլն: Ընդ որում թվարկված յուրաքանչյուր պահանջի համար յուրաքանչյուր կոնկրետ առարկայի դեպքում սահմանվել են կոնկրետ որոշակի տոկոսաչափեր՝ կախված առարկայի առանձնահատկություններից: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ակադեմիական ազնվությունը ապահովելու գործում բարոյախրատական զրույցներն ու սպառնալիքները ժամանակի զուր և ապարդյուն վատնում են և հանգեցնում են ուսանողի ինքնագնահատականի իջեցման, անկարողության գիտակցման, Ամբիոնը վերջին տարիներին որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որը ըստ էության, լուծում է խնդիրը: Այն է՝ ստուգման ձևերն իրականացնել ըստ այնպիսի պահանջների, որոնց «մեխանիկական» կատարմամբ ուսանողը ինքնին կապահովի ինքնուրույն, ստեղծագործական աշխատանք և կըմբոշխնի սեփական աշխատանքի արգասիքը: Այսպիսի «տեխնիկայով» աշխատող ուսանողը երբևէ չի կարող և չի փորձի յուրացնել ուրիշի միտքը: Այս խնդիրն իրագործելու նպատակով դասախոսը մշակում է Վերլուծական աշխատանքի, էսսեի իրականացման քայլերը, ըստ անհրաժեշտության Google Classroom-ի հարթակում տեղադրում է տիպօրինակներ, կազակերպում է արտալսարանային պարապմունքներ և խորհրդատվություն՝ Ամբիոնին կից գործող «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» խմբակի շրջանակներում, վիդեո ֆիլմերի, գեղարվեստական երկերի քննարկումներ և ընտրված հիմնախնդիրների դիտարկումներ:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցեր, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
Հաշվետու տարում Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, դրանց իրականացմանը նպաստող մեխանիզմները և դրանց կապակցությամբ ընդունված

որոշումներն ամրագրվել են Ամբիոնի նիստերի արձանագրություններում (2016-2017 ուս. տարվա 2-րդ կիսամյակի և 2017-2018 ուս. տարվա 1-ին կիսամյակի նիստերի արձանագրությունների մասին հանգամանալից տվյալները տե՛ս ստորև ներկայացված համապատասխան սանդղակի նշումներ բաժնում):

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանդիդատ	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-ում
Հաստիքային	3	4	3	3	4		2	
Համատեղող		1	1	2	1	1		
Ժամավճարային								
Ընդամենը	3	5	4	5	5		3	
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
			3	3	1	2	3	12

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Հաշվետու տարում Ամբիոնում իրականացվել են թվով 51 դասընթացներ, որոնց առարկայական նկարագրերը և ուսումնամեթոդական փաթեթները հանգամանորեն քննարկվել, վերանայվել, հաստատվել և վերահաստատվել են Ամբիոնի թիվ 6 (տե՛ս Արձ. № 1, 26.01.2017 թ.) և թիվ 2 (տե՛ս Արձ. № 1, 31.08.2017 թ.) նիստերում: Դասընթացներն իրականացվել են ինտերակտիվ մեթոդներով էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով (համակարգիչ, պրոյեկտոր, հեռուստացույց) հագեցված լսարաններում կամ դրանք ապահովել է Ամբիոնը՝ տրամադրելով իր համակարգիչն ու պրոյեկտորը: Հաշվետու տարում Ամբիոնում հրատարակվել է 6 ուսումնամեթոդական աշխատանք, որոնցից մեկը՝ ՀՊՄՀ դասիչով: Դրանք են՝ Մոսինյան Դավիթ, Մետաիմացաբանություն (ուսումնամեթոդական ձեռնարկ); Օհանյան Քաջիկ, Философия человека (учебник для академического бакалавриата, с грифом УМО ВО); Социология (учебное пособие для прикладного бакалавриата, гриф УМО ВО); Социологические и психологические методы исследований в социальной работе (учебное пособие для магистрантов); Методология и методика социологического исследования (учебник для академического бакалавриата); Социология (учебное пособие для прикладного бакалавриата, гриф УМО ВО). Ամբիոնը պահպանել է ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի կողմից անցկացվող տեսական սեմինարների ավանդույթը և հաշվետու տարում ևս պարբերաբար կազմակերպել է տեսամեթոդական սեմինարներ (մասնավորապես «Գիտական աշխատանքի տեխնոլոգիա» դասընթացի շրջանակներում, զեկուցող՝ Քաջիկ Օհանյան) և մեթոդական կոնֆերանս՝ Փիլիսոփայության համաշխարհային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում, զեկուցող Անդրանիկ Ստեփանյան (տեսամեթոդական սեմինարների և կոնֆերանսների ստույգ քանակը տե՛ս ստորև ներկայացված սանդղակում): Ամբիոնի դոցենտ փ.գ.թ. Հովհաննես Հովհաննիսյանը պարբերաբար անկացրել է դասախոսություններ և դասընթացներ հետբուհական և արտաբուհական հանրապետական և քաղաքային կրթական ծրագրերում: Մասնավորապես՝

• «Փաստարկում և հռետորություն». դասընթաց ՀՀ արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար: Մարտ-մայիս, 2017թ.: • «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ». դասընթաց ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիր, 2016, 2017 թթ.: • «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ», «Հաղորդակցում, բանակցություններ կազմակերպում և վարում», «Հասարակական համակարգի զարգացման և կառավարման առանձնատկությունները» թեմաներով դասախոսություններ և պարապմունքներ ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների ծրագրում: ՀՀ Քաղծառայության խորհուրդ, Երևանի պետական համալսարան, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ: 2015, 2016, 2017 թթ.: • «Քաղաքական բանավեճ և ճարտասանություն». Դասընթաց Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի «Քաղաքական դպրոց» դեպարտամենտում, Էթիկայի դպրոցում, Լիբերալ քաղաքականության դպրոցում: • «Քաղաքացիական հասարակություն. ինստիտուտները և գործառույթները», «Հասարակական համակարգի փոխակերպման և կառավարման առանձնահատկությունները: Կանանց մասնակցության հիմնախնդիրներ», «Հասարակական - քաղաքական երկխոսության մշակույթ» թեմաներով դասախոսություններ և պարապմունքներ Կանանց լիդերության դպրոցի ունկնդիրների համար: Ծաղկաձոր, 27-30 մարտի, 20-23 մայիսի, 2017 թ.: • «Հասարակական համակարգի զարգացման և կառավարման առանձնահատկությունները: Կանանց մասնակցության հիմնախնդիրներ», Հասարակական-քաղաքական երկխոսության մշակույթ թեմաներով դասախոսություններ և պարապմունքներ տեղական ինքնակառավարման մարմինների ավագանիների անդամների համար: Աղվերան, 25-ը նոյեմբերի, 2017 թ.: • «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ» թեմայով դասախոսություն-պարապմունք Երիտասարդ պատմաբանների ասոցիացիայի «Մեդիացիան միջպետական կոնֆլիկտի կարգավորման այլընտրանքային տեխնոլոգիա» դպրոցի ունկնդիրների համար: Անցկացվել է երկու մեթոդական սեմինար՝ «Ինքնուրույն վերլուծական մտածողության զարգացման մեխանիզմների ապահովումը ՀՊՄՀ-ում (զեկուցող՝ Հասմիկ Հովհաննիսան)», «Էլեկտրոնային կրթության առավելություններն ու թերությունները» (զեկուցող՝ Աշոտ Գևորգյան) թեմաներով: Հաշվետու տարում ևս Ամբիոնում պահպանվել է երիտասարդ կադրերի մեթոդական (և ոչ միայն այդ) տեսանկյունից աճի ապահովման խնդիրը: Այսպես, Ամբիոնի երիտասարդ ասիստենտ, փ.գ.թ. Դավիթ Մոսինյանին շնորհվել է դոցենտի կոչում, ավագ մասնագետ Սաթենիկ Կուզանյանը 2017 թ. մայիսի 16-19-ը գործուղվել է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում որակի ապահովման (ՈԱ) գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնմանն ուղղված ESPAQ ծրագրի շրջանակներում կազմակերպված «ՈԱ ներկայացուցիչների և աշխատակազմի Իսպանիայի UNIR համալսարան (Մադրիդ) աշխատաքնային այցի»: Արդյունքում նա հնարավորություն է ունեցել ծանոթանալու Իսպանիայի ՈԱ համակարգին և ուսանողներին տրամադրվող ծառայություններին, մոնիթորինգի և որակական ցուցիչների նմուշ-օրինակներին, տեղեկանալ էլեկտրոնային ուսուցման դասընթացների որակական, ինչպես նաև ինքնագնահատման, գնահատման և ուսանողների մասնակցության ապահովման գործընթացներին: Ամբիոնում իրականացվում է հերթապահություն՝ ըստ սահմանված գրաֆիկի:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
2016-2017 և 2017-2018 ուս. տարվա 2-րդ կիսամյակներին ընդառաջ Ամբիոնում իրականացվող բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը հանգամանորեն քննարկվել, վերանայվել,

հաստատ և վերահաստատվել են Ամբիոնի նիստերում (Նիստ N 6, Արձ. N 1, 26.01.2017 թ.; Նիստ N 2, Արձ.N 1, 31.08.2017 թ.)
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնում իրականացվող բոլոր դասընթացների առարկայական ուսումնամեթոդական փաթեթները հագեցված են էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով, դրանք քննարկվել, լրամշակվել, վերանայվել, հաստատ և վերահաստատվել են Ամբիոնի նիստերում (Նիստ N 6, Արձ. N 1, 26.01.2017 թ.; Նիստ N 2, Արձ.N 1, 31.08.2017 թ.) և տեղադրված են դասընթացների Google Classroom հարթակի համապատասխան էջերում:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
			1		5

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների, սեմինարների, դասախոսությունների քանակը

Հանրապետական			Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	դաս.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
		7		2	1	3		2

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Ամբիոնի պաշտոնական հանդես WISDOM-ն ըստ էության արտացոլում է Ամբիոնի դասախոսների գիտական հետաքրքրություններն ու հետազոտական գործունեությունը, այն իմաստով, որ ժողովածուի ենթաբաժինները, որոնցում ընդգրկվում են Ամբիոնի դասախոսների գիտական հոդվածները, հենց սահմանվել են վերջիններիս գիտական հավակնություններին համապատասխան: Այդ հավակնություններով և 2011-2015 թթ. Համալսարանում գործող «Փոխակերպական տրամաբանության, մետափիլիսոփայության և փաստարկման տեսության» միջազգային գիտահետազոտական ինստիտուտի գիտական մասնագիտացումներով էլ իրենց հերթին պայմանավորում են Ամբիոնի գիտական ուղղությունները:
Ամբիոնի ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
2017 թ. Ամբիոնին կից ստեղծվեց «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» գիտական խմբակը, որի կազմում ընդգրկվել են Պատմության և իրավագիտության ֆակուլտետի Հասարակագիտություն մասնագիտության բակալավրիատի առաջին և երկրորդ կուրսի ուսանողները: Խմբակի ստեղծումը հետապնդում է երիտասարդ կադրեր աճեցնելու նպատակ և, իհարկե, միտված է դասախոս-ուսանող համատեղ գիտական աշխատանքների իրականացմանը, որոնք հրատարակությունը տեղ կգտնի WISDOM–ի «Երիտասարդ գիտնականի ամբիոն բաժնում»: Այդ աշխատանքի արդյունքները հրապարակված հոդվածների տեսքով ակնկալվում են հաջորդ ուսումնական տարում, երբ ուսանողները կլինեն 3-րդ կուրս:

«Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» գիտական խմբակը մասնակցում է Ամբիոնի կողմից կազմակերպվող միջոցառումներին, ավանդական դարձած Փիլիսոփայության համաշխարհային օրվան նվիրված տոնակատարությանը (16-ը նոյեմբերի, 2017 թ.): 2017 թ. մարտ-նոյեմբեր ամիսներին Ամբիոնի դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը և Անդրանիկ Ստեփանյանը որպես դասախոս-թրեյներ իրականացրել են մի շարք պարապմունքներ ուսանողների հետ՝ նախապատրաստելով նրանց Բանավեճի ակումբների հանրապետական մրցույթին: Մրցույթին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության 7 բուհերի ուսանողներ: Նախնական փուլում՝ 46 թիմ, վերջին փուլում՝ 16 թիմ, յուրաքանչյուր թիմում՝ 6 ուսանող: Մրցանակային տեղերը զբաղեցրին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Դիպլոմատ» թիմը՝ 1-ին տեղ և ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի «Ալիբի» թիմը՝ 2-րդ տեղ: Հովհաննես Հովհաննիսյանը ընդգրկված էր նաև ժյուրիի կազմում: Մրցանակաբաշխության ընթացքում հաղթող թիմերին հանձնվել են գավաթներ, իսկ թիմերի անդամներին՝ տարբեր նյութական պարգև-նվերներ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հաղթող 12 ուսանողներին էլ որպես պարգև հանձնվել է նաև Հովհաննես Հովհաննիսյան «Փաստարկում և հռետորություն» ձեռնարկը:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ, ունի հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր:
Ամբիոնում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման դրսևորումներից պետք է առանձնացնել՝ • վերը թվարկված հրատարակված ուսումնամեթոդական աշխատանքների կիրառումը դասավանդման ընթացքում՝ որպես հիմնական կամ օժանդակ գրականություն, որոնք տեղադրված են նաև Google Classroom-ի հարթակում: • Ամբիոնի դասախոսների գիտական հետազոտությունների շնորհիվ վերանայված առարկայական նկարագրերի և ուսումնամեթոդական փաթեթների (մասնավորապես՝ «Փաստարկում և հռետորություն», «Կրոնի տեսություն և պատմություն», «Տրամաբանություն», «Մշակույթի փիլիսոփայություն», «Սոցիալական փիլիսոփայություն», «Գիտության փիլիսոփայություն», «Գիտական աշխատանքի տեխնոլոգիա» դասընթացների պարագայում) առկայությունը:

Պրոֆեսորադասախոսական
Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ.պայմանագրային, դրամաշնորհային/

Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
«Փոխակերպական հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ»	հիմնարար	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե	3 000 000	Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննիսյան Հովհաննես Ջիջյան Ռոբերտ

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Ստեփանյան Անդրանիկ Արամայիսի	Աստծո մահվան ուսմունքը	ՎՄՎ-ՊՐԻՆՏ	240
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի,	Методологический анализ генезиса научной теории: виды естественнонаучного знания и их	Изд-во СПбГЭУ	289

Բրանսկի Վլադիմիր Պյոտորի, Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննեսի, Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի	взаимосвязь. Очерки о ленинградской онтологической и ереванской логико-аргументационной школах (ներկայացված է հրատարակության)		

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի, զեկույցի անվանումը	Ծավալ
Մոսինյան Դավիթ Ռոմիկի	Պատմության փիլիսոփայության հնարավորության հարցը, (ՎԷՄ 2017,4 հոկտեմբեր-դեկտեմբեր)	8 էջ
Մոսինյան Դավիթ Ռոմիկի	Can There Be a Credible Philosophy of History?	5 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի, Օհանյան Կարինա Քաջիկի	Социологический анализ исследования социально-профессиональной активности студентов исследование социальной ответственности как механизма управления	14 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի, Օհանյան Կարինա Քաջիկի	Анализ государственного подхода к социальной ответственности в сфере управления трудовым потенциалом развития малого бизнеса	10 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	Основные школы и подходы к построению теории социальной работы за рубежом	10 էջ
Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի	The Paradox of Gödel’s Numbering and the Philosophy of Modern Metamathematics	11 էջ
Ստեփանյան Անդրանիկ Արամայիսի	Critical Remarks on the Theoretical Significance of Vahanian’s Death of God Theology (Brief Review)	11 էջ
Շահբազյան Մարինե	Information security in the system of ensuring national security	6 էջ
Հովհաննիսյան Հովհաննես	Քաղաքացիական հասարակության գաղափարն ու մոդելները. զարգացման միտումները, թեր և դեմ փաստարկներ	11 էջ
Մոսինյան Դավիթ Ռոմիկի	Պատմություն, լեզու, փորձ	15 էջ
Պետրոսյան Նելլի Լևոնի	Գրիգոր Լուսավորչի <Ճառք Յաճա-խապատումք> երկը	6 էջ
Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի	The Secret of Geniality (I)	17 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի, Օհանյան Կարինա Քաջիկի	Анализ концепций интеллектуального капитала организаций	7 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	A methodological analysis of the scientific research	13 էջ
Գևորգյան Աշոտ Արամայիսի	История наукометрии	10 էջ
Գևորգյան Աշոտ Արամայիսի	The Role of Scientometric Indicators in Modern Scientific World	5 էջ

Գրիգորյան Էռնեստ Ռուբենի	Promotion of Heroic Character as Social Science and Education Task	7 էջ
Գրիգորյան Էռնեստ Ռուբենի	"Экспорт демократий" как технология колониального захвата	9 էջ
Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննեսի	Problems of Argumentation in Medieval Armenian Philosophy	14 էջ
Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննեսի, Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի	Building the General Theory of Meta-Argumentation.	9 էջ
Մոսինյան Դավիթ Ռոմիկի	Language and Experience in the Post-Genocide Society	4 էջ
Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի, Ավալյան Ռիմա	Animal Learned Genetic Cognition and the Limits of Anthropomorphic Approach	14 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	Социологический анализ формирования конкурентоспособности выпускников вуза	8 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի, Օհանյան Կարինա	Социологическое исследование социальной ответственности как механизма управления	9 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի, Սաֆարյան Ա.Յու., Պոկրովսկայա Ն.Ն.	Сервисная и регулятивная роли государства в эволюции трудового поведения в условиях экономики знаний	8 էջ
Հովհաննիսյան Հովհաննես Օնիկի	Определение и классификация типов гражданского общества. Предпочтения и перспективы развития	Գտնվում է հրատարակման փուլում
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	Социологическая диагностика направлений социальной адаптации среднеазиатских трудовых мигрантов	5 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	Современные тенденции развития высшего образования за рубежем	13 էջ
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	Методология процесса умозрительного исследования	10 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	անցկացման վայրը, օրը
Բրուտյանական ընթերցումներ. տեսական սեմինարներ (իրականացվում է քննարկումների մակարդակով, մասնակցում են բոլոր դասախոսները) «Գիտական աշխատանքի տեխնոլոգիա» թեմայի շուրջ (զեկուցողներ՝ Ռոբերտ Ջիջյան, Քաջիկ Օհանյան) Միջազգային գիտաչափական շտեմարանները և WISDOM-ը (զեկուցող՝ Աշոտ Գևորգյան)	Երևան, 10 փետրվար Երևան, 10 մարտի Երևան, 15 ապրիլի Երևան, 26 մայիսի Երևան, 6 հոկտեմբերի Երևան, 16 նոյեմբերի

Որակավորման բարձրացում
Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ

Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Ստեփանյան Անդրանիկ Արամայիսի	Կալիֆորնիա նահանգի Լա Սիեռա համալսարանի Կրոնագիտության ֆակուլտետ	20 նոյեմբերի – 8 դեկտեմբերի, 2017 թ.	մասնագիտական, ընդհանուր կրթական վերապատրաստում, փորձի փոխանակում, համագործակցության հաստատում
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	Վ.Պոտանինի բարեգործական հիմնադրամի դպրոց	2-7 հուլիս, 2017 թ.	Դրամաշնորհային ծրագրերի շահառուների սոցիալապես արժեքավոր նախագծերի ուսումնասիրում և իրազեկում
Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	Սանկտ-Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարան	11-21 ապրիլ, 2017թ.	Մագիստրատուրան ժամանակակից պայմաններում՝ կրթական ծրագրերի նախագծում և կրթական գործընթացի պլանավորում ծրագրի ուսուցում

Ուսանողական
Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ

«Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» ուսանողական գիտական-հետազոտական խմբակ	2016-2017 ուս. տարի, 2-րդ կիսամյակ	2017-2018 ուս. տարի, 1-ին կիսամյակ
Կլոր սեղան	5, մայիսի	16, նոյեմբերի

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ

Մրցույթ	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ Ա.Ա.Հ.
Բանավեճի ակումբների հանրապետական մրցույթ	Հայաստանի Հանրապետության 7 բուհերի ուսանողներ	Նախնական փուլում՝ 46 թիմ, վերջին փուլում՝ 16 թիմ, յուրաքանչյուր թիմում՝ 6 ուսանող	1-ին տեղ՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Դիպլոմատ» թիմ, 2-դ տեղ՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի «Ալիբի» թիմ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ իրականացվել է անհատական մակարդակում, դասախոսների անձնական կապերի, ծանոթ-դրացիական հարաբերությունների մակարդակում:

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ուսումնառության ժամանակ օգտագործվող մեթոդները ինտերակտիվ են, նպաստում են ուսանողակենտրոնության, սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների հաստատմանը: Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվում են դասախոսների փոխադարձ դասալսումների արդյունքները: Դասալսումների ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում օգտագործվող մեթոդներին, տեսասահիկների ներկայացման բովանդակության և ձևի որակին, ուսանողների ակտիվությանը, ինքնուրույնությանը և նախաձեռնողականությանը:
Ամբիոնում հաշվետու տարում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները,կապը ուսումնառության արդյունքներից, և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնը մեծ ուշադրություն է դարձնում ընթացիկ և ամփոփիչ ստուգումների կազմակերպման և անցկացման, դրանց բովանդակության վերահսկման աշխատանքներին: Վերանայվել են ընթացիկ և ամփոփիչ ստուգումների բաղադրիչները, գրավոր աշխատանքների և բանավոր քննությունների հարցաշարերը, բացառվել են վերարտադրողական հարցերը, ավելացել են ուսանողների տեսական գիտելիքները պրակտիկայում օգտագործելուն ուղղված, նրանց կարողություններն ու հմտությունները բացահայտող գործնական հարցերը: Մշակվել են բոլոր տիպի գործնական աշխատանքների և ստուգման ձևերի գնահատման չափորոշիչները:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:
2017թ. տեղի են ունեցել ամբիոնի 27 նիստեր, որտեղ քննարկվել են կրթության բովանդակությունը և ուսումնական գործընթացը բարելավելուն, ուսուցման որակի մշտադիտարկման և ուսանողների գիտամանկավարժական, հետազոտական պրակտիկայի կազմակերպման և արդյունքների վերլուծմանը, մագիստրոսների թեզերի որակին և դասախոսների մասնագիտական մակարդակը բարձրացնելուն, մանկավարժական կրթության ոլորտի զարգացման հիմնախնդիրները վեր հանելուն, ասպիրանտների և հայցորդների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված և այլ հարցեր: 2017 թ. փետրվար, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին տեղի ունեցած ամբիոնի բոլոր նիստերում քննարկվել են դասավանդվող առարկաների վերանայված 48 փաթեթներ:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Հայտարար	Ասոցիացված պրոֆեսոր	Պրոֆեսոր-հետազոտող	Դոցենտ	Ասիստենտ-պրոֆեսոր	Ավագ դասախոս	Ընդ-ամենը
Հաստիքային	12	2	2	7	7	1	1	
Համատեղող	3	1	1	1	2	1	1	
Ժամավճարային	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	-	-	-	-	-	-	-	-
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
		1	5	4	5	2	-	

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ուսումնական գործընթացը բարելավելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին քննարկվում են դասախոսների ինքնավերլուծությունները և տրվում են երաշխավորություններ: Մշտապես վերահսկողություն է իրականացվում դասախոսի և գործնական աշխատանքը վարողի համատեղ գործունեության նկատմամբ: Նույն սկզբունքով վերահսկվում է թեզի ղեկավարի և պրակտիկայի ղեկավարի համատեղ գործունեությունը: Մշտապես վերանայվում են կուրսային աշխատանքների, ռեֆերատների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաները՝ դրանք առավել արդիական, հետազոտությունների հիման վրա եզրակացություններ պարունակող աշխատանքներ դարձնելու նպատակով: Մշակվել են նաև կուրսային աշխատանքներին ներկայացվող պահանջներն ու գնահատման չափորոշիչները: Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են 3 ուսումնա-մեթոդական ձեռնարկներ: • «Մանկավարժական առողջագիտությունը տարրական դպրոցում» - հեղինակային խումբ • «Մանկավարժության զարգացման միտումներն արդի փուլում» - Լ. Նազարյան • «Մանկավարժությունը գծապատկերներով և աղյուսակներով» - Գ. Աղուզումցյան
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Ամբիոնում մշակվել են ԿՀՍ ֆակուլտետի բակալավր 1-4-րդ ու համալսարանի բոլոր ֆակուլտետներում մագիստրատուրա 1-2-րդ կուրսերում դասավանդվող առարկաների փաթեթները՝ ըստ պահանջված ձևաչափի: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ առարկայի դասախոսությունների և գործնական աշխատանքների բովանդակության, օգտագործվելիք ինտերակտիվ մեթոդների և աշխատանքի այլ ձևերի համապատասխանությանը առարկայի վերջնարդյունքներին: Ամբիոնում վերանայվել են նաև ԿՀՍ ֆակուլտետի սոց. մանկավարժ մասնագիտության բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական պլանները, մշակվել են առաջարկություններ դրանք բարելավելու ուղղությամբ: Ստեղծվել է կամընտրական առարկաների բազա:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնի բոլոր դասախոսներն ունեն Google Classroom էլեկտրոնային հարթակում ստեղծված դասընթացներ: Ամբիոնը պարբերաբար վերահսկում է հարթակում դասախոսների գործունեությունը ըստ ՀՊՄՀ ռեկտորի 2017թ. էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության մշտադիտարկման ցուցիչների մասին հրամանի: Վերահսկվում է հարթակում դասախոսների շաբաթական ակտիվությունը, համապատասխան ուսումնական նյութերի առկայությունը, կիսամյակում առնվազն 2 գնահատվող առաջադրանքների հանձնարարման և ստուգման գործընթացը:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը

Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
-	-	-	3	-	-

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը

Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
-	1	-	-	-	-	1	1	1	9

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ

Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
Մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող լաբորատորիա	2017թ.	3057.2	2

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
2017թ. ամբիոնի գիտահետազոտական միացյալ թեման նվիրված է եղել վալեոլոգիական խնդիրներին: Ամբիոնին կից գործող «Մանկության հիմնախնդիրները ուսումնասիրող» լաբորատորիան հրատարակել է «Մանկավարժական առողջագիտությունը տարրական դպրոցում» ուսումնա-մեթոդական ձեռնարկը, որտեղ ներկայացված են դպրոցի առողջագիտական ծառայության կառավարման և գործունեության մոդելը, «Մանկավարժական համատեղելիություն» եզրույթի բնութագիրը, տրված են առողջ ապրելակերպի ձևավորմանը միտված դաս-նմուշներ, ուսուցիչների, ծնողների, երեխաների շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներ և այլն:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնում սահմանված գնահատման մոտեցումները վերանայվել են, գնահատման արդյունավետությունը և ակադեմիական ազնվությունը ապահովելու նպատակով ընթացիկ ստուգում բաղադրիչի որոշակի մաս տրամադրվել է գնահատվող էլեկտրոնային հանձնարարությունից կուտակված գնահատականին:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումներ և հաստատված մեխանիզմներ:

Ամբիոնում պարբերաբար կազմակերպվում են ամբիոնի նիստեր, քննարկվում են ուսումնական գործընթացին առնչվող հարցեր, գիտական և մեթոդական աշխատանքներին առնչվող հարցեր, համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից ուղարկված գրությունների, հանձնարարականների քննարկումներ, դասալսումների արդյունքների քննարկումներ և այլն:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Անվանում	Կանայք	դոկտոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ավ.դասախ.	դասախոս	Ընդ-ում
Հաստիքային	6	-	1պ/պ	6	6	-	-	6
Համատեղող	-	-	-	-	-	-	-	-
Ժամավճարային	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	6	-	1	6	6	-	-	6
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
		-	-	2	3	-	1	6

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում
Ամբիոնում էլեկտրոնային և թղթային տարբերակով առկա են դասավանդվող բոլոր առարկաների առարկայական նկարագրերը, առարկաների թեմատիկ տրոհումները, ուսումնամեթոդական փաթեթները, միջանկյալ ստուգման հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքների թեմաները, քննական հարցաշարերը: Ամբիոնում պարբերաբար կազմակերպվում են փոխադարձ և բաց դասալսումներ, ուսանողական շրջայցեր, այցելություններ տարբեր կառույցներ՝ Արտակարգ իրավիճակների գծով:
Ամբիոնը ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին:
Առարկայական նկարագրերը ստեղծվել են ընդունված կրթական ծրագրերի և ուսումնական պլանների չափորոշիչների պահանջների հիման վրա և համապատասխանում են միջազգային չափանիշներին:
Ամբիոնը ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ
Ամբիոնում առկա են էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ, որոնք տեղադրված են Google classroom համակարգի համապատասխան հավելվածում:

3.ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող հետազոտական գործունեություն:
Ամբիոնը նպաստել է համալսարանի գիտահետազոտական գործունեությանը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել համալսարանի հետազոտական կարգավիճակին:

Նպաստել է համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Կազմակերպել ամբիոնում գիտահետազոտական գործընթաց, ստեղծելով համապատասխան բաժին: Գիտահետազոտական գործունեության արդյունքները հրապարակել տարբեր մակարդակի հանդեսներում և գիտաժողովներում:

Պրոֆեսորադասախոսական
Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի, զեկույցի անվանումը	Ծավալ
Григорян С.В.	Возрастная динамика реоэнцефалографических показателей умственно отсталых детей с межполушарной асимметрией мозга.	с. 79-82
Григорян С.В.	Возрастные изменения уровня физической подготовленности футболистов 8-12 лет различных соматических типов.	с. 20-26
Маркарян А.Г.	Патологии сердечно-сосудистой системы среди врачей.	с. 44-45
Маркарян А.Г.	Social Health and Adaptation of Armenian Physicians	p.256 - 259
Musheghyan G.Kh.,	The effect of mechanical vibration on pain threshold, cell hydration in rat brain cortex and cerebellum tissues, and changes in gut microflora pH.	pp. 43-49
Musheghyan G.Kh.,	4Hz Mechanical Vibration Relieves Pain through Na^+/K^+-ATPase α_3 Isoform-Dependent Brain Tissue Dehydration	pp. 29-35
Musheghyan G.Kh., Arajyan G.M.	The effect of mechanical vibration on the cell hydration inrat brain cortex and cardiac tissues and pain threshold The effect of mechanical vibration on the cell hydration inrat brain cortex and cardiac tissues and pain threshold	pp. 23-31 pp. 23-31
Arajyan G.M.	4Hz Mechanical Vibration Relieves Pain through Na^+/K^+-ATPase α_3 Isoform-Dependent Brain Tissue Dehydration	pp. 29-35
N.A.Saakyan	The role of taurine in adaptation of visceral systems under psycho-emotional stress in rats.	pp.37-45
N.A.Saakyan	Журнал эволюционной биохимии и физиологии	стр. 33-40
N.A.Saakyan	Impact of taurine on the variability of the cardial rhythm and morphofinctional changes of the organs of the immune system.	pp. 50-57
Н. А. Саакян	Влияние таурина на вариабельность сердечного ритма и структурно-функциональные изменения печени и надпочечников при иммобилизационном стресс	с. 61-67
Իսաջանյան Մ.Ա.	Ազգաբանկչության հոգեվիճակի դրսևորումները արտակարգ իրավիճակներում:	Էջ 129-133
Կարապետյան Պ.Ա.	Ազգաբանկչության հոգեվիճակի դրսևորումները արտակարգ իրավիճակներում:	Էջ 129-133

23. Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն

1. Վարչության հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Վարչությունը կազմավորվել է 2017 թվականին ՀՊՄՀ ռեկտորի հրամանով նախկին ՀՊՄՀ ուսումնական գործընթացների կառավարման և ՀՊՄՀ կրթական բարեփոխումների և որակի վարչությունների միավորմամբ: Վարչության կազմում գործում են՝ ուսանողական ակադեմիա կան հետագծի (շարժի) կազմակերպման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնա կան գործընթացների կառավարման, էլեկտրոնային կրթության կառավարման, որակի ապահով ման բաժինները, ՀՊՄՀ-ում կրթական բարեփոխումները ևս համակարգում է վարչության կողմից: Համաձայն կարգի ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման եվ բարեփոխումների վարչության հիմնական խնդիրներն են

- ուսումնական գործընթացի նպատակաուղղված կազմակերպումը,
- ուսումնական գործընթացում մասնակցող ՀՊՄՀ ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը,
- համալսարանի կրթական բարեփոխումները, ռազմավարական պլանավորումը,
- որակի ապահովումն ու վերահսկողությունը, մշտադիտարկման և ինքնավերլուծության,
- ուսումնական և ուսումնամեթոդական օժանդակության գործընթացների կազմակերպումը, համակարգումը և կառավարումը,
- համալսարանի կրթական գործընթացների թվայնացումը և դրանց էլեկտրոնային կառավարումը:

2. Հաշվետու տարվա համար Վարչության պլանավորած աշխատանքները

ռազմավարական պլանի համաձայն

	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ		
1.	Վերանայել հենանշման /բենչմարք/ կարգը և լավագույն փորձի ուսումնասիրության և տարածման քաղաքականությունը (ՌՈՒՀ1 ԽՆԴԻՐ 1.1.)	Նորմատիվ փաստաթուղթ ստեղծված է, կներկայացվի ՀՊՄՀ ԳԽ-ի հաստատմանը հունվար ամսին
2.	Ա. ՄԿԾ առկա վիճակի գնահատում, կարիքների վերլուծություն Բ. Ազգային և ոլորտային շրջանակնե րին համապատասխանեցում Գ. Նմանօրինակ ծրագրերի հենանի- շում (բենչմարք): (ՌՈՒՀ1 ԽՆԴԻՐ 1.1.)	Մշակվել են կարիքների վերհան ման մոտեցում ները: Անց են կացվել հարցումների - Վերհանված կարիք ները ենթարկվել են որա կական վեր լուծական, ներկայացվել է զեկույց ռեկտորին 2.ՄԿԾ-ների վերամշակված մաս- ներին համապատասխանեցում
3.	Մշակել Համալսարանի գործունեու թյան հիմնական ոլորտների, կրթա կան ստորաբաժանումների և միա վորների ինքնագնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպու թյունների և ՄԿՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափորոշիչները և չափանիշները:(ՌՈՒՀ1 ԽՆԴԻՐ 1.4.)	ՀՊՄՀ ֆակուլտետների, ամբիոնների, վարչական ստորաբաժանումներ հաշվետվության ձևաչափերը համապատասխանեցվել են ՄԿՈ ԱԱԿ-ի որդեգրած հավատար- մագրման չափանիշ ներին, անցում է արվել կատարվածի ինքնագնահատման ինքնավերլուծության չափանիշների ներդրմանը:

3. Հաշվետու տարում Վարչության պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

ՀՊՄՀ գիտական խորհուրդ է նեկայացվել ՝
- Համալսարանի գործունեության ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը:

ՀՊՄՀ ռեկտորատի քննարկման է ներկայացվել
- ՀՊՄՀ ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերից հարցման արդյունքները,
- ՀՊՄՀ ուսանողների,, Դասախոսը ուսանողի աչքերով,, հարցման արդյունքները
- ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման ընթացքը, արդյունքները

2017 թվականի ընթացքում վարչությունն իր բաժիններով իրականացրել է հետևյալ աշխատանքները
- Վարչությունն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել ՀՊՄՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրի (2016-2020) գործողությունների պլանի իրականացման աշխատանքներին:
- Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունն առաջնորդվել է ռեկտորի կողմից հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպման հրաման- ժամանակացույցով:
- Վերանայվել է առկա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի ցանկը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների նախասիրությունները
- Հավաքագրվել են ՀՊՄՀ վարկանիշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները, ամփոփվել և ներկայացվել են ԿԳՆ:
- Շարունակվել է աշխատանքը ուսումնական դասընթացների ելքային կրթական արդյունքների սահմանման ուղղությամբ՝ չափելի գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեսքով:
- Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով, ինչպես նախորդ, այս ուստարում ևս վարչության բոլոր բաժիններն իրենց գործունեությունը իրականացրել են՝ հետևելով ՀՀ Կառավարության, ԿԳ նախարարության և ՀՊՄՀ կանոնակարգերին ու պահանջներին:
- Ուսումնական գործընթացները բարելավելու նպատակով վարչության ստորաբաժանումները կազմակերպել են ստուգումներ այդ գործընթացներին առնչվող գործառույթների շրջանակներում:
- Քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածներում ուսանողների և դասախոսների շրջանում շարունակվել են բացատրական-մեկնաբանման աշխատանքները քննությունների անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ:
- Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների և փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի և թափանցիկ դարձնելու ուղղությամբ:
- Վերամշակվել է վարչությունում ստեղծված պրոֆեսորադասա խոսական կազմի տվյալների բազան, որը պարունակում է դասախոսի ուսումնական բեռնվածությունը, յուրաքանչյուր դասախոսի վարկանիշի մասին տվյալներ:
- Շարունակվել են վարչության կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումները դեկանատների, ամբիոնների մասնագետների հետ՝ նրանց մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով:
- Հաշվետու տարում ևս հաշվառվել է լսարանային ֆոնդը, և իրականացվել են աշխատանքներ արդյունավետ օգտագործման և դասերի կայացման ուղղությամբ:

• Հաշվետու ուստարում ՀՊՄՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը իրականացվել է կրթության որակի ապահովման խիստ պահանջներով՝ առաջնորդվելով գործող կանոնակարգով: ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ՀՊՄՀ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել է ուսանողական նպաստների հատկացումը: • Հասարակական ակտիվություն ցուցաբերած բարձր առաջադիմությամբ ուսանողներին հատկացվել է կրթաթոշակ, բացի պետական կրթաթոշակից՝ հատկացվել են ՀՊՄՀ -ի կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ • Վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել էավարտական որակավորման քննությունների և դրանց ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: • Առկա և հեռակա ուսուցման համակարգերում շարունակվել են կրթության որակի բարելավմանը նպաստող կարևոր գործոններից հանդիսացող դասավանդման արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումների և ՀՊՄՀ -ում ստացած կրթությունից բավարարվածության ամենամյա հարցումների կազմակերպումն ու իրականացումը: • Ուսանողական և շրջանավարտների հարցումներն էլ ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով հաշվետու տարում ամբողջությամբ փոխվել է ուսանողական հարցման հարցաթերթը: Լրամշակվել են նաև համապատասխան կանոնակարգերը: • Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները ՀՀ և արտասահմանյան գործընկեր մի շարք կազմակերպությունների հետ համատեղ իրա- կանացվող TEMPUS “ARMENQA” ազգային նշանակության եռամյա ծրագրի շրջա- նակներում՝ միտված ՀՀ-ում որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացմանը բուհական համակարգում: • Նոր փուլ են մտել կրթական ծրագրերի մշակման և լրամշակման, ծրագրերի փաստաթղթային փաթեթների ստուգման և մասնագիտական եզրակացության տրամադրման ուղղությամբ իրականացվող աշ- խատանքները: • Սկսվել և ընթացքի մեջ են «ՀՊՄՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթի լրամշակման աշխատանքները: • Կրթության որակի շարունակական բարելավմանը մեծապես նպաստում են դա- սավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հար- ցումները, ինչպես նաև Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները: Հաշվետու ուստարում հարցումներն իրականացվել են ամբողջությամբ փոխված կամ լրամշակված հարցաթերթիկներով՝ ըստ համապատասխան կանոնակարգերի, որոնք նույնպես լրամշակվել են:
ՀՊՄՀ-ի ուսումնական գործընթացի կրթական բարեփոխումների և որակի առկա խոչընդոտներից են. 1. Անձնակազմի հանձնարարությունների մեխանիկական կատարումից անցումը ռազմավարական նպատակների իրագործմանը, ռազմավարական պլանի ուղենիշների գիտակցումն ու արժեվորումը 2. Ռեսուրսների կառավարման դեռևս առկա մեխանիզմների սակավությունը բուհի առջև ծառացած մարտահրավերների դիմակայման գործընթացում: 3. Ֆակուլտետներում և ամբիոններում կրթական ծրագրերի, դասընթացների ընթացիկ մշտադիտարկման գործիքակազմի կիրառման տիրույթում առկա ֆորմալ մոտեցումները 4. Կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների և դասավանդողների փոխանակման ցածր տեմպերը որոնք խոչընդոտում են զարգացման առկա միտումների կայունությանը:

5. Դասավանդող անձնակազմի մասնագիտական որակների և ՄԿԾ-ների կարիքների համապատասխանության գնահատման բացակայությունը որը խոչընդոտում է ՄԿԾ-ների արդյունավետ գործարկմանը: 6. Աշխատակազմի մասնագիտական կարողությունների գնահատման ու զարգացման որակի ապահովման մեխանիզմների կիրառման ամբողջական փուլի իրականցման անկատարությունը: 7. Որակի ապահովման գործընթացներում բուհի ոչ բոլոր ստորաբաժանումների դեռևս լիարժեք ներգրավվածությունը: 8. Առաջավոր փորձի հետ համեմատության տիրույթում որակի ապահովմանը հատկացվող ռեսուրսների սահմանափակությունը:

24. Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Բաժնի նպատակները և խնդիրները համահունչ են և չեն հակասում Համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրին.
Բաժնի նպատակներն են. 1. Ներդնել և ծավալել նորարարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի պատրաստում՝ առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայնակի կիրառման հիման վրա, կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում : 2. Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի բարելավմանը, նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը, ինչպես նաև ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքների ձևավորմանը: 3. Մասնակցել SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովմանը՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուրակառավարելի դարձնելու նպատակով: 4. Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը կառավարման տեղեկատվական-վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով: 5. Մասնակցել համալսարանի տեղեկատվական ներուժի համալրման գործընթացին, նպաստել դրանց մատչելիությանն ու արդյունավետ օգտագործմանը կրթական և հետազոտական կարիքների զարգացմանը համահունչ:
Բաժնի խնդիրներն են. 1. համակարգել և բարելավել՝ 1.1. Ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովված կրթական գործունեություն. 1.2. Ներդրված առցանց ուսուցման բազմագործառույթ էլեկտրոնային համակարգ. 1.3. Էլեկտրոնային ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ դասընթացներ. 1.4. Կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ. 1.5. Առցանց ուսուցման տեխնոլոգիաները կիրառող դասախոսների թիվ. 1.6. Դասախոս - ուսանող գործունեության էլեկտրոնային ուսուցման լայն կիրառում: 2. մասնակցել ձևավորմանը՝ 2.1. Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի:

2.2. Համալսարանի կառավարման տեղեկատվական միասնականացված համակարգի, կրթական-տեղեկատվական էլեկտրոնային միջավայրի: 2.3. Առցանց ուսուցման էլեկտրոնային պորտալի համակարգի՝ Վեբ հենքով: 2.4. Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների 100% հաշվեկշիռի: 2.5. Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում 100% հիմնական դասախոսների կողմից:

2. Հաշվետու տարվա համար Բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման նախատեսված արդյունքի մասին
1.5.1	Ստեղծել նորարարական կրթական միջավայր ուսանողների և դասախոսների շրջանում կրթական էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով:	շարունակական	1.Համակարգված էլեկտրոնային տիրույթ յուրաքանչյուր դասընթացի համար: 2.Էլեկտրոնային հանձնարարությունների կիրառում՝ որպես ընթացիկ ստուգման մաս:
1.5.2	Զարգացնել կրթական գործընթացների սուբյեկտների ուսումնական համագործակցության տեխնոլոգիաները համաչափ բաշխված, ճկուն և բաց տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի ստեղծման միջոցով: 1) Մշակել ժամանակակից պահանջներին համապատասխանող էլեկտրոնային սեփական կրթական ռեսուրսներ. 2) Ստեղծել կրթական անհատական մոտեցումների իրականացման հնարավորություն էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթի և հարթակի միջոցով.	Հունվար, Փետրվար, Օգոստոս, Սեպտեմբեր	Բարելավված ԱՈՒՄՓ-ներ և ուսումնական լրացուցիչ նյութեր՝ ըստ համապատասխան չափանիշների. 1)Էլեկտրոնային ուսումնական նյութերի առկայություն՝ ներքին ցանցի Gsuit հարթակի միջոցով: 2)Յուրաքանչյուր խմբի ուսանողներին ուսումնական նյութերի հասանելիություն էլ. դասընթացների միջոցով:
1.5.3	Մշակել և ներդնել էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ինտերակտիվ դասընթացներին ներկայացվող պահանջներն ապահովող չափանիշներ և չափորոշիչներ:	Փետրվար, Սեպտեմբեր	Ուսուցման համագործակցության տեխնոլոգիաներով մշակված դասընթացների չափանիշներ և չափորոշիչներ /առարկայական նկարագրերին և թեմատիկ տրոհումներին շրջանակներում/, առկա բակալավրիատի և առկա մագիստրատուրայի 99,9% դասընթացներում:
1.5.4	Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և դասավանդման,	շարունակական	1. Էլ. դասընթացների իրականացման և ուսումնական գործընթացի արդիականացման

	ուսանողներին՝ կիրառման և ուսումնառության համար:		նպատակով վերապատրաստված դասախոսներ և ուսանողներ: 2. ՀՊՄՀ բոլոր 44-45 ամբիոններում վերապատրաստված դասախոսների խմբեր և 10 ֆակուլտետներում վերապատրաստած ուսանողական խմբեր:
1.5.5	Ներդնել ուսանողների կրթական առաջխաղացման մշտադիտարկման համակարգ առցանց կրթական հարթակի հիման վրա:	Մայիս, հունիս; Նոյեմբեր-դեկտեմբեր:	1. Ուսանոնղների համակարգված տվյալների առկայություն էլեկտրոնային հարթակում և դրանց փոխանցում Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնին: 2. Կրթական գործընթացներից ուսանոնղների բավավարվածության գնահատմանը ուղղված մշտադիտարկումների համար համապատասխան գործիքի առկայություն:
4.1.2	Ստեղծել հեռահար ուսուցման համակարգ և ավագ դպրոցականների հեռակա նախապատրաստական դասընթացներ:	Փետրվար, Սեպտեմբեր	1.Էլեկտրոնային ուսուցման հարթակում (Google for Education) ավագ դպրոցականների համար էջերի առկայություն: 2.Էլեկտրոնային ուսուցման հարթակում (Google for Education) 10 % ավագ դպրոցականների էլեկտրոնային էջերի կիրառում ուսումնական գործընթացում:
5.1.6	Ապահովել SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուրակառավարելի դարձնելու նպատակով:	շարունակական	Տեղեկատվության փոխանակման գործուն համակարգի առկայություն համալսարանի բոլոր շահակիցների համար GSuit էլեկտրոնային հարթակի միջոցով:
5.2.2	Զարգացնել համալսարանի տեղեկատվական համակարգերը, ընդլայնել կառավարման տեղեկատվական համակարգերի կիրառումը կառավարման բոլոր ոլորտներում, ապահովել համալսարանի գործունեության տարբեր ձևերի տեղեկատվական բազաների փոխազդեցությունն ու կապակցումը:	շարունակական	1.Համալսարանի վարչական ստորաբաժանումների էլեկտրոնային հասցեների առկայություն կորպորատիվ ցանցի պայմաններում: 2.Ընդհանրական տեղեկատվական էլեկտրոնային ցանցի անխափան կիրառման հնարավորություն:

5.2.4	Ապահովել համալսարանի կառավարման բոլոր մակարդակների իրավական-նորմատիվային բազայի (փաստաթղթային փաթեթներ) շարունակական զարգացումը օրենսդրական - կազմակերպական և ներքին կազմակերպական փոփոխություններին համահունչ:	շարունակական	Բաժնի ներքին իրավական-նորմատիվային փաստաթղթերի էլեկտրոնայինացում
5.9.1	Մշակել և իրականացնել համալսարանի տեղեկատվական ռեսուրսների զարգացման փուլային ծրագիր ուսումնական և գիտահետազոտական արդյունավետ գործունեության կարիքներին համահունչ:	շարունակական	1.Բուհի էլեկտրոնային կրթական համակարգի կանոնակարգ-նախագիծ: 2.Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների տեսակարար կշիռը՝ 100% առկա համակարգում: 3. Տեխնոլոգիաների կիրառում դասավանդող դասախոսների կողմից՝ 100%: 4.Տեխնոլոգիաների կիրառում ուսանողների կողմից՝ 100% առկա համակարգում:
5.9.3	Ընդլայնել Համալսարանի SS ներուժի օգտագործման տեխնոլոգիական և տեխնիկական գործիքամիջոցների կազմը, ստեղծել համալսարանի էլեկտրոնային կրթական հարթակ՝ էլեկտրոնային հասցեներ հատկացնելով համալսարանի բոլոր ուսանողներին և դասախոսներին aspu.am դոմեյնում:	շարունակական	1.Էկեկտրոնային կրթական հարթակի անխափան աշխատանք: 2.Բուհի յուրաքանչյուր դասախոսի և առկա համակարգում ուսումնառող ուսանողների էլ.էջերի թարմեցված բազա Gsuit կրթական հարթակում՝ @aspu.am դոմենին կից:

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	Հունվար	Պլանավորել Բաժնի աշխատանքները ամբողջ տարվա համար՝ ՌԾ-ի կողմից Բաժնի առջև դրված նպատակներին և խնդիրներին համապատասխան:	Ներկայացնել Բաժնի տարեկան պլանը Վարչության պետին հաստատման համար:
2.	Հունվար	Ամփոփել նախորդ տարվա մշտադիտարկման արդյունքները էլեկտրոնային կրթական հարթակում (Classroom)	Ներկայացնել ամփոփ վերլուծություն համալսարանի Վարչության պետին և համալսարանի ռեկտորին:
3.	Հունվար	Լրամշակել և հաստատման ներկայացնել Բաժնի Կանոնադրությունը և պաշտոնի անձնագրերը	Ներկայացնել Վարչության պետին և Անձնակազմի հաշվառման բաժնին:

4.	Հունվար Օգոստոս	Մշակել հաջորդ կիսամյակում կրթական էլեկտրոնային տիրույթում դասախոսների և ուսանողների գործունեության մշտադիտարկման ցուցիչների նախագիծ՝ հաշվի առնելով նախորդ կիսամյակի վերլուծությունները և հետադարձ կապի միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը:	Ներկայացնել Վարչության պետին և ռեկտորին՝ հաստատման համար:
5.	Հունվար Օգոստոս	Նախապատրաստել ֆակուլտետներին և ամբիոններին հաջորդ կիսամյակի աշխատանքներին էլեկտրոնային կրթական տիրույթում:	Ուղարկել էլեկտրոնային գրություններ ֆակուլտետների և ամբիոնների Classroom-ի պատասխանատուներին:
6.	Հունվար Օգոստոս	Համակարգել դասընթացների համապատասխան էլեկտրոնային տիրույթի ստեղծման, և այդ դասընթացներում ուսանողական խմբերի և դասախոսների կցվածությունը ապահովող գործընթացը	ֆակուլտետների և ամբիոնների Classroom-ի պատասխանատուներ:
7.	Փետրվար Սեպտեմբեր	Համապատասխանեցնել դասաբաշխման տվյալների բազան Classroom-ի տվյալների հետ:	Ստանալ SS կենտրոնից դասաբաշխման վերջին հաստատված տվյալները:
8.	Փետրվար Սեպտեմբեր	Նախագծել մշտադիտարկման աղյուսակը ընթացիկ կիսամյակի համար:	Բաժնի ներքին գործառույթ:
9.	Փետրվար Սեպտեմբեր	Ճշգրտումներ իրականացնել ամբիոնների և ֆակուլտետների հետ մշտադիտարման աղյուսակների նախագծման փուլում:	Համագործակցել ֆակուլտետների և ամբիոնների Classroom-ի պատասխանատուների հետ:
10.	Փետրվար Սեպտեմբեր	Իրականացնել վերապատրաստումներ դասախոսական և ուսանողական խմբերի հետ՝ նոր կիսամյակում էլեկտրոնային կրթական տիրույթում ուսումնական գործունեությունը իրականացնելու համար մեթոդական և ուսումնական օժանդակություն տրամադրելու նպատակով:	Համալսարանի ամբիոններ և ֆակուլտետներ՝ ըստ հրավերքի
11.	Փետրվար Սեպտեմբեր	Համակարգել ընթացիկ կիսամյակի էլեկտրոնային ուսումնական նյութերի հավաքագրման և էլեկտրոնային հարթակում դրանց կառուցվածքային ներկայացման գործընթացը	Համալսարանի ամբիոններ և ֆակուլտետներ
12.	Մարտ Հոկտեմբեր	Մշտադիտարկել կիսամյակի առաջին ամսվա տվյալները Classroom էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության վերաբերյալ:	Բաժնի ներքին գործառույթ
13.	Մարտ Հոկտեմբեր	Ներկայացնել վարչության պետին և ռեկոտրին հաշվետվություն կիսամյակի	Նախապատրաստել էլեկտրոնային ներկայացում՝ գրաֆիկական վերլուծությամբ:

		առաջին ամսվա մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:	
14.	Մարտ Հոկտեմբեր	Տրամադրել ամբիոններին և ֆակուլտետներին մեթոդական կանոնակարգային և ընթացակարգային օժանդակություն էլեկտրոնային կրթական հարթակում՝ նախորդ ամսվա բացահայտված խնդիրների լուծման նպատակով:	Համալսարանի ամբիոններ և ֆակուլտետներ՝ ըստ պահանջի:
15.	Մարտ Հոկտեմբեր	Իրականացնել համապատասխանեցում, ստուգում և տվյալների թարմացում ուսանողների էլեկտրոնային հասցեների տիրույթում՝ ըստ մասնագիտությունների և խմբերի	Համալսարանի ֆակուլտետներ
16.	Ապրիլ Նոյեմբեր	Մշտադիտարկել կիսամյակի երկրորդ ամսվա տվյալները Classroom էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության վերաբերյալ:	Բաժնի ներքին գործառույթ
17.	Ապրիլ Նոյեմբեր	Ներկայացնել վարչության պետին և ռեկոտրին հաշվետվություն կիսամյակի երկրորդ ամսվա մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:	Նախապատրաստել էլեկտրոնային ներկայացում՝ գրաֆիկական վերլուծությամբ:
18.	Ապրիլ Նոյեմբեր	Տրամադրել ամբիոններին և ֆակուլտետներին մեթոդական կանոնակարգային և ընթացակարգային օժանդակություն էլեկտրոնային կրթական հարթակում՝ նախորդ ամսվա բացահայտված խնդիրների լուծման նպատակով:	Համալսարանի ամբիոններ և ֆակուլտետներ՝ ըստ պահանջի:
19.	Ապրիլ	Նախագծել և տրամադրել էլեկտրոնային հանձնարարությունների տրամադրման և գնահատման չափանիշներ և չափորոշիչներ	Իրականացնել քննարկումներ բոլոր շահագրգիռ օղակներում:
20.	Մայիս Դեկտեմբեր	Մշտադիտարկել կիսամյակի երրորդ ամսվա տվյալները Classroom էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության վերաբերյալ:	Բաժնի ներքին գործառույթ
21.	Մայիս Դեկտեմբեր	Ներկայացնել վարչության պետին և ռեկոտրին հաշվետվություն կիսամյակի երրորդ ամսվա մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:	Նախապատրաստել էլեկտրոնային ներկայացում՝ գրաֆիկական վերլուծությամբ:
22	Մայիս Դեկտեմբեր	Տրամադրել ամբիոններին և ֆակուլտետներին մեթոդական կանոնակարգային և ընթացակարգային օժանդակություն էլեկտրոնային կրթական հարթակում՝ նախորդ ամսվա	Համալսարանի ամբիոններ և ֆակուլտետներ՝ ըստ պահանջի:


		բացահայտված խնդիրների լուծման նպատակով:	
23.	Մայիս	Նախագծել և ներկայացնել դասաոսների էլեկտրոնային անհատական կայքերի պատրաստաման գործընթացը:	Ապահովել GSuit Sites հավելվածի անխափան աշխատանքը:
24.	Մայիս Դեկտեմբեր	Ապահովել և համակարգել “Դասախոսը ուսանողի աչքերով” սոց հարցումների իրականացման էլեկտրոնային հենքը:	Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի հետ համագործակցություն:
25.	Հունիս	Մշտադիտարկել Մայիս ամսվա և կիսամյակային ամփոփ տվյալները Classroom էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության վերաբերյալ:	Բաժնի ներքին գործառույթ
26.	Հունիս	Ներկայացնել վարչության պետին և ռեկոտրին հաշվետվություն Մայիս ամսվա և կիսամյակային ամփոփ տվյալները մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:	Նախապատրաստել էլեկտրոնային ներկայացում՝ գրաֆիկական վերլուծությամբ:
27.	Հունիս	Իրականացնել վերլութություն նախորդ կիսամյակի ուսումնական ամիսների ընթացքում դասընթացների էլեկտրոնային համապատասխան տիրույթում (Classroom) կատարված դասախոսների, ուսանողների, ֆակուլտետների և ամբիոնների կատարած ուսումնական գործունեության մասին:	Հիմք ընդունել հետադարձ կապով ստացած բանավոր, էլեկտրոնային և թղթային տարբերակով ձեռք բերված կարծիքները:
28.	Հունիս	Նախագծել էլեկտրոնային ուսումնական հարթակում փոփոխություններ կատարելու մասին չափանիշներ՝ հաշվի առնելով վերլուծության արդյունքները և համակարգի բարելավման նպատակով:	Նախագիծը ներկայացնել Վարչության պետին:
29.	Հուլիս	Նախագծել և քննարկել ուսումնաօժանդակ նյութերի /առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների/ տրամադրման նոր էլեկտրոնային ձևաչափ՝ ուսումնական գործընթացը բարելավելու նպատակով:	Իրականացնել քննարկումներ բոլոր շահագրգիռ օղակներում և վերջնական տարբերակը ներկայացնել հաստատման:
30.	Հուլիս	Իրականացնել սեմինար-քննարկումներ ամբիոններում՝ նորամուծությունների հստակեցման և էլեկտրոնային ուսումնական տիրությում գործունեության իրականացման արդյունավետությունը բարձրացման նպատակով:	Սեմինարների իրականացում ամբիոններում դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի համար՝ ըստ հրավերքի:
31.	Հուլիս	Իրականացնել Բաժնի կատարողականի վերլուծություն՝ համալսարանի ռազմավարական գործողությունների	Բաժնի ներքին գործառույթ:

		ծրագրի համաձայն; նախանշել բաց թողնված կամ գերակատարած կետերը՝ Բաժնի հետագա քայլերը համակարգելու նպատակով:	
32.	Հուլիս	Իրականացնել Բաժնի հերթական պարբերական գույքագրումը՝ նյութական պատասխանատվությունը պատշաճ կերպով իրականացնելու նպատակով:	Համաձայնեցնել Նյութամատակարարման բաժնի և հաշվապահության հետ:
33.	Հուլիս	Ստուգել Բաժնի թղթային և էլեկտրոնային փաստաթղթերի առկայությունը և համակարգվածությունը՝ Բաժնի անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի համաձայն:	Բաժնի ներքին գործառույթ:
34.	Օգոստոս	Նախագծել համալսարանի կրթության էլեկտրոնային կառավարման կանոնակարգ և ընթացակարգ	Ներկայացնել նախագիծը Վարչության պետին
35.	Սեպտեմբեր	Իրականացնել Բաժնի գործունեության ադապտացում նոր ուսումնական տարվա մեկնարկային կառուցվածային փոփոխություններին համահունչ:	Դիտարկել Բաժինը՝ որպես Համալսարանի ընդհանուր կառավարման համակարգի մաս:
36.	Սեպտեմբեր	Նախագծել բարելավված կառուցվածքային մոտեցում Classroom-ում ուսումնական նյութերը տրամադրելու համար՝ հաշվի առնելով դասընթացների մասնագիտական յուրահատկությունները:	Համագործակցություն Համալսարանի ամբիոնների հետ:
37.	Սեպտեմբեր	Նախագծել դասընթացների էլեկտրոնային բովանդակության լրացում հեղինակային լուսանկարներով և տեսագրություններով:	Համագործակցություն Համալսարանի ամբիոնների հետ:
38.	Հոկտեմբեր Նոյեմբեր Դեկտեմբեր	Համալսարանի կրթության էլեկտրոնային կառավարման կանոնակարգի և ընթացակարգի նախագծերի հստակեցում, լրամշակում և ներկայացում վերջնական հաստատմանը:	Համալսարանի կառավարման օղակներ:
39.	Դեկտեմբեր	Իրականացնել վերլուծություն տարվա կատարած աշխատանքի մասին:	Ներկայացնել տարեկան հաշվետվություն Վարչության պետին:

3. Հաշվետու տարում Բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները


Բաժինը.
առաջարկել, նախագծել և ներդնել է էլեկտրոնային հանձնարարությունների տրամադրման չափանիշներ (Classroom-ում)՝ հաշվի առնելով համալսարանի դասընթացների մասնագիտական յուրահատկությունները, որտեղ էլ.հանձնարարությունները դիտարկվում են՝ որպես ուսանողների գիտելիքների գնահատման ընթացիկ ստուգման մաս.

• առաջարկել, նախագծել և ներդրել է ուսումնաօժանդակ էլեկտրոնային նյութերի /առարկայական նկարագիր, թեմատիկ տրոհում, միջանկյալ հարցաշարեր/ տրամադրման արդիական և համակարգված չափանիշներ և չափորոշիչներ.
• առաջարկել, նախագծել և ներդրել է ուսումնական էլեկտրոնային նյութերի տրամադրման նոր կառուցվածքային մոտեցում Classroom-ի Topic/Тема տիրույթում.
• ապահովել է էլեկտրոնային ուսումնական համակարգի անխափան աշխատանքը GSuit ուսումնական հարթակի համակարգման միջոցով.
• ներկայացրել է հաշվետվություն ամենամսյա մշտադիտարկման արդյունքների մասին Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում դասախոսների ակտիվության վերաբերյալ.
• ապահովել է առկա համակարգում 100% դասընթացների (շուրջ 3000) համապատասխան առանձնացված էլեկտրոնային տիրույթի առկայությունը.
• համակարգել է առկա համակարգի յուրաքանչյուր դասընթացի էլեկտրոնային տիրույթում համապատասխան դասախոսների և ուսանողների խմբերի ինտերակտիվ,նորագույն տեխնոլոգիանորով հագեցած ուսումնական գործունեությունը.
• համակարգել է ուսումնական նյութերի ստեղծման, հաստատման և ուսանողներին տրամադրման գործընթացը ամբիոններում էլեկտրոնային կրթական հարթակի և պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ ապահովելու միջոցով.
• ներկայացրել է համալսարանի կրթության էլեկտրոնային կառավարման կանոնակարգի նախագծը.
• ներկայացրել է կրթության էլեկտրոնային կառավարման ներդրման արդիականությունը համալսարանի հեռակա համակարգում.
• ապահովել է համալսարանի ներքին էլեկտրոնային նապակագրության և փաստաթղթերի պահպանման տիրույթի անխափան աշխատանք @aspu.am կորպորատիվ ցանցի շրջանակներում.
• տրամադրել է մեթոդական օժանդակություն ամբիոններին և դասախոսներին էլեկտրոնային ուսումնական հարթակում կրթական գործընթաց իրականացնելու վերաբերյալ. Բաժինն իր գործառույթների իրականացնելիս առաջնորդվել է համալսարանի ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված քայլերով;
Բաժնի գործողությունների արդյունքում 2017 թվականին գրանցվել է դասընթացների էլեկտրոնային տիրույթում դասախոսների և համապատասխան խմբերի ինտերակտիվ էլեկտրոնային համագործակցության աճ նախորդ տավա համեմատ 1.88%-ով /գրաֆիկ 1/,



գրաֆիկ 1

Ինչպես նաև ներկայացված է էլեկտրոնային հարթակում դասախոսների ուսումնական գործունեության ամփոփ համեմատություն երեք կիսամյակների երկրորդ ամսվա կտրվածքով /գրաֆիկ 2/;



գրաֆիկ 2

Բաժինն իր գործառույթներն իրականացնելիս եկել է այն եզրակացության, որ համալսարանում կրթության էլեկտրոնային կառավարումն առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է.

- միասնական համալսարանական էլեկտրոնային տվյալների բազայի ստեղծում,
- դասախոսների ծանրաբեռնվածության մաս դարձնել էլեկտրոնային ուսումնական հարթակում /Classroom/-ում իրականացվող գործունեությունը,
- բարելավել և կանոնակարգել ուսումնական էլեկտրոնային նյութերի ստեղծումը,
- բարելավել համալսարանում համակարգիչների և անլար համացանցի առկայությունը,
- ամբիոններում իրականացնել ուսումնասիրություններ նոր մեթոդների կիրառմամբ դասընթացներ իրականացնելու համար էլեկտրոնային տիրույթում՝ ուսանողների ակտիվությունը խթանելու և դասընթացի ելքային արդյունքներին ավելի արդյունավետ հասնելու նպատակով:

Բաժինն համալսարանի էլեկտրոնային կրթության 2017 թվականում կառավարման վերաբերյալ իրականացրել է հետևյալ համառոտ վերլուծությունը.



Վերլուծության արդյունքում հայտնաբերված թույլ կողմերն ուժեղացնելու և արտաքին վտանգների ռիսկը նվազեցնելու նպատակով, Բաժինն առաջարկում է և նախատեսում է հետագա քայլերը.

- միավորել համալսարանի էլեկտրոնային տվյալների բազաները,
- ստեղծել ուսանողների համար ներքին ընդլայնված էլեկտրոնային ցանց,
- խթանել ամբիոններում էլեկտրոնային հանձնարարությունների մեթոդիկայի զարգացումը՝ ըստ յուրահատկությունների,
- վերապատրաստել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը համակարգչային կոմպետենցիաներ ձևավորելու նպատակով,
- փուլ առ փուլ ներդնել կրթության էլեկտրոնային համակարգը համալսարանի հեռակա համակարգում,
- զարգացնել գիտական հրատարակչությունների էլեկտրոնային ցանցերը և միավորել GSuite-ին Google Academy և Sites միջոցով,
- ստեղծել ուսումնական էլեկտրոնային նյութերի ստեղծման ընթացակարգ,
- ունենալ Moodle և MS OneDrive համակարգերը, որպես կրթական գործընթացը պոտենցիալ ապահովող այլընտրանքային միջոց:

25. Կրթության որակի ապահովման և կառավարման բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները, համաձայն հաստատված կարգի

Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի (ԿՈԱԿ) առաքելությունը ՀՊՄՀ որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:

Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի խնդիրները 1.1 Ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հենք: 1.2 ՀՊՄՀ ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակում և պարբերաբար վերանայում, վարչական աջակցություն բոլոր մակարդակներում: 1.3 Որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ՀՊՄՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում: 1.4 Կրթության որակի համար ՀՊՄՀ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, պետություն և հասարակություն) շահեկիցների առջև: 1.5 Տրամադրել վարչական օժանդակություն՝ ՀՊՄՀ և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, ապահովել որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապը: 1.6 Նպաստել եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ՈԱ գործընթացների հետ համեմատելի ու համադրելի գործընթացների կիրառման ապահովմանը: 1.7 Ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների ՈԱ բաժինների հետ կապերի հաստատում և ամրապնդում: 1.8 Աջակցել ՀՊՄՀ ինքնաուսուցանվող համակարգի ու համայնքի ձևավորման ապահովմանը:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	Վերանայել բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի /առկա և հեռակա/ կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթղթերը:	
2.	Բարելավել կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային, ռեսուրսային ապահովվա ծության գնահատման, մասնագիտա կան կրթական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, իրականաց ման, մշտադիտարկման, վերանայման գործող ներքին չափանիշները և ընթացակարգերը:	1. ՄԿԾ- ի արտոնման, մշակման, վերանայման ներքին չափանիշ և ընթացակարգ 2. ՄԿԾ-ին կադրային, ռեսուրսային ապահովվածության գնահատման չափանիշ և ընթացակարգ

բ/ տարեկան պլանի համաձայն

	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին

1.		Ուսումնասիրել առաջատար բուհերի ՈԱ օրինակելի քաղաքականությունները, հայեցակարգերը, գործառույթները	
2.	Հունվար	Ըստ ՀՊՄՀ և ֆակուլտետների զարգացման (2016) ռազմավարական պլանների՝ վերլուծել բոլոր կրթագիտական ստորաբաժանումների, վարչական ստորաբաժանումների, ուսանողական կազմակերպությունների կատարողականը ստացած հաշվետվությունների հիման վրա:	Ստացած հաշվետվությունները վերլուծվել են և ներկայացվել քննարկման Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների (ԿԳԿԲ) վարչության պետին (նախկին Կրթության բարեփոխումների և որակի վարչություն)
3.	Հունվար Փետրվար	Պատրաստել ՀՊՄՀ ՌԾ-ի 2016 թվականի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն և համապատասխան ներկայացում կատարված վերլուծության հիման վրա:	Հաշվետվությունը ներկայացվել և քննարկվել է Գիտ. խորհրդի նիստում
4.	Փետրվար Մարտ	ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2016-2020) գործողությունների պլանից առանձնացնել, քննարկել և վերամշակել բոլոր ստորաբաժանումների 2017 թվականին կատարվելիք քայլերը:	1. Միայն 2017 թվականի ՀՊՄՀ զարգացման ՌԾ-ի գործողությունների պլանը հաստատվել է Գիտ. Խորհրդում 2. Միայն 2017 թվականի ֆակուլտետների զարգացման ՌԾ-ի գործողությունների պլանը հաստատվել է ֆակուլտետների խորհուրդներում
5.	Մարտ Ապրիլ	Մշակել ռազմավարական պլանի մշակման, իրականացման և մշտադիտարկման ներքին կանոնակարգ:	Ներկայացվել, քննարկվել և հաստատվել է ԿԳԿԲ վարչության պետի կողմից
6.	Ապրիլ Մայիս	Մշակել ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի իրականացման ընթացքի վերաբերյալ ներկայացվող հաշվետվության նոր ձևաչափ:	Մշակված նոր ձևաչափը հաստատվել է ԿԳԿԲ վարչության պետի կողմից
7.	Հունիս Օգոստոս Սեպտեմբեր	Մշակել ուղեցույց, թե ինչպես սահմանել • կրթական վերջնարդյունքը, մասնագիտական կրթական ծրագրում՝	1. Մշակվել է ուղեցույց կրթական վերջնարդյուք-

	Շարունա-կական	• նպատակը, խնդիրները, ինչպես որոշել • դասավանդման մեթոդները կրթական վերջնարդյունքների ձեռք բերման համար, • գնահատման մեթոդները կրթական վերջնարդյունքների ձեռք բերումը գնահատելու համար	ների, նպատակի և խնդիր-ների սահմանման վերաբեր-յալ 2. Դասավանդման և գնահատման մեթոդների վե-րաբերյալ ուղեցույցի մշա-կումը ընթացքի մեջ է
8.	Սեպտեմբեր	Վերամշակել տարեկան աշխատանքային պլանը:	Հաստատվել է ԿԳԿԲ վար-չության պետի կողմից
9.	Սեպտեմբեր	Պատրաստել ներկայացումներ ՄԿԾ-ների մասնագրերում կրթական վերջնարդյունքների և նպատակի ճիշտ ձևակերպման վերաբերյալ ֆակուլտետներում սեմինարների կազմակերպման համար:	Ներկայացումները հաստատվել են է ԿԳԿԲ վար-չության պետի կողմից
10.	Հոկտեմբեր	Կազմակերպել սեմինարներ ֆակուլտետ-ներում կրթական վերջնարդյունքների և նպատակի ճիշտ սահմանման վերաբերյալ:	Կազմակերպվել է 5 սեմինար 5 ֆակուլտետներում
11.	Հոկտեմբեր	Վերամշակել տարեկան և հենքային ուսումնական պլանների ձևաչափերը (առկա-բակալավրիատ):	Վերամշակված ձևաչափերը պարբերաբար քննարկվել և հաստատվել են ԿԳԿԲ վար-չության պետի կողմից
12.	Հոկտեմբեր	Վերամշակել մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) մասնագրերի նոր ձևաչափ (առկա-բակալավրիատ):	Վերամշակված ձևաչափերը պարբերաբար քննարկվել և հաստատվել են ԿԳԿԲ վար-չության պետի կողմից
13.	Հոկտեմբեր Նոյեմբեր	Նախագծել և ստեղծել ուսումնական պլանների ու ՄԿԾ-ների մասնագրերի առցանց բազա Gsuit էլեկտրոնային կրթական հարթակի DRIVE հավելվածում (առկա-բակալավրիատ)՝ համագործակցելով էլեկտրոնային կրթության կառավարման բաժնի հետ:	Gsuit էլեկտրոնային կրթա-կան հարթակի DRIVE հավելվածում ստեղծվել է առցանց բազա՝ ըստ 10 ֆակուլտետների և 41 մասնա-գիտությունների (առկա-բակալավրիատ):
14.	Հոկտեմբեր Նոյեմբեր	Ապահովել առցանց բազայի հասանե-լիությունը ֆակուլտետների պատասխանատու անձանց համար՝ ըստ ֆակուլտետների և համահամալսարանական ամբիոնների:	Ամբողջ 10 ֆակուլտետների և 3 համահամալսարանական ամբիոնների (այն ՀՀ ամբիոնները, որոնք

			թողարկում են մասնագիտություն) պատասխանատու անձիք ունեն հնարավորություն առցանց խմբագրելու իրենց մասնագիտությունների ուսումնական պլանները և մասնագրերը:
15.	Հոկտեմբեր Նոյեմբեր	Վերահսկել և մշտադիտարկել ֆակուլտետների և համահամալսարանական ամբիոնների աշխատանքային խմբերի կողմից լրացված ուսումնական պլանները և մասնագրերը:	1. Պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ ուսումնական պլանների և մասնագրերի ճշգրիտ լրացման համար: 2. Արդյունքները քննարկվել են ոչ միայն ԿԳԿԲ վարչության պետի, այլ նաև պատասխանատու անձանց հետ:
16.	Նոյեմբեր	Ստեղծել հենքային ուսումնական պլանների կիրառման ավտոմատացված համակարգ:	Կատարված է
17.	Նոյեմբեր	Տրամադրել բացի ավանդական խորհըրդատվությունից, առցանց խորհրդատվություններ ֆակուլտետների պատասխանատու անձանց ուսումնական պլանների և մասնագրերի լրացման վերաբերյալ թե՛ տեխնիկական և թե՛ բովանդակային առումներով:	Առցանց խորհրդատվությունները պարբերաբար տրամադրվել են Google doc և Google sheet հավելվածներով աշխատանքների շնորհիվ:

3. Հաշվետու տարում բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Համալսարանում զգալի աշխատանք է իրականացվել կրթության որակի բարելավման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ՀՊՄՀ -ում որակի ապահովման ներքին մեխանիզմների ներդրման և որակի շարունակական բարելավման գործընթացները: Ստեղծվել են ՀՊՄՀ որակի ներքին ապահովման ինստիտուցիոնալ կառույցներ՝ՀՊՄՀ որակի ապահովման բաժինը, ֆակուլտետային խորհուրդների որակի ապահովման հանձնաժողովները, որոնք կոչված են համալսարանում որակի ապահովման գործընթացներն արդյունավետ իրականացնելու: Համաձայն ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի՝ հաշվետու ուստարում իրականացվել են մի շարք գործողություններ: Մասնավորապես՝ ֆակուլտետներում ստեղծված աշխատանքային խմբերը, ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության աջակցությամբ, վերամշակել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական

ծրագրերի մասնագրերը և ուսումնական պլանները բակալավրիատի բոլոր կրթական ծրագրերի համար: Դրանցում ներկայացված են տվյալ ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը: Բոլոր ծրագրերի մասնագրերի մշակման աշխատանքների կատարման ընթացքը պարբերաբար քննարկվել են:
ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության ուժերով ստեղծել և գործադրել ՀՊՄՀ –ում ներդրվել է ֆակուլտետների ամբիոնների վարչությունների և բաժինների գաշվետվողականության թափանցիկ փաստաթուղթ ձևաչափ՝ ինքնավերլուծության և ինքնագնահատման համակարգ, որը կնպաստի համալսարանում որակի մշակույթի զարգացմանը: Աշխատանքի իրականացման արդյունքում կատարվել են հետևյալ աշխատանքները.
-ստեղծվել է ներ համալսարանական ինքնագնահատման համակարգ,
-իրականացվել են ինքնագնահատման գործընթացների պատասխանատու կազմի վերապատրաստումներ,
-արդյունավետ ինքնագնահատում իրականացնելու համար ստեղծվել են անհրաժեշտ ձևաչափեր,
-ապահովվել է բոլոր օղակների ներգրավումը ինքնագնահատման գործընթացներում,
-ինքնագնահատման մեխանիզմները գործադրվել են:
Կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններից են դասավանդման արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումները և ՀՊՄՀ -ում ստացած կրթությունից բավարարվածության հարցումները: Ընդհանուր առմամբ,դրանք միտված են ուսումնական դասընթացների, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների, ամբողջական կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի անընդհատ բարելավմանը և կատարելագործմանը:
2016/2017 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ուսանող, որը կազմում է այդ համակարգի ուսանողության մոտ 58,6 %: Ուսանողական հարցման արդյունքները ներկայավել են ռեկտորատում, ներկայացվել առանձին փաթեթով ռեկտորին, օգտագործվել են դասախոսների առաջխաղացման համար անցկացվող խնդիրներում:
ՀՊՄՀ -ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներին 2016/2017 ուստարում մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի 51%, որոնց արդյունքները որոշակի դեր են ունեցել ուսումնական ծրագրերի և ուսումնական միջավայրին ուղղված միջոցառումների մշակման համար:
ՀՊՄՀ-ում անցկացվել է նաև պրոֆեսորասախոսական անձնակազմի վարկանիշավորում ըստ հաստատված ձևաչափի, որի բովանդակությունը համաձայն գիտական խորհրդի որոշման ձևավորվել են համալսարանի պրոռեկտորներին կից ստեղծված աշխատանքային խմբերում: Ստեղծվել է իրազեկման թափանցիկ էլեկտրոնային հարթակ, որտեղ յուրաքանչյուր դասախոս, ամբիոն ֆակուլտետ ծանոթացել է վարկանիշավորման արդյունքներին:
Այնուհանդերձ, որոշակի անելիքներ դեռ կան արդյունքների մշակման, ամփոփման ու հետագա բարելավող գործողությունների իրականացման ուղղությամբ:
Հիմնական շեշտադրումն այստեղ պետք է կատարվի հարցումների արդյունքների հիման վրա համապատասխան բարելավող գործողությունների ու միջոցառումների մշակման և իրականացման վրա:
Խնդիր է նաև այն, որ ֆակուլտետները, ամբիոնները ոչ միշտ են պատասխանատու վերաբերմունք հանդես բերում հարցումների արդյունքների քննարկման և կիրառման նկատմամբ:

26. Ուսանողական ակադեմիական հետագծի (շարժի) կազմակերպման բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները, գործառույթները՝ համաձայն հաստատված կարգի

Բաժնի նպատակներն են ՝ 1. ապահովել և վերահսկել ուսանողների ակադեմիական շարժունությունը, 2. ապահովել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների ուսումը բուհում շարունակելու գործընթացը, 3. ապահովել միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչների ուսումը բուհում շարունակելու գործընթացը, 4. ապահովել համալսարանի շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման գործընթացը, 5. ապահովել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներին ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման գործընթացը:
Բաժնի խնդիրներն են՝ 1. համալսարանի ուսումնական գործընթացում մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպում և վերահսկում, 2. համապատասխան ժամկետներում փաստաթղթաշրջանառության կազմակերպում:
Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 1. ուսանողների շարժի հետ կապված (ընդունելության, հեռացման(ազատման), ուսանողական իրավունքների վերականգնման, տեղափոխության (ներբուհական,այլ բուհեր), տարկետման և այլն) հրամանների նախապատրաստում և հաշվառում, 2. միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների ուսումը բուհում շարունակելու գործընթացի կազմակերպում,առարկայական տարբերությունների հանձնման գրաֆիկների կազմում, հրամանների պատրաստում և հաշվառում, 3. միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչների ուսումը բուհում շարունակելու գործընթացի կազմակերպում,առարկայական տարբերությունների հանձնման գրաֆիկների կազմում, հրամանների պատրաստում և հաշվառում, 4. ամփոփիչ ատեստավորման աշխատանքների կազմակերպում, համակարգում, 5. ուսանողների ավարտական փաստաթղթերի/դիպլոմների/ նախապատրաստում, հաշվառում, լրացում, տպագրում, 6. ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ տրամադրելու մասին հրամանների նախապատրաստում, հաշվառում, լրացում, տպագրում, 7. ուսանողների տվյալների բազայի ստեղծում և պահպանում:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական ծրագրի համաձայն

№	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	հաշվետու տարվա ընթացքում	Համալսարանի ուսումնական գործընթացում մասնակցող	ընթացքի մեջ է /սեմինարների և

		կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների աշխատանքային գիտելիքների, հմտությունների և կարողությունների բարելավում	անհատական խորհրդատվության միջոցով/
2.	հաշվետու տարվա ընթացքում	Շարունակական կրթության կազմակերպման, որակի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի մշակում /Խնդիր 1.1, 7-րդ կետ/	Ընթացքի մեջ է, /բաժնում ստեղծվել է համապատասխան հանձնախումբ/
3.	սեպտեմբեր	Համալսարանի ուսումնական գործընթացում մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման և վերահսկման նպատակով էլեկտրոնային համակարգում նոր աշխատանքային ձևաչափի մշակում /educdiv@aspu.am/	կատարված է
4.	հաշվետու տարվա ընթացքում	Ապահովել համահամալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ բարձրացնել ուսանողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ	ընթացքի մեջ է

բ/ տարեկան պլանի համաձայն

№	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	հունվար-փետրվար /ուսումնական պարապունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում	Ուսանողների վերականգնման դիմումների ընդունում/առկա/	կատարված է
2.	հունվար-փետրվար /ուսումնական պարապունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում	Ուսանողների վերականգնման դիմումների մշակում, վերանայում /առկա/	կատարված է
3.	հունվար-փետրվար /ուսումնական պարապունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում	Ուսանողների վերականգնման հրամանների պատրաստում /առկա/	կատարված է
4.	հունվար-փետրվար	Ուսանողներ ներբուհական տեղափոխության դիմումների ընդունում/առկա, հեռակա/	կատարված է

5.	հունվար-փետրվար	Ուսանողներ ներբուհական տեղափոխության դիմումների մշակում, վերանայում /առկա, հեռակա/	կատարված է
6.	հունվար-փետրվար	Ուսանողներ ներբուհական տեղափոխության հրամանների պատրաստում/առկա, հեռակա/	կատարված է
7.	փետրվար	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/հեռակա մագիստրատուրա/	կատարված է
8.	փետրվար	Ամփոփիչ ատեստավորման քննություններից դրական նիշեր ստացած ուսանողներին դիպլոմ տրամադրելու հրամանների պատրաստում/հեռակա մագիստրատուրա/	կատարված է
9.	մարտ	Առկա ուսուցման 1-ին կիսամյակի ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների հեռացում/առկա/	կատարված է
10.	ապրիլ-մայիս	Նախորդ տարիների ամփոփիչ ատեստավորման քննություններից անբավարար ստացած ուսանողների քննության վերահանձնման դիմումների ընդունում/առկա, հեռակա/	կատարված է
11.	մայիս	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/առկա մագիստրատուրա/	կատարված է
12.	մայիս	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/առկա բակալավրիատ/	կատարված է
13.	մայիս	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/հեռակա մագիստրատուրա/	կատարված է
14.	հունիս	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/հեռակա բակալավրիատ/	կատարված է
15.	հունիս-հուլիս	Ամփոփիչ ատեստավորման քննություններից դրական նիշեր ստացած	կատարված է

		ուսանողներին դիպլոմ տրամադրելու հրամանների պատրաստում/առկա, հեռակա բակալավրիատ, առկա մագիստրատուրա/	
16.	հունիս-հուլիս	Ամփոփիչ ատեստավորման քննություններից անբավարար ստացած ուսանողների հեռացում	կատարված է
17.	հուլիս	Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ տրամադրելու մասին հրամանների պատրաստում	կատարված է
	Ստեղծել «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի անգլալեզու էլեկտրոնային հավելված: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Թերթում տեղադրվող հիմնական նյութերը նաև տեղ են գտնում կայքում, որը թարգմանվում է ռուսերեն և անգլերեն: Հետևաբար, առայժմ նյութական աննպատակահարմարությունից ելնելով, չենք անդրադարձել խնդրին:
Հունվար-դեկտեմբեր	Ստեղծել սեփական հեռուստատեսային և ռադիոհաղորդաշարեր, համալսարանի ինտերնետային հե-ռուստատեսություն, համագործակցել տարբեր հեռուստատեսային և ռադիո- ընկերությունների հետ: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Համալսարանի վերաբերյալ նյութերը, տեսանյութերը, ֆիլմերն ու հաղորդումները տեղադրվում են Յութուբյան էջում, որն արդեն ապահովել է ավելի քան 230 000 դիտում: Սա ինչ-որ առումով փոխարինում է ինտերնետային հեռուստատեսությանը, հատկապես, որ տարբեր կարևոր միջոցառումներ երբեմն, անգամ ուղիղ հեռարձակմամբ, եթեր ենք տալիս հանրապետական սփոման ԶԼՄ-ներով: Բացի այդ տարբեր հեռուստաընկերություններով տրամադրում ենք տեսանյութեր՝ ՀՊՄՀ –ում անցկացված միջոցառումների մասին:

Հունվար-դեկտեմբեր	Ապահովել հանրային կապերի ոլորտում համալսարանի գործողությունների մշտադիտարկումը՝ PR գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու նպա տակով: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Սեփական գործիքներով, հիմնականում հարցումների միջոցով, որն իրականացրել ենք դիմորդների շրջանակում, պարզել ենք, որ հեռուստատեսությամբ, գովազդի և Հաջողության բանաձևի միջոցով են տեղեկացել համալսարանում առկա մասնագիտությունների, միջազգային ծրագրերի մասին:
Հունվար-դեկտեմբեր	Համակարգել և նպատակաուղղել համալսարանի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Համակարգել և նպատակաուղղել ենք համալսարանի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները՝ ներառելով ինչպես վարչական ռեսուրսը, այնպես էլ անձնական կապերն ու ուսանողների ջանքերը:
Հունվար-դեկտեմբեր	Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ համալսարանի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համա հունչ դարձնելու նպատակով ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Հանրային կարծիքի ուսումնասիրություն իրականացրել ենք սոցիալական ցանցերով՝ պաշտոնական կայքի և Հաջողության բանաձևի պաշտոնական էջերով Ֆեյսբուքում, ինչպես նաև dasaran.am-ում, ի դեպ, որտեղ մեր հետևորդների թիվը կազմում է արդեն 42 500 մարդ, որոնք մեր ապագա դիմորդները կարող են լինել: Նաև նրանց կարծիքները հաշվի առնելով ենք կազմակերպում ենք մեր ընթացիկ աշխատանքը:
Հունվար-դեկտեմբեր	Համալսարանի պաշտոնական խորհրդանիշների կիրառման արարողա կարգի մշակում: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Համալսարանի պաշտոնական խորհրդանիշների կիրառման համար Վարչությունն առանձին արարողակարգ չունի, սակայն անհրաժեշտ միջոցներով աջակցում է՝ հարկ եղած դեպքում տրամադրելով համալսարանի լոգոտիպը և այլն:

բ/ տարեկան պլանի համաձայն

գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Ապահովել համալսարանի կայքէջում համալսարանի վերաբերյալ օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարակումը: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Պաշտոնական կայքն ամենօրյա աշխատանքով ապահովում է համալսարանի վերաբերյալ օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարակումը: Ամսվա կտրվածքով գրեթե 50 անդրադարձ համալսարանական կյանքին: Ինչպես նաև պարբերաբար թարմացվում և լրամշակվում է համալսարանի բոլոր բաժինների վերաբերյալ կայքի տեղեկատվությունը:
Կատարելագործել համալսարանի Ռադիո Ֆաման,	Կատարելագործվել և թարմացվել է ինչպես կայքը՝ www.radiofama.am, այնպես էլ հաղորդումները, դրանց

բազմազանեցնել նրա ներքին կյանքին վերաբերող լրատվական տեղեկատվությունը, ստեղծել համալսարանը ներկայացնող հաղորդաշարեր, բարձրացնել դրանց տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը: Թարմացնել radiofama.am կայքէջը:	գլխագրերն ու վերնագրերը, շապկանները: Ունենք նոր հաղորդավարներ, որոնք փոխարինել են այն հեղինակներին, որոնք ուսման ավարտի հետ կապված դադարեցրել են իրենց հեղինակային հաղորդումները: Ավելի մանրամասն կարդալ ռադիո Ֆամայի հաշվետվության մեջ:
Ընդլայնել քարոզչական աշխատանքը՝ ընդհուպ հեռուստատեսային հաղորդումների պատրաստման միջոցով, ի հավելումն Արմնյուզ հեռուստաընկերությամբ հեռարձակվող Հաջողության բանաձև հաղորդաշարի ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Բանակցություններ ենք վարել և դրանց արդյունքում Հաջողության բանաձև հաղորդաշարը տարբեր էլեկտրոնային հարթակներում տեղադրվել է, մասնավորապես www.dasaran.am և ՀՀ սոցիալական ապահովության նախարարության մասնագիտական կողմնորոշման վարչության պատրաստած ռեսուրսում՝https://www.youtube.com/user/emkkpoak/videos ՝ Մասնագիտական կողմնորոշման կենտրոն ՊՈԱԿ: Այժմ բանակցություններ են ընթանում Հանրային հեռուստաընկերության արբանյականային հեռարձակմամբ Հաջողության բանաձևի հաղորդումները ցուցադրելու ուղղությամբ:
Ներգրավվել հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային, միջազգային և համազգային ծրագրերում: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Վարչությունը ներգրավված եղել է տեղական և համազգային, միջազգային կրթական ծրագրերում, զուտ լուսաբանելու իմաստով, իսկ մասնակցության և լայն ներգրավվածության առումով դեռևս ոչ: Վարչությունը կձեռնարկի անհրաժեշտ միջոցներ ապագայում միջազգային ծրագրերում մասնակցություն ունենալու ուղղությամբ:
Ապահովել համալսարանի կայքէջում համալսարանի վերաբերյալ օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարակումը ՌԾ-2016-20/Խնդիր 6.1/	Պաշտոնական կայքն ամենօրյա աշխատանքով ապահովում է համալսարանի վերաբերյալ օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարակումը, ինչպես նաև պարբերաբար թարմացվում և լրամշակվում է համալսարանի բոլոր բաժինների վերաբերյալ կայքի տեղեկատվությունը:
Ապահովել համալսարանի կայքէջի պարբերական զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բա- ղադրիչները: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	2016 թվականին կայքն ամբողջությամբ վերածրագրավորվել, նորացվել և թարմացվել է, ինչի մասին մանրամասն կարդալ կայքի հաշվետվության մեջ:
Ստեղծել «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի անգլալեզու էլեկտրոնային հավելված: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Թերթում տեղադրվող հիմնական նյութերը նաև տեղ են գտնում կայքում, որը թարգմանվում է ռուսերեն և անգլերեն: Հետևաբար, առայժմ նյութական աննպատակահարմարությունից ելնելով, չենք անդրադարձել խնդրին:

Ստեղծել սեփական հեռուստատեսային և ռադիոհաղորդաշարեր, համալսարանի ինտերնետային հե- ռուստատեսություն, համագործակցել տարբեր հեռուստատեսային և ռադիո-ընկերությունների հետ: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1	Համալսարանի վերաբերյալ նյութերը, տեսանյութերը, ֆիլմերն ու հաղորդումները տեղադրվում են Յութուբյան էջում, որն արդեն ապահովել է ավելի քան 230 000 դիտում: Սա ինչ-որ առումով փոխարինում է ինտերնետային հեռուստատեսությանը, հատկապես, որ տարբեր կարևոր միջոցառումներ երբեմն, անգամ ուղիղ հեռարձակմամբ, եթեր ենք տալիս հանրապետական սփռման ԶԼՄ-ներով: Բացի այդ տարբեր հեռուստաընկերություններով տրամադրում ենք տեսանյութեր՝ ՀՊՄՀ –ում անցկացված միջոցառումների մասին:
Ապահովել հանրային կապերի ոլորտում համալսարանի գործողությունների մշտադիտարկումը՝ PR գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու նպա տակով: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1/	Սեփական գործիքներով, հիմնականում հարցումների միջոցով, որն իրականացրել ենք դիմորդների շրջանակում, պարզել ենք, որ հեռուստատեսությամբ, գովազդի և Հաջողության բանաձևի միջոցով են տեղեկացել համալսարանում առկա մասնագիտությունների, միջազգային ծրագրերի մասին:
Համակարգել և նպատակաուղղել համալսարանի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1/	Համակարգել և նպատակաուղղել ենք համալսարանի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները՝ ներառելով ինչպես վարչական ռեսուրսը, այնպես էլ անձնական կապերն ու ուսանողների ջանքերը:
Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ համալսարանի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով ՌԾ-2016-20/Խնդիր 6.1/	Հանրային կարծիքի ուսումնասիրություն իրականացրել ենք սոցիալական ցանցերով՝ պաշտոնական կայքի և Հաջողության բանաձևի պաշտոնական էջերով Ֆեյբուքում, ինչպես նաև dasaran.am-ում,որտեղ մեր հետևորդների թիվը կազմում է արդեն 42 500 մարդ, որոնք մեր ապագա դիմորդները կարող են լինել: Նաև նրանց կարծիքները հաշվի առնելով ենք կազմակերպում ենք մեր ընթացիկ աշխատանքը:
Համալսարանի պաշտոնական խոր հրդանիշների կիրառման արարողա կարգի մշակում: ՌԾ-2016-20/Խնդիր 6.1/	Համալսարանի պաշտոնական խորհրդանիշների կիրառման համար Վարչությունն առանձին արարողակարգ չունի, սակայն անհրաժեշտ միջոցներով աջակցում է՝ հարկ եղած դեպքում տրամադրելով համալսարանի լոգոտիպը և այլն:

3. Հաշվետու տարում Լրատվության և հանրության հետ կապերի վարչության պլանավորած աշխատանքների կատարողականը

Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունն արդեն 7 տարի է գործում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Վարչությունը տարեցտարի ընդլայնում է իր գործունեության շրջանակը՝ իրականացնելով բազմաբնույթ գործունեություն: Վարչությունն ունի երեք բաժին՝ Պաշտոնական կայքի ապահովման բաժին,

«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի խմբագրություն և Ռադիո «Ֆամա»: Ունի նաև Հաջողության բանաձև հաղորդաշար, և անհրաժեշտության դեպքում պատրաստում է առանձին ֆիլմեր՝ համալսարանի քարոզչական նպատակներով:
Համալսարանի պաշտոնական կայքէջն իրականացնում է կարևորագույն գործառույթ. ոչ միայն ներկայացնում է համալսարանի առօրյան, տալիս տարբեր իրադարձությունների մասին տեղեկատվություն, այլև շատ գործնական նշանակություն ունի դիմորդների, ուսանողների, ասպիրանտների, հայցորդների համար, որոնք կայքում կարող են գտնել ամենաանհրաժեշտ տեղեկատվությունը համալսարանի, իրենց ուսումնական գործընթացի մասին՝ սկսած քննական հարցաշարարերից, վերջացրած առարկայական ծրագրերով և անհրաժեշտ գրականությամբ: Տեղեկատվությունը եռալեզու է, ինչը հնարավորություն է ստեղծում հետևել մեր բուհի զարգացումներին ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում, այն համալսարաններում, որոնց հետ համագործակցում ենք: Սա նաև հետագայում արտերկրից դիմորդներ ներգրավելու հիանալի հնարավորություն է:
Կայքում տեղադրվում են նաև համալսարանը ներկայացնող տեսանյութեր: Կայքը գործում է 6 տարի: 2016-ից այն թարմացվել է՝ ավելի ժամանակակից լուծումներ եւ նոր հնարավորություններ ընձեռելով ուսանողների համար:
Ամիսը երկու անգամ տպագրվում է «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը, որի միջոցով համալսարանի բոլոր ֆակուլտետները, ինչպես նաև պետական կառույցները, արտահամալսարանական կրթական հաստատությունները, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները տեղականում են համալսարանի անցուդարձին:
Վարչությունը համակարգում է բուհ այցելած ՁԼՄ-ների աշխատանքը, գիտաժողովների, հանդիպումների, տարբեր միջոցառումների ժամանակ ապահովում է լրատվամիջոցների ներկայությունը, մամուլի համար պատրաստում է հաղորդագրություններ, հանրապետական մամուլի էջերում տպագրության հանձնում բուհին վերաբերող հոդվածներ, հրապարակումներ, հետևում օրվա մամուլին, պատրաստում պաշտոնական ուղերձներ, կազմակերպում հեռուստահաղորդումներ, ֆիլմեր, տպագրում բուկլետներ, տալիս հայտարարություններ, պատրաստում գովազդային հոլովակներ:
Մի քանի տասնյակ հեռուստահաղորդումներ ենք կազմակերպել ՀՀ-ում և արտերկրում՝ արբանյակով, հեռարձակվող տարբեր հեռուստաալիքներով: Մեծ թվով հոդվածներ են հրապարակվել հանրապետական մամուլում: Ամսվա կտրվածքով Մանկավարժական համալսարանի մասին պատմող միջինը 20 նյութ, լուր և հոդված է տպագրվում հանրապետական մամուլում և ավելի քան 30 տեղի լրատվամիջոցներով՝ ՀՊՄՀ կայք, ռադիո, թերթ:
Կազմակերպվել են բազմաթիվ հեռուստահաղորդումներ՝ համալսարանի ներկայացուցիչների՝ դեկանների, պրոռեկտորների, դասախոսների մասնակցությամբ, ասուլիսներ:
Ստեղծել ենք մանկավարժական համալսարանի մասին պատմող ֆիլմեր և լուսանկարների արխիվ: Յուրաքանչյուր տարի պատրաստում ենք ֆիլմ-հաշվետվություն, որը պահվում է ոչ միայն վարչությունում, տեղադրվում է կայքում, այլև պահպանվում և ցուցադրվում է թանգարանում, և թանգարանի այցելուները կարող են ծանոթանալ, թե վերջին տարիների ընթացքում, այսինքն, վարչության գոյության ընթացքում ինչ աշխատանքներ են կատարվել համալսարանում: Վարրչության արտադրության նյութերը տեղադրվում են պաշտոնական կայքի յութուբյան էջում, որն արդեն ապահովել է ունի 227 650 դիտում:
Մանկավարժական համալսարանը «Արմնյուզ» հեռուստաալիքով արդեն երկու տարի եթեր է հեռարձակում «Հաջողության բանաձև» հաղորդաշարը, որը ներկայացնում է համալսարաններում եւ դպրոցներում դասավանդվող, ուսումնասիրվող առարկաները, մասնագիտությունները՝ հետաքրքիր, ինքնատիպ լուծումներով: Նպատակը մեկն է. կողմնորոշել երիտասարդներին, ովքեր ցանկություն ունեն մասնագիտություն ձեռք բերել, բարձրագույն կրթութուն ստանալ: Բացի այդ, այսօր շատ մասնագիտություններ կործանման

եզրին են՝ հիմնական, այսպես ասած մոդայիկ մասնագիտությունների ընտրության արշավում բնական, ճշգրիտ գիտությունները տանուլ են տալիս: Այսօր արդեն տարբեր բուհերում փակվում են ամբողջական բաժիններ, որոնք ուղղակի դիմորդ չունենալու պատճառով չեն կարողանում գոյատևել: Հաղորդման ընթացքում մասնագիտական առանձնահատկությունները ներկայացվում են ավելի մատչելի լեզվով և դիտարժան միջոցներով, որպեսզի ապագա դիմորդի մոտ հետաքրքրություն առաջանա կոնկրետ առարկայի հանդեպ:
Հաղորդաշարի ամեն թողարկում նվիրված է մեկ կոնկրետ մասնագիտության: Համեստ ձևաչափի մեջ հաղորդաշարը փորձում է օգնել երիտասարդներին՝ գտնել իրենց հաջողության բանաձևը, ճանաչել և խորանալ մասնագիտական նրբությունների մեջ:
Հաջողության բանաձևը ունի Ֆեյսբուքյան էջ, որին արդեն հետևում է ավելի քան 4000 մարդ: Նրանք մեր մշտական բաժանորդներն են և թիվը կայուն աճում է:
Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը պայմանավորվածություն ունի dasaran.am-ի հետ, և ամեն հաղորդման՝ Armnews-ով եթեր հեռարձակումից հետո այն տեղադրվում է dasaran.am- ում, որը իրապես դպրոցահասակ երեխաների հետ շփման ամենաարդյունավետ հարթակն է: dasaran.am-ում մեզ արդեն հետևում է 42 500 երեխա հանրապետության տարբեր մարզերից:
Վարչության կազմում գործում է «Մանկավարժական համալսարան» թերթը, որը հրատարակվում է հայերեն լեզվով 1800 տպաքանակով, ամիսը երկու անգամ, երկու մամուլ ծավալով:
Մանկավարժական համալսարանի մասին օպերատիվ և առավել ամբողջական տեղեկատվության ստացման միջոց է նաև Առաջին համալսարանական ռադիո «Ֆամա»-ն՝ www.radiofama.am: Այն իր եթերաշրջանը սկսեց 2013 թվականի նոյեմբերի 1-ին, և հասցրել է դառնալ շատերի համար սիրելի և սպասված: «RadioFama»-ն անդրադառնում է ինչպես համալսարանական առօրյային, այնպես էլ ընդհանրապես կրթական համակարգին և երիտասարդներին հուզող հարցերին:
Ընթացիկ տարում ևս վարչությունն իր բոլոր ստորաբաժանումներով օպերատիվ աշխատել է՝ ամենատարբեր ձևաչափերում լայնորեն տարածելով բուհական և ներբուհական ձեռնարկների մասին տեղեկատվություն:

Վարչության աշխատանքը մանրամասն ներկայացված է հաշվետվության մեջ և արդեն նշել ենք, որ հավատարիմ կանոնադրությանն ու ՋԼՄ-ների մասին օրենքի, օպերատիվ աշխատել ենք՝ ամենատարբեր ձևաչափերում լայնորեն տարածելով բուհական և ներբուհական ձեռնարկների մասին տեղեկատվություն: Կազմակերպել ենք հանրապետական մամուլում նյութերի տպագրություն, եթերում ՝ ՀՊՄՀ-ի մասին ռեպորտաժներ, ինչպես նաև տարբեր հեռուստահաղորդումներում ՀՊՄՀ ներկայացուցիչների մասնակցությունը:
Հաջողության բանաձև հաղորդաշարի ընթացքում ցուցադրել ենք նաև ՀՀ սահմաններից դուրս՝ օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը, թեև շատ ավելի արդյունավետ կլիներ, եթե դրանց հավաստիությունը փաստվեր ոչ միայն առանձին մարդկանց պատմություններով, այլ տեղում արված կադրերով, ինչը վարչության համար դեռևս ֆինանսավորման բացակայությամբ պայմանավորված խնդիր է, և կարծում եմ առաջիկայում հնարավոր կլինի այն լուծել:

Ինքնագնահատում
Եթե հաշվի առնենք, որ վարչությունը ստեղծվել է զրոյից, իսկ այդպես էր, կար միայն սպիտակ թղթի վրա, ոչ թե թերթի, տպվող Մանկավարժական համալսարան թերթը՝ ամիսը մեկ պարբերականությամբ, ապա վարչության ստեղծման պահից առ այսօր ունենք բավականաչափ ձեռքբերումներ. Նախ՝ թերթը դարձավ ավանդական թերթի նման և ամիսը հրատարակվում է երկու անգամ: Ստեղծեցինք on-line գործող, ամեն րոպե թարմացվող և եռալեզու կայք, որն արդեն երկու անգամ կատարելագործվել է, ստեղծել ենք 24 ժամ գործող ռադիո, որը ոչ միայն տեղեկատվական ռեսուրս է, այլև հրաշալի հարթակ ապագա լրագրողների համար: Ստեղծել ենք հեռուստաարտադրություն, ունենք մեր սեփական հաղորդումը Արմնյուզ

հեռուստաընկերությունում: Հաջողության բանաձև հաղորդումները հեռարձակում ենք Հանրային հեռուստաընկերության արբանյակային կայանով, dasaran.am կայքով, Հարողության բանաձևի յութուբյան էջով: Հետևողականորեն աշխատում ենք սոցցանցերում: Ապահովում ենք մանկավարժական համալսարանի դրական իմիջը, ինչպես մեր տրամադրած նյութերով, արված պարզաբանումներով, այնպես էլ բացահայտ և գաղտնի գովազդով: Վարչության գործունեության ընթացքում կտրականապես նվազել են Մանկավարժական համալսարանի մասին բացասական հիշատակումները մամուլում: Այս ամենը մեզ հիմք է տալիս մեր աշխատանքը գնահատել արդյունավետ, իսկ բավարար, լավ և գերազանց սանդղակում կարծում եմ, կարելի է գնահատել լավ՝ համեստորեն ձեռնպահ մնալով գերազանցից:

29. Պաշտոնական կայքի ապահովման բաժին

1. Համալսարանի պաշտոնական կայքի ապահովման բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքի ապահովման բաժինը Լրատվության և հանրության հետ կապերի վարչության ստորաբաժանումներից է: Ստեղծման օրից՝ կայքի գլխավոր գործառույթներից են եղել համալսարանի կառուցվածքի մասին ամբողջական տեղեկատվության ապահովումը, թարմացումը, անհրաժեշտ լրացումների կատարումը:
Բաժինը համագործակցում է բուհի ստորաբաժանումների, ֆակուլտետների, ամբիոնների (այդ թվում՝ համահամալսարանական) հետ. ապահովում դրանց, ինչպես նաև աշխատակազմի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն:
Ամենատարբեր ձևաչափերով ՝ բուհական, միջբուհական ձեռնարկների մասին տեղեկատվության տարածում, համալսարանում և դրանից դուրս անցկացվող իրադարձությունների օպերատիվ լուսաբանում, այդ թվում՝ հանրապետական, տարածաշրջանային և միջազգային գիտաժողովներ (նորություններ, հայտարարություններ, անոնսներ, նկարադարան, տեսասրահ) կայքի գործունեության մաս են կազմում:
Բուհի կրթական գործունեության թափանցիկության ապահովում՝ դրամաշնորհային ծրագրերի և կրթաթոշակների վերաբերյալ տեղեկատվություն, օտարերկյա դիմորդների ուղեցույցերի, քննությունների, ժամանակացույցերի, վարձավճարների, հարցաշարերի, գրաֆիկների, դասացուցակների, ուսումնական ծրագրերի, փաստաթղթերի և այլնի տեղադրում:
Դիմորդների և համալսարանի սովորողների համար գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ապահովում (ընդունելության կարգ, մասնագիտությունների ցանկ, դիմումների շարժն՝ ըստ մասնագիտությունների, ինչպես նաև ընդունելության մրցույթի արդյունքների ամբողջական տեղեկատվության հասանելիություն՝ ողջ տարվա ընթացքում:
Անդրադարձ բուհի գիտական գործունեությանը.գիտական լաբորատորիաների, հանդեսների, պաշտպանությունների, մասնագիտական խորհուրդների վերաբերյալ տեղեկատվության թարմացում և տեղադրում:
Անհրաժեշտ փոփոխություններ «Մեդիա» բաժնում.ամենօրյա աշխատանքի մաս է կազմում բուհի վերաբերյալ ԶԼՄ-ի անդրադարձի տեղադրումնն ու տարածումը կայքում:
Համալսարանի մասին տեղեկատվությաունը հասանելի է նաև համացանցում (սոց.ցանցերի միջոցով), այցելուներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվություն (է լ.հասցե) և այլն:

2. Հաշվետու տարում պաշտոնական կայքի ապահովման բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել համալսարանի կայքէջում համալսարանի վերաբերյալ օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարա- կումը:(Ռ.Ծ_ խնդիր 6.1,քայլեր՝ 1)	Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքը շարունակում է հանդիսանալ տեղեկատվության համախմբման միջոց՝ բուհի հետ առնչություն ունեցող այլ կառույցների և վերջիններիս կայքերի համար : Շուրջ 1 տարվա ընթացքում «Նորություններ» բաժնում տեղադրվել է ավելի քան 1200 նյութ: Օպերատիվ լուսաբանվել են համալսարանում և դրանից դուրս անցկացվող իրադարձությունները, ձեռնարկները, նախաձեռնությունները, այդ թվում՝ հանրապետական, տարածաշրջանային և միջազգային մասշտաբի: Տեղեկատվությունն առկա է եռալեզու: Սեփական նյութերը տարածելու համար՝ կայքում մշտապես թարմացվում է նաև տեսասրահ բաժինը՝ համալրելով նոր տեսանյութերով, լուսանկարներով: Յուրաքանչյուր շաբաթ տեղադրվում է ՀՊՄՀ-ի ԼՀՎ-ի կողմից պատրաստվող «Հաջողության բանաձև» հաղորդումը, ինչպես նաև «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի համարները՝ ամսական երկու անգամ: Պաշտոնական կայքի այցելուներին տարիներ շարունակ հասանելի է նաև բուհի՝ աառաջին համալսարանական ռադիոն՝« Ֆամա»-ն: Տեղադրվում են նաև բուհի վերաբերյալ սեփական արտադրության տեսանյութերը, քարոզչական նյութերը, մամուլի և ԶԼՄ-ի անդրադարձը, գովազդային հոլովակներն ու այլն:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել համալսարանի կայքէջի պարբերական զարգացումը՝ հարըս- տացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները: (Ռ.Ծ.,խնդիր 6.1,քայլեր՝ 2)	1000+ առանձին էջեր մենյուների, ինչպես նաև 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ մակարդակի ենթամենյուների, պիտակների և կատեգորիաների տեսքով: Կիրառված առարկայակողմնորոշված նորագույն տեխնոլոգիաների և կայքի գործունեությունը դանդաղեցնող գործիքների կիրառումից հնարավորիս խուսափման շնորհիվ կայքն անհամեմատ արագագործ է: Պաշտոնական կայքը հարմարեցված է տարբեր սարքավորումների էկրանների չափսերի տվյալներին (հեռախոս, պլանշետ, փոքր դիսփլեյ, մեծ դիսփլեյ)՝ այդկերպ դառնալով առավել հասանելի օգտատերին: Հեշտ հասանելիություն որոնման համակարգերում. մի շարք գործիքներ (ալիաս, մետա-պիտակներ, մետա-նկարագրություն)՝ կայքը հասանելի են դարձրել որոնման տարբեր համակարգերով՝ տարբեր երկրներում և լեզուներով: Կայքի որոնումն աշխատում է բոլոր բառ պարունակող նյութերի համար (հոդված,

		հայտարարություն, նկարադարանի անվանում, վերբեռնված ֆայլի անվանում՝ հոդվածի մեջ և այլ): Արխիվի համակարգի միջոցով հնարավորություն է ընձեռվում գտնել բոլոր առկա (չջնջված կամ չպասիվացված) նյութերը՝ ըստ հրապարակման ամսաթվի: Ժամանակակից դիզայնով, բազմաֆունկցիոնալ կայքում ընթացիկ տարում ևս կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, լրացումներ: Հիմնական էջերում, ըստ անհրաժեշտության, փոփոխության են ենթարկվել ստորաբաժանումները, ֆակուլտետները, ամբիոնները, առանձին այլ էջեր ևս՝ այդ թվում՝ փոփոխվել է նաև դրանց դիզայնը:
Հունվար-դեկտեմբեր	Համալսարանի կայքում ներկայացնել ՀՊՄՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, կրթական հաջողություններ, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր: (Ռ.Ծ_խնդիր 7.3,քայլեր՝ 2)	Բուհի պաշտոնական կայքում ողջ տարվա ընթացքում տեղադրվել են հայտարարություններ՝ օտարերկյա բուհերում ուսուցման, փոխանակման, դրամաշնորհային և կրթական ծրագրերի մասնակցության հնարավորությունների մասին: Լուսաբանվել են Մանկավարժականի գործընկեր բուհերում ուսումնառությունը շարունակող ուսանողների առօրյան, կրթական ձեռքբերումներն ու այլ մանրամասներ: Պաշտոնական կայքում ստեղծվել է «Տպավորություններ շարժունության ծրագրերից» ենթաբաժին, որտեղ պարբերաբար թարմացվում են աշխարհի տարբեր երկրներում սովորող ՀՊՄՀ-ի ուսանողների տպավորությունները: Համագործակցելով բուհի՝ Միջազգային բաժին ստորաբաժանման հետ, պաշտոնական կայքում մշտապես լուսաբանվել են նաև օտարերկյա բուհերի հետ համագործակցությունը, պաշտոնական այցերն ու հետագա գործընկերության ուղենիշները: Դիմորդ բաժնում առանձնացված է «Օտարերկյա դիմորդ» բաժինը՝ սփյուռքահայ և օտարերկրյա ուսանողների համար նախատեսված ընդունելության ուղեցույցով,ներկայացվող փաստաթղթերով և կացության կարգավիճակի վերաբերյալ մանրամասներով:

բ/ տարեկան պլանի համաձայն

Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Հունվար-դեկտեմբեր	Կառուցվածքային փոփոխություններ	Ընթացիկ տարում բուհում կատարված կառուցվածքային փոփոխությունները տեղ են գտել համապատասխան բաժիններում՝ ՀՊՄՀ, Նորություններ, Ֆակուլտետներ, Կրթություն, Գիտություն, Դիմորդ և այլն:

Հունվար-դեկտեմբեր	Սահմանված ժամկետում կայքում տեղադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն:	Լուսաբանվել են իրադարձություններ, տեղադրվել անոնսներ, հայտարարություններ, նյութեր, տեսանյութեր, լուսանկարներ:
Հունվար-դեկտեմբեր	Պարբերաբար թարմացվել է բաժինների և ենթաբաժիններում առկա տեղեկատվությունը:	Բուհում կատարվող կառուցվածքային փոփոխությունները ենթադրում են նաև տարբեր ստորաբաժանումների՝ կայքում առկա տեղեկատվության փոփոխություն և լրամշակում: Ընթացիկ տարում բաժնի գործունեության մաս են կազմել դրանց իրականացումը:
Հունվար-դեկտեմբեր	Բուհի վերաբերյալ տեղեկատվության տարածում, այդ թվում՝ սոցիալական ցանցերի միջոցով:	Facebook սոցիալական հարթակում բուհն ունի պաշտոնական էջ՝ իր բազմաքանակ հետևորդներով՝ շուրջ 10.000: Ամեն օր թարմացվում է առկա տեղեկատվությունը, օպերատիվ պատասխան տրվում օգտատերերի նամակների, հարցերին:
Հունվար-դեկտեմբեր	Կրթական գործընթացի թափանցիկություն՝ ուսանողների և դիմորդների համար:	Պաշտոնական կայքը դիմորդների և ուսանողների համար առավել մատչելի է դարձրել բուհի հետ կապված տեղեկատվությունը.այս տարի ևս բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրարգրերի առկա և հեռակա բաժիններում ընդունելության քննություններին ընդառաջ տեղադրվել են մասնագիտությունների նորացված ցանկը, տվյալ ուսումնական տարվա ընդունելության կարգը, ամբողջական տեղեկատվություն քննությունների և վարձավճարների վերաբերյալ, ամեն օր ներկայացվել է դիմումների շարժն՝ ըստ մասնագիտությունների, ինչպես նաև ընդունելության մրցույթի արդյունքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Յուրաքանչյուր կիսամյակ կայքում տեղադրվել են դասացուցակներ, կիսամյակային քննություններին ընդառաջ՝ համապատասխան բաժնում նաև ընթացիկ (միջանկյալ) ստուգման, ամփոփիչ ատեստավորման և որակավորման քննությունների հարցաշարեր,գրաֆիկներ,դիմորդների շարժն ու քննական արդյունքները:
Հունվար-դեկտեմբեր	Բուհի գիտական կյանքի լուսաբանում	Գիտություն բաժնում տեղադրվել են բուհի գիտական կառույցների կատարած աշխատանքների, աշխատակազմի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Առանձնացված և կայքի ձևաչափում են ներկայացված գիտական հանդեսները, լաբորատորիանները՝ իրենց գործունեությամբ և աշխատակազմով: Մանկավարժական համալսարանում այս տարի ևս անցկացված միջազգային և հանրապետական մեծածավալ գիտաժողովները, մեծամասշտաբ հանդիպումները, հրավիրյալ օտարազգի և տեղացի

		դասախոսների դասախոսությունները, լուսաբանվել են օպերատիվ և ողջ ծավալով՝ տեղ գտնելով Գիտական նորություններ բաժնում: Պարբերաբար տեղադրվել են գիտաժողովների վերաբերյալ հայտարարությունները, ծրագրերը, մասնակցության ձևաչափերն ու պահանջները: Այս տարի ևս տեղադրվել են պաշտպանությունների սեղմագրերն ու մասնագիտական խորհուրդների թարմացված ցանկերը:
Հունվար-դեկտեմբեր	Կատարվել են ընթացիկ այլ աշխատանքներ ևս:	Համալսարանի պաշտոնական կայքը լինելով նոր՝ վերազինված, առավել դինամիկ և ծավալուն, ժամանակակից դիզայնով և հնարավորություններով, ընթացիկ տարում ապահովել է այցելուների մեծ քանակ: Google Analytics-ի վերլուծության արդյունքում՝ կայքն ունեցել է ավելի քան 160.000 այցելու:

3. Հաշվետու տարում պաշտոնական կայքի ապահովման բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը

1. 2017 թվականին ևս կայքի ռազմավարությունը եղել է օպերատիվ աշխատանքն ու ամենատարբեր ձեռնարկների մասին տեղեկատվության տարածումը՝ բուհում և դրա շրջանակններից դուրս: Պարբերաբար թարմացվել է Մանկավարժական համալսարանի մասին առկա տեղեկատվությունը, բաժիններում կատարվել անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ: Պաշտոնական կայքի ապահովման բաժինը համագործակցել է տարբեր ստորաբաժանումների հետ՝ այցելուների համար ապահովելով բազմակողմանի լրատվություն՝ յուրաքանչյուրի ռազմավարության, գործունեության, խնդիրների և նպատակների մասին: Ըստ անհրաժեշտության՝ խմբագրվել և փոփոխությունների է ենթարկվել անհրաժեշտ ինֆորմացիան: Աշխատանքների ընթացքում հաշվի են առնվել ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի պահանջները, դիտարկումներն ու առաջարկները: Բուհի կայքում տեղ են գտել ղեկավար մարմիններում բարձացված հարցերը, համապատասխան կարգերի մշակումները, որոշումները, քննարկման առաջադրված հարցեր, հաշվետվություններ: Բուհի գործունեությունն առավել թափանցիկ դարձնելու նպատակով՝ տեղադրվում են նաև ֆինանսական փաստաթղթերը, բյուջեի վերաբերյալ մանրամասներ:
2. Կայքը տարիներ շարունակ աշխատել է օպերատիվ՝ ամենատարբեր ձևաչափերում լայնորեն տարածելով բուհական և ներբուհական ձեռնարկների մասին տեղեկատվություն: Ելնելով բուհի համար կայքի ունեցած ռազմավարական նշանակությունից՝ տարիներ առաջ գործարկված կայքը մշտապես լրամշակվում է. կայքը եռալեզու է՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն: Պարբերաբար լրացվել, խմբագրվել և անհրաժեշտ փոփոխությունների են ենթարկվել բուհի ֆակուլտետները, ամբիոնները և համահամալսարանական ամբիոնները, պատմությունները, աշխատակազմը, առարկայական և ուսումնական ծրագրերը: Համապատասխան փոփոխություններն են կրել նաև Կրթություն, Գիտություն, Դիմորդ բաժինները: Կայքում յուրաքանչյուր շաբաթ տեղադրվել է նաև Լրատվության և հանրության հետ կապերի վարչության կողմից թողարկվող «Հաջողության բանաձև» հաղորդաշարը: Համալսարանի կայքի ապահովման բաժինն ամեն օր բուհի վերաբերյալ թարմ տեղեկատվություն է հաղորդել սոցիալական ցանցերի միջոցով, ստուգվել են էլեկտրոնային հասցեները, տրվել անհրաժեշտ պատասխան:

3.Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքը շարունակում է հանդիսանալ տեղեկատվության համախմբման միջոց՝ բուհի հետ առնչություն ունեցող այլ կառույցների և վերջիններիս կայքերի համար: ՀՊՄՀ-ի ներկայիս պաշտոնական կայքը ժամանակակից մոտեցումներով պատրաստված արագագործ և ծավալուն կայք է՝ ընդլայնման և խորացման հնարավորություններով: Կարելի է տարանջատել տեղեկատվության տեսակները և առանձնահատկությունները՝ միևնույն ժամանակ պահպանելով ընդհանուր տրամաբանությունն ու մոտեցումները: Կայքում առկա է նաև կառույցի առանձին նորությունների հատվածը, առանձնացված նկարադարան և տեսադարան՝ յուրաքանչյուրն իր վերնագրով և այլ ցուցանիշներով: ՀՊՄՀ-ի Կառուցվածք բաժնում սխեմատիկ լուծման շնորհիվ ակտիվ են բաժինները, վարչությունները, վարչական ստորաբաժանումները.դրանց միջոցով հնարավոր է ստանալ յուրաքանաչյուրի գործունեության, խնդիրների և նպատակների վերաբերյալ տեղեկատվություն, ծանոթանալ աշխատակազմին: Կայքի տեղեկատվությունը հնարավորության սահմաններում բերված է օրինաչափ տեսքի՝ ըստ թեմատիկայի: Կայքի ստեղծման ողջ ընթացքում աշխատանքային խումբը կարևորել է ժամանակակից միտումներն ու աշխարհի առաջատար բուհերի լավագույն փորձը հաշվի առնելու անհրաժեշտությունը՝ դրանք հարմարեցնելով օգտվողների հնարավորություններին և պահանջներին: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս www.aspu.am- ն առաջնորդվել է օպերատիվության սկզբունքով՝ ապահովելով բուհի յուրաքանչյուր կառույցի, ամենատարբեր ձեռնարկների մասին թարմ, բազմակողմանի, օբյեկտիվ և անաչառ տեղեկատվություն՝ նպաստելով դրանց լայնորեն տարածմանը: Ի դեպ,Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքը կրթական և լրացուցիչ մասնագիտական հաստատությունների կայքերի՝ «Ինտերնետ-մրցույթ EAPU-2017» բաց մրցույթում հաղթող է ճանաչվել «Լավագույն հեռախոսային տարբերակ» անվանակարգում: Եվրասիական մանկավարժական ասոցիացիայի անդամ առաջատար 37 բուհերից՝ մրցույթում ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքը՝ www.aspu.am-ը, զբաղեցրել է պատվավոր 2-րդ հորիզոնականը:

30. Ռադիո Ֆամա

1. Ռադիո Ֆամայի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Համագործակցել Համալսարանի ստորաբաժանումների և այլ կառույցների հետ:
Ապահովել ռադիո Ֆամայի 24-ժամյա եթերը:
Եթեր հեռարձակել լրատվական թողարկումներ՝ ողջ օրվա ընթացքում:
Հեռարձակել երիտասարդական, մշակութային և կրթական ռադիոհաղորդումներ:
Հեռարձակել երաժշտություն և հայտարարություններ, որոնք ուղղված են Մանկավարժական համալսարանի ուսանողներին ու պրոֆեսորադասախոսական կազմին: Ապահովել եթեր հեռարձակվող նյութերի ճշգրտությունը ու դրա օրինականությունը:
Ապահովել ռադիո Ֆամայի www.radiofama.am կայքի աշխատանքն ու պարբերաբար թարմացնել տեղեկտավությունը:
Պատասխանել ռադիոյին, ինչպես նաև Համալսարանին ուղղված հարցումներին՝ հետադարձ կապի միջոցով:
Իրավասությունների շրջանակում և Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ ևս:

2. Հաշվետու տարվա համար ռադիո Ֆամայի բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Հունվար-դեկտեմբեր	Կատարելագործել համալսարանի ռադիո Ֆաման /Ռ. Խնդիր 6.1, կետ 5/	Ուսանողության շրջանում բարձրացվել է իրազեկվածությունը ռադիոյի մասին, շահագրգռել ենք ուսանողներին հանդես գալ նոր հաղորդումներով, նախագծերով, առաջարկներով, անդրադառնձել ենք երիտասարդներին հետաքրքրող թեմաներին, բարելավվել է ռադիոյի տեխնիկական սարքավորումները, ավելի ակտիվացել է ռադիո Ֆամայի կայքը, մեծացվել է սոցիալական ցանցերում ռադիոյի ներկայացվածության մակարդակը:
Հունվար-դեկտեմբեր	Բազմազանեցնել նրա ներքին կյանքին վերաբերող լրատվական տեղեկատվությունը /Ռծ. Խնդիր 6.1, քայլ 5/	Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում չորս անգամ իրականացվում է լուրերի թողարկում՝ 12:30, 15:00, 18:00 /գլխավոր թողարկում/ և 21:00: Լուրերի թողարկմանը հիմնականում անդրադարձ է կատարվում Մանկավարժական համալսարանին վերաբերող թեմաներին, ինչպես նաև կրթամշակութային, հանրապետական և միջազգային իրադարձություններին:
Հունվար-դեկտեմբեր	Ստեղծել համալսարանը ներկայացնող հաղորդաշարեր, բարձրացնել դրանց տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը /Ռծ. Խնդիր 6.1, քայլ 5/	Ռադիոյով այժմ եթեր է հեռարձակվում շուրջ տասը հաղորդում, որոնց հեղինակները մեծամասամբ Մանկավարժական համալսարանի ուսանողներն են՝ մասնավորապես Հեռուստառադիոլրագրության ամբիոնի ուսանողները: Հաղորդումները բազմաբնույթ են, իսկ հաղորդման հյուրերը պարտադիր համալսարանի ուսանողներն են կամ շրջանվարտները: Ռադիոյի 24-ժամյա անխափան եթերը ապահովվում է ներդրված ժամանակակից պրոֆեսիոնալ տեխնիկական միջոցների շնորհիվ: Ֆաման հեռարձակվում է բուհի բոլոր մասնաշենքերում՝ լոկալ ձայնային համակարգերի միջոցով, որոնք ել ապահովում են ռադիոյի լսելիությունը ուսանողների և անձնակազմի համար: Հեռուստառադիոլրագրության ամբիոնի ուսանողների համար ռադիոն գործնական պարպմունքների, փորձ ձեռք բերելու լավագույն հարթակ է: Պարբերաբար իրականացվում են տեխնիկական համալրումներ: Անհրաժեշտության դեպքում ռադիոն հնարավորություն ունի ընդլայնել տեխնիկական հնարավորությունները:
	Թարմացնել www.radiofama.am կայքէջը /Ռծ. Խնդիր 6.1, քայլ 5/	Ռադիո Ֆաման հասանելի է նաև www.radiofama.am կայքում: Մեզ առցանց լսում են աշխարհի 140 երկրից, որոնց լավագույն հնգյակում են Հայաստան, ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա և Գերմանիա: Ամսվա կտրվածքով ռադիոն 7550 ունիկալ ունկնդիր ունի, յուրաքանչյուր ունկնդիր լսում է միջինը 55 րոպե, իսկ ամսական ընդհանուր լսումների քանակը կազմում է 18250:

		Կայքում տեղադրված են բոլոր հաղորդումները՝ իրենց անոնսներով և հակիրճ տեղեկատվությամբ: Եթեր հեռարձակված հաղորդումները տեղադրվում են կայքում՝ ստեղծելով տվյալ հաղորդման արխիվային բազա: Կայքի «Նորություններ» բաժնում ամեն օր տեղարդվում է նոր լուրեր, համապատասխան այլ բաժիններում տեղադրվում են տեսահոլովակներ, սպասվելիք միջոցառումների անոնսներ, թարմացվում է ֆոտոալբոմներ և այլն: Անհրաժեշտությունից ելնելով՝ պարբերաբար փոփոխվում և թարմացվում է կայքի տարբեր բաժինների տեղեկատվությունը:

բ/ տարեկան պլանի համաձայն

Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել ռադիո ֆամայի 24-ժամյա անխափան եթերը	Ներդրված ավտոմատացված գերժամանակակից համակարգը հնարավորություն է տալիս 99,9 տոկոս հավաստիությամբ ապահովել ռադիոկայանի անխափան եթերը: Պարբերաբար կատարվում է եթերի առկայության վերահսկում՝ ինչպես առցանց, այնպես էլ լոկալ հեռարձակման տիրույթում: Պարբերաբար աշխատանքեր են տարվում ռադիոներին վերաբերվող կայքերում՝ ռադիո Ֆամայի ստրիմի առկայությունն ապահովելու համար:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել լուրերի թողարկումը	Յուրաքանչյուր օր հավաքագրվում է Մանկավարժական համալսարանի և այլ կրթական, մշակութային, տեխնոլոգիական նորարարությունների մասին տեղեկատվություն, խմբագրվում է և պատրաստվում է լուրերի թողարկումը՝ ողջ օրվա ընթացքում 4 անգամ:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել ռադիոյի հաղորդումների պատրաստումն ու եթեր հեռարձակելը	Հավաքագրվում է տեղեկատվությունը, խմբագրվում է, իրականացվում է հաղորդման հյուրերի ընտրություն, ձայնագրվում, մոնտաժվում և ձևավորվում է, այնուհետև՝ պատրաստի հաղորդման եթեր է հեռարձակվում:
Հունվար-դեկտեմբեր	Իրականացնել հայտարարությունների, սպասվելիք միջոցառումների անոնսերի եթեր հեռարձակելը	Հեռարձակվում է Համալսարանին առնչվող և առհասարակ գիտակրթական ոլորտի այլ հայտարարությունների, ինչպես նաև սպասվելիք մեծամաշտաբ միջոցառումների անոնսներ՝ «Ազդ»-ի

		միջոցով՝ օրվա ընթացքում մի քանի անգամ: Անհրաժեշտության դեպքում շտապ հայտարարություններ կարող են արվել ուղիղ միացմամբ՝ ապահովելով դրա այժմրոպեականությունը:
Հունվար-դեկտեմբեր	Մասնակցել և ապահովել համալսարանում տեղի ունեցող միջոցառումների լուսաբանումը	Մասնակցում ենք համալսարանում տեղի ունեցող տարբեր ձեռնարկներին, գրում հոդվածներ և վերջինները հեռարձակում լուրերի թողարկմամբ: Մեծամաշտաբ միջոցառումների հեղինակներին և կազմակերպիչներին որևէ հաղորդման շրջանակում նաև հյուրընկալում ենք ռադիո:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել www.radiofama.am կայքի աշխատանքը	Յուրաքանչյուր օր նորություններ բաժնում տեղադրվում են նոր լուրեր, աուդիո նվագարկիչ բաժնում՝ համաշխարհային նոր հիթեր, նոր տեսահոլովակներ բաժնում՝ տեղական և արտասահմանյան նոր տեսահոլովակներ, սպասվելիք իրադարձություններ բաժնում՝ ՀՀ-ում սպասվելիք իրադարձությունների անոնսներ, ֆոտոալբոմ բաժնում ներբեռնվում է յուրաքանչյուր հաղորդման հյուրերի ֆոտոնկարները, հաղորդման եթեր հեռարձակվելուց հետո արխիվացվում է տվյալ եթերը:
Հունվար-դեկտեմբեր	Թարմացնել կայքի բաժիններում առկա տեղեկատվությունը	Անհրաժեշտության դեպքում կայքում տեղադրված ցանկացած առկա տեղեկատվության փոփոխվում և լրամշակվում է:
Հունվար-դեկտեմբեր	Ռադիոյի և համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տարածում, այդ թվում՝ սոցիալական ցանցի միջոցով:	Ռադիո ֆաման ունի էջ Facebook սոցիալական ցանցում, այն ունի 1300 հետևորդ: Օրվա ընթացքում տեղադրվում է հաղորդումների անոնսները, հաղորդումներից՝ վիդեո հատվածներ, ուղիղ եթերներ, ֆոտոներ, նորություններ՝ ապահովելով առավել մեծ լսարանի ընդգրկում: Իրականցվում են նաև հարցումներ և քննարկումներ: Կայքով տարածվում է նաև համալսարանին առնչվող այլ նորություններ, լուրեր և այլն: Տարվում են առցանց տիրույթում ռադիոյի ճանաչելիության մակարդակի բարձրացանն ուղղված աշխատանքներ:
Հունվար-դեկտեմբեր	Կատարել ընթացիկ այլ աշխատանքեր	Անհարժեշտությունից ելնելով՝ իրականցվում են մի շարք այլ աշխատնքներ՝ ուսնանողներին

		ներգրավելով ռադիոյի գործունեությունում: Իրականցվում է նաև քարոզչական աշխատանքեր. համալսարանի այցելուները՝ մասնավորապես դպրոցականները հյուրընկալվում են ռադիո, ծանոթանում ռադիոյի և առհասարակ բուհի գործունեությանն ու նպատակներին:

3. Հաշվետու տարում ռադիո Ֆամայի պլանավորած աշխատանքների կատարողականը

2017 թվականին ռադիո Ֆաման շարունակել է աշխատել համապատասխան իր ռազմավարությանը: Ռադիոն իրականացրել է մի շարք աշխատանքներ, որոնք նպաստել են դրա ռադիոյի կատարելագործմանը: Ապահովելով 24-ժամյա անխափան եթերը՝ ռադիո Ֆաման բազմազանեցնել լուրերի թողարկումը՝ մեծամասամբ թողարկմանը ներգրավելով համալսարանի ներքին կյանքին վերաբերող լրատվական տեղեկատվություններ: Համալրվել է նոր հաղորդումներ, տարաբնույթ են դարձել առկա հաղորդումները, որոնք հիմնականում անդրադառնում եմ երիտասարդությանն ու ուսանողությանը: Ռադիոն տեխնիկապես հագեցած է, որն էլ ապահովում է շահագործման արդունավետությունը՝ առցանց հարթակում և բուհի բոլոր մասնաշենքերում՝ առկա լոկալ ձայնային սարքերի միջոցով: Թարմացվել է ռադիոյի www.radiofama.am կայքը, իրականացվել են ընթացիկ աշխատանքեր կայքում:
Արդեն 4 տարի է համալսարանում գործում է առաջին համալսարանական ռադիոն՝ Ֆաման: Որպես լրատվական գործունեություն իրականացնող՝ ռադիո Ֆամայի առաջին հաղորդումը եղել է հենց լրատվական թողարկումների ապահովումը. ողջ օրվա ընթացքում երեք ժամը մեկ եթերում է օրվա լուրերի թողարկումը: Այն այսօր էլ շարունակում է ապահովել հրատապ և օպերատիվ նորություններ: Բացի լրատավական գործունեությունից այն իրականացնում է մի շարք այլ գիտակրթական գործունեություններ ևս: Այսօր եթերում առկա 10 հաղորդումները բազմաբնույթ են՝ կրթական, մշակութային, ժամանցային և այլն: Ռադիո Ֆամայի հաղորդացանցի այսօրվա հաղորդումների մեծ մասի հեղինակները հենց ուսանողներն են՝ իրենց նոր մոտեցումներով ու երիտասարդական շնչով: Ֆաման նաև լավագույն հարթակ է հանդիսանաում Մանակավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստաառադիո լրագրության ամբիոնի ուսանողների համար՝ իրենց տեսական գիտելիքները գործնականում կիրառելու համար:
Մանկավաժական համալսարանի ռադիոն՝ Ֆաման, շարունակում է լինել առաջին համալսարանական ռադիոն՝ պահպանելով իր գործառույթները: Այն իրականացնում է բուհի, ինչպես նաև կրթամշակութային ոլորտի տեղեկատվության հաղորդում՝ օրվա մեջ 4 անգամ: Ռադիո Ֆաման հանդիսանում է լավագույն գործնական հարթակը Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառադիոլրագրության ամբիոնի ուսանողների համար և աչ միայն: Ռադիո Ֆամայի հաղորդացանցի այսօրվա բոլոր հաղորդումների հեղինակները շարունակում են լինել ուսանողները ՝ իրենց նոր մոտեցումներով ու երիտասարդական շնչով: Ռադիո Ֆամայի հաղորդումները միտված են բացահայտելու համալսարանի երիտասարդ սետաճագործողներին, անդրադառնալու ուսանողներին անհանգստացնող ու հետաքրքրող ամենատարբեր հարցերին: Ռադիո Ֆաման ունի բազմաֆունկցիոնալ, գունեղ, երիտասարդական կայք՝ այն պարբերաբար թարմացվում է և համալրվում է նոր տեղեկատվությամբ:

Ռադիո Ֆամայի իրազկեվածությունը գնալով ավելանում է նաև սոցիալական ցանցերում: Ներդրված աֆտոմատացված գերժամանակակից համակարգը հնարավորություն է տալիս 99,9 տոկոս հավաստիությամբ ապահովել ռադիոկայանի անխափան եթերը: Google Analytics-ի վերլուծության արդյունքում՝ 1 նտարվա կտրվածքով, ռադիո Ֆամայի կայքն ունեցել է ավելի քան 21.470 այցելու: Մեզ առցանց լսում են աշխարհի 140 երկրից, որոնց լավագույն հնգյակում են Հայաստան, ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա և Գերմանիա: Ամսվա կտրվածքով ռադիոն 7550 ունիկալ ունկնդիր ունի, յուրաքանչյուր ունկնդիր լսում է միջինը 55 րոպե, իսկ ամսական ընդհանուր լսումների քանակը կազմում է 18250:

31. «Մանկավարժական համալսարան» թերթ

«Մանկավարժական համալսարան» թերթի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Ամիսը երկու անգամ տպագրել «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը: Պաշտոնաթերթի միջոցով տեղեկատվական աջակցություն ցուցաբերել Համալսարանին, այլ կազմակերպություններին, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և Համալսարանի սովորողներին՝ ամրապնդելով փոխադարձ կապը, հրապարակելով ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերում քննարկվող կարևորագույն հարցերը, դրանցշուրջ անհրաժեշտ կարծիքի ձևավորումը, մանկավարժական գիտական մտքի, նորարարական մեթոդների հանրահռչակումը: «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի խմբագրությունն իր խնդիրների իրականացման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 1) հրապարակում է Համալսարանի գործունեությունը ներկայացնող հոդվածներ և ապահովում է անկողմնակալ տեղեկատվություն. 2) թերթում զետեղվող նյութերի, հոդվածների, հրապարակումների, հարցազրույցների մեջ բարձրացնում է հիմնահարցեր, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետությանը, ինչպես նաև սովորողների որակական ու մասնագիտական մակարդակի բարձրացմանը. 3) թերթի գործունեությունը կազմակերպելիս առաջնորդվում է «Մանկավարժական համալսարան» թերթի կանոնադրությամբ, կազմակերպում է թերթի արդյունավետ գործունեությունը, պատրաստում հոդվածներ և հետևում է հրապարակումների հավաստիությանը, 4) հետևում է թերթի ժամանակին և պատշաճ մակարդակով լույս ընծայման գործընթացին, հրատարակչությունում թերթի ձևավորմանը, ինչպես նաև տպարանից թերթը ժամանակին տեղ հասցնելուն, կազմակերպում է թերթի տարածման աշխատանքները Համալսարանում և Համալսարանից դուրս. 5) իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

2. Հաշվետու տարվա համար «Մանկավարժական համալսարան» թերթի պլանավորած աշխատանքները

Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Հունվար-դեկտեմբեր	Ստեղծել «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի անգլալեզու էլեկտրոնային հավելված:	«Մանկավարժական համասարան» պաշտոնաթերթի անգլալեզու էլեկտրոնային հավելվածի ստեղծումը դեռևս չի իրականացվել՝ ելնելով

		ֆինանսական միջոցներից: Ինչպես նաև այս պահին նպատակահարմար չենք գտնում, քանզի թերթն հիմնականում լուսաբանում է համալսարանում կատարված իրադարձությունները: Տվյալ իրադարձությունների մասին նյութեր տեղ են գտնում նաև համալսարանի կայքում, որը եռալեզու է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

բ/ տարեկան պլանի համաձայն

Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել թերթի հրապարակումը	Թերթը հրատարակվում է հայերեն լեզվով 1800 տպաքանակով, ամիսը երկու անգամ, երկու մամուլ ծավալով:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել թերթում անաչառ տեղեկատվության, ինչպես նաև համալսարանի ստորաբաժանումներին տեղեկատվական աջակցության ցուցաբերել և իրազեկել	«Մանկավարժական համասարան» պաշտոնաթերթը մինչ նյութերը հրապարակելն անպայման ճշտում է դրա հավաստիությունը, հանդես է գալիս անաչառ ու անկողմնակալ տեղեկատվության հրապարակմամբ: Անհրաժեշտության դեպքում համալսարանի բոլոր ստորաբաժիններին տրամադրում է տեղեկատվություն: Թերթի հրապարակվելուց հետո, թերթը բաժանվում է համալսարանի ստորաբաժանումներին՝ ապահովելով նրանց իրազեկվածությունը համալսրաանում և դրանից դուրս կատարված իրադարձությունների մասին:
Հունվար-դեկտեմբեր	Լուսաբանել համալսարանում կատարված իրադարձություններ	ՀՊՄՀ-ում իրականացված, ինչպես նաև կրթական կարևորագույն այլ ձեռնարկների մասին պատրաստում է սեփական հոդվածներ, որոնք էլ տպագրվում են թերթում: Թերթը լուսաբանում է Մանկավարժական համալսարանի առօրյան, ուսումնագիտական գործունեությունն ու տարաբնույթ միջոցառումները: Թերթի էջերում տեղ են գտնում նաև համալսարանի աշխատակիցների, ուսանողների և շրջաջանավարտների կողմից մասնակցած միջազգային ձեռնարկների մասին նյութեր:
Հունվար-դեկտեմբեր	Ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերում քննարկվող կարևորագույն հարցերի հրապարակում և դրանց շուրջ հասարակական կարծիքի ձևավորում	Լուսաբանվում է ռեկտորատի և գիտական խորհուրդների նիստերի ժամանակ ընդունված կարևորագույն որոշումները: Տվյալ որոշման վերաբերյալ թերթն անդրադառնում է նաև բուհի մասնագետների կարծիքին և վերջինները հրապարակում թերթում:
Հունվար-դեկտեմբեր	Բուհի դասախոսների և ուսանողներին	«Մանկավարժական համասարան» պաշտոնաթերթը մշտապես համագործակցում է դասախոսների և ուսանողների հետ: Թերթը հնարավորությունը է

	հնարավորություն տալ տպագրել հոդվածներ	տալիս նրանց տարբեր խորագրերի ներքո հանդես գալ բուհի հիմնախնդիրներին և անցուդարձին վերաբերող հրապարակումներով:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել թերթի խմբագրումը, սրբագրումը, ձևավորումը և տպագրությունը	Թերթի ստեղծման ողջ գործընթացը վերահսկում, իրականացնում է գլխավոր խմբագիրը, ով նաև սրբագրում է թերթը և հրատարակչությունում մասնակցում նրա ձևավորմանը: Թերթի աշխատանքներին կազմակերպմանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Լրատվության և հանրության հետ կապերի վարչության լրագրող Սոնա Արամյանը, ով մասնակցում է տարաբնույթ ձեռնարկների և պատրաստում նյութեր: Թերթը ձևավորվում է «Ֆենոմեն» հրատարակչությունում և տպագրվում «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը՝ համաձայն նրանց հետ կնքված պայմանագրերի:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել թերթի տարածումը համալսարանում	Թերթի հրապարակումից հետո, թերթը բաժանվում է համալսարանի բոլոր ստորաբաժիններին, ինչպես նաև 10 ֆակուկտետի դեկանատներին, ամբիոններին, ուսանողական խորհրդին և ողջ ուսանողությանը:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել թերթի տարածումը բուհից դուրս	Համալսարանական թերթը ինչպես տարածվում է համալսարանի ներսում, այպես էլ բուհից դուրս՝ Հայմամուլի միջոցով, մասամբ էլ խմբագրության կողմից: Հայմամուլի միջոցով՝ 250 և խմբագրության կողմից՝ 150 թերթ ուղարկվում է հանրապետության ղեկավար մարմիններին, դեսպանատներին, հիմնադրամներին, գրադարաններին, բուհերին, հանրապետության մի շարք դպրոցների՝ մասնավորապես ավագ, և տարբեր կառույցների:
Հունվար-դեկտեմբեր	Արխիվացնել թերթը	Թերթի յուրաքանչյուր համարից 10 հատ հրապարակվելուց հետո անպայման արխիվացվում է:
Հունվար-դեկտեմբեր	Ապահովել թերթի էլէկտրոնային տարբերակի տեղադրումը համալսարանի կայքում՝ www.aspu.am:	«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի հրապարակվելուց հետո, դրա PDF տարբերակը տեղադրվում է կայքի «Մանկավարժական համալսարան» բաժնում:
Հունվար-դեկտեմբեր	Իրականցվում են ընթացիկ աշխատանքեր	«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթն իրականցնում է ընթացիկ բազմաբնույթ գործունեություն՝ կապված թերթի լույսընծայման հետ, ինչպես նաև անհրաժեշտությունից ելնելով բուհի այլ ոլորտների առընչությամբ ևս իրականցվում են աշխատանքներ:

3. Հաշվետու տարում «Մանկավարժական համալսարան» թերթի պլանավորած աշխատանքների կատարողականը

«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը հրատարակվում է հայերեն լեզվով, 1800 տպաքանակով, ամիսը երկու անգամ, երկու մամուլ ծավալով:

Պաշտոնաթերթը տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում Համալսարանին, այլ կազմակերպություններին, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և Համալսարանի սովորողներին՝ ամրապնդելով փոխադարձ կապը: Թերթը հրապարակում է Համալսարանի գործունեությունը ներկայացնող հոդվածներ, ինչպես նաև ապահովում է գիտական և ռեկտորատի նիստերին ընդունված որոշումների հրապարակումը թերթում: Թերթը իրականացնում է թերթի տարածման աշխատանքները՝ համալսարանում և համալսարանից դուրս: Իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է նաև այլ գործառույթներ:
«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը իրականցնում է ամսվա մեջ 2 անգամ թերթի պատշաճ ու ժամանակին լույսընծայումը: Համալսարանում տեղի ունեցող բոլոր միջոցառումների մասին թերթը պատրաստում է հոդվածներ, որոնք խմբագրվում և հրապարակվում են թերթում: Տպագրվող տեղեկատվության հավաստիությունն նախապես ճշտվում է: Թերթը լուսաբանում է Մանկավարժական համալսարանի առօրյան, ուսումնագիտական գործունեությունն ու տարաբնույթ միջոցառումները: «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը մշատպես համագործակցում է դասախոսների և ուսանողների հետ: Թերթը հնարավորությունը է տալիս նրանց տարբեր խորագրերի ներքո հանդես գալ բուհի հիմնախնդիրներին և անցուդարձին վերաբերող հրապարակումներով: Թերթը ձևավորվում է «Ֆենոմեն» հրատարակչությունում և տպագրվում «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը: Թերթի հրապարակումից հետո, թերթը բաժանվում է համալսարանի բոլոր ստորաբաժիններին, ինչպես նաև 10 ֆակուլտետի դեկանատներին, ամբիոններին, ուսանողական խորհրդին և ողջ ուսանողությանը: Համալսարանական թերթը բուհից դուրս տարածվում է Հայմամուլի միջոցով, մասամբ էլ խմբագրության կողմից: Հայմամուլի միջոցով՝ 250 և խմբագրության կողմից՝ 150 թերթ ուղարկվում է հանրապետության ղեկավար մարմիններին, դեսպանատներին, հիմնադրամներին, գրադարաններին, բուհերին, հանրապետության մի շարք դպրոցների՝ մասնավորապես ավագ, և տարբեր կառույցների: Թերթի յուրաքանչյուր համարից նաև արխիվացվում է հատուկ պահվող արխիվում: Թերթը հասանելի է նաև էլեկտրոնային տարբերակով, այն հրապարակվելուց հետո տեղադրվում է համալսարանի կայքում՝ www.aspu.am, PDF տարբերակով: Անհրաժշետության դեպքում համալսարանի բոլոր ստորաբաժիններին թերթը տրամադրում է տեղեկատվություն:
«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը շարունակում է իր գործունեությունը թերթի կանոնադրության համաձայն, և իրականցնում է իր առջև դրված նպատակներն ու խնդիրները: Համալսարանի աշխատակազմն ու ուսանողները բուհում իրականցվող իրադարձությունների և ուշագրավ տեղեկտավության մասին տեղեկանում են թերթի էջերում: Թերթը նյութերի, հոդվածների, հրապարակումների, ը հարցազրույցների մեջ բարձրացնում է հիմնահարցեր, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետությանը, ինչպես նաև սովորողների որակական ու մասնագիտական մակարդակի բարձրացմանը: «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը մշատպես համագործակցում է դասախոսների և ուսանողների հետ՝ հնարավորությունը տալով նրանց տարբեր խորագրերի ներքո հանդես գալ բուհի հիմնախնդիրներին և անցուդարձին վերաբերող հրապարակումներով: Թերթը տարածվում է բուհում, նաև բուհից դուրս. Հայմամուլի միջոցով՝ 250 և խմբագրության կողմից՝ 150 թերթ ուղարկվում է հանրապետության ղեկավար մարմիններին,

դեսպանատներին, հիմնադրամներին, գրադարաններին, բուհերին, հանրապետության մի շարք դպրոցների՝ մասնավորապես ավագ, և տարբեր կառույցների: Թերթը ունի տարիների հարուստ արխիվ, նրա յուրաքանչյուր համար արխիվացվում է: Այն հասանելի նաև էլեկտրոնային տարբերակով՝ թերթի բոլոր համարները կարելի է կարդալ համալսարանի կայքում՝ pdf տարբերակով: Թերթը մշատպես արդիականացնում է իր խորագրերը, որտեղ առավել տեսանելի են Մանակավարժական համալսարանի զարգացումներն ու առաջընթացը:

32. Հաշվապահություն

1. Հաշվապահական հաշվառում

ԲՈՒՀ-ի հաշվապահական հաշվառումը վարվում է Հաշվապահություն բաժնի կողմից, որտեղ ընդգրկված են 8 աշխատակից՝ գլխավոր հաշվապահ և 7 հաշվապահ:

ԲՈՒՀ-ի հաշվապահական հաշվառումը վարվում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի համաձայն:

Կիրառվող հաշվային պլանը բովանդակային առումով համապատասխանում է Փոքր ու Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն կիրառվող հրապակված օրինակելի հաշվային պլանին:

Մինչ 2015թ. հաշվապահությունը վարվել է “ՀԾ-6.0” հաշվապահական ծրագրով, 2015թ.-ից ներդրվել է “ՀԾ-Ձեռնարկություն” տարբերակը՝ 15 համակարգիչների ցանցային միացումով, որից ՝ 9-ը հաշվապահությունում, 3-ը կադրերի բաժնում, 1-ական՝ գնումների, ֆինանսական բաժններում, կենտրոնական պահեստում:

2.Ֆինանսական հաշվետվողականության համակարգ

Հաշվապահությունը յուրաքանչյուր տարի պատրաստում և հրապարակում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի, Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ների) համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններ՝ օրենսդրության պահանջով: Հարկային հաշվետվությունները՝ Շահութահարկի տարեկան հաշվարկը, Ավելացված արժեքի հարկի ամսական հաշվետվությունները, Եկամտային հարկի ամսեկան հաշվետվությունները և այլ պահանջվող հաշվետվությունները ներկայացվում են հարկային օրենսդրությամբ սահմանված պահանջներին ու ժամկետներին համապատասխան:

Աշխատավարձի հաշվարկումները և վճարումները կատարվում են հիմնավորող պայմանագրերի, հրամանների, տաբելների և կատարողական ակտերի հիման վրա:

Ծախսերը և եկամուտները հիմնավորված են դրանց կատարման, ինչպես նաև նրանց դիմաց վճարման համապատասխան փաստաթղթերով: Հիմնական միջոցների ու պաշարների ձեռքբերումները փաստաթղթավորված են: Ծախսերը՝ ներառյալ վառելիքի գծով, կոմունալ վճարների գծով, վերանորոգումների գծով, իրականացվում են հաշիվ-ապրանքագրերի և այլ հիմնավորող փաստաթղթերի համաձայն:

ԲՈՒՀ-ում կանխիկ շրջանառությունը իրականացվում է գանձապահի և առհաշիվ անձի կողմից: Կանխիկ գործառույթները կատարվում են՝ հետևելով “Դրամարկղային գործառնությունների մասին” ՀՀ օրենքին:

Դրամարկղի մուտքի և ելքի օրդերները համարակալվում են տարվա սկզբից, գրանցվում են գլխավոր հաշվապահի կողմից և հաշվառվում գրանցամատյանում: Ելքի օրդերները կնքվում և ստորագրվում են ռեկտորի կողմից, մուտքի օրդերները ստորագրվում են վճարողի կողմից: Առհաշիվ հաշվետու անձը կատարված գնումների վերաբերյալ ներկայացնում է հաշվետվություն՝ կցելով գնումները հիմնավորող փաստաթղթերը: Առհաշիվ գումարների

վերաբերյալ հաշվետվությունները հաստատվում են ռեկտրի և գլխավոր հաշվապահի կողմից:
Գումարների մուտքերը հաշվառվում են նաև հարկային մարմինների կողմից հաստատված ՀԴՄ մեքենայի միջոցով՝ կտրոնը հատկացնելով գումարը մուտքագրողին:

3.Բանկային հաշիվներ ու գործառություններ
Բանկային գործարքները կատարվում են “Անելիք բանկ” ՓԲԸ, “Արարատբանկ” ԲԲԸ և “Կոնվերս բանկ” ՓԲԸ հաշվարկային հաշվների միջոցով՝ ռեկտոր և գլխավոր հաշվապահ համատեղ երկու ստորագրությամբ: Բանկային հաշիվները ՀՀ դրամով, ԱՄՆ Դոլարով, Ռուսական Ռուբլով և Եվրոյով: Վերջիններս օգտագործվում են արտասահմանյան դրամաշնորհների գծով ստացվող գումարների և արտասահմանյան գործուղումների ծախսումների նպատակով:
Հաշվապահությունում կիրառվում է էլեկտրոնային վճարման բանկային համակարգ: Վճարման հանձնարարագրերը հաստատվում են գլխավոր հաշվապահի և ռեկտորի կողմից: Բանկից քաղվածները ստացվում են ամենօրյա կտրվածքով: Գործարքները գրանցվում են ՀԾ-Ձեռնարկություն հաշվապահական ծրագրում՝ հաշվապահի կողմից: Գլխավոր հաշվապահը պարբերաբար համադրում է ՀԾ-Ձեռնարկություն ծրագրի գրանցումները և քաղվածքները:
Բանկային գործարքները, այդ թվում հաշվապահական գրանցումների ամփոփների փաստաթղթային հիմքերը պատշաճ դասակարգվում են և պահպանվում:

33. Ֆինանսների ծրագրավորման եվ վիճակագրության վարչություն

1. Վարչության հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Խնդիր 1. Կազմել Համալսարանի բյուջեի տարեկան ծրագիր.
Նպատակն է արդյունավետ, նպատակային և թափանցիկ կառավարել Համալսարանի ֆինանսական միջոցները, որոնք հիմք են հանդիսանում Համալսարանի կրթական, գիտահետազոտական ծրագրերի իրականացման և ուսումնական միջավայրի ապահովման համար՝ հաշվի առնելով ռազմավարական ծրագրում նշված խնդիրների և նպատակների առաջնայնությունը:

Խնդիր 2. Կազմել Համալսարանի բյուջեի իրականացման հաշվետվություն /կատարողական/
Նպատակն է հաշվետու լինել Համալսարանի արտաքին և ներքին շահառուներին, թե ինչպես և ինչ ուղղություններով են տնօրինվել և օգտագործվել Համալսարանի ֆինանսական ռեսուրսները: Նախորդ տարվա փաստացի ծախսերը կարող են օգտագործվել նաև բյուջեի նախահաշվի որոշ հոդվածների՝ ներառյալ չնախատեսված ծախսերի հաջորդ տարվա դրամական մուտքերի ու ելքերի պլանավորման գործընթացում:

Խնդիր 3. Կազմել Համալսարանի հաստիքացուցակը
Նպատակն է առավել արդյունավետ և թափանցիկ կառավարել մարդկային և ֆինանսական ռեսուրսները: Հաստիքացուցակի առկայությունը հնարավորություն է տալիս Համալսարանին ոչ էական շեղումներով պլանավորել աշխատավարձի ֆոնդը, ինչպես նաև վերանայել և վերակազմավորել Համալսարանի ենթակառուցվածքներն ու ստորաբաժանումները՝ իրենց համապատասխան հաստիքակազմով:

Խնդիր 4.Կազմել վիճակագրական հաշվետվություններ.

Նպատակն է ունենալ պարբերաբար թարմացված տեղեկատվական բազա՝ վիճակագրական տվյալների շտեմարան, որից կարող են օգտվել Համալսարանի բոլոր շահառուները: Համալսարանի վիճակագրական տվյալների հասանելիությունը կնպաստի կառավարմանն առնչվող որոշումների ընդունման արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, վիճակագրական տվյալները կարող են օգտագործվել ԲՈՒՀ-ի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց գործունեությունը մշտադիտարկելու, ինքնավերլուծելու, գնահատելու և բարելավելու, ինչպես նաև ԲՈՒՀ-ի հիմնական խնդիրները բացահայտելու, համեմատական առավելություններն ու մրցակցային դիրքը գնահատելու նպատակով: Վերը նշվածը հենք է հանդիսանում ԲՈՒՀ-ի զարգացման տեսլականը կառուցելու համար:

2. Հաշվետու տարվա համար Վարչության պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Խնդիր 3.2, քայլ 2 Շարունակել ուսանողների դասախոսների և աշխատողների թվաքանակների միջև արդյունավետ հավասարակշռման գործընթացը՝ նպատակ ունենալով ապահովելու հստակ հիմնավորված որակը չխաթարող հաստիքախնայողական քաղաքականություն:	Յուրաքանչյուր ուս. տարվա վերջում ֆակուլտետները և համահամալսարանական ամբիոնները ներակայացնում են հաջորդ ուս. տարվա դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հաշվարկվում է ուսանուղների թվաքանակը, կանխատեսում- հաշվարկներ է կատարվում առաջին կուրս ընդունվողների թվաքանակի վերաբերյալ՝ հիմքում ունենալով դիմորդների թվաքանակը: Այս ամենը հիմք է հանդիսանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրույքների ձևավորման համար: Վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի հաստիքացուցակը վերանայվում է ուս. տարվա սկզբներին՝ հաշվի առնելով ռազմավարական ծրագրի ուղղությունները, ուսանողության թիվը, ինչպես նաև կրթական և գիտահետազոտական ծրագրերը սպասարկող ենթակառուցվածքների քանակը: Կատարվող աշխատանքների արդյունքում ուսանող-դասախոս քանակական հարաբերակցությունը 12:1 է, իսկ ուսանող-աշխատող քանակական հարաբերակցությունը՝ մոտավորապես 8:1 /այդ հարաբերակցությունների սահմանաչափերը նշված են նաև ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանում/: Ցուցանիշները նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ: Ինչը վկայում է այն մասին, որ բուհը վարում է որակը չխաթարող, հաստիքախնայողական քաղաքականություն:

Խնդիր 5.1, քայլ 2 Ներմուծել Համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ և այն ընդունել որպես հիմք Համալսարանի ենթակառուցվածքների և այլ ստորաբաժանումների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվության համար:	Համալսարանի հետագա գործունեությունն ավելի նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպելու, զարգացման ռազմավարությունն ուղղորդելու համար՝ մշակվում են Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ), որոնք ապահովում են ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և առանձին գործողությունների գործնականությունն ու դրանց կապը Համալսարանի արտաքին և ներքին միջավայրի կարևորագույն տարրերի հետ: ԳԱՑ-երի ցանկը կազմելիս որոշվում են Համալսարանի գործունեության հիմնական ոլորտները և յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվում են Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների (2013-2018թթ.) համար: Աշխատանքները կավարտվեն 2018 թվականին:
Խնդիր 5.2, քայլ 1 Ստեղծել տեղեկատվական-վերլուծական համակարգ՝ կառավարմանն առնչվող որոշումների արդյունավետության բարձրացման նպատակով:	Պարբերաբար իրականացվում է տեղեկատվական-վերլուծական ցուցանիշների հաշվարկում, համադրում, վերլուծություն և գնահատում, սակայն Համալսարանում դեռ բացակայում է միասնական վիճակագրական տվյալների էլեկտրոնային շտեմարան-ռեգիստր, որը հասանելի կլիներ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին: Այդ ուղղությամբ կատարվում են աշխատանքներ, որոնք պլանավորվում է ավարտին հասցնել հաջորդ տարի:
Խնդիր 5.4, քայլ 4 Մշակել բյուջետային ցուցանիշների համակարգ՝ ըստ գործունեության բնագավառների և զարգացման ուղղությունների:	Կատարվում է բյուջեի ցուցանիշների մշակում, վերլուծություն, համադրում ՝ ըստ պլանավորման և փաստացի կատարման:
Խնդիր 5.4, քայլ 5 Իրականացնել տարեկան բյուջեի պլանավորում՝ հաշվեկշռված բյուջետային ցուցանիշների հիման վրա:	Բյուջեի նախահաշվի կազմման համար հիմք են հանդիսանում նաև տվյալ տարվա բյուջեի եկամուտների և ծախսերի որոշ հոդվածների և ենթահոդվածների կատարողականները: Դրանք հիմնականում վերաբերվում են հարաբերական կայուն ծախսերին և պետական ֆինանսավորումից ստացված մուտքերին:

բ/ տարեկան պլանի համաձայն

Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին

Փետրվար, դեկտեմբեր	Կազմել բյուջեի՝ կատարողական՝ 11 և 12 ամիսների կտրվածքով /01.01.2016-31.12.2016 և 01.01.2017-01.12.2017/:	Նշված ժամանակաշրջանների համար ներկայացվել են փաստացի կատարված ծախսերը և ստացված եկամուտները՝ համապատասխան հոդվածներով և ենթահոդվածներով:
Հունվար-դեկտեմբեր	Համեմատել բյուջեի հոդվածների փաստացի ցուցանիշները պլանային ցուցանիշների հետ:	Յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, որոշ դեպքերում՝ նաև ամսական կտրվածքով, համեմատվել են բյուջեի մուտքերի և ելքերի հոդվածների փաստացի ցուցանիշները պլանային ցուցանիշների հետ: Ուսումնասիրվել և վերլուծվել են Համալսարանի դրամական հոսքերի վրա ազդող ներքին և արտաքին գործոնները:
Հունվար-դեկտեմբեր	Հաստիքացուցակի վերանայում և կազմում:	Ելնելով կառավարման արդյունավետությունից, ռեսուրսների օգտագործման նպատակայնությունից և հասցեականությունից՝ պարբերաբար վերանայվել է Համալսարանի կառուցվածքը, կրթական, գիտահետազոտական ծրագրերը սպասարկող ստորաբաժանումների, ենթակառուցվածքների քանակը, որի հիման վրա Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ կազմվել են հրամանների նախագծեր՝ ստորաբաժանումների վերակազմավորման, հաստիքների բացման, կրճատման կամ վերանվանման վերաբերյալ: Վերանայվել են որոշ ստորաբաժանումների աշխատողների աշխատավարձերը՝ դրանք համապատասխանեցնելով իրենց նոր գործառույթներին և ծանրաբեռնվածությանը: Կատարված փոփոխությունների հիման վրա կազմվել է նոր հաստիքացուցակը:
Հոկտեմբեր - դեկտեմբեր	Բյուջեի նախահաշվի կազմում:	Վերլուծվել են Համալսարանի եկամուտների և ծախսերի ձևավորման վրա նշանակալի ազդեցություն ունեցող իրադարձությունները: Ուսումնասիրվել են կատարվելիք ծախսերի նպատակայնությունը և անհրաժեշտությունը՝ հիմքում ունենալով բյուջեի կատարողականը, ռազմավարական ծրագիրը, առանձին ենթակառուցվածքների և ստորաբաժանումների հայտերի հիման վրա նյութատեխնիկական մատակարարման և գնումների համակարգման բաժնի կողմից կազմված ապրանքների և ծառայությունների գնումների պլանը: Կատարվել են նաև կանխատեսում-հաշվարկներ՝ դրամական հոսքերի վերաբերյալ:
Հունվար - դեկտեմբեր	Ուսանողների, ասպիրանտների, հայցորդների, նախապատրաստական դասընթացների ունկնդիրների	Առկա և հեռակա ուսուցման համակարգում սովորող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, ասպիրանտների ընդունման, ազատման, հեռացման տեղափոխման, ընդհատման, վերականգնման հրամանների հիման վրա կազմվել է ուսանողների ամսական շարժը, հաշվարկվել միջին ամսական

	թվաքանակի հաշվառում, ամսական շարժի կազմում և վերջիններիս ուսման վարձերից ձևավորվող եկամուտների հաշվեգրում:	թվաքանակը և հաշվապահություն ներկայացվել հաշվարկներ՝ վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձից ձևավորված եկամուտների վերաբերյալ:
Հունվար	Արտոնությամբ և պետպատվեր համակարգում սովորող ուսանողների ֆինանսավորման հայտի ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն:	Ներկայացվել է անհրաժեշտ ֆինանսավորման հայտ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվճար ուսման արտոնությունից օգտվող ուսանողների թվաքանակի և նրանց ուսման վարձերի փոխհատուցման չափի վերաբերյալ՝ ըստ առանձին մասնագիտությունների և վարձավճարի չափի: Ներկայացվել են նաև չորս տարվա կտրվածքով տվյալներ բուհն ավարտողների թվակազմի վերաբերյալ, ովքեր սովորում են պետպատվերի շրջանակներում:
Հունվար և Հոկտեմբեր	Պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողական համակազմի վերաբերյալ տարեկան և իննամսյա հաշվետվության կազմում և ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն:	Կազմվել և ներկայացվել է հաշվետվություն ուսանողական համակազմի, միջին տարեկան թվաքանակի և շարժի վերաբերյալ ըստ ստորև նշվածի՝ • առանց ծնողական խնամքի • 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող • զոհված զինծառայողի երեխա և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած • պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված • կրթաթոշակ ստացող • օտարերկրացի:
Փետրվար	Պետական վիճակագրական հաշվետվություն Ձև ԳՄ 1 կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Հավաքագրվել են վիճակագրական տվյալներ, որոնցով կազմվել է հաշվետվություն մագիստրանտների, ասպիրանտների, դոկտորանտների. գիտության թեկնածուի գիտական աստիճան հայցողների թվաքանակի վերաբերյալ՝ ըստ կուրսերի, ուսման ձևերի, գիտության ճյուղերի, մասնագիտությունների, քաղաքացիության, սեռի:
Հոկտեմբեր	Պետական վիճակագրական հաշվետվություն Ձև ԳՄ 3 կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Հավաքագրվել են վիճակագրական տվյալներ, որոնցով կազմվել է հաշվետվություն • պետպատվեր և վճարովի համակարգում սովորող բակալավրիատի ուսանողների թվաքանակի բաշխվածության վերաբերյալ՝ ըստ ուսուցման ձևերի, կուրսերի, մասնագիտությունների, ուսման վարձաչափերի, կրթաթոշակի չափերի, ընդունելության արդյունքների, ուսուցման լեզվի, քաղաքացիության, տարիքի, սեռի:

		• Հիմնական և համատեղող պրոֆեսորադասախոսական, գիտական, վարչական, ուսումնաօժանդակ, սպասարկող աշխատակազմի բաշխվածությունը ըստ գիտական աստիճանի, կոչման, դրույքաչափի, զբաղեցրած պաշտոնի, տարիքի և սեռի: Հաշվետվությունում ներկայացվել են նաև տվյալներ ուսումնալաբորատոր շենքերի օգտագործման, ֆինանսական միջոցների ստացման և օգտագործման վերաբերյալ:
Հունվար – դեկտեմբեր ,փետրվար	Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին պետական վիճակագրական հաշվետվության կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Կազմվել և ներկայացվել է հաշվետվություն աշխատողների միջին ամսական թվաքանակի, /առանց համատեղության/ և միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ, ինչպես նաև համատեղությամբ , կապալային կամ քաղիրավական պայմանագրերով աշխատողների թվաքանակի և աշխատավարձերի վերաբերյալ: Տարեկան կտրվածքով, բացի վերը նշվածից, ներկայացվել են վիճակագրական տվյալներ աշխատուժի վրա Համալսարանի կատարած ծախսերի, հաշվարկված աշխատավարձի չափի, աշխատողների և աշխատատեղերի շարժի վերաբերյալ:
Մարտ	Պետական վիճակագրական հաշվետվություն (Գիտություն ձև 1) կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Գիտահետազոտական կենտրոնի աշխատակիցների հետ համատեղ կազմվել է հաշվետվություն գիտական աշխատանքների կատարման մասին, որտեղ ներկալացվել են գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված համախառն ծախսերը՝ ըստ գիտության ճյուղերի, ներքին ընթացիկ ծախսերը՝ ըստ աշխատանքների տեսակի, գիտահետազոտական աշխատանքներ և մշակումներ կատարող աշխատողների թվաքանակը՝ ըստ կրթության ձևի, տարիքի, սեռի, գիտական աստիճանի, մասնագետ հետազոտողների բաշխումն՝ ըստ գիտության ճյուղերի: Ներկայացվել են նաև տվյալներ ֆինանսական միջոցների ստացման և օգտագործման մասին::
Հունվար, մայիս	Պայմանագրերի կազմում և ներկայացում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե:	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի ղեկավարների հետ համատեղ, սահմանված ձևաչափով, կազմվել են պայմանագրեր՝ իրենց կից հավելվածներով, որտեղ եռամսյակային կտրվածքով ներկայացվել է ծրագրի նախահաշիվը:
Հունվար-դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջեից Համալսարանում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ներառված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին	Կազմվել և ներկայացվել են ֆինանսավորման հայտեր ծրագրերում ընդգրկված և օրենքով սահմանված կարգով հավելավճար ստացող գիտաշխատողների ընդհանուր թվաքանակի վերաբերյալ՝ ըստ գիտական աստիճանի, վկայագրի շնորհման տարեթվի, աշխատավարձի չափի:


	հավելավճարների տրամադրման պայմանագրի, հայտերի կազմում և ներկայացում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե:	

3. Հաշվետու տարում Վարչության պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Վարչությունը հաշվետու տարում կատարել է հետևյալ աշխատանքները՝ կազմել է Համալսարանի բյուջեի նախահաշիվը, կատարողականը, հաստիքացուցակը, վերլուծել է Համալսարանի դրամական հոսքերի վրա ազդող ներքին և արտաքին գործոնները: Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմել և ներկայացրել է պահանջվող հաշվետվությունները համապատասխան պետական կառույցներին և Համալսարանի շահառուներին: Ուսումնասիրել է Համալսարանի բյուջեի վրա ազդեցություն ունեցող նշանակալի իրադարձությունները՝ դրանք հաշվի առնելով բյուջեի նախահաշվի կազմման գործընթացում: Կատարել է կանխատեսում-հաշվարկներ՝ դրամական հոսքերի վերաբերյալ: Իրականացրել է Համալսարանի գործունեությանն առնչվող վիճակագրական տվյալների հավաքագրում, համադրում, ամփոփում, վերլուծական ցուցանիշների մշակում: Վարչությունը հավաքագրել և հաշվարկել է հետևյալ հիմնական վիճակագրական տվյալները՝ • աշխատողների ընդհանուր թվաքանակը, այդ թվում հիմնական, համատեղությամբ, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական, տնտեսական, գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների ինչպես նաև կապալային կամ քաղհրավական պայմանագրով աշխատանք կատարողների թիվը և նրանց վարձատրության չափը, • աշխատողների բաշխվածությունը՝ ըստ սեռի, տարիքի, զբաղեցրած պաշտոնի, գիտական աստիճանի և կոչման, • կադրերի հոսունությունը՝ ընդունված/ազատված, • ուսանողների թվաքանակի բաշխվածությունը՝ ըստ ուսուցման ձևի, մարզերի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, տարիքի, սեռի, ուսման վարձի չափերի, Կատարել է վերլուծություններ հավաքագրված վիճակագրական տվյալների, այդ թվում՝ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալների կիրառմամբ: Կազմել է ուսանողական թվակազմի և աշխատակազմի ամենամսյա շարժը: Ամսական կտրվածքով հաշվարկել է վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողներից ստացվող պլանային եկամուտները: Կազմել է հաշվետվություններ գարնանային և ձմեռային քննաշրջանի, ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների, ուսանողների առաջադիմության վերաբերյալ; Կազմել և ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե է ներկայացրել ՀՀ պետական բյուջեից Համալսարանում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների հավելավճարների տրամադրման հայտերը: Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի ղեկավարների հետ համատեղ, սահմանված ձևաչափով, կազմել է պայմանագրեր, կից հավելվածների՝ բյուջեի նախահաշիվ և ներկայացրել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:


Կազմել է Վարչության գործունեությանը վերաբերող հրամանների (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողների անվճար ուսուցման համակարգ տեղափոխման, նոր հաստիքի հատկացման, կրճատման. ստորաբաժանումների վերակազմավորման, գիտաշխատողների ընդունման, ազատման, պարգևատրման և այլն) նախագծերը: Պրոռեկտորների հանձնարարությամբ նշված ժամկետներում պատասխանել է ՀՀ ԿԳ նախարարության և այլ պետական և ոչ պետական կառույցների ու կազմակերպությունների գրություններին:
ինքնագնահատում Վերը թվարկված աշխատանքները՝ ըստ տարեկան պլանի, կատարվել են սահմանված ժամկետներում, պատշաճ ձևով: Ըստ ռազմավարական պլանի որոշ աշխատանքներ մասամբ տեղափոխվել են հաջորդ տարի: Հիմք ընդունելով հաշվետու տարվա կատարված աշխատանքների վերջնարդյունքները՝ վարչությունն իր գործունեությունը գնահատում է բավարար:

գծապատկեր 1



Հաշվարկները ցույց են տալիս, որ այլ հավասար պայմաններում, 300 մլն դրամից պակաս տարեվերջի դրամական մնացորդը /ֆինանսական կայունության ֆոնդ/ կարող է ռիսկային գործոնների պատճառ հանդիսանալ համալսարանի համար: Վերջին 5 տարիների ընթացքում դրամական միջոցների մնացոդը՝ առանց միջազգային ծրագրերից ստացված գումարների, 400մլն դրամից պակաս չի եղել՝ ինչը դրական ցուցանիշ է:


Գծապատկեր 2



Գծապատկերից երևում է, որ 2013 և 2016 թվականներին դրամական ելքերը ավելի շատ են եղել քան մուտքերը: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ MAHATMA ծրագրի շրջանակներում իրականացվող ծախսերի մեծ մասը կատարվել են 2013-ին և 2016-ին, իսկ ծրագրից մուտքեր չեն եղել այդ ժամանակաշրջանում:


Գծապատկեր 3

2016 թ դրամական ելքերի բաշխվածությունը




Գծապատկեր 4

Դրամական ելքերի բաշխվածությունը առ 01.12.2017թ.




Գծապատկեր 5

2016թ.դրամական մուտքերի բաշխվածությունը




Գծապատկեր 6

Դրամական մուտքերի բաշխվածությունը առ 01.12.2017թ.




Համալսարանի ֆինանսական միջոցների զգալի մասը ձևավորվում է վճարովի համակազմում սովորող ուսանողների ուսման վարձավճարներից: Վերջին տարիներին այլ եկամուտները ընդհանուր մուտքերում ավելացել են, ինչը հիմնականում պայմանավորված է միջազգային դրամաշնորհային ծրագրերից մուտքերի ավելացմամբ:

Գծապատկեր 7




գծապատկեր 8



Գծապատկերից երևում է, որ ուսանողների թվի նվազմանը զուգահեռ նվազել է նաև բարձրագույն կրթության վճարովի համակարգի ուսանողների վարձավճարներից ձևավորված դրամական մուտքերը:

Գծապատկեր 9



Վճարված աշխատավարձի տեսակարար կշիռն դրամական մուտք և ելքերի կազմում %ային արտահայտությամբ

Աղյուսակ 1

%ային արտահայտությամբ	2013	2014	2015	2016	01.12.2017
Վճարված աշխատավարձ/դրամական մուտքեր	58%	53%	77%	82%	68%
Վճարված աշխատավարձ/դրամական ելքեր	56%	58%	77%	76%	76%

Եկամուտների, ծախսերի և վճարված աշխատավարձի դինամիկան տոկոսային արտահայտությամբ

Աղյուսակ 2

	2014 համեմատած 2013	2015 համեմատած 2014	2016 համեմատած 2015	01.12.2017 համեմատած 2016	2016 համեմատած 2013
Դրամական մուտքեր	2%	(5%)	(5%)	(5%)	(8%)
Դրամական ելքեր	(10%)	2%	3%	(21%)	(6%)
Աշխատավարձի գծով ծախս	(7%)	36%	1%	(20%)	28%

Աղյուսակ 2-ից երևում է, որ վերջին հինգ տարիների ընթացքում դրամական մուտքերը նվազել են՝ ինչը հիմնականում պայմանավորված է վճարովի ուսուցման ծառայությունից մուտքերի նվազմամբ: Քանի որ 2017թ. չի ավարտվել, ապա 2017թ-ը. համեմատած 2016թ.-ի տվյալները ենթակա են փոփոխման:


Հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարների ծավալ/պետ բյուջեից ֆինանսավորման հարաբերակցություն /հազար դրամ/

Աղյուսակ 3

	2013	2014	2015	2016	01.12.2017
ՀՊՄՀ-ի կողմի պետական բյուջե վճարած հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ՝	720 645	823 297	866 856	848 451	766 734
Պետական բյուջեից ֆինանսավորման չափը	570 730	698 861	837 556	808 078	705 339
Հարկերի ծավալ/պետ բյուջեից ֆինանսավորում	1,3	1,2	1,0	1,0	1,1


Գծապատկեր 10

2017թ. բարձրագույն կրթության վճարովի համակարգից ձևավորված համախառն եկամուտն՝ ըստ ֆակուլտետների՝ %ային բաշխվածությամբ




Գծապատկեր 11

2017թ. ուսանողների բաշխվախությունը ըստ ֆակուլտետների




Գծապատկեր 12




Ընդամենը ուսանողների թիվը վերցված է յուրաքանչյուր ուս. տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ:

Գծապատկեր 13




Գծապատկեր 14

Ավարտած ուսանողների թվաքանակի դինամիկան՝
ըստ ուսուցման ձևերի



Գծապատկեր 15

Ընդունված և ավարտած ուսանողների թվաքանակի
դինամիկան՝ ըստ ուս տարիների



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ		
Ե Կ Ա Մ ՈՒ Տ Ն Ե Ր Ի ԵՎ Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն ԱՌ 01.12.2017թ.		
Դրամական միջոցների ներհոսք		
Դրամական միջոցների մուտքերի հոդվածներ /եկամուտներ/		Գումար /հազար դրամ/
1	Սկզբնական մնացորդ առ 01.01.2017թ. դրությամբ	627 723
1.1	Այդ թվում միջազգային ծրագրերի մնացորդ	218 635
2	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	2 303 536
2,1	Առկա բակալավրիատ	1 114 062
2,2	Հեռակա բակալավրիատ	868 002
2,3	Առկա մագիստրատուրա	233 320
2,4	Հեռակա մագիստրատուրա	59 783
2,5	Նախապատրաստական բաժին	3 098
2,6	Ասպիրանտուրա և հայցորդներ	18 207
2,7	Չպարզաբանված ուսման վճար	7 065
3	Եկամուտներ ենթակառուցվածքներից	19 162
3,1	Աղավնաձորի ուսումնական բազա	19 162
4	Այլ եկամուտներ	464 531
4,1	Տարածքների սպասարկման գումար	12 436
4,2	Դրամաշնորհներ և միջազգային ծրագրեր	350 285
4,3	Քնությունների կազմակերպում	37 973
4,4	Արտարժույթի վերագնահատումից եկամուտներ	35 970
4,5	Տոկոսային եկամուտ	12 869
4,6	Այլ եկամուտներ	14 998
Ընդամենը եկամուտներ արտաբյուջեից		2 787 230
5	Եկամուտներ պետական բյուջեի ֆինանսավորումից	705 339
Եկամուտներ բարձրագույն կրթության ծառայությունից		517 545
5,1	Բարձրագույն կրթության ծառայությունից	510 085
այդ թվում՝ կրթաթոշակ		35 889
5,2	Հետբուհական կրթության ծառայությունից	7 460
այդ թվում՝ կրթաթոշակ		1 134
5,3	Գիտության ֆինանսավորում	67 906
5.3.1	Բազային	41 082
5.3.2	Թեմատիկ	15 099
5.3.3	Գիտաշխատողների հավելավճար	11 725
5,4	Ենթակառուցվածքներ	119 888
5.4.1	Հենակետային վարժարան	65 031
5.4.2	N 57 դպրոց	54 253
5.4.3	Տարակարգեր	604
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		3 492 569
Սկզբնական մնացորդ առ 01.12.2017թ. դրությամբ		972 380

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ		
Ե Կ Ա Մ ՈՒ Տ Ն Ե Ր Ի ԵՎ Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն ԱՌ 01.12.2017		
Դրամական միջոցների արտահոսք		
Դրամական միջոցների ելքերի հոդվածներ /ծախսեր/		Գումար /հազար դրամ/
1	Աշխատավարձ՝այդ թվում	2 389 177
1,1	Եկամտային հարկ	679 210
1,2	Նպատակային նպաստ	44 756
1,3	Արհմիության գումար	25 030
1,4	Դրոշմանիշային վճար	13 357
1,5	Զուտ աշխատավարձ	1 626 824
2	Կրթաթոշակ՝ այդ թվում	43 406
2,1	Անվանական կրթաթոշակ	2 130
3	Ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսեր	258 954
3,1	Գրասենյակային ծախսեր	5 290
3,2	Տնտեսական ծախսեր	9 482
3,3	Ուսումնական ծախսեր	45 484
3,4	Ուսումնական պրակտիկա	12 942
3,5	Սննդի ձեռք բերման ծախսեր՝ այդ թվում Աղավնաձորի ուսումնամարզական բազա	13 054
3,6	Տարածքի մաքրության սպասարկման ծախսեր	45 740
3,7	Տրանսպորտային ծախսեր՝ այդ թվում՝ վառելիքի ձեռք բերման ծախսեր	13 592
3,8	Գովազդային, մարքեթինգային ծախսեր	3 436
3.9	ՀԾ ծրագրի սպասարկում	3 758
3.10	Աուդիտորական և խորհրդատվական ծառայություն	4 980
3,11	Աշխատողների բժշկական ապահովագրության գումար	83 051
3.12	Այլ ապրանքներ, նյութեր և ծառայություններ	18 144
4	Գործուղման ծախսեր այդ թվում՝	81 173
4,1	միջազգային դրամաշնորհային ծրագրերով	66 971
5	Ներկայացուցչական ծախսեր	7 601
6	Գրադարանային ծախսեր	6 799
7	Կոմունալ ծախսեր	96 023
7,1	Էլ. էներգիայի ծախսեր	49 919
7,2	Գազի, ջեռուցման ծախսեր	37 837
7,3	Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր	5 072
7,4	Աղբահանություն և դեռատիզացիա	2 778
7,5	Այլ կոմունալ ծախսեր	418
8	Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	18 466
8,1	Հեռախոսակապի ծախսեր	8 413
8,2	Ինտերնետ կապի ծախսեր	8 053
8,3	Փոստի և հեռահաղորդակցության այլ ծախսեր	2 001
9	Դրամաշնորհային ծախսեր՝ այդ թվում միջազգային	55 097
10	Հիմնական միջոցներ	70 858
10,1	Էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ	18 368
10,2	Գույք	18 757

10,3	Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ այլ նյութեր	33 733
12	Ընթացիկ վերանորոգման ծախսեր	4 142
13	Կապիտալ վերանորագման ծախսեր	116
13,1	Նախագծային ծախսեր	116
14	Հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ	29 411
15	Այլ ծախսեր	86 688
15,1	Համահայկական երիտասարդական հիմնադրամ	49 000
15,2	Վերելակի, գազասարքի, ՀԴՄ-ի տեխսպասարկման , շին. տեխ. հսկ. ծախսեր	6 214
15,3	Դրամական օգնություններ	4 702
15,4	Ուս. խորհուրդ	1 442
15,5	Արտարժույթի վերագնահատումից ծախսեր	9 753
15,6	Այլ ծախսեր	15 575
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		3 147 912

34. Տնտեսական վարչության գործունեության

1. Վարչության հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Տնտեսական վարչության հիմնական խնդիրները ներառում են բոլոր մասնաշենքերում եղած գույքի խնայողաբար օգտագործումը և պահպանումը, ֆակուլտետների կողմից ծագող տարբեր բնույթի տնտեսական հարցերի օպերատիվ լուծումը, տրանսպորտային միջոցների նպատակային օգտագործումը, հակահրդեհային միջոցառումների իրականացումը, ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացումը և այլն:
2017թ հաշվետու ժամանակահատվածում տնտեսական վարչության կողմից, բացի ամենօրյա ընթացիկ աշխատանքներից, իրականացվել են նաև կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ ընդհանուր թվով 18 լսարաններում, այդ թվում՝ վեցը թիվ 1 մասնաշենքում, 12-ը թիվ 6 մասնաշենքում, ինչպես նաև ″Սփյուռք″ կենտրոնում,: Իրականացվել են նաև մեծ ծավալի էլեկտրամոնտաժային աշխատանքներ:

2. Հաշվետու տարվա համար Վարչության պլանավորած աշխատանքները տարեկան պլանի համաձայն

Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Մշտապես	Վերելակների անվտանգ աշխատանքի հսկողություն	Թիվ 1 մասնաշենքի 4 վերելակները
Մայիս - հոկտեմբեր	Կաթսայատների և ջեռուցման ներքին ցանցի ձմռան նախապատրաստական աշխատանքներ	Թիվ 1-6 մասնաշենքերում, դպրոցում և Աղավնաձորի ուս. բազայում
Մշտապես	Հակահրդեհային միջոցառումներ	Թիվ 1-6 մասնաշենքերում, դպրոցում և Աղավնաձորի ուս. բազայում
Մշտապես	Ուսումնական տարվա ընթացքում տրանսպորի բաժնի մեքենաների շահագործում	Ուսանողներին Հայաստանի պատմամշակութային վայրեր ճանաչողական այցերի պրակտիկայի վայրեր, լողավազան, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ պատմամշակութային վայրեր

		ուսումնակ-ճանաչողական նպատակով տեղափոխումը

2. Հաշվետու տարում Վարչության պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Կոսմետիկ վերանորոգումներ են կատարվել ավագ դպրոց – վարժարանի և թիվ 57 հիմնական դպրոցի բոլոր 4 հարկերում, ներառելով նոր բացված դասասենյակները, ուսուցչանոցը, մասամբ նախասրահը և ճաշարանը: Բացի այդ, նշված ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման եղանակով իրականացվել են 7492346 դրամի տարբեր բնույթի աշխատանքներ, որոնք սակայն պլանավորված չէին և առաջացել էին ընթացքում /տանիքների մաքրում սառցե բեկորներից, ջրահորերի և կոյուղագծերի մաքրում խցանումներից, շենքերի արտաքին պատերից հեռացած տուֆե քարերի ամրացում, կոտրված աստիճանների փոխարինում, Աղավնաձորի ուսումնական բազայի 7 սենյակների նորոգում, համալսարանի սպորտ դահլիճի հատակի ներկում և այլն: /Մանրամասն տեղեկանքը կցվում է/: Սկսված են և մինչև տարվա վերջ կավարտվեն թթ 3, 4 և 6 –րդ մասնաշենքերի տանիքների և ջրատարների էլ տաքացման սարքերի մոնտաժային աշխատանքները: Տրանսպորտի բաժնի 2 ավտոբուսները, 2 միկրոավտոբուսները և 5 թեթև մարդատար մեքենաները նշված ժամանակաշրջանում շահագործվել են ուսանողներին պրակտիկայի վայր, լողավազան, ՀՀ և ԼՂՀ պատմամշակութային վայրեր տեղափոխելու, ինչպես նաև համալսարանի այլ բնույթի կարիքների համար, ծախսելով ընդհանուր առմամբ 18000/տասնութ հազար/ լիտր բենզին և 3000/երեք հազար/ լիտր դիզելային վառելանյութ: Վարչության կողմից յուրաքանչյուր տարի պլանավորվում են ծավալուն աշխատանքներ, ինչպիսիք են վերելակների անվտանգ շահագործման նպատակով կանխարգելիչ գործողությունների իրականացումը, կաթսայատների ձմռան նախապատրաստման աշխատանքները, ջեռուցման ներքին ցանցի ուսումնասիրությունը և անհրաժեշտության դեպքում վնասված մասերի փոխարինումը, հակահրդեհային միջոցառումների իրականացումը և այլն:
Կատարման վերլուծություն Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչության առջև ծագած ամենօրյա ընթացիկ չնախատեսված հարցերը նույնպես պահանջում էին որոշակի ժամանակ և ֆինանսական ներդրումներ, պլանավորված խոշոր միջոցառումների իրականացման աշխատանքները հաջողվեց կատարել միայն 75-80%:
ինքնագնահատում Հաշվի առնելով վարչության կողմից իրականացված աշխատանքների ընդհանուր ծավալը, վարչության իրականացրած գործունեությունը գնահատում եմ բավարար:

35. Նյութատեխնիկական մատակարարման եվ գնումների բաժնի գործունեության

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Նյութատեխնիկական մատակարարման և գնումների բաժնի հիմնական նպատակն է ապահովել ՝ ԲՈՒՀ-ի բնականոն գործունեությունը, սահմանված ժամկետներում ձեռք բերել ստորաբաժանումների ու ուսումնակրթական գործընթացի համար անհրաժեշտ ապրանքա - նյութական արժեքները, կազմակերպել ԲՈՒՀԻ կողմից տարեկան հաստատված գնումների պլանով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման

գործընթացները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Սահմանված ժամկետներում մշտադիտարկման արդյունքում բացահայտել ԲՈՒՀԻ ստորաբաժանումներում պահանջվող և անհրաժեշտ ծառայությունների, ապրանքների քանակները: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել գնումների պլան: Իրավասության սահմաններում `հսկել ապրանքների և ծառայությունների մատուցման պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումը:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական – գնումների տարեկան պլանի համաձայն

	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	Հունվար-դեկտեմբեր	Համակարգչային, պատճենահանման սարքավորումներ, աքսեսուարներ և օժանդակ նյութեր	Տեղադրվել է համալսարանի ստորաբաժանումներում,ձևավորվել է 23 ինտերակտիվ լսարան (ինտերակտիվ լսարանների թիվը հասցնելով 102-ի)
2	Փետրվար-հոկտեմբեր	Գրասենյակային և դպրոցական կահույք և գույք	Տեղադրվել է ԲՈՒՀԻ ստորաբաժանումներում, Ավագ և հիմնական դպրոցներում
3	Մարտ-նոյեմբեր	Ուսումնաօժանդակ ապրանքներ, նյութեր, դեղեր, լողավազան, գրքեր, ամսագրեր	ԲՈՒՀԻ 10 ֆակուլտետներում, ստորաբաժանումներում
4	Փետրվար-սեպտեմբեր	Էլեկտրատեխնիկա, թվային կամերա, մարտկոցներ և սարքավորումներ	Համալսարանի տարբեր ստորաբաժանումների համար
5	Հունվար-դեկտեմբեր	Վառելիք՝ բենզին <Պրեմիում>, դիզել և ավտոպահեստամասեր	Տնտեսական վարչության տրանսպորտի բաժին
6	Հունվար-դեկտեմբեր	Գրենական պիտույքներ `A4 չափի 80 գրամանոց թուղթ, գրիչներ, մատիտ, ռետին, ֆայլ և այլն	Համալսարանի բոլոր ստորաբաժանումների համար
7	Հունվար-դեկտեմբեր	Տնտեսական, շինարարական և սանիհիգենիկ պարագաներ և ապրանքներ	Համալսարանի բոլոր մասնաշենքերի, Աղավնաձորի ուսումնական բազայի համար
8	Ծառայություններ	Կոմունալ,բժշկական ապահովագրություն, Ներկայացուցչական,վերելակի,մաքրման…	Բոլոր ստորաբաժանումների համար

բ/ տարեկան պլանի համաձայն

Հ/Հ	Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	Փետրվար-դեկտեմբեր	Համակարգիչ - 49 հատ, դյուրակիր – 30 հատ, պլանշետ – 10 հատ , մայրական տպասալ – 4 հատ, բարձրախոս -8 հատ, երթուղիչ -8 հատ, կոշտ սկավառակ -3 հատ, հիշողության սարք – 3 հատ, համակարգչային	ՀՊՄՀ ֆակուլտետներում, ամբիոններում

		մալուխներ - 171 հատ, մալուխ -915 մետր, միացուցիչ իր ռետինե պատյանով– 500 հատ, մկնիկ -49հատ , ստեղնաշար –45 հատ, ներքին HDD – 17 հատ, ռոութեռ – 7 հատ, սկավառակակիր – 7 հատ, անխափան սնուցման սարք – 10 հատ, սնուցման աղբյուր -12 հատ, սնուցման բլոկ – 18 հատ, սվիչ – 23 հատ, տեսախցիկ – 3 հատ, տեսաքարտ – 3 հատ, ցանցային բաժանարար – 10 հատ, ցանցային սարք և քարտ– 13 հատ, օպերատիվ հիշողություն – 40 հատ, տպիչների համար հարկավոր օժանդակ նյութեր՝ տոներ – 25 կգ և 32 հատ, թմբուկ -117 հատ, քարթրիջներ և այլ պարագաներ)	
2	Մարտ - դեկտեմբեր	Մանկական գիտաուսումնական կենտրոնի կահույք, լաբորատորիաների համար մասնագիտական կահույք, աթոռ փափուկ - 321 հատ, համակարգչային աթոռ -130 հատ, գրապահարան տարբեր -39 հատ, սեղան համակարգչային – 24 հատ, գրասեղան տարբեր -92 հատ, հիմնական դպրոցի համար աշակերտական սեղան - նստարան -65 հատ, գրատախտակ -6 հատ, կախիչ հագուստի -410 հատ, ինտերակտիվ ընթերցասրահ –սրճարանի կահույք	ՀՊՄՀ ֆակուլտետներում, ամբիոններում, դպրոցում և Աղավնաձորի ուսումնական բազայում
3	Մարտ - դեկտեմբեր	Ամսագրեր, գրքեր և ուսումնական ձեռնարկներ-1315 հատ, ուսումնական տպագրություն՝ տետր ընթացիկ ստուգումների -123000հատ, դիպլոմ - 2245 հատ, մատյաններ- 1650 հատ, ստուգման գրքույկներ – 3200 հատ և այլ անհրաժեշտ ձևաթղթեր ստորաբաժանումների համար, սպորտային գույք, լողավազանի ծառայություն , դաշնամուր-3 հատ, նկարչական կտավ-50մետր, նկարչական թուղթ-100 հատ , թել-10 կգ, տուշ, գործվածք -300 մետր,կտոր – 50 մետր, կավ քանդակի – 62.5կգ, գիպս-200 կգ, ծեփամածիկ քանդակի – 30 կգ, յուղաներկ 200 հատ, վրձիններ, էլեկտրական սղոց փայտի– 1 հատ, կարի մեքենա 4 հատ, քիմիական նյութեր, դեղորայք և ուսումնական այլ նյութեր :	
4	Փետրվար - դեկտեմբեր	Պրոյեկտոր-11 հատ, պրոյեկտորի էկրան-5 հատ, կախիչ-15 հատ, հեռուստացույց - 10 հատ, Ֆոտոլուսարձակների հավաքածու - 2հատ, խոսափողների անլար միացման համակարգ – 5 հատ, մարտկոցներ, օդորակիչ, օդափոխիչ-15 հատ, մարտկոցներ և այլ էլեկտրատեխնիկական սարքավորումներ	ՀՊՄՀ ֆակուլտետներում, ամբիոններում, ստորաբաժանումներում
5	Մարտ - նոյեմբեր	Վառելիք՝ բենզին Պրեմիում- 20000լիտր , դիզելային վառելիք 6000 լիտր , ավտոպահեստամասեր և այլ պարագաներ	Տնտեսական վարչության տրանսպորտի բաժին
6	Փետրվար - դեկտեմբեր	Թուղթ Ա4 -5000կգ, գունավոր թուղթ –4 տուփ, գրիչ – 3950 հատ, մատիտ –920 հատ, գունավոր մատիտ – 20 տուփ, ընդգծիչ –521 հատ, նշումների թուղթ –415 հատ,	ՀՊՄՀ բոլոր ֆակուլտետներում,

		կարիչ –70 հատ, մկրատ –105 հատ, թղթապանակներ տարբեր տեսակի – 6000հատ, ծրար–7050 հատ, ֆայլ -11000հատ , համակարգչային անձեռոցիկ- 150հատ, ջնջիչ -400 հատ, գրասեղանի հավաքածու –20 հատ, գրասենյակային գիրք –220 հատ, ամրակ - 400հատ և այլ գրենական պիտույքներ	ստորաբաժանումներում
7	Հունվար - դեկտեմբեր	Ավտոմատ անջատիչներ – 81 հատ, լամպեր տարբեր պարամետրերի -813 հատ , դռան փականներ և միջուկներ տարբեր չափերի–83 հատ, տրանսֆորմատոր – 3 հատ, հաղորդալար – 800 մետր, ներկեր -410 կգ, ցեմենտ, վարդակ,գիպսոնիտ – 600 կգ, ծեփամածիկ գիպսային – 420 կգ, զուգարանի թուղթ, օճառ, հեղուկ օճառ, , տնտեսական, շինարարական և սանհիգիենիկ այլ պարագաներ	ՀՊՄՀ ստորաբաժանումների համար
8	Մարտ - դեկտեմբեր	Ինտերնետային կապի ծառայություն, բժշկական ապահովագրություն, մաքրման ծառայություն, վերելակների սպասարկում	Բոլոր ստորաբաժինների համար

3. Հաշվետու տարում բաժնի պլանավորած աշխատանքների ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Տարեցտարի ավելանում է համալսարանի և միջազգային այլ ԲՈՒՀ- երի հետ կրթական ծրագրերի համագործակցության աշխարհագրությունը: Վերոհիշյալի շրջանակներում ավելանում են դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրերը: Համալսարանի ենթակառուցվածքների բարելավմանը միտված պլանավորվում է կառուցել հանրակացարանային համալիր, որի առկայությունը կնպաստի մեծ թվով արտասահմանյան ուսանողների ընդգրկմանը: Ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ պլանավորվում է համալսարանի ուսումնական միջավայրը հարմարեցնել հենաշարժային խնդիրներ ունեցող ուսանողներին միտված նրանց անվտանգ և հարմար տեղաշարժմանը:
ինքնագնահատում Նյութատեխնիկական մատակարարման և գնումների բաժնի կողմից կատարված աշխատանքները գնահատվում են բավարար:

36. Միջազգային համագործակցության բաժին

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Կազմակերպել և համակարգել ՀՊՄՀ-ի մասնակցությունը միջազգային ծրագրերին: Համագործակցել համապատասխան բնագավառում ճանաչված և առաջադեմ հաստատությունների հետ, որոնք ուղղված են բարձրացնելու համալսարանի առաքելությամբ սահմանված տրամադրող կրության, ուսումնական ծրագրերի և մանկավարժական կադրերի պատրաստման որակը և համապասխանելիությունը միջազգային չափանիշներին:
Նպաստել ՀՊՄՀ-ի մրցակցության բարձրացմանը միջազգային մակարդակում: Ուսումնասիրել և սահմանված կարգով ընթացք տալ միջազգային համագործակցության վերաբերյալ ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացված առաջարկներին և ծրագրերին:

Նպաստել ՀՊՄՀ-ի ինտեգրմանը համաշխարհային գիտական և կրթական գործընթացներին և ծրագրերին, որոնք կոչված են ապահովել ուսումնակրթական և գիտահետազոտական գործունեության զարգացումը և տարվող աշխատանքների շարունակական բարելավումը:
Նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունությանը՝ համապատասխան փորձի փոխանակման և ուսանողական պրակտիկայի կազմակերպման միջոցով:
Նպաստել գիտահետազոտության և նորարարությունների խթանման ուղղված համատեղ ծրագրերի իրականացմանը՝ ներգրավելով ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը և համապատասխան ուսանողական ներուժը:
Ընդլայնել և նոր կապեր հաստատել Սփյուռքի հետ կրթական, գիտական և մշակութային ոլորտներում:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
7.1.1	հունվար-հուլիս սեպտեմբեր-նոյեմբեր	Ընդլայնել ՀՊՄՀ միջազգային համագործակցության ուղղությունները համալսարանի զարգացման ծրագրին համահունչ:	ՀՊՄՀ միջազգային համագործակցության նոր ուղղություններ
7.1.3	սեպտեմբեր-հոկտեմբեր	Աջակցել համալսարանի բոլոր ֆակուլտետներին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում:	Միջազգային համագործակցության ծրագրերում ներգրավված ֆակուլտետներ
7.1.4	հունվար-հուլիս սեպտեմբեր-հոկտեմբեր	Բարելավել համալսարանի միջազգային գործունեության տեղեկատվական համակարգը՝ մշտապես կազմակերպելով միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվություն:	Համալսարանի միջազգային գործունեության տեղեկատվական համակարգի բարելավվում
7.1.6	հունվար-փետրվար սեպտեմբեր-հոկտեմբեր	Խթանել համալսարանի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը:	Ակադեմիական շարժունության ծրագրերի մասնակիցների թվի աճ
7.1.9	հունվար-հունիս	Զարգացնել և ընդլայնել միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունը՝ բազմազանեցնելով կրթամշակութային ծրագրերի բովանդակությունը:	- Վերամշակված կրթամշակութային ծրագրեր - Կազմակերպված միջոցառումներին մասնակիցների աճ
7.1.12	հունվար-դեկտեմբեր	Նպաստել համալսարանի ուսանողական կազմակերպությունների արտաքին	չկատարված

		կապերի զարգացմանը և ներգրավմանը միջազգային կազմակերպություններում և ծրագրերում	
7.2.3	սեպտեմբեր-հոկտեմբեր	Աջակցել համալսարանի մասնագետների մասնակցությանը ‹‹Էրազմուս պլյուս››, ‹‹Հորիզոն›› միջազգային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը՝ կազմակերպելով տեղեկատվական սեմինարներ և վերապատրաստումներ:	Համալսարանի մասնագետների մասնակցությունը Էրազմուս+ և Հորիզոն 2020 միջազգային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը
7.3.2	հունվար-հունիս	Համալսարանի կայքում ներկայացնել ՀՊՄՀ -ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, կրթական հաջողությունները, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:	Օտարերկրյա դիմորդների համար տեղեկատվական պորտալի ստեղծում
7.3.3	հունվար-հոկտեմբեր	Զետեղել գիտակրթական կազմակերպությունների մասին արտասահմանյան տեղեկատուներում ՀՊՄՀ կայքէջի հասցեն և համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:	չկատարված
7.3.4	հունվար-հունիս	Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ՀՊՄՀ ուսանողական հանրությանը օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման համար, բացահայտել և հաշվի առնել օտարերկրյա ուսանողների առաջնային խնդիրները՝ կացության ապահովումը, կողմնորոշումը և այլն:	Օտարերկրյա ուսանողների համար հարմարավետ ուսումնական և կացարանային պայմանների ապահովում

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
7.1.1	հունվար-հուլիս սեպտեմբեր-նոյեմբեր	- Ընդլայնել ՀՊՄՀ միջազգային համագործակցության ուղղությունները համալսարանի զարգացման ծրագրին համահունչ:	ՀՊՄՀ միջազգային համագործակցության նոր ուղղություններ՝ Չինաստան (Չունցինի Հարավ-արևմտյան համալսարան) Ավստրիա (Ավստրիայի մանկավարժական համալսարանական քոլեջ)

			Մոսկվայի Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտ
7.1.3 7.1.4 7.2.3	հունվար-փետրվար, սեպտեմբեր-հոկտեմբեր	- Աջակցել համալսարանի բոլոր ֆակուլտետներին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում - Կազմակերպել ընթացիկ քննարկումներ և խորհրդատվություն՝ միջազգային ծրագրերում ներգրավման ուղղությամբ - Բարելավել համալսարանի միջազգային գործունեության տեղեկատվական համակարգը՝ մշտապես կազմակերպելով միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվություն: - Աջակցել համալսարանի մասնագետների մասնակցությանը ‹‹Էրազմուս պլյուս››, ‹‹Հորիզոն›› միջազգային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը՝ կազմակերպելով տեղեկատվական սեմինարներ և վերապատրաստումներ:	- Միջազգային համագործակցության ծրագրերում ներգրավված ֆակուլտետներ՝ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ Օտար լեզուների ֆակուլտետ Հատուկ կրթության ֆակուլտետ Սկզբնական կրթության ֆակուլտետ - Տեղեկատվական սեմինարներ ՀՊՄՀ-ի I կուրսի ուսանողների (շուրջ 900 հոգի) համար կազմակերպված տեղեկատվական սեմինարներ - Հանդիպումներ՝ անհատական և խմբային ՀՊՄՀ-ի ֆակուլտետների և ամբիոնների ներկայացուցիչների հետ - Մշակված ծրագրային առաջարկներ Եվրահանձնաժողովի ֆինանսավորմանը ներկայայցված - Եվրահանձնաժողովի կողմից ֆինանսավորված 1 Էրազմուս+ բարձրագույն կրթությունում կարողությունների զարգացման ծրագիր՝ ՀՊՄՀ-ի համակարգմամբ
7.1.6	հունվար-փետրվար սեպտեմբեր-հոկտեմբեր	Խթանել համալսարանի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը:	Ակադեմիական շարժունության ծրագրերի մասնակիցների թվի աճ՝ - Էրազմուս+ կրեդիտային շարժունության 12 հայտ, որոնցից 8-ը ֆինանսավորված, - ակադեմիական շարժունության մասնակցաշ 21 ուսանող - շարժունության երկրների բազմազանեցում, նոր ուղղություններ՝ Իտալիա, Իսպանիա, Ռումինիա: - 5 վարչական և 17 ակադեմիական անձնակազմի շարժունություն - համագործակցություն ֆակուլտետների և ՀՊՄՀ-ի ուսումնական վարչության հետ՝

			կրեդիտների փոխանցման և ճանաչման հարցերի շուրջ
7.1.9	հունվար-հունիս	Զարգացնել և ընդլայնել միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունը՝ բազմազանեցնելով կրթամշակութային ծրագրերի բովանդակությունը:	- Վերամշակված կրթամշակութային ծրագրեր - Կազմակերպված միջոցառումներին մասնակիցների աճ
7.3.2	հունվար-հունիս	Համալսարանի կայքում ներկայացնել ՀՊՄՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, կրթական հաջողությունները, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:	- Օտարերկրյա դիմորդների համար տեղեկատվական պորտալի ստեղծում՝ - googlesites հավելվածով կայքի նախնական տարաբերակ - օտարերկրյա դիմորդներին միտված բարելավված տեղեկատվական համակարգ - հորիզոնական համագործակցություն Ֆակուլտետների և Ուսումնական վարչության հետ
7.3.3	հունվար-հոկտեմբեր	Զետեղել գիտակրթական կազմակեր-պությունների մասին արտասահմանյան տեղեկատուներում ՀՊՄՀ կայքէջի հասցեն և համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատ-վությունը:	Այս ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել, քանզի պահանջում են մասնագիտական գիտելիքներ և համապատասխան մասնագետների ներգրավվածություն:
7.3.4	հունվար-հունիս սեպտեմբեր-նոյեմբեր	Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ՀՊՄՀ ուսանողական հանրությանը օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման համար, բացահայտել և հաշվի առնել օտարերկրյա ուսանողների առաջնային խնդիրները՝ կացության ապահովումը, կողմնորոշումը և այլն:	Օտարերկրյա ուսանողների համար հարմարավետ ուսումնական և կացարանային պայմանների ապահովում

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Խնդիրներ. 7.1.1 (Ընդլայնել ՀՊՄՀ միջազգային համագործակցության ուղղությունները համալսարանի զարգացման ծրագրին համահունչ): 2017թ. ընթացքում Միջազգային համագործակցության բաժինը (այսուհետ՝ ՄՀԲ) կարևորելով ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության ընդլայնումը և համալսարանի ռազմավարական խնդիրների իրագործումը իրականացրել է մի շարք միջոցառումներ: Մասնավորապես. ՄՀԲ-ն պլանավորել և կազմակերպել է մի շարք պատվիրակությունների այցեր՝ միտված համագործակցային ուղղությունների զարգացմանը:Յուրաքանչյուր այցի հետ կապված ՄՀԲ-ն իրականացրել է հետևյալ գործառույթները. ծրագրի մշակում, անհրաժեշտ պայմանավորվածությունների ձեռք բերում՝ ներառյալ հյուրանոցի ամրագրում, դիմավորում և

ճանապարհում, մշակութային ծրագրի մշակում, հանդիպումների կազմակերպում, այցելության հետ կապված ֆինանսական հաշվարկների կատարում և այլն:
Մասնավորապես՝
- մարտ- Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պատվիրակության 2 այցի կազմակերպում
- մարտ- Ա.Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի պատվիրակության այցի կազմակերպում և աջակցություն ՀՊՄՀ-ում Պուշկինի անվան ռուսաց լեզվի լսարանի բացմանը
- ապրիլ- Չինաստանի հարավ-արևմտյան համալսարանի պատվիրակության այց կազմակերպում
- հոկտեմբեր- Պեկինի մանկավարժական համալսարանի պատվիրակության այց
- նոյեմբեր- Լիբանանյան-կանադական համալսարանի պատվիրակության այց:
Վերոնշյալ հանդիպումները միտված են եղել համատեղ կրթական ծրագրերի կազմակերպման, չինարենը որպես օտար լեզու ներդրման հետ կապված հարցերի քննարկմանը, որպես միջազգային համագործակցության նոր ուղղություն:
Բացի այդ, կարևորելով օտարերկրյա մասնագետների կողմից դասախոսությունների կազմակերպումը ՀՊՄՀ-ում, ՄՀԲ-ն
- կազմակերպել է հետևյալ դասախոսությունները.
ապրիլ- Լեհ դասախոս, Եվրոպական պառլամենտի
անդամ Կարոլ Կարսկի
մայիս- Ամերիկահայ հայտնի գիտնական, Չիկագոյի Իլինոյսի
համալսարանի կրթական հոգեբանության ֆակուլտետի պրոֆեսոր Արթին Գոնչու
նոյեմբեր- հանդիպում Ամերիկացի գրող Շերոն Դրեյփերի

ՀՊՄՀ-ի ղեկավարությունը կարևորելով մասնավորապես Չինաստանի ժողովրդական հանրապետության և ԱՊՀ երկրների հետ համագործակցության ընդլայնումը գործուղել է ՄՀԲ-ի համապատասխան աշխատակցին և ՀՊՄՀ-ի ղեկավարության ներկայացուցչին համապատասխան բանակցություններ վարելու և նոր պայմանավորվածություններ ձեռք բերելու ուղղությամբ: Արդյունքում, ՉԺՀ կատարած այցելության արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ կրթական ծրագրի իրագործման՝ Կրթության կառավարում մագիստրոսական ծրագրի և չինարենը ՀՊՄՀ-ում որպես օտար լեզվի դասավանդման ուղղությամբ:
Ս.թ. մայիս ամսին Ֆինլանդիայի Օուլույի համալսարան կատարած այցի արդյունքում, վերջինիս հետ պայմանավորվածություն է ձեռքբերվել մագիստրոսական թեզերի համատեղ ղեկավարման վերաբերյալ: Արդյունքում, 2017 թ. Սկզբնական կրթության ֆակուլտետի 2 ուսանողների մագիստրոսական թեզեր կհամաղեկավարվեն Օուլույի համալսարանի կրթության ֆակուլտետի մասնագետների կողմից:
Խնդիրներ 7.1.3/7.1.4/7.2.3
Աջակցել համալսարանի բոլոր ֆակուլտետներին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում:Բարելավել համալսարանի միջազգային գործունեության տեղեկատվական համակարգը՝ մշտապես կազմակերպելով միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվություն: Աջակցել համալսարանի մասնագետների մասնակցությանը ‹‹Էրազմուս պլյուս››, ‹‹Հորիզոն›› միջազգային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը՝ կազմակերպելով տեղեկատվական սեմինարներ և վերապատրաստումներ
2017թ. ընթացքում ևս շարունակվել են աշխատանքներն այդ ուղղությամբ: Մասնավորապես.
- կազմակերպվել են անհատական խորհրդատվություններ տարբեր ֆակուլտետների ներկայացուցիչների համար:

- Հունվար ամսին, Հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ներկայացուցիչների առաջարկով, ՀՊՄՀ-ն նախապատրաստել է Էրազմուս+ բարձրագույն կրթությունում կարողությունների զարգացում ծրագրի շրջանակներում երկու առաջարկների նախապատրաստում:
- ՄՀԲ-ի կողմից մշակված Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում 5 վարչական և 10 ակադեմիական անձնակազմի ներկայացուցիչներ մեկնել են Եվրոպական ներքոնշյալ երկրներ՝ փորձի փոխանակման նպատակով.
Մեծ Բրիտանիա, Ֆինլանդիա,
Հունգարիա, Լեհաստան և Լիտվա:
- Եվս 7 դասախոս Հատուկ կրթության ֆակուլտետից մեկնել են Չեխիա դասախոսություններ կարդալու նպատակով, իսկ ՄՀԲ-ն իրականացրել է տեխնիկական աջակցություն այցի կազմակերպման համար:
- ՄՀԲ-ն ձեռնարկել և համապատասխան ինտելեկտուալ ներդրում է ունեցել Էրազմուս+ գործողություն1 և գործողություն 2 շրջանակներում հայտերի պատրաստմանը:
- ՀՊՄՀ-ն ստացել է Էրազմուս+ գործողություն 1-ով իր համակարգմամբ 1 միջազգային ծրագիր և 8 գործողություն 2 կրեդիտային ծրագիր:
- Հոկտեմբերին, ՄՀԲ-ի միջնորդությամբ, ՀՊՄՀ-ում կազմակերպվել է գերմանացի պրոֆեսոր Գեհմլիխ Վոլկերի կողմից վերապատրաստում՝ Նախընթաց կրթության արդյունքների ճանաչման վերաբերյալ:
Սեպտեմբեր
- Ֆակուլտետների և համահամլսարանական ամբիոնների հետ տեղի ունեցել քննարկում, հանդիպում՝ միջազգային համագործակցային ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ,
- Ֆակուլտետների և ամբիոնների միջազգայնացմանը միտված հարցերը վերհանվել և քննարկվել են ՀՊՄՀ-ի Գիտխորհրդի նիստում
- Գրավոր հավաքագրվել է տեղեկատվություն ՀՊՄՀ-ի միջազգայնացմանն միտված ֆակուլտետների և համահամալսարանական ամբիոնների գործունեության վերաբերյալ, ամբիոններին և ֆակուլտետներին հետագայում ուղորդելու և աջակցություն ցուցաբերելու նպատակով:
Սեպտեմբեր ամսին, Աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանի և ՄՀԲ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում ՀՊՄՀ-ի ֆակուլտետների և ամբիոնների ներկայացուցիչների հետ՝ ֆակուլտետի կամ ամբիոնի միջազգայնացման ուղղված հնարավոր գործունեության իրագործման վերաբերյալ: Արդյունքում, ս.թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցած Գիտխորհրդի նիստում որոշվեց հանձնարարել ՀՊՄՀ-ի ֆակուլտետների խորհուրդներին և ֆակուլտետների ու համահամլսարանական ամբիոններին նախապատրաստել ՀՊՄՀ 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրից և այդ Ծրագրի կատարման գործողությունների պլանից, ինչպես նաև ՀՊՄՀ գիտական խորհրդի 2015 թ. մայիսի 31ի որոշմամբ հաստատված Համալսարանի 2015-2020թթ. միջազգայնացման քաղաքականությունից և ռազմավարությունից բխող աշխատանքային ծրագրեր՝ առաջարկելով միջազգային և տարածաշրջանային մակարդակներում համադրելի մրցունակ մասնագիտական կրթական ծառայություններ: Այս կապակցությամբ, ս.թ. հոկտեմբերի 16-ին գրություն է ուղղվել ֆակուլտետներին և համահամլսարանական ամբիոններին ներկայացնելու այդ ուղղությամբ տարվող աշխատանքի նախնական տվյալներ մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը:

Խնդիր 7.1.6. Խթանել համալսարանի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը:

2017 թ. ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- մշակվել և ներկայացվել են Էրազմուս+ կրեդիտային շարժունության 12 հայտ, որոնցից 8-ը ֆինանսավորվել են,
- ՀՊՄՀ-ի թվով 21 ուսանող մեկնել են հետևյալ երկրներ՝ Ֆինլանդիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Բուլղարիա, Չեխիա և Մեծ Բրիտանիա: 2017թ. ներկայացված հայտերի շրջանակներում ուսանողների շարժունություն նախատեսվում է նաև 2018թ:
- ՄՀԲ-ի կողմից մշակված Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում 5 վարչական և 10 ակադեմիական անձնակազմի ներկայացուցիչներ մեկնել են Եվրոպական ներքոնշյալ երկրներ՝ փորձի փոխանակման նպատակով.
- Մեծ Բրիտանիա, Ֆինլանդիա,
- Հունգարիա, Լեհաստան և Լիտվա:
- Եվս 7 դասախոս Հատուկ կրթության ֆակուլտետից մեկնել են Չեխիա դասախոսություններ կարդալու նպատակով, իսկ ՄՀԲ-ն իրականացրել է տեխնիկական աջակցություն այցի կազմակերպման համար,
- ՄՀԲ-ն համագործակցել է ՀՊՄՀ-ի ֆակուլտետների և ուսումնական վարչության հետ՝ դասընթացների կրեդիտների կուտակման, փոխանցման և ճանաչման վերաբերյալ
- Բացի վերոնշյալ ծրագրերից, ՄՀԲ -ն իրականացրել է նաև թվով 49 Սփյուռքի ուսանողների գործերի ընդունում, գրանցում, տվյալների էլեկտրոնային կառավարում և կացության քարտերի ստացում ՀՀ Արդարադատության նախարարության արտոնագրերի և գրանցման վարչությունից: Այս ուսանողների հետ կապված բաժինը տարեկան երկու անգամ ամփոփ և վերանայված տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ ԿԳ նախարարություն:
- ՀՊՄՀ-ի 10 ֆակուլտետների I կուրսի ուսանողների համար կազմակերպվել են տեղեկատվական սեմինարներ, որոնք կրել են տեղեկատվական և շարժունություններին մասնակցելու մոտիվացնող բնույթ (մոտավորապես՝ մոտ 900 տեղեկացված ուսանող)
- ՄՀԲ-ի աջակցությամբ ՀՊՄՀ-ի ռուսաց լեզվի ամբիոնում սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին դասավանդել է Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտի դասախոս Յուլիա Կաբանկովան:
-

Խնդիր 7.1.9. Զարգացնել և ընդլայնել միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունը՝ բազմազանեցնելով կրթամշակութային ծրագրերի բովանդակությունը:

2017թ.-ին ամառային դպրոց միջազգային ծրագրի բովանդակությունը վերանայվել է ամբողջությամբ, ծրագիրը բազմազանեցվել է և տրվել է առավել կրթական ուղղվածություն: Ամառային դպրոցին մասնակցության հրավեր է ուղարկվել հիմնական գործընկեր համալսարաններին, իսկ արդյունքում ուսանողների երկկողմ փոխանակման վերաբերյալ վերջնական պայմանավորվածություն է ձեռք բերվել հետևյալ համալսարանների հետ.

1. Լիտվայի կրթական գիտությունների համալսարան
2. Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարան
3. Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարան
4. Մոսկվայի Պուշկինի անվան ռուսաց լեզվի համալսարան
5. Մոսկվայի հոգեբանամանկավարժական համալսարան
6. Սանկտ-Պետերբուրգի տնտեսագիտական համալսարան

Այս տարի ամառային դպրոց ծրագրի մասնակցության հայտ է ստացվել ՀՊՄՀ-ի 369 ուսանողներից: Այս ուղղությամբ ինտենսիվ աշխատանքներ են տարվել փետրվարից մինչև օգոստոս ամիսները, մասնավորապես՝

- Դիմումների մշակում, դասակարգում
- Մրցութային հանձնաժողովների կազմի քննարկում և հաստատում,
- Մրցույթի կազմակերպում, հաղորդակցում ուսանողների հետ

- Մրցույթի արդյունքների ամփոփում
- Ավիատոմսերի և մուտքի արտոնագրերի ստացման գործընթացների կազմակերպում
- Ամառային դպրոց միջազգային ծրագրերի օրերի բանակցում գործընկերների հետ և համապատասխան տեղեկատվության տարածում
- Հայաստանում ամառային դպրոց ծրագրի կազմում և քննարկում շահակիցների հետ
- Ամառային դպրոց ծրագրի կազմակերպում՝ բովանդակային մասով:

Արդյունքում, ՀՊՄՀ-ի թվով 64 ուսանող մեկնել են վերոնշյալ համալսարաններ ամառային դպրոց ծրագրին մասնակցելու համար, իսկ ևս 20-ը մասնակցել են ՀՊՄՀ-ի Աղավնաձորի բազայում կազմակերպվող ամառային դպրոց ծրագրին:
ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության ընդլայնման արդյունքում, բացվել է ամառային դպրոցի նոր աշխարհագրական ուղղվածություն և 2 ուսանողների գործուղում Չինաստանի Չունցինի Հարավ-արևմտյան համալսարան:

Խնդիր 7.3.2. Համալսարանի կայքում ներկայացնել ՀՊՄՀ -ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, կրթական հաջողությունները, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:


2017թ. ընթացքում վերանայվել և ամբողջությամբ թարմեցվել է ՀՊՄՀ-ի ՄՀԲ-ի է էջը, որտեղ ներկայացվել են Էրազմուս+ ծրագրի շրջանակներում կրեդիտային շարժունությանը մասնակցելու պայմանները, գումարների չափերը և այլն:
Ստեղծվել է ենթաէջ ՄՀԲ- ի էջում, որտեղ ներկայացված են կրեդիտային շարժունությանը մասնակցած ուսանողների պատմությունները երկու լեզվով (ՄՀԲ-ի կողմից տրամադրած), որոնք ունեն մոտիվացնող և իրագործված շարժունությունների մասին տեղեկատվություն տարածման բնույթ: Նախնական մշակվել է ՀՊՄՀ-ի ՄՀԲ-ի ինտերնետային անհատական էջը՝ google.sites հավելվածի միջոցով, որը հնարավորություն կտա առավել օպերատիվ ներկայացնել տեղեկատվությունը ՄՀԲ-ի գործունեության և միջազգային ծրագրերին մասնակցելու հնարավորությունների վերաբերյալ: ՀՊՄՀ-ի կամավոր ուսանողների միջոցով նախնական մշակվել է ուղեցույց ՀՊՄՀ ժամանող օտարերկրյա ուսանողների համար, որը գտնվում է դեռևս մշակման փուլում:

Խնդիր 7.3.4. Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ՀՊՄՀ ուսանողական հանրությանը օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման համար, բացահայտել և հաշվի առնել օտարերկրյա ուսանողների առաջնային խնդիրները՝ կացության ապահովումը, կողմնորոշումը և այլն:

2017թ. ընթացքում ՄՀԲ-ն բոլոր ներգնա ուսանողների և դասախոսների համար կազմակերպել և ապահովվել է կացություն և բնակարաններ: Բացի այդ, շատ արդյունավետ աշխատում է ՄՀԲ-ի կամավորների խումբը, որոնք աջակցում են օտարեկրյա ուսանողներին ՀՊՄՀ-ի ուսանողական կյանքին ինտեգրվելուն: Ներկայումս քննարկվում է Big Friend համակարգի ներդրման հարցը, որը ենթադրում է վերոնշյալ գործի առավել համակարգված իրագործում:
ՄՀԲ-ի աջակցությամբ Պատմության և իրավագիտության և Հատուկ կրթության ֆակուլտետենտները Ուսումնական վարչության հետ համատեղ կազմել են օտարերկրյա ուսանողների ՀՊՄՀ-ում ուսումնառության համար անհրաժեշտ դասընթացների ցանկի, ուսանողների ՀՊՄՀ-ում գրանցման, իրենց ՀՊՄՀ-ում կացության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ձևաչափերը՝ ըստ եվրոպական պահանջների:


(Կատարման վերլուծություն)

Ընդհանուր առմամբ վերլուծությունը անհրաժեշտ է ներկայացնել որակական և քանական արդյունքներով:
ՀՊՄՀ-ի համագործակցային շրջանակը ընդլայնելու ուղղությամբ կատարվել են մի շարք ռազմավարական քայլեր, մասնավորապես՝ ԱՊՀ երկրների և Չինաստանի ժողովրդական հանրապետության հետ համագործակցությունը ընդլայնելու ուղղությամբ: Արդյունքում, կնքված 3 նոր համաձայնագրերի շրջանակներում ՀՊՄՀ-ն նախատեսում է իրագործել համալսարանի միջազգայնացմանը միտված գործողություններ՝ մասնավորապես համատեղ կրթական ծրագրերի իրագործում, ՀՊՄՀ-ում չինարենը որպես օտար լեզու դասավանդելու հնարավորության ստեղծում, ռուսերեն լեզվի մասնագիտական դասավանդման ուժեղացում և այլն: ՀՊՄՀ-ն նպատակահարմար չի գտնում բազմաթիվ համագործակցային համաձայնագրերի կնքումը, որոնք միայն փաստաթղթի ձևով են առկա համալսարանում:
Ուսանողների և դասախոսների միջազգային ծրագրերում ներգրավվածության վերաբերյալ, անհրաժեշտ է նշել, որ
նախևառաջ, ի տարբերություն նախորդ տարիներին ՄՀԲ-ի աշխատակիցները բարելավել են իրենց մասնագիտական գիտելիքները միջազգային ծրագրերին, այդ թվում՝ կրեդիտային շարժունության ծրագրերին, մասնակցության, դրանց համակարգման, տեխնիկական աջակցության ցուցաբերման ուղղությամբ: Համապատասխան մասնագիտական կատարելագործումը նպաստել է Էրազմուս+ բարձրագույն կրթությունում կարողությունների զարգացման և կրեդիտային շարժունության նոր ծրագրերի իրագործմանը:
Այսպիսով, պահպանելով նախորդ տարիներին սկսված համագործակցությունը և այդ ուղղությամբ նոր ֆինանսավորման ձեռքբերումը, ՄՀԲ-ն ընդլայնել է համագործակցային շրջանակը (կարմիրով՝ նոր համագործակցություն, տե՛ս պատկեր 1).
Պատկեր 1. Գործող և նոր համագործակցություններ Էրազմուս+ կրեդիտային շարժունության շրջանակներում



Արդյունքում, նախորդ տարվա համեմատ 2017թ. շարժունության ծրագրերի և քանակի աճ է գրացնվել մոտ 3 անգամ (տե՛ս Պատկեր 2):


Պատկեր 2. Արտագնա ուսանողների և անձակազմի քանակ:



2017թ. մեկնարկել է նաև Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում ներգնա ուսանողների ընդունումը, մասնավորապես Պատմության և իրավագիտության ու Հատուկ կրթության ֆակուլտետներում: Արդյունքում, 7 ուսանող Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանից և Չեխիայի Պարդուբիցե համալսարանից ուսանել են ՀՊՄՀ-ում անգլերեն լեզվով իրենց ընտրած դասընթացները:


ՄՀԲ-ն վերլուծելով նախորդ տարվա ամառային դպրոցի կազմակերպման փորձը և գնահատման արդյունքում ձեռքբերված կարծիքները, այս տարի վերանայեց ամառային դպրոց ծրագիրը՝ բազմազանեցնելով ծրագիրը՝ կրթական և պատմամշակութային բաղադրիչների ամբողջական վերափոխմամբ: Արդյունքում, այս տարի ամառային դպրոցի ծրագիրը առավել բովանդակալից էր և հագեցած, որն արժանեցել էր ուսանողների հավանությանը: Այս տարի դիմորդների քանակը ավելին էր, որը վկայում էր ուսանողների շրջանակում ծրագրի հետաքրքրականության և այդ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ տարված աշխատանքների մասին: (Տե՛ս Պատկեր 3)

Պատկեր 3. Ամառային դպրոց ծրագրին դիմած և շեմը հաղթահարած ուսանողների քանակ



Վերոնշյալ քանակական տվյալներից հնարավոր է հանգեցնել, որ ընդհանուր առմամբ ՄՀԲ-ի իրագործված գործողությունները մեծապես նպաստել են ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության ընդլայնմանը: ՄՀԲ-ն աշխատել է Համալսարանի տարբեր կառույցների հետ՝ ռազմավարական խնդիրների իրագործման ուղղությամբ: Նպատակ ունենալով հետագայում ամբողջությամբ ապակենտրոնացնել միջազգային համագործակցությունը, ՄՀԲ-

ն ձեռնարկել է տարբեր խորհրդատվական հանդիպումներ ֆակուլտետների ներկայացուցիչների հետ՝ ընթացիկ հարցերը և հետագա գործընթացները պլանավորելու ուղղությամբ: Անշուշտ, գործունեության ամբողջական ծավալման համար անհրաժեշտ է ֆակուլտետներում համապատասխան զուգընթաց գործընթացների իրագործում, որի բացակայության արդյունքում հնարավոր չի լինում հասնել ռազմավարական պլանում առաջադրված ցուցանիշներին: Համապատասխան վերլուծությունը ցույց է տվել, որ ՀՊՄՀ-ի միջազգայնացման առկա խոչընդոտներից են. 1. ՀՊՄՀ-ի ակադեմիական անձնակազմի կողմից օտար լեզվի (մասնավորապես անգլերենի) ոչ պատշաճ մակարդակի իմացությունը 2. Միջազգային ծրագրերում մասնակցության մոտիվացիայի բացակայությունը, հետևաբար, ծրագրերին դիմելու համար նոր հմտություններ և գիտելիք ձեռք բերելու ցանկության բացակայությունը 3. Հորիզոնական համագործակցության մշակույթի բացակայությունը 4. Անհատական նախաձեռնողականության բացակայությունը ֆակուլտետներում և ամբիոններում 5. Օտար լեզվով (թե՛ անգլերեն, թե՛ ռուսերեն) կրթական ծրագրի/մոդուլների բացակայությունը Հաշվի առնելով վերոնշյալ խոչընդոտները, ինչպես նաև գնահատելով ՀՊՄՀ-ի միջազգայնացման ռազմավարական պլանի որոշ գործողությունների անիրատեսականությունը նշված ժամկետներում, ՄՀԲ-ն նախատեսում է վերանայել ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության ռազմավարական ծրագիրը՝ առաջարկելով իրատեսական գործողություններ և խնդիրներ:
ինքնագնահատում ՄՀԲ-ն իրականացրել է միջազգային համագործակցության ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, անդրադարձ կատարելով՝ հնարավորություններին և վտանգներին:



Վերոնշյալ ինքնագնահատումը թույլ է տալիս առաջադրել հետևյալ առաջարկությունները.

- ՀՊՄՀ-ի ֆակուլտետների համապատասխան մասնագետների վերապատրաստում՝ ռազմավարական պլանավորման ուղղությամբ (միջազգայնացումը ռազմավարական խնդիր ձևակերպելու և համապատասխան իրատեսական գործողություններ սահմանելու նպատակով),
- ՀՊՄՀ-ի ֆակուլտետներում և համահամալսարանական ամբիոններում վերջիններիս կողմից օտար լեզվի (անգլերենի իմացությամբ) մասնագիտական ներուժի վերհանում և ուղորդում դեպի ՄՀԲ՝ միջազգային համագործակցության ծրագրերի առավել մանրամասն քննարկելու և իրագործելու համար
- Համապատասխան գործիքակազմի մշակում՝ հորիզոնական համագործակցություն ապահովելու համար՝ համալսարանի ռազմավարական խնդիրները իրագործելու նպատակով
- ՀՊՄՀ-ի ՄՀԲ-ի և կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից միջազգայնացման մշտադիտարկման ցուցանիշների մշակում՝ կիսամյակային տեղեկատվություն հավաքագրելու և վերլուծություն իրականացնելու նպատակով
- Վերոնշյալ համակարգի ներդրման հետ կապված ս որոշակի արտոնությունների կամ խրախուսման մեխանիզմնեի սահմանում՝ անհատական նախաձեռնողականությունը խթանելու նպատակով
- Ֆակուլտետներում օտար լեզվի իմացությամբ/կրեդիտային շարժունությանը մասնակցած ուսանողներին ֆակուլտետի միջազգայնացման գործընթացներում ներգրավում
- Նոր ակադեմիական/վարչական անձնակազմ աշխատանքի ընդունելիս միջազգային մակարդակում գործունեության առկայություն և օտար լեզվի իմացության պարտադիր իմացություն՞

37. Անձնակազմի հաշվառման բաժին

1. Անձնակազմի հաշվառման բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

1) իրականացնել Համալսարանի աշխատողների փաստաթղթերի գործավարությունը. նախապատրաստում է աշխատանքի ընդունման, ազատման, արձակուրդի տրամադրման, գործուղման և այլ աշխատանքային բնույթ հրամանների նախագծեր. կազմում է աշխատանքային պայմանագրեր (համաձայնագրեր) և ներկայացնում է Համալսարանի ռեկտորի հաստատմանը. կազմում և տրամադրում է աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանքներ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է աշխատողների աշխատանքային գրքույկները. ապահովում է աշխատողների անհատական քարտերի լրացումը. արխիվացնում է աշխատանքային պայմանագրերը լուծված աշխատողների գործերը. կազմակերպում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի և Համալսարանի ստորաբաժանումների աշխատատեղերի տարակարգերի թափուր աշխատատեղերի համար հայտարարված մրցույթների աշխատանքները. սահմանված կարգով կազմում է Համալսարանի աշխատողների համար անձնական գործեր և ապահովում անձնական տվյալների գաղտնիությունը.
2) Ապահովել Համալսարանի կադրային հաշվառման աշխատանքները: կազմում է աշխատողների արձակուրդի գրաֆիկ և ներկայացնում է Համալսարանի ռեկտորի հաստատմանը. թվայնացնում է Համալսարանի անձնակազմի անձնական տվյալները, ստեղծում տվյալների բանկ (ներառյալ էլեկտրոնային). կազմակերպում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի և Համալսարանի ստորաբաժանումների աշխատատեղերի տարակարգերի թափուր աշխատատեղերի համար հայտարարված մրցույթների աշխատանքները. աշխատողներին ծանոթացնում է Համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոնակարգին և անհրաժեշտ այլ փաստաթղթերին. համագործակցում է Համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ. Իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորների հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

2. Հաշվետու տարվա համար Անձնակազմի հաշվառման բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական և աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, տեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար: ՌԾ 2016-2020, խնդիր 3.2/4	ԱՀ բաժինը ԻԿ հետ համատեղ մշակել և պատրաստել են ՀՊՄՀ հաստիքացուցակում ընդգրկված բոլոր պաշտոնների անձնագրերը և պաշտոն չհամարվող աշխատատեղերի նկարագրեր: Ռեկտորի հաստատմանը ամբողջական փաթեթը կներկայացվի 2017թ. դեկտեմբեր ամսին՝ հաստիքացուցակի հետ փոխկապակցված:

	Իրավաբանական կենտրոնի հետ համատեղ Վերանայվել և ըստ իրավասության ռեկտորի կամ գիտական խորհրդի հաստատմանն են նախապատրաստվել ՀՊՄՀ հետևյալ ստորաբաժանումների կանոնադրությունները՝ - Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիայի կանոնադրություն, - Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի կանոնադրություն, - Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, - Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի կանոնադրություն, - Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կանոնադրություն, - Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի Կանոնադրություն, - Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կանոնադրություն:
Իրականացնել վարչակազմի փուլային երիտասարդացման քաղաքականություն, ստեղծել կայուն ռեզերվ և մրցակցային միջավայր՝ կառավարման կառույցների և ստորաբաժանումների ղեկավար կազմի որակյալ համալրումն ապահովելու նպատակով: ՌԾ 2016-2020, խնդիր 3.2/8	Այս գործընթացը շարունակական է, բայց այս տարվա կազմակերպված մրցույթների արդյունքում վարչական և ուսումնաօժանդակ կազմը համալրվել է երիտասարդ կադրերով ՝ ՀՊՄՀ –ի լավագույն շրջանավարտներով և մագիստրատուրայի ուսանողներով:

բ/ տարեկան պլանի համաձայն

	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	Համաձայն ՀՀ Կառավարության 18 օգոստոսի 2016 թվականի N -882-Ն որոշման և 'Աշխատանքային գրքույկները Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ներկայացնելու եվ աշխատողներին հանձնելու' կ ա ր գ ի նախապատրաստել և հանձնել Համալսարանի աշխատակիցների աշխատանքային գրքույկները:	Հաշվառվել է թվով 1100 աշխատանքային գրքույկ, նախապատրաստվել են համապատասխան Հանձնման-Ընդունման ակտեր և հանձնվել է Կենտրոն -1 սոցիալական ապահովության տարածքային բաժին:
2.	Համալսարանի ռեկտորի 25.12.2015թ. թիվ 2-1267 հրամանով հաստատված 'Ստորաբաժանումների տեսակները, աշխատեղերի տարակարգերը և դրանց զբաղեցման կանոնակարգ'-ի	Հայտարարվել և կազմակերպվել են թվով 25 մրցույթ,որին մասնակցել է 105 հավակնորդ: Արդյունքում տեղակալվել է 11 թափուր հաստիք այդ թվում՝ 2- դեկանի օգնական; 2- գրադանավար; 7- մասնագետ:

	համաձայն հայտարարել և կազմակերպել մրցույթներ թափուր աշխատատեղերի համար:	Նշված գործընթացն իր մեջ ներառում է՝ համապատասխան բաժնի կողմից ներկայացված և ռեկտորի կողմից մակագրված զեկուցագիրը հայտարարությունների պատրաստումը լրատվության վարչության հետ համատեղ հայտարարությունների հրապարակումը՝ ՀՊՄՀ-ի կայքում համապատասխան փաստաթղթերի հավաքագրումն ու ամփոփումը մրցույթի արդյունքների արձանագրումը: Եթե համեմատենք՝ 2015թ. թափուր աշխատատեղերի 27% է համալրվել հայտարարված մրցույթի միջոցով, 2016թ.-ին 31%, իսկ 2017 թ.-ին 82%:
3.	Իրականացնել Համալսարանի աշխատողների փաստաթղթերի գործավարությունը	Բաժինն ապահովել է Համալսարանի ռեկտորի հրամանների ձևակերպումները / կադրային գծով, թվով 1100 հրաման/: Հրամանների կատարումն իր մեջ ներառում է համաձայն ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի հետևյալ գործառույթները՝ աշխատանքի ընդունում և ազատում արձակուրդի գրաֆիկի կազմում, հաստատում, ձևակերպում աշխատանքային պայմանագրերի և համաձայնագրերի կազմում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին կենսաթոշակային փաստաթղթերի կազմում և ձևակերպում աշխատանքային գրքույկների գրանցում և վարում անհատական քարտերի լրացում աշխատանքից ազատվածների գործերի և հրամանագրքերի արխիվացում: Աշխատակիցների պահանջով պատրաստվել և տրամադրվել են տեղեկանքներ՝ թվով 450:
4.	Համաձայն ռեկտորի 14.03.2012թ. թիվ 2-367 հրամանով հաստատված ‘Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնարգ’-ի հայտարարել և կազմզկերպել թափուր տեղերի համար ընտրության մրցույթներ:	Ընտրության /վերընտրության նպատակով հայտարարվել և անցկացվել է թվով 2 մրցույթ: Մրցույթին մասնակցել է 3 հավակնորդ:
5.	Համալսարանը «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության հետ կնքեց 1-ամյա բժշկական ապահովագրության պայմանգիր:	Այդ գործընթացն ապահովվելու համար բաժինը մեկ անգամ ևս ճշտել է բոլոր հիմնական աշխատակիցների անձնական տվյալները, համաձայն ձևաչափի պատրաստել աշխատակիցների տվյալների բազա «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական

		ընկերությանը տրամադրելու համար : Բաժանել է աշխատակիցներին իրենց ապահովագրության քարտերը: Այդ գործընթացը շարունակական է՝ բոլոր փոփոխությունները կապված անձնագրերի, կորցրած բժշկական քարտերի և այլ փաստաթղթերի հետ կատարում է բաժինը:
6.	Բաժնի աշխատակիցների վերապատրաստում	Տարբեր թրեյնինգների ու իրազեկման սեմինարների է մասնակցել: Մասնավորապես մասնակցել ենք ՀՀ Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվող ՙՀայաստանի բարձրագույն կրթական համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար՚ ծրագրի շրջանակներում ՙՄարդկային ռեսուրսների կառավարման թափանցիկություն և հաշվետվություն բարձրագույն ուսումնական հաստատություններում գործիքակազմը՚ խորագրով սեմինարներին: Մասնակցել ենք առցանց տվյալների մուտքագրման աշխատանքներին ՄՌ կառավարում մասով:
7.	Կազմակերպել նոր 2017-2018 ուսումնական տարվա Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում:	Համաձայն Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժնի կողմից հաստատված ուսումնական տարվա պրոֆեսորադասախոսական անձնակազմի դասաբաշխմանը, ըստ ամբիոնների ներկայացվել են ՊԴԱ –ի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության և ծանրաբեռնվածության հրամանների նախագծերը, կազմվել են աշխատանքային պայմանագրեր, համաձայնագրեր, մուտքագրվել են նոր տվյալներ թվայնացված բազայում (ՀԾ): 2016թ. ՊԴԱ /Ուսանող հարաբերակցությունը եղել է 1/12 2017թ.-ին- 1/15:


2. Հաշվետու տարում Անձնակազմի հաշվառման բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները / բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/


Վերահսկվում են աշխատանքային պայմանագրերի ժամկետները: Ժամանակին տրամադրվում են Ծանուցումները, ստորաբաժանման ղեկավարներին իրազեկում ստորաբաժանման, ամբիոնի աշխատակիցների պայմանագրային ժամկետների մասին:

Համագործակցում է Գիտահետազոտական կենտրոնի Գիտաուսումնական աշխատանքների բաժնի հետ՝ համալսարանի աշխատակիցների վերապատրաստման տվյալներն ուսումնասիրելու և թվայնացված բազայում մուտքագրելու համար:

Համալսարանի բազային և թեմատիկ գիտական ծրագրերի աշխատակիցների տվյալներն մուտքագրվել են թվայնվացված բազայում, կազմվել են աշխատանքային պայմանագրեր և կազմվել են անձնական գործեր:

Մասնակցել է ԿԳՆ բուհերի վարկանիշավորման տվյալների լրացման աշխատանքներին:
Բաժնի աշխատանքները կատարվել են պատշաճ, անխափան, բարեխիղճ և ժամանակին: Բոլոր հաշվետվությունները ներկայացվել են ժամկետներում:
Բաժինն իր պարտականությունների կատարումը համարում է արդյունավետ:
Պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնների, գիտական աստիճանների, գիտական կոչումների հարաբերակցության վերլուծությունը ներկայացված է գծապատկերներում՝





38. Հատուկ բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Բաժնի հիմնական նպատակներն են ՀՊՊՀ ուսանող-տղաների զինվորական հաշվառումը՝ ըստ զինկոմիսարիատների, պետպատվերով ընդունված տղաների տարեկետման իրավունքի ձևակերպումը, դասախոսների և վարչական մասի աշխատողների զինվորական հաշվառումը:Բաժինը ապահովում է հատուկ գործավարության փաստաթղթերի ստացումը և պահպանումը:
Բաժնի խնդիրներն են՝
1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապահովել գաղտնի փաստաթղթերի շրջանառությունը.
2) ապահովել համապատասխան տեղեկատվության ժամանակին և սահմանված կարգով տրամադրումը ՀՀ կրթության և գիտության նախարարություն, զինվորական կոմիսարիատներ և իրավասու այլ մարմիններ.:
3) կնքել Համալսարանի անունից տրվող փաստաթղթերը

2. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

2017 թվականին բաժինը շարունակել է իր գործունեությունն իրականացնել համալսարանի կանոնադրությամբ և այլ նորմատիվ ակտերով սահմանված դրույթների համաձայն: Բաժինը 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված գաղտնիության կանոններին համապատասխան ապահովել է գաղտնի փաստաթղթերի շրջանառությունը, ներկայացնել համապատասխան հաշվետվություններ ՀՀ կրթության և գիտության նախարարություն և Հանրապետական ու Կենտրոնի զինվորական կոմիսարիատներ և իրավասու այլ մարմիններ. 2) Համալսարանի ռեկտորի հրամանների համաձայն՝ իրականացրել է աշխատողների, ուսանողների ընդունման և ավարտման շարժի ապահովումը, սահմանված կարգով իրազեկել է համապատասխան զինկոմիսարիատներին՝ ասպիրանտների ընդունման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատողների աշխատանքի ընդունման մասին. 3) Համալսարանից հեռացված /ազատված/ արական սեռի ներկայացուցիչների վերաբերյալ հրամանները սահմանված կարգով և բովանդակությամբ ներկայացրել է համապատասխան զինկոմիսարիատներ. 4) իրականացրել է պարտադիր զինծառայության ենթակա ուսանողների տեղեկանքների ձևակերպումը, դրանք հանձնել համապատասխան զինկոմիսարիատներ և կատարել նրանց շարժի հետ կապված բոլոր անհրաժեշտ գործառույթները. 5) նախապատրաստել է ՀՀ իրավապահ մարմիններից և այլ մարմիններից ստացված գրությունների նախագծեր՝ սահմանված ժամկետներում. 6) իրականացրել է Համալսարանի կողմից տրամադրվող ավարտական փաստաթղթերի ստուգման և վավերացման համար նախատեսված աշխատանքները. 7) իրականացրել է Համալսարան 1-ին կուրս ընդունված առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ստուգման գրքույկների կնքման աշխատանքները. 8) Իրականացրել է արտաքին կառույցներում հաստատման ներկայացվող փաստաթղթերին՝ արտասահման մեկնող շրջանավարտների դիպլոմներին, միջուկներին ռեկտորի ստորագրությամբ ամրակալվում է հավելյալ թերթ:

9) իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացրել է այլ գործառույթներ

Բուհի ռեկտորի հրամանների հիման վրա բաժինը շարունակաբար իրականացրել է բոլոր աշխատակիցների, դասախոսների, ուսանողների ընդունման և ավարտման շարժը:

Ասպիրանտների և դասախոսների ընդունման մասին սահմանված կարգով իրազեկվել է համապատասխան զինկոմիսարիատներին:

Քննաշրջանների ընթացքում բաժինը համագործակցել է ֆակուլտետների հետ. մասնավորապես կնքել կանչ-տեղեկանքներ, բանկային փոխանցումներ, ակադեմիական տեղեկանքներ, քննական տեղեկագրեր, պայմանագրեր, լուծարքի գրաֆիկներ, անհատական հաշվետվության տիտղոսաթերթեր, հաշվապահական փաստաթղթեր, արխիվի տեղեկանքներ և այլն:

Բաժինը համագործակցել է նաև կադրերի բաժնի հետ համաձայնագրերի, հիշեցումների և պայմանագրերի շրջանակում:

Բաժնի կողմից կատարվել են մագիստրոսական թեզերի մատյանների համարակալման, կնքման և վավերացման աշխատանքներ, մագիստրատուրայի շրջանավարտների ցուցակների ստուգումը և դիպլոմների կնքումը, ինչպես նաև շրջիկ թերթիկների ստուգումը և կնքումը:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է կորցրած դիպլոմների ստուգման և կրկնօրինակների կնքման աշխատանքները:

Բաժնի կողմից կատարվել է բոլոր ֆակուլտետներից ներկայացված պետական քննությունների մատյանների համարակալումը և վավերացումը:

Բաժնի կողմից ստուգվել են պետական ավարտական քննությունների մասնակիցների ցուցակները, որից հետո հրամանագրման է ներկայացրել համապատասխան ստորաբաժնում:

Մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել բոլոր դիպլոմները: Ընդունելության քննությունների ընթացքում բաժնի աշխատակիցն ընդունող հանձնաժողովի կազմում ստուգել է արական սեռի դիմորդների փաստաթղթերը և վավերացվել:

Բաժնի կողմից իրականացվել է պետպատվերի շրջանակներում ընդունված զինակոչիկների, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողների անվանացուցակների համապատասխան զինկոմիսարիատներ ուղարկելու աշխատանքները:

Սահմանված կարգով ուսումնական տարվա սկզբին կանչվել են բոլոր արական սեռի ուսանողները, կազմվել է համապատասխան փաստաթուղթ, որով կատարվում են հետագա աշխատանքները: Միևնույն ժամանակահատվածում կանչվել են նաև զինապարտ աշխատակիցները, դասախոսները, որից հետո աշխատակիցների անվանացանկն ըստ բնակության վայրի ուղարկել համապատասխան զինկոմիսարիատներ:

Բաժինն ուղղակի մասնակցություն է ունեցել ընդունելության արդյունքներով բուհ ընդունված անձանց հրամանների ճշգրտման, ինչպես նաև ստուգման գրքույկների կնքման աշխատանքներում:

Բաժնի կողմից իրականացվում են նաև ուսանողների հետ համապատասխան պայմանագրերի կնքման աշխատանքներ:

ՀՀ Պաշտպանության Նախարարի 07.10.2014թ. ՊՆ/510-1755 գրության համաձայն բաժինը համագործակցել է մեթոդական բաժնի հետ, ինչպես նաև վերջերս ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016թ սեպտեմբերի 1-ի թիվ 01/06. 2/10525-16 գրության ապրիլյան պատերազմին մասնակցած՝ զեղչային արտոնությունից օգտվող ուսանողների զինգրքույկներից տրամադրելով համապատասխան փաստաթղթեր:

39. Նախապատրաստական բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Նախապատրաստական բաժնի գործունեության հիմնական նպատակը համապատասխան ուսումնական հաստատությունների ավարտական դասարանների աշակերտներին և սովորողներին բուհ ընդունելության նախապատրաստումն է:
Բաժինը կազմակերպում է դիմորդների նախապատրաստումը ընդունելության քննություններին ՀՀ բուհերում:
Բաժինը, ըստ հաստատված կարգի իր առջև ունի հետևյալ խնդիրները

- դիմորդին ճիշտ իրազեկել ընտրած մասնագիտության հարցում,
- դիմորդին ծանոթացնել իր արտոնությունների և պարտականությունների մասին ըստ բուհի կանոնակարգի, որը հաստատված է բուհի գիտական խորհրդի կողմից:
- ուսումնական պարապունքները կազմակերպել ընդունելության քննական առարկաներից ԲՈՒՀ-երի բոլոր մասնագիտությունների գծով, ըստ ՀՀ Կառավարության կողմից հաստատված ցանկի:

Բաժինը հետամուտ է լինում բարձրացնել ընդունելության քննություններին ապագա դիմորդների պատրաստվածության աստիճանը բոլոր առարկաներից:
Բաժինը նպաստում է սովորողների ստեղծագործական և միջանձնային շփման, կողմնորոշմանն առընչվող համատեղ գործունեության մեջ և դրանց հիման վրա փորձարկել համալսարանի մասնագիտական կողմնորոշման փորձնական ծրագրերը:
Երկարաժամկետ նախապատրաստական դասընթացների ունկնդիրների գիտելիքների նախնական մակարդակին համապատասխան խմբեր ձևավորելու նպատակով բաժինը բոլոր առարկաներից նախապես անցկացնում է թեստավորում:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	Հոկտեմբեր-մայիս	Անցկացվել են համալսարանի բաց դռների արտագնյա օրեր կրթական հաստատություններում: Ստեղծվել են դպրոցականների, որպես ապագա դիմորդների աջակցման պայմաններ և մրցանակների հանձնում: Ստեղծվել են ընդունելության հարցերին վերաբերվող ֆակուլտետային տարբեր ձևաչափի խորհրդատվական ծառայություններ (ֆորումներ, հանդիպումներ): Կազմակերպվել են ապագա դիմորդների հետ սոցիալական ցանցերում համագործակցության համակարգ՝ թիրախային լսարանի շրջանակների լայնացման և նոր դիմորդների ներգրավման նպատակով: Անցկացվել են տեսական և գործնական արդիական խնդիրներին նվիրված հանդիպումներ,	Ֆակուլտետներից և ամբիոններից բաղկացած տարբեր խմբեր այցելություններ են կազմակերպել Երևանի և ՀՀ մարզերի ավագ և հիմնական դպրոցներ: Հանդիպել են դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ: Կատարվել են իրազեկման աշխատանքներ դպրոցներում բուհի մասնագիտությունների կարևորության, բուհի նպատակների, կրթական որակի, ուսման վճարների, կրթական ծրագրերի և այլնի մասին թեմաներով: Կազմակերպվել են այցելություններ համալսարան, որտեղ աշակերտներին ծանոթացրել են բուհի կանոնակարգին և ուսանողների առօրյայի հետ կապված հարցերին:

		կոնֆերանսներ հանրապետության կրթական հաստատություններում:	Նախապատրաստական բաժինը 2017 թ.-ին ունեցել է շուրջ 80 դիմորդ:
	Դեկտեմբեր	Ըստ տարեկան պլանի բաժինը կազմակերպել և մշակել է միջոցառումների շարք ապագա ուսանողներին բուհում ուսուցանելու պայմաններին իրազեկելու համար:	Անցկացվել են տեսական և գործնական մանկավարժական արդիական խնդիրներին նվիրված հանդիպումներ, սեմինարներ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի ավագ և հիմնական կրթական հաստատություններում:

3. Հաշվետու տարում բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Ռեկտորատի նիստում քննարկվել և ուղղարկվել է նամակներ Երևանի ու ՀՀ մարզերի ավագ դպրոցների աշակերտներին, կողմնորոշելու մասնագիտական ընտրության մեջ և մասնակցելու համալսարանի միջոցառումներին: Մշակվել ու կազմակերպվել են դպրոցականի համար համալսարանի ֆակուլտետներում մասնագիտական գիտելիքներին և հետազոտության խնդիրներով հետաքրքրվածության մակարդակի աճին նպաստող միջոցառումներ, առարկայական օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ և այլն: Անցկացվել են տեսական և գործնական մանկավարժական արդիական խնդիրներին նվիրված հանդիպումներ, սեմինարներ, կոնֆերանսներ հանրապետության կրթական հաստատություններում:

40. Իրավաբանական կենտրոն

1. Իրավաբանական կենտրոնի հիմնական նպատակները, խնդիրները և գործառույթները՝ համաձայն հաստատված կարգի

1) Համալսարանի գործունեության ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ ապահովում է օրինականության պահպանումը. • մասնակցում է Համալսարանի առջև դրված նպատակներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, պայմանագրերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստմանը. • ստուգում է Համալսարանի ռեկտորի հրամանների նախագծերի, ՀՊՄՀ կանոնակարգերի նախագծերի, ստորաբաժանումների կանոնադրությունների նախագծերի և իրավական բնույթի այլ փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրության պահանջներին. • իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ, 2) տրամադրում է անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն. 3) սահմանված կարգով ներկայացնում է Համալսարանի շահերը դատարանում և այլ մարմիններում, ապահովում է Համալսարանի ներկայացուցչությունը դատական ատյաններում և այլ մարմիններում, իրականացնում է Համալսարանի շահերի պաշտպանությունը:

2. Հաշվետու տարվա համար Իրավաբանական կենտրոնի պլանավորած աշխատանքները

ա/ Ռազմավարական պլանի համաձայն

	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	Իրականացնել մարդկային ռեսուրս-ների կառավարման կարողություն-ների զարգացման ծրագիր և մշակել հայեցակարգ: ՌԾ 2016-2020, խնդիր 3.2/1	Համալսարանի Իրավաբանական կենտրոնը Համալսարանի անձնակազմի հաշվառման բաժնի հետ համատեղ 2017թ. ընթացքում ներգրավվել է Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի <<Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար>> համատեղ Ծրագրին: Նշված Ծրագրի շրջանակներում որպես առանձին բաղադրիչ դիտվել է <<Մարդկային ռեսուրսների կառավարման թափանցիկությունը և հաշվետվողությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում>>: Արդյունքում ստեղծված Ուղեցույցն ու Գործիքակազմը ներկայացվել են Ծրագրի փորձագետների կողմից Ծրագրի արդյունքների մասին ամփոփիչ Համաժողովի ընթացքում 2017թ. նոյեմբերի 30-ին: Այս փաստաթղթերի հիման վրա և հաշվի առնելով ՀՀ ԿԳՆ կողմից մշակված և քննարկման ներկայացված «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծի համապատասխան դրույթները մարկային ռեսուրսերի կառավարման կարողությունների զարգացման Ծրագիրի իրագործումը կկրի շարունակական բնույթ:
2.	Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական և աշխատանքի նկա-րագրեր ուսումնաօժանդակ , տեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար: ՌԾ 2016-2020, խնդիր 3.2/4	ԻԿ և ԱՀ բաժինը համատեղ մշակել և պատրաստել են ՀՊՄՀ հաստիքացուցակում ընդգրկված բոլոր պաշտոնների անձնագրերը և պաշտոն չհամարվող աշխատատեղերի նկարագրեր: Ռեկտորի հաստատմանը ամբողջական փաթեթը կներկայացվի 2017թ. դեկտեմբեր ամսին՝ հաստիքացուցակի հետ փոխկապակցված:
3.	Լրամշակել ուսանողների իրավունքների և պարտականությու ննների մասին քաղաքականությու նը: ՌԾ 2016-2020, խնդիր 4.5/6	Համալսարանի Իրավաբանական կենտրոնը Համալսարանի անձնակազմի հաշվառման բաժնի հետ համատեղ 2017թ. ընթացքում ներգրավվել է Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի <<Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար>> համատեղ Ծրագրին: Նշված Ծրագրի շրջանակներում որպես առանձին բաղադրիչ դիտվել է << Բարձրագույն ուսումնական հաստատությունների տիպային էթիկայի կանոնագրքերը՝ ուսանողների, վարչական և ակադեմիական անձնակազմերի համար>>: Արդյունքում ստեղծված Տիպային կանոնակարգերը ներկայացվել են Ծրագրի փորձագետների կողմից Ծրագրի արդյունքների մասին ամփոփիչ Համաժողովի ընթացքում 2017թ. նոյեմբերի 30-ին: Այս փաստաթղթերի հիման վրա և հաշվի առնելով ՀՀ ԿԳՆ կողմից մշակված և քննարկման ներկայացված «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության

		օրենքի նախագիծի համապատասխան դրույթները 2018թ. ընթացքում բուհում կիրականացվի իմպլեմենտացիան:
4.	Բարձրացնել համալսարանի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը, շեշտադրել կառուցվածքային ստորաբաժանումների խոշորացումը և պատասխանատվության տեղափոխումը ստորաբաժանումների մակարդակ՝ բարձրացնելով դրանց գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը ՌԾ 2016-2020, խնդիր 5.1/1	Ապահովվել է կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ նախատեսող ՖԾՎ վարչության կողմից նախապատրաստվող իրավական ակտերի օրինականությունը և դրա հետ փոխկապակցված՝ ՖԾՎ և ԱՀ բաժնի կողմից նախապատրաստվող հաստիքակազմի փոփոխությունների օրինականությունը: Հաստիքացուցակի պաշտոնների անձնագրերի և աշխատատեղերի նկարագրերի դրույթները կցվում են աշխատողների պայմանագրերին: Վերանայվել և ըստ իրավասության ռեկտորի կամ գիտական խորհրդի հաստատմանն են նախապատրաստվել ՀՊՄՀ հետևյալ ստորաբաժանումների կանոնադրությունները՝ - Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիայի կանոնադրություն, - Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի կանոնադրություն, - Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, - Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի կանոնադրություն, - Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կանոնադրություն, - Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի Կանոնադրություն, - Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կանոնադրություն:

բ/ տարեկան պլանի համաձայն

	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկել ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական դիմումները և լուծել դրանց ընթացքը.	ընթացք է տրվել ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց թվով 1495 դիմումներին.
2.	իրականացնել ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց ընդունելություն, որի ընթացքում պարզաբանել նրանց իրավունքները, պարտականությունները՝ իրավական առումով սպառիչ պատասխանելով նրանց կողմից բարձրացված հարցերին.	պարբերաբար կազմակերպվել և իրականացվել է ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց ընդունելություն, որի ընթացքում պարզաբանվել են նրանց իրավունքները, պարտականությունները և տրվել են նրանց կողմից բարձրացված հարցերի սպառիչ պատասխաններ.
3.	Հնարավորինս միջամտել և հասնել նրան, որ ավարտվի ՀՊՄՀ մասնաշենքեր և Ալեք Մանուքյան փող.	Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ՀՊՄՀ մասնաշենքերի վերաբերյալ կադաստրի կողմից տրվել է սեփականության իրավունքի

	մասնաշենքի սեփականության վկայական ձեռք բերելու համար Երևանի քաղաքապետարանի կողմից շուրջ երեք տարի ձգձգվող որոշման կայացումը, որը հնարավորություն կընձեռի դիմել կադաստրի համապատասխան մարմին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնաշենքի սեփականության վկայականը ստանալու համար:	վկայականներ, իսկ ՀՊՄՀ միջամտության արդյունքում ՀՊՄՀ Ալեք Մանուքյան փող. մասնաշենքի սեփականության վկայական ձեռք բերելու համար Երևանի քաղաքապետարանի կողմից կայացվել է որոշում: Սկսվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնաշենքի սեփականության վկայականը ստանալու համար հաջորդ փուլի գործընթացը:
4.	ընթացք տալ դատական գործերին, ներկայացնել հայցադիմումներ, անհրաժեշտ միջնորդություններ և շարունականաբար իրականացնել դատական ներկայացուցչություն:	ընթացք են տրվել դատական վարույթում գտնվող թվով 42 դատական գործերին, ներկայացվել են հայցադիմումներ, որոնց քննության շրջանակներում ներկայացվում են անհրաժեշտ միջնորդություններ և շարունականաբար իրականացվում է դատական ներկայացուցչություն: <<Բաղդոյան-Շին>> ընկերության կողմից Համալսարանի դեմ ներկայացված հայցապահանջի շրջանակներում ավարտվել է դեռևս 2010թ. ընթացող դատական ներկայացուցչությունը: Արդյունքում ՀՊՄՀ որպես քաղաքացիական գործով պատասխանող հանդիսացող ներկայացված բոլոր պահանջները բավարարվել են և ՀՊՄՀ-ի դեմ ներկայացված՝ 45.000.000 գումարի պահանջը ամբողջությամբ մերժվել է: Նպատակային ուսուցման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը խախտած ուսանողների հետ տարվող աշխատանքի արդյունքում Համալսարանին վճարվել է 9.527.000 ՀՀ դրամ:
5.	ՀՊՄՀ ռեկտորի լիազորագրերի հիման վրա Համալսարանը ներկայացնել ՀՀ պետական մարմիններում, կազմակերպություններում և այլ անձանց հետ հարաբերություններում:	ՀՊՄՀ ռեկտորի լիազորագրերի հիման վրա Համալսարանը ներկայացվել է ՀՀ պետական մարմիններում, կազմակերպություններում և այլ անձանց հետ հարաբերություններում:
6.	ՀՀ օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից ուսումնասիրել ՀՊՄՀ-ի ռեկտորի բոլոր հրամանների նախագծերը:	ՀՀ օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից ուսումնասիրվել են ՀՊՄՀ-ի ռեկտորի բոլոր հրամանների նախագծերը իրենց փաստաթղթերի փաթեթների հետ միասին, որոնք նախապատրաստվում են տարբեր ստորաբաժանումների կողմից: Մասնավորապես, ուսումնասիրվել և եզրակացություն է տրվել՝

		ա/ անձնակազմի հաշվառման բաժնի կողմից նախապատրաստված 1100 հրամանների նախագծերի վերաբերյալ, բ/ ուսումնական բաժնի կողմից նախապատրաստված 900 հրամանների նախագծերի վերաբերյալ, գ/ պրակտիկայի կենտրոնի կողմից նախապատրաստված 7.476 ուսանողների վերաբերյալ հրամանների նախագծերի վերաբերյալ,
7.	Ուսումնասիրել ՀՊՄՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցման դիմումներն իրենց փաստաթղթերի փաթեթների հետ միասին և հայտնվել է համապատասխան դրական կամ բացասական կարծիք:	Ուսումնասիրվել են ՀՊՄՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցման 3895 դիմումներն իրենց փաստաթղթերի փաթեթների հետ միասին և հայտնվել է համապատասխան դրական կամ բացասական կարծիք:
8.	Իրավական ապահովման տեսանկյունից մասնակցություն ՀՊՄՀ-ի կողմից իրականացվող գնումների գործընթացին:	Իրականացվել է մասնակցություն ՀՊՄՀ-ի կողմից իրականացվող գնումների գործընթացին՝ իրավական ապահովման տեսանկյունից:
9.	Իրավական ապահովման տեսանկյունից մասնակցություն ՀՊՄՀ-ում ուսումնա-օժանդակ անձնակազմի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթների հանձնաժողովի աշխատանքներին:	Իրականացվել է մասնակցություն ՀՊՄՀ-ի կողմից ուսումնա-օժանդակ անձնակազմի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթների հանձնաժողովի աշխատանքներին՝ իրավական ապահովման տեսանկյունից: Թվով 25 մրցույթներին մասնակցել է 105 հավակնորդ, տեղակալվել է 11 թափուր հաստիք /այդ թվում՝ 2- դեկանի օգնական; 2- գրադանավար; 7- մասնագետ/:
10.	Մասնակցություն ՀՊՄՀ-ում միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվող մրցույթային հանձնաժողովի աշխատանքներին:	Իրականացվել է մասնակցություն ՀՊՄՀ-ում միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվող մրցույթային հանձնաժողովի աշխատանքներին՝ իրավական ապահովման տեսանկյունից:
11.	Ապահովել ՀՀ ԿԳՆ ներքին աուդիտի եզրակացության, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ուսումնասիրության հետ կապված իրավական նշանակություն ունեցող բոլոր անհրաժեշտ գործողությունները:	Ապահովվել է ՀՀ ԿԳՆ ներքին աուդիտի եզրակացության, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ուսումնասիրության հետ կապված իրավական նշանակություն ունեցող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
12.	Ապահովել, որ ՀՊՄՀ-ի անունից կազմված պայմանագրերի նախագծերը համապատասխանեն ՀՀ օրենսդրության	ՀՊՄՀ-ի անունից կազմվել կամ կազմված պայմանագրերի նախագծերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրության

	պահանջներին /առուվաճառք, վարձակալության, ծառայությունների մատուցման և այլն/:	պահանջներին /առուվաճառք, վարձակալության, ծառայությունների մատուցման և այլն/:
13.	իրականացնել Համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողների պրակտիկան:	Պրակտիկայի վարչության միջնորդությամբ իրականացվել է Համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի 8 ուսանողների պրակտիկան:
14.	Վերանայվել և ըստ իրավասության ռեկտորի կամ գիտական խորհրդի հաստատմանը նախապատրաստել ՀՊՄՀ վերակազմակերկերպվող կամ ստեղծվող ստորաբաժանումների կանոնադրությունները:	Վերանայվել և ըստ իրավասության ռեկտորի կամ գիտական խորհրդի հաստատմանն են նախապատրաստվել ՀՊՄՀ հետևյալ ստորաբաժանումների կանոնադրությունները՝ - Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիայի կանոնադրություն, - Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի կանոնադրություն, - Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, - Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի կանոնադրություն, - Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կանոնադրություն, - Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի Կանոնադրություն, - Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կանոնադրություն:
15.	Համալսարանի ԱՀ բաժնի հետ համատեղ մշակել պաշտոնի անձնագրեր վարչական և աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, տեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:	ԻԿ և ԱՀ բաժինը համատեղ մշակել և պատրաստել են ՀՊՄՀ հաստիքացուցակում ընդգրկված բոլոր պաշտոնների անձնագրերը և պաշտոն չհամարվող աշխատատեղերի նկարագրերը: Ռեկտորի հաստատմանը ամբողջական փաթեթը կներկայացվի 2017թ. դեկտեմբեր ամսին՝ հաստիքացուցակի հետ փոխկապակցված:

3. Հաշվետու տարում պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

1. Վերանայվել և ըստ իրավասության ռեկտորի կամ գիտական խորհրդի հաստատմանն են նախապատրաստվել ՀՊՄՀ հետևյալ ստորաբաժանումների կանոնադրությունները՝ - Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիայի կանոնադրություն, - Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի կանոնադրություն, - Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,

- Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի կանոնադրություն, - Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կանոնադրություն, - Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի Կանոնադրություն, - Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կանոնադրություն: 1. ԻԿ և ԱՀ բաժինը համատեղ մշակել և պատրաստել են ՀՊՄՀ հաստիքացուցակում ընդգրկված բոլոր պաշտոնների անձնագրերը և պաշտոն չհամարվող աշխատատեղերի նկարագրերը: ամբողջական փաթեթը Ռեկտորի հաստատմանը կներկայացվի 2017թ. դեկտեմբեր ամսին՝ հաստիքացուցակի հետ փոխկապակցված: 2. Մշակվել և համալսարանի գիտական խորհրդի 2017թ. սեպտեմբերի 14-ի թիվ 1 նիստում հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու մասին ժամանակավոր կարգը:
Իրավաբանական կենտրոնը Համալսարանի գործունեության ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ ապահովում է օրինականության պահպանումը՝ - մասնակցելով Համալսարանի առջև դրված նպատակներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, պայմանագրերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստմանը. - ուսումնասիրելով և ներկայացնելով կարծիք Համալսարանի ռեկտորի հրամանների նախագծերի, ՀՊՄՀ կանոնակարգերի նախագծերի, ստորաբաժանումների կանոնադրությունների նախագծերի և իրավական բնույթի այլ փաստաթղթերի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ հարցերով. - իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնելով այլ գործառույթներ, - տրամադրելով անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն. - սահմանված կարգով ներկայացնելով Համալսարանի շահերը դատարանում և այլ մարմիններում, ապահովելով Համալսարանի ներկայացուցչությունը դատական ատյաններում և այլ մարմիններում, իրականացնելով Համալսարանի շահերի պաշտպանությունը:
Իրավաբանական կենտրոնի կողմից պարտականությունները կատարվում են բավարար:

41. Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն

1. Կենտրոնի հիմնական խնդիրները և գործառույթները՝ համաձայն հաստատված կարգի

Կենտրոնի խնդիրներն են՝
1. ապահովել Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սարքինությունը և բնականոն աշխատանքը, արագ արձագանքել ու լուծել տեխնոլոգիական, ներառյալ՝ Համալսարանի համար արդիական համակարգչային ծրագրավորման խնդիրները. 2. ապահովել համակարգչային ներքին ցանցի անխափան աշխատանքը. 3. աջակցել Համալսարանում տեղի ունեցող տարատեսակ գործընթացներին՝ տեղեկատվական տեխնոլոգիաներով. 4. իրականացնել ժամանակակից պայմաններին բավարարող ավտոմատ կառավարման համակարգերի մշակում և համապատասխան ոլորտներում ներդնում:
Կենտրոնն իր խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝
1) կատարում է Համալսարանի համակարգչային ֆոնդի տեխնիկական և ծրագրային սպասարկում.

2) կառուցում և սպասարկում է համակարգչային ներքին ցանցը և ենթացանցերը, ըստ պահանջի դրանք փոփոխում և հնարավություններն արդիականացնում, բաշխում լարային և անլար ինտերնետ կապը և տրամադրում ու կառավարում է մուտքի իրավունքները.
3) ծրագրավորում է օգտագործվող սերվերները, իրականացնում ընթացիկ սպասարկումն ու անվտանգության ապահովումը.
4) Համալսարանում տեղի ունեցող միջոցառումների, գիտաժողովների, նիստերի ընթացքում ապահովում է համակարգչային տեխնոլոգիաներով ու սպասարկում, իրականացվող նախագծերի և ծրագրերի ընթացքում ապահովում է տեղեկատվական-տեխնիկական աջակցություն.
5) աջակցում է ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնմանը,
6) նախագծում, պատրաստում (ծրագրավորում) և կիրառում է Համալսարանի ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգեր (ծրագրային ապահովումներ, առանձին բաղադրիչներ և հավելվածներ),
7) իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

2. Հաշվետու տարվա համար կենտրոնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Անընդհատ-շարունակական	Համալսարանում SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովում, համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցների սպասարկում, նորարարությունների մշտադիտարկում և ներդնում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
Անընդհատ-շարունակական	Համալսարանի ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի (ՈՒԳԱԿՀ) զարգացում, կառավարման ոլորտների ընդլայնում, համապատասխան մոդուլների և բաղադրիչների փոխազդեցության և կապակցման ապահովում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
Հունվար-փետրվար սեպտեմբեր-նոյեմբեր	Պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման և ուսանողների կրթական առաջխաղացման մշտադիտարկման (նաև տարաբնույթ տվյալների ստացման) համակարգի ներդնում՝ ուսումնական գործընթացի կառավարման առցանց հարթակում:	ՈՒԳԱԿՀ-ում ստեղծվել է նշված գործողությունն ապահովող նոր <<Վարչական մաս>> մոդուլ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):

Անընդհատ-շարունակական	Դասախոսական կազմի SS ոլորտում վերապատրաստմանն ուղղված անհատական կոնսուլտացիաների կազմակերպում, տեխնիկական միջոցների կիրառման հարցերում աջակցում	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
Մարտ-ապրիլ	Համալսարանի գրադարանի, ընթերցասրահների ու գրա-պահոցի արդիականացում, ներքին գրադարանային ենթացանցի կառուցում և դրանում թվայնացված գրականության զետեղում:	1-ին և 6-րդ մասնաշենքերի Էլեկտրոնային ընթարցասրահների միջև կառուցվել է ներքին ենթացանց, զետեղվել է գրադարանում առկա թվային գրականության շտեմարանը:
Հուլիս-հոկտեմբեր	Համալսարանում լիարժեք տեխնոլոգիական կարողությամբ ապահովված՝ անլար ինտերնետային ծածկույթով, համակարգչով, ցուցադրման թվային սարքով, ինտերակտիվ գրատախտակով և այլ անհրաժեշտ պարագաներով, լսարանների թվի ավելացում:	Ընթացիկ տարում ավելացվել են 15 նոր ինտերակտիվ լսարաններ, վերազինվել և տեխնիկապես հզորացվել են շուրջ 30 լսարաններ և համապատասխան լսարանային սարքավորումներ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):

բ/ տարեկան պլանի համաձայն

	Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	Անընդհատ-շարունակական	Համալսարանի համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
2.	Անընդհատ-շարունակական	Համալսարանի ներքին լարային ցանցի, ինչպես նաև անլար ցանցի լրացման, կառավարման և սպասարկման աշխատանքներ, համացանցի անընդհատ հասանելիության ապահովման աշխատանքներ:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
3.	Անընդհատ-շարունակական	Համալսարանի ներքին և արտաքին էլեկտրոնային ռեսուրսների կառավարման և անվտանգության ապահովման աշխատանքներ:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
4.	Մարտ, Մայիս-հուլիս	Էլեկտրոնային գնահատման համակարգով բակալավրի կրթական ծրագրով ավարտական քննությունների տեխնիկական նախապատրաստում (ներառյալ լրացուցիչ տեխն. միջոցների անհրաժեշտության գնահատում և ներկայացում) և քննական	Իրականացվել է (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):

		գործընթացի տեխնիկական սպասարկում:	
5.	Մայիս-հուլիս	Ավարտական դիպլոմների տպում:	Իրականացվել է ընթացիկ տարվա բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ծրագրերով ավարտական դիպլոմների ամբողջ քանակի տպում:
6.	Հունվար – մարտ Սեպտեմբեր-դեկտեմբեր	Համալսարանի ՈՒԳԱԿՀ-ում նոր <<Վարչական մաս>> մոդուլի ստեղծում (ծրագրավորում) և ներդնում, եղած մոդուլների փոխկապակցում:	Իրականացվել է ամբողջությամբ (մանրամասները՝ 3-րդ կետում):
7.	Անընդհատ-շարունակական	Համակարգչային և տեսաձայնային տեխնիկայով հագեցած ինտերակտիվ լսարանների տեխնիկական սպասարկում և տեխնիկական վիճակի մշտադիտարկում, դասախոսական կազմին օգտագործման հարցերում օժանդակում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
8.	Անընդհատ-շարունակական	ՈՒԳԱԿՀ-ի սպասարկում, օգտատերերին օժանդակում և ուղղորդում, ըստ ընթացիկ պահանջի հնարավորությունների ավելացում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
9.	Անընդհատ-շարունակական	Ընթացիկ պահանջներից ելնելով համալսարանի ղեկավարության և ստորաբաժանումների կողմից իրականացվող նախագծերում SS ներդնում և սպասարկում:	Կատարված աշխատանքները թվարկված են 3-րդ կետում:

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից իրականացրել են հետևյալ աշխատանքները.

- Համալսարանի համակարգչային տեխնիկայի (ընդհանուր թվով շուրջ 750 համակարգիչ և հարակից սարքավորումներ) ծրագրային և տեխնիկական սպասարկման անընդհատ շարունակական բնույթի աշխատանքներ.
  - համակարգիչներում օպերացիոն համակարգերի տեղադրում և կարգավորում, ընթացիկ սպասարկում,
  - անհրաժեշտ ծրագրային փաթեթների տեղադրում, կարգավորում դրանց մշտադիտարկում և տարբերակների՝ ժամանակին համահունչ փոփոխում, ընթացիկ ծրագրային սխալների վերացում, պարբերաբար առաջացող ծրագրային խնդիրների լուծում, հնարավորության սահմաններում վնասված կամ ջնջված տվյալների վերականգնում,
  - հակավիրուսային փաթեթների տեղադրում, դրանց աշխատանքի անընդհատ վերահսկում, բազաների թարմացում, համակարգչային վիրուսների մաքրում,

- տեխնիկական անսարքությունների վերացում, շարքից դուրս եկած մասերի փոխարինում, հնարավորության դեպքում վերանորոգում, ժամանակակից պայմաններին չբավարարող՝ սակավ աշխատունակությամբ համակարգիչների տեխնիկական պարամետրերի հզորացում (փոխարինվող կամ կից ավելացվող համակարգչային սարքավորումների տարբերակով), նոր լրացվող համակարգչային տեխնիկայի տեխնիկական պարամետրերի ձևակերպում, համակարգիչների տեխնիկական վիճակի անընդհատ վերահսկում, բնականոն աշխատունակության ապահովում:
- Հարակից համակարչային տեխնիկայի՝ ներառյալ տպիչների, սքաներների, բազմաֆունկցիոնալ սարքերի, պրոեկցիոն-տեսաձայնային սարքավորումների սպասարկում,
- այլ նմանատիպ աշխատանքներ:
- Համալսարանի ներքին լարային ցանցի՝ ընթացիկ պահանջներից ելնելով փոփոխման, նոր ենթացանցերի ստեղծման, նոր ավելացված համակարգիչների և տեխնիկական միջոցների՝ ընդհանուր ցանցին միացման և այլ շարունակական բնույթի մոնտաժային աշխատանքներ, ցանցի սպասարկման անընդհատ աշխատանքներ (տեղամասային և ընդհանուր բնույթի վթարների վերացում, ենթացանցերում ֆայլերի շրջանառության կազմակերպում, ներառյալ տպիչների ցանցային կիրառման հնարավորության ստեղծում, ծրագրային և տեխնիկական բնույթի այլ աշխատանքներ):
- Սերվերային համակարգերի սպասարկման և անվտանգության ապահովման աշխատանքներ, համացանցի և ներքին ցանցային ծառայությունների հասանելության և մուտքի համապատասխան իրավունքների տրամադրման աշխատանքներ, ցանցի կառավարման այլ աշխատանքներ:
- Համալսարանի կայքերի, դրանց դոմենային անունների և հոսթինգների կարգավորման, կառավարման, աշխատանքի վերահսկման, տեխնիկական սպասարկման և անվտանգության ապահովման աշխատանքներ:
- Անլար ցանցը նոր Wi-Fi սարքերով համալրման աշխատանքներ (տեղադրում և կարգավորում), և համապատասխանաբար Wi-Fi ծածկույթի որակի բարձրացման, անլար ցանցից օգտվողների հնարավոր թվի աստիճանաբար մեծացման, ծածկույթի ընդլայնման աշխատանքներ: Այժմ համալսարանն ամբողջությամբ՝ բացառությամբ որոշ ոչ նպատակահարմար կամ ազդանշանի տարածման համար անբարենպաստ տարածքների, Wi-Fi գոտի է:
- Համալսարանի ղեկավարության և ստորաբաժանումների կողմից իրականացված տարատեսակ ծրագրերում և նախագծերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում և սպասարկում.
- Ավարտական դիպլոմների տպում:
- Լսարաններում համակարգչային տեխնիկայի, ներառյալ պրոեկտորների և էկրանների, ինչպես նաև հեռուստացույցների տեղադրման կազմակերպում, աշխատանքի անընդհատ վերահսկում, տեխնիկական սպասարկում և մշտադիտարկում, կիրառման հարցերում աջակցում: Ընթացիկ տարում կահավորվել է 15 նոր լսարան՝ ինտերակտիվ դասընթաց ապահովող լսարանների ընդհանուր թիվը դարձնելով շուրջ 120: Վերազինվել են նաև 8 ինտերակտիվ լսարաններ, 2 համակարգչային լսարաններ (համակարգչային դասընթացների մասնագիտացված լսարաններ), 2 դահլիճներ, հզորացվել են 20 ինտերակտիվ լսարաններում առկա տեսաձայնային ցուցադրման համակարգիչներ (20 համակարգիչ), մոնտաժային փուլում է մեկ նոր կոնֆերենս սրահ: Կատարվել են նաև շարժական լսարանային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկման աշխատաքներ:
- Գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահներում ներքին ենթացանցի կառուցում, դրանում էլեկտրոնային գրականության ընդհանուր շտեմարանի տեղադրում, հասանելիության (ֆայլաշրջանառության) ապահովում,

- Համալսարանի աշխատակիցների մուտքի-ելքի ֆիքսման համակարգի՝ համապատասխան սարքերի, ցանցային միացումների և ծրագրային ապահովման աշխատանքի վերահսկում և տեխնիկական սպասարկում,
- Մասնաշենքերի նախասրահներում տեղադրված տեսաձայնային վահանակների միասնական համակարգի աշխատունակության վերահսկում և տեխնիկական սպասարկում,
- Հաշվապահության ՀԾ համակարգի աշխատանքի ապահովմանն ուղղված ցանցային սպասարկման աշխատանքեր, հնարավոր խնդիրների արագ վերացման տեխնիկական բնույթի աշխատանքեր,
- Ուսանողական տոմսերի պատրաստման գործում աջակցում,
- Նոր՝ էլեկտրոնային ստուգման կարգով ավարտական քննությունների իրականացումն ապահովելու համար՝ համապատասխան 7 լսարանների տեխնիկական կահավորման, անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի ծրագրային հագեցման, ներքին ենթացանցերի կառուցման և կարգավորման աշխատանքներ: Քննությունների ընթացքում իրականացվել է համակարգչային տեխնիկայի և ցանցի աշխատանքի անընդհատ վերահսկում և սպասարկում, առաջացած խնդիրների արագ կարգավորում: Իրականացվել են նաև քննությունների ընթացքի տեսաձայնագրման, ըստ անհրաժեշտության դրանց որակի բարձրացման և վերարտադրման, ձայնագրությունների դասակարգման և պահպանման տեխնիկական բնույթի աշխատանքներ:
- Համալսարանի ակտիվների և պարտավորությունների տարեկան հաշվառման ընթացքում համակարգչային տեխնիկայի գույքագրում, ըստ անվանումների ստուգում, համապատասխան գույքային կոդերի ամրացում, անվանումների մեջ հնարավոր թերությունների ուղղում:
- այլ նմանատիպ աշխատանքներ:

- Անցկացված գիտաժողովների, նիստերի, ատենախոսությունների պաշտպանությունների, բազմաբնույթ միջոցառումների տեխնիկական աջակցում և սպասարկում (բոլոր դահլիճներում համակարգչային-տեսապատկերման տեխնիկայի կիրառում և սպասարկում, երեք դահլիճներում ձայնային տեխնիկայի սպասարկում):
- Դասապրոցեսում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հարցում տեխնիկական աջակցություն, ուսումնաօժանդակ և վարչական կազմին իրենց աշխատանքներում համակարգչային տեխնոլոգիաների մասով խորհրդատվություններ և աջակցություն:
- Կենտրոնի ծրագրավորողների կողմից ստեղծված ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացմանն ուղղված էլեկտրոնային տեղեկատվական համակարգում (ՈւԳԱԿՀ – ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ) ընթացիկ տարում իրականացվել են արդեն կիրառվող՝ ՈՒսումնական մաս, Ամբիոն, Դեկանատ, Դասախոս մոդուլների սպասարկում, դրանց տեսքի փոփոխում, աշխատանքի բարելավում և նոր հնարավորությունների ավելացում, ինչպես նաև ստեղծվել է նոր մոդուլ.
- Ավելացվել է Վարչական մաս մոդուլը, որով կատարվում է պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորումը ինչպես նաև հնարավորություն է ստեղծում համալսարանի ղեկավարությանը և շահագրգիռ ստորաբաժանումներին մշտադիտարկել համակարգում առկա իրենց հետաքրքրող տեղեկատվությունը (ուսումնական պլանները, դասաբաշխումը, ուսանողների տվյալները, առաջխաղացումը, դասախոսների բեռնվածքը և այլն): Դեկանատ մոդուլում ավելացվել են հետևյալ մասերը.
  - Ստեղծվել է նոր տեսակի ամփոփագիր՝ <<Ընդհանուր ամփոփագիր>>, որն իր մեջ անմիջապես ներառում է միջանկյալ ստուգումները և ստուգարքի, հաճախման ու քննության գնահատականները լրացնելու սյունակները:
  - Ավելացվել է ամփոփագիրը դիտելու նոր հնարավորություն՝ ամփոփիչ դիտում, որում բացի հիմնական գնահատականներից երևում են նաև լուծարքների արդյունքում ստացված

գնահատականները: Այստեղ երևում են նաև առարկայի համար նշանակված բաղադրիչների տոկոսները: ➢ Ստեղծվել են ընդհանուր ամփոփագրերին համապատասխան լուծարքային ամփոփագրերը: ➢ Ավելացվել է ակադեմիական պարտքի և շարժունության ամփոփագրեր ստեղծելու հնարավորություն: ➢ Ավելացվել է դասախոսների վարկանիշավորման գործիքակազմը (նոր ստեղծված Վարչական մաս մոդուլի տրամաբանությանը համաձայն)՝ դեկանատի մասով (դասախոսների աշխատաքնի գնահատում դեկանատի կողմից): ➢ Բարելավվել և տարբեր ուսուցման ձևերին են համապատասխանեցվել դիմպլոմների հավելվածները: ➢ Ուսանողների տվյալների դիտման մեջ՝ ընհանուր ՄՈԳ-ում և անհատական ՄՈԳ-ում, ավելացվել է հեռացված, տարկետված, ավարտած ուսանողների տվյալները դիտելու հնարավորություն: ➢ Ավելացվել է նաև ուսումնական պլանները դիտելու հնարավորությունը: ▪ Ամբիոն մոդուլում ավելացվել են հետևյալ մասերը. ➢ Բարելավվել է բաղադրիչների դիտման և մուտքագրման հատվածը: ➢ Ավելացվել է դասախոսների վարկանիշավորման գործիքակազմը (նոր ստեղծված Վարչական մաս մոդուլի տրամաբանությանը համաձայն)՝ ամբիոնի մասով (դասախոսների աշխատաքնի գնահատում ամբիոնի կողմից): ➢ Փոփոխություններ են արվել դասախոսների տվյալների դիտման և խմբագրման մասերում: ▪ Դասախոս մոդուլում կատարվել են փոփոխություններ՝ կապված ընդհանուր ամփոփագրերի և դրանց լուծարքների լրացման և դիտման հետ: Ավելացվել է նաև դասախոսների վարկանիշավորման մասը, որտեղ դասախոսը գրանցում է տարված ընթացքում իր կատարած աշխատանքները: ▪ Ուսումնական մաս մոդուլում կատարվել են մյուս մոդուլների լրացումներին համապատասխան փոփոխություններ: ▪ Բոլոր մոդուլներում ավելացվել է հայտարարությունների մաս:
Ընթացիկ տարում կենտրոնը հիմնականում իրականացրել է համակարգչային և ցանցային սպասարկման տեխնիկական բնույթի անընդհատ շարունակական աշխատաքներ, համալսարանի ղեկավարության և ստորաբաժանումների կողմից իրականացված ծրագրերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և սպասարկման, ինչպես նաև ՈՒԳԱԿՀ նոր բաղադրիչների ծրագրավորման աշխատանքեր: Նշված աշխատանքների ծավալները, մեթոդները և բովանդակությունը անընդհատ փոփոխվում են SS ոլորտի արագ զարգացմանը և համալսարանում SS հագեցվածության պարբերաբար աճին համահունչ: Այս հանգամանքը ստիպում է աշխատանքերի պլանավորումն իրականացնելիս խուսափել գործողությունների ու մեթոդների կոնկրետացումից, և առաջնորդվել ընթացիկ պահին ծագած կամ առաջադրված նոր խնդիրները արագ լուծելու և SS միջավայրի բնականոն աշխատանքը ժամանակակից պայմաններին և հնարավորություններին համապատասխան ապահովելու սկզբունքով:
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն իր առջև դրված խնդիրները ձգտել է իրականացնել պատշաճ մակարդակով, գործող մեթոդներին և չափանիշներին համապատասխան: Կենտրոնի գործունեությունը գնահատում ենք բավարար:

42. Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն

1. ՀԳԿ հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Կենտրոնի նպատակն է. ▪ Ամրապնդել և ընդլայնել գործատուների հետ Համալսարանի համագործակցությունը և աջակցել մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման գործընթացին: ▪ Տրամադրել Համալսարանի ուսանողների և շրջանավարտների մասնագիտական առաջընթացին ուղղված խորհրդատվական ծառայություններ:
Կենտրոնի խնդիրներն են. Փոխհամագործակցություն գործատուների հետ ▪ Ստեղծել և ապահովել հետադարձ կապ գործատուների հետ, ուսումնասիրել և վերլուծել Համալսարանի ուսանողների և շրջանավարտների պատրաստվածության վերաբերյալ գործատուի առաջարկները: Աջակցում և խորհրդատվություն միտված ուսանողների և շրջանավարտների կարիերայի առաջընթացին՝ ▪ աջակցել Համալսարանի ուսանողների, շրջանավարտների կարողությունների բացահայտմանը և խթանել աշխատաշուկայում նրանց հետագա մրցունակության բարձրացմանը, ▪ հիմնել փոխշահավետ համագործակցություն արտաքին կազմակերպությունների հետ՝ Կենտրոնի գործունեության շրջանակներում: Կենտրոնն իր խնդիրների և նպատակների իրականացման համար սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները. ▪ տվյալների շտեմարանում ուսանողների գրանցման աջակցում ու նրանց մասին տեղեկատվության տեղադրում, ▪ ռեզյումեների և ուղեկից նամակների կազմման խորհրդատվության տրամադրում, ▪ ինքնագնահատման, հարցազրույց անցնելու հմտությունների խորհրդատվության տրամադրում, ▪ աշխատանքային տոնավաճառների, սեմինարների, կրթական ցուցահանդեսների մասնակցում, ▪ Համալսարանի և պոտենցիալ գործատուների միջև արդյունավետ կապի ստեղծում, ▪ գործատուների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում և համակարգում, ▪ Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ աշխատանքների իրականացում, ▪ համագործակցություն արտաքին կառույցների հետ, որոնց գործունեությունը առնչվում է զբաղվածության ապահովման գործընթացների հետ:

2. Հաշվետու տարվա համար ՀԳԿ պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Նպատակ4 Խնդիր4.5 2-րդ ենթակետ	04-06.2017	Պլանավորել, կանոնակարգել և իրականացնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթաց:	Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների առկայություն (402): Շրջանավարտների և պոտենցիալ գործատուների հետ հետադարձ կապի ապահովում (համաձայն պլանի կազմակերպվել է 5 աշխատանքային հանդիպում):
Նպատակ4 Խնդիր4.5	04-05.2017	Զարգացնել տեղեկատվական-խորհրդատվական, շրջանավարտների կարիերայի	10 ֆակուլտետներում կազմակերպված և իրականացվաց դասընթացներ,

5-րդ ենթակետ		նախապատրաստման, աշխատատեղերի որոնման ուղղությամբ կենտրոնի կողմից առաջարկված ծառայությունները :	որին մասնակցել են 375 ուսանող, այսինքն նախորդ տարվա համեմատ մասնակիցների թիվը աճել է մոտ 20 տոկոսով: Առկա է դասընթացի էլեկտրոնային տարբերակը
Նպատակ6 Խնդիր6.2 5-րդ ենթակետ	10-11.2017	Կազմակերպել հանդիպումներ մասնագիտական հաջողություններ արձանագրած շրջանավարտների և ուսանողների միջև:	Համաձայն պլանի կազմակերպվել է 2 աշխատանքային հանդիպում


բ/ տարեկան պլանի համաձայն


	Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	01-12.2017	Տեղեկատվության տարածում	- ՀՀ-ում առկա ուսուցիչների թափուր բոլոր մրցույթների մասին տեղեկություն (գործընթացը շարունակվում է), - կրթաթոշակների մասին հայտարարություններ, - դրամաշնորհների մասին հայտարարություններ, - թափուր հաստիքների մասին հայտարարություններ,, - կրթական ծրագրերի (ազգային կամ միջազգային մակարդակով իրականացվող), - այլ տեղեկատվություն կենտրոնի գործունեության մասին:
2.	04-06.2017	Ուսանողների և շրջանավարտների տվյալների շտեմարան	- Հավաքագրվել են ավարտական կուրսերում սովորող և կենտրոնում գրանցվել ցանկացող ուսանողների տվյալները (880 ուսանող) և մուտքագրվել են տվյալների շտեմարան: - Արդեն իսկ ունենք ավելի քան՝ 3356 ուսանողների և շրջանավարտների տվյալների:
3.	01-12.2017	Համագործակցություն գործատուների և համալսարանների հետ	- Ներկայումս համագործակցում ենք մոտ 100 պոտենցյալ գործատուների հետ: - Հիմնել ենք գործընկերային կապեր myjob. ընկերության հետ ՝ պարբերաբար ստանում ենք Համալսարանի մասնագիտական ուղվածությամբ թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ, որը փոխանցում և տարածում ենք ուսանողների և շրջանավարտների շրջանում: - ՎիվաՍել-ՄՏՍ-ի, ԻնգոԱրմենիա ապահովագրական ընկերության հետ առկա են գործընկերային կապեր ուսանողների հետ թրեյնինգներ կազմակերպելու և հետագայում աշխատանքի անցնելու հնարավորության նպատակով: - Համագործակցում ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» -ի հետ: - Համագործակցություն ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի հետ: - Համագործակցություն Դպրոց-կենտրոնների միության հետ - Համագործակցություն Երևանի Քաղաքապետարանի հետ


4.	01-12	Կենտրոնի աջակցությունը շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հարցում	2016-2017թթ.-ի ընթացքում կենտրոնի աջակցմամբ աշխատանքի են անցել համալսարանի 93 շրջանավարտներ:
5.	11. 2017	Աշխատանքային տոնավաճառների մասնակցում	Կենտրոնը իրականացնելով ֆակուլտետների հետ համատեղ աշխատանք մասնակցել է Ամերիկայի դեսպանատան և Կարիերայի լաբի աջակցմամբ կազմակերպված «Կարիերայի և ձեռնարկատիրության » տոնավաճառին: Միջոցառման շրջանակներում ՀՊՄՀ ֆակուլտետների ուսանողները մասնակցեցին կազմակերպված վարպետաց դասերին, պանելային քննարկումներին, սեմինարներին ուղղված հմտությունների ու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև գրանցվեցին թափուր աշխատատեղերի համար նախատեսված մրցույթին մասնակցելու համար: Համալսարան–գործատու կենտրոնը հնարավորություն ունեցավ ընդլայնել համագործակցության շրջանակները ընդգրկելով նոր գործատուներ և առաջարկել շրջանավարտներին մոտ 30 թափուր աշխատատեղեր, իսկ ֆակուլտետները՝ գովազդային–տեղեկատվական նյութերի, տեսահոլովակների միջոցով դպրոցականներին և նրանց ծնողներին ներկայացրեցին ՀՊՄՀ մասնագիտությունները, կողմնորոշեցին ապագա դիմորդներին նրանց մասնագիտության ընտրության հարցում:

3.Հաշվետու տարում ՀԳԿ պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված

Զարգացնել տեղեկատվական-խորհրդատվական, շրջանավարտների կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման ուղղությամբ կենտրոնի կողմից առաջարկված ծառայությունները :
Համալսարանի 10 ֆակուլտետներում կազմակերպվել և իրականացվել են դասընթացներ, որին մասնակցել են 375 ուսանող, այսինքն նախորդ տարվա համեմատ մասնակիցների թիվը աճել է մոտ 20 տոկոսով: Առկա է դասընթացի էլեկտրոնային տարբերակը:
Ինքնագնահատում ՀԿԳ կենտրոնը կանոնակարգով նախատեսված գործառույթները իրականացնում է ռազմավարական պլանում նշված ուղենիշներին համահունչ՝ ապահովելով վերջնարդյունքների ձեռքբերումը սահմանված ժամկետներում:







43. Պրակտիկայի կենտրոն

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (այսուհետև՝ ՀՊՄՀ) ուսանողների մասնագիտական պրակտիկան (այսուհետև՝ պրակտիկա) կազմակերպվում և իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշչին համապատասխան՝ պահպանելով կրթական գործընթացի անընդհատության, հաջորդայնության և շարունակականության սկզբունքը:
Պրակտիկայի նպատակը ուսանողների կոմպետենցիաների զարգացումն է, մասնագիտական և կազմակերպչական կարողությունների ձեռքբերումը կոնկրետ գործունեության ընթացքում, ինչպես նաև ուսումնական նախագծերի, ինքնուրույն հետազոտական աշխատանքների համար ուսումնական ռեսուրսների հավաքագրումն ու ընդհանրացումը:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	Ներդնել մասնագիտական կողմնորոշմանն առնչվող առաջադրանքներ բակալավրիատի ու մագիստրատուրայի մանկավարժական դասընթացներում և պրակտիկաների ծրագրերում:	Մանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերում որպես պարտադիր պայման ներդրվել է արտադասարանական միջոցառումների պահանջը, որի շրջանակներում հանձնարարվել է իրականացնել դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ: Բացի այդ, կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն, մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությամբ սովորողները ակտիվորեն համագործակցում են մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի հետ, որտեղ անցնում են իրենց մանկավարժական պրակտիկան
հունվար, հունիս-հուլիս	Ընդլայնել և բարելավել շահակիցների ներգրավվածությունը կրթական ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում:	2017թ.-ին ընտրվել են նոր դպրոցներ և կենտրոններ՝ մոտ տեսլականում ունենալով մասնագիտական զարգացման դպրոցների հիմնադրման հեռապատկերը: Ընտրված հաստատության ղեկավարներն ու աշխատակիցները ներգրավվել են պրակտիկայի պաշտպանության հանձնաժողովների կազմում: Նոր ընթացակարգով արտաքին շահակիցներն անմիջականորեն մասնակցում են պրակտիկայի արդյունքների գնահատմանը, քանի որ համաձայն կարգի նրանց կողմից տրված բնութագրերը դառնում են պրակտիկայի արդյունքների գնահատման բաղադրիչ՝ «համագործակցային կարողություններ» վերտառությամբ:
Հունվար-դեկտեմբեր	Ստեղծել և գործարկել մասնագիտական զարգացման դպրոցներ	Դեռևս 2016թ.-ին Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն հանդիպեց այն դպրոցների տնօրենների և փոխտնօրենների հետ, որտեղ առաջիկա ուսումնական տարում անցկացվելու է Մանկավարժականի ուսանողների պրակտիկան: Հանդիպման նպատակն էր միասին քննարկել անելիքները, շտկել նախորդ տարիների բացթողումները: Ռեկտորն ընդգծեց, որ մանկավարժական պրակտիկայի բարեփոխումն առաջին հերթին սկսել են կրթական

		հաստատությունների թիվը նվազեցնելուց. նախկին 200-ի փոխարեն 2016-2017 ուսումնական տարում ՀՊՄՀ-ի ուսանողներին կհյուրընկալի ընդամենը 15 հիմնական և ավագ դպրոց, ինչը երկկողմանի շահավետ է և միտված է փոխելու ավանդական դարձած մոտեցումները: Տես նաև https://aspu.am/hy/content/handipum_praktikan_kazmakerpogh_dprocneri_tnorenneri_het/#sthash.HwnjrdB4.lyF22o4E.dpuf Նոր ուսումնական տարում մանկավարժական պրակտիկաները նախատեսվել է կազմակերպել Ա. Շիրակացի, Ավետիսյան, Վարդանանք կրթահամալիրներում, էռնեկյան դպրոցում, թիվ 1, 78, 100, 106, 124, 125, 131, 135, 194, հիմնական դպրոցներում, թիվ 46 ավագ դպրոցում, ՀՊՄՀ հենակետային դպրոցում և վարժարանում, թիվ տարածաշրջանային, հումանիտար, թեթև արդյունաբերության քոլեջոներում, Թերլեմեզյանի անվան ուսումնարանում, մի շարք սոցիալ-հոգեբանական և մշակութային կենտրոններում:
Սեպտեմբեր-դեկ-տեմբեր	○ Ներդնել մասնագիտական կողմնորոշմանն առնչվող առաջադրանքներ բակալավրիատի ու մագիստրատուրայի մանկավարժական դասընթացներում և պրակտիկաների ծրագրերում: ○ Կարևորել ավարտական որակավորման աշխատանքների գիտական և գիտամեթոդական բաղադրիչները՝ ժամանակակից կրթական խնդիրների ու դրանց առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով:	Պրակտիկայի առարկայական նկարագրերում պարտադիր ներդրվել են արտաուսումնական և արտադասարանական առաջադրանքների պահանջը, որոնց շրջանակներում պրակտիկանտները իրականացնում են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ պրակտիկայի հիմնարկներում: Բացի այդ, հաստատվել է սերտ համագործակցություն և գործընկերային կապ ՀՊՄՀ-ի և մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի հետ, որոնք կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մանկավարժություն և հոգեբանություն, սոցիալական մանկավարժություն մասնագիտությունների պրակտիկանտներին շարունակաբար ներգրավում են իրենց աշխատանքներում: Մասնավորապես, մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ում անցկացվող պրակտիկայի շրջանակում նոյեմբերի 17-ին "Արմենիա Մարիոթ" հյուրանոցում կազմակերպված «Կարիերայի և ձեռնարկատիրության տոնավաճառ» միջոցառմանը մասնակցեցին որպես կամավորներ: Գիտամեթոդական բաղադրիչի՝ որակավորման գործընթացում կարևորությանն ուղղված քայլերը մեծամասամբ ամփոփված են պրակտիկայի արդյունքների պաշտպանության ընթացակարգում, որի համաձայն հաշվետու տարում համալսարանի ուսանողները պաշտպանում են պրակտիկայի արդյունքները, որոնք էլ մաս են կազմում նրանց ավարտական որակավորման գնահատականի:

	Ներդնել ուսանողների էլեկտրոնային թղթապանակի /պորտֆոլիո/ տեխնոլոգիայի պրակտիկայի և մասնագիտական առաջընթացի մշտադիտարկման	էլեկտրոնային թղթապանակի /պորտֆոլիո/ տեխնոլոգիայի պրակտիկայի և մասնագիտական առաջընթացի մշտադիտարկման համար նախևառաջ 2016 թվականից ներդրվել է Google classroom համակարգը, որպես պրակտիկայի աջակցման և մշտադիտարկման գործիք: Ներկայումս մշակվել են և հաջողությամբ կիրառվել մշտադիտարկման ցուցիչները, ինչպես նաև կազմակերպվել են հարցումներ googleforms հարցման գործիքի շնորհիվ: արդյունքները ներկայացված են հավելված 1 -ում

բ/ տարեկան պլանի համաձայն

Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
Հունվար	2016 թվականին պրակտիկա անցած ուսանողների պաշտպանության կազմակերպում	Պաշտպանության արդյունքների մասին զեկուցվել է ռեկտորատի նիստին:
Հունվար-Փետրվար	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով հեռակա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների հրամանագրում	Հրամանագրման գործընթացն իրականացվել է պատշաճ, պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի դրույթների համապատասխան: Նկատվել է հրմանագրման հիմքերի ներկայացման ժամկետների որոշ ոչ էական խախտումներ: Էապես սահմանափակվել է անհատական կարգով պրակտիկայի մեկնող ուսանողների քանակը:
Փետրվար	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով հեռակա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների նախապատրաստական կոնֆերանսների կազմակերպում	Կոնֆերանսները կազմակերպվել են ժամանակին, սահմանված ժամկետներում: Ուսանողները տեղեկացել են պրակտիկայի վայրի մասին
Փետրվար-մարտ	հեռակա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների պրակտիկայի ընթացքի մշտադիտարկում	Գործընթացն իրականացվել է պատշաճ, սակայն նկատվել են մի շարք բացթողումներ: Մշտադիտարկման արդյունքները զեկուցվել են ռեկտորատի նիստերում
Մարտ	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով հեռակա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների ամփոփիչ կոնֆերանսների կազմակերպում	Կոնֆերանսները կազմակերպվել են ժամանակին, սահմանված ժամկետներում:
Մարտ-ապրիլ	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով առկա համակարգում սովորող	Հրամանագրման գործընթացն իրականացվել է պատշաճ, պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի դրույթների համապատասխան: Նկատվել է հրմանագրման

	պրակտիկայի մեկնող ուսանողների հրամանագրում	հիմքերի ներկայացման ժամկետների որոշ ոչ էական խախտումներ: Էապես սահմանափակվել է անհատական կարգով պրակտիկայի մեկնող ուսանողների քանակը:
Մարտ-մայիս	Առկա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների պրակտիկայի ընթացքի մշտադիտարկում	Իրականացվել է 50 այց դիտարկում տարբեր խմբերում, որոնց արդյունքների մասին զեկուցվել է ռեկտորատի նիստերին: Համապատասխան որոշմամբ կատարվել են նաև փոփոխություններ հաջորդ ուսումնական տարվա որոշ դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունում:
Ապրիլ-մայիս	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով հեռակա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների ամփոփիչ կոնֆերանսների կազմակերպում	Կոնֆերանսները կազմակերպվել են ժամանակին, սահմանված ժամկետներում:
Հունիս-հուլիս	Ամառային ուսումնական պրակտիկաների կազմակերպում	2017թ. Ամառային ուսումնական պրակտիկայի մասնակցել է 614 ուսանող:
Սեպ-տեմբեր-հոկտեմբեր	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով հեռակա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների ամփոփիչ կոնֆերանսների կազմակերպում	Կոնֆերանսները կազմակերպվել են ժամանակին, սահմանված ժամկետներում:
Սեպ-տեմբեր-հոկտեմբեր	2017-2018ուս. տարվա 1-ին կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով առկա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների հրամանագրում	Հրամանագրման գործընթացն իրականացվել է պատշաճ, պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի դրույթների համապատասխան: Նկատվել է հրմանագրման հիմքերի ներկայացման ժամկետների որոշ ոչ էական խախտումներ: Էապես սահմանափակվել է անհատական կարգով պրակտիկայի մեկնող ուսանողների քանակը:
Հոկ-տեմբեր-նո-յեմբեր	Առկա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների պրակտիկայի ընթացքի մշտադիտարկում	Իրականացվել է 50 այց դիտարկում տարբեր խմբերում, որոնց արդյունքների մասին զեկուցվել է ռեկտորատի նիստերին: Համապատասխան որոշմամբ կատարվել են նաև փոփոխություններ հաջորդ ուսումնական տարվա որոշ դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունում:
Սեպ-տեմբեր-նո-յեմբեր	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով առկա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող	Կոնֆերանսները կազմակերպվել են ժամանակին, սահմանված ժամկետներում:

	ուսանողների ամփոփիչ կոնֆերանսների կազմակերպում	
Հոկ-տեմբեր-նո-յեմբեր	2016-2017ուս. տարվա 2-րդ կիսամյակում մագիստրոսի կրթական ծրագրով առկա համակարգում սովորող պրակտիկայի մեկնող ուսանողների հրամանագրում	Բոլոր պրակտիկայի խմբերի հրամանագրումն իրականացվել է ժամանակին: Մանկավարժահետազոտական պրակտիկաները կազմակերպվել են հիմնական ՀՊՄՀ-ում: Հաջողվել է կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի պրակտիկայի կազմակերպման համար ընտրել նոր բազաներ, որոնք համաձայնել են պրակտիկաներն իրականացնել անվճար
նոյեմբեր	Պրակտիկայի արդյունքների պաշտպանության ժամանակացույցի և հանձնաժողովների կազմի ստեղծում	Բոլոր ֆակուլտետները սահմանված կարգի համաձայն ներկայացնում են պ րակտիկայի արդյունքների պաշտպանության ժամանակացույցը և հանձնաժողովների կազմերը

3. Հաշվետու տարում պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված


Ա. 2017թ. Ապրիլի 13-ին համալսարանի գիտական խորհրդում կենտրոնի ղեկավար Վ. Սարգսյանի կողմից ներկայացվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում պրակտիկայի ընթացքի մասին զեկույցը, որի հիման վրա գիտական խորհուրդը որոշել է.
1. Պրակտիկայի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել.
ա) ֆակուլտետների դեկաններին՝ մինչև սույն թվականի մայիսի 15-ը ներկայացնել գործողությունների ծրագիր՝ իրենց ֆակուլտետներին վերապահված մասնագիտությունների մասնագիտական պրակտիկաները համալսարանի միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ իրականացնելու վերաբերյալ:
բ) Ֆինանսների պլանավորման և վիճակագրության վարչությանը՝ մինչև սույն թվականի մայիսի 20-ը ներկայացված ծրագրերի հիման վրա կազմել ուսումնական պրակտիկաների՝ համալսարանի միջազգային գործընկեր կազմակերպություններում իրականացնելու ծախսերի նախահաշիվ:
գ). ուսումնական գործընթացների կառավարման վարչության պետ Սվետլանա Հովակիմյանին, միջազգային համագործակցության բաժնի պետ Քրիստինա Ծատուրյանին և պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին՝ մինչև սույն թվականի հունիսի 1-ը ամփոփել ֆակուլտետների կողմից ներկայացված ծրագրերը և ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:
դ) մասնագիտական պրակտիկաները կազմակերպող ամբիոնների վարիչներին՝ 2017-2018 ուս. տարում պրակտիկաների ղեկավարումը հանձնարարել համապատասխան փորձառություն ունեցող մասնագետներին, պրակտիկայի համար նախատեսվող ժամաքանակի բաշխման ժամանակ հաշվի առնել տվյալ մասնագետի՝ նույն ժամանակահատվածում տեսական դասընթացներով ծանրաբեռնվածությունը, և ապահովել պրակտիկայի կազմակերպման որակի նկատմամբ պատշաճ հսկողություն,
ե) համալսարանի էլէկտրոնային կրթության բաժնին և պրակտիկայի կենտրոնին՝ ապահովել 2017-2018 ուս. տարում պրակտիկայի առցանց դասընթացների մշտադիտարկման ցուցիչների

գործարկումը և առցանց դասընթացների տեխնիկական բնութագրերի համապատասխանեցումը պրակտիկայի կազմակերպման նոր պահանջներին: Զեկույցում տեղ են գտել պրակտիկայի գործընթացի գնահատման որակական ցուցիչները, ինչպես նաև ուսանողների և պրակտիկայի ղեկավարների շրջանում կազմակերպված հարցման արդյունքների ամփոփ պատկերը Բ. Քարտեզագրվել են կուլտուրայի ֆակուլտետի պրակտիկայի պատասխանատուների գործառույթները, առաջադրվել են մեթոդական հանձնարարականներ՝ ուղղված կուլտուրայի ֆակուլտետի պրակտիկայի առարկայական նկարագրերի բարելավմանը և ուսումնական պրակտիկաների պաշտպանությունների կազմակերպմանը: Գ. Պրակտիկայի ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը լսվել է 2017թ. Ռեկտորատի նիստերին. Մասնավորապես, 04.04.17-ին և 24.10.07-ին ներկայացվել է ընթացիկ մշտադիտարկման արդյունքները, իսկ 12.09.17-ին ներկայացվել է մագիստրատուրայում մանկավարժահետազոտական պրակտիկայի մասին զեկույցը:
Կատարման վերլուծություն Ներկայումս ամբողջովին կատարվել են 2017թ. ապրիլի 13-ին համալսարանի գիտական խորհրդի որոշումները՝ կապված միջազգայնացման ծրագրերի և պրակտիկայի շրջնականերում միջազգային համագործակցության հետ: Չնայած դրան, դեռևս արտագնա միջազգային պրակտիկաներ չեն կազմակերպվում՝ չնայած այդ ուղղությամն արդեն ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ: Ըստ մեր դիտարկումների, մասնակի է կատարվել վերահոիշյալ որոշման դ. կետը, և դեռևս կան մասնագետնեւր, որոնք իրենց բացակայությունները պրակտիկայի վայրում բացատըրում են տեսական ժամերով ծանրաբեռնվածությամբ: Կուլտորայի ֆակուլտետում իրականացված քայլերի արդյունքում ներկայումս այդ ֆակուլտետի ուսանողները ևս իրենց պրակտիկայի արդյունքները պետք է պաշտպանեն քննաշրջանում: Նշված փոփոխության արդյունավետության գնահատումը հնարավոր կլինի այդ արդյունքների ամփոփման միջոցով:
ինքնագնահատում Աղյուսակում օգտագործված պայմանական նշաններն են. ∧ նախորդ տարվա համեմատությամբ ցուցանիշը բարելավվել է, ∨ ցուցանիշը անկում է ապրել * ցուցանիշը առաջին անգամ է հանդես գալիս = ցուցանիշը փոփոխության չի ենթարկվել:

Կատարված քայլեր	Տեղեկություն կատարման աստիճանի մասին	Բարելավման առաջարկներ
առցանց վերահսկողության գործիքների ներդրում *	95	
պրակտիկայի բազաների կողմից բնութագրերի ներկայացման ապահովում, որպես գործընթացի հիմք, +	98	
դիտարկման արձանագրության նմուշների, պահանջագրի, դիմումի ձևերի մշակում և ներդրում, ^	96	
կատարողական ակտերի ներկայացման ժամկետների նկատմամբ հսկողության ավելացում,=	75	ներդնել էլեկտրոնային շրջանառության համակարգ
առարկայական նկարագրեր բարելավում՝ չափանիշների և կրեդիտների բաշխման ամրագրում, կրթական վերջնարդյունքների ստանդարտացում, =	80	կատարել ընթացիկ վերանայում նոր ՌԾ-ի մշակմանը զուգահեռ
թիմային աշխատանքի պլանների առկայություն, գործառույթների բաշխում, գնահատման թափանցիկություն և փոխադարձ հսկողության ապահովում ^	78	բարելավել մեթոդիստների անհատական պլանները և թերացումների համար կազմել արձանագրություններ
մագիստրոսական պրակտիկայի ծրագրային վերանայում՝ ^	75	մատուցել խորհրդատվություն
ամառային պրակտիկաների ժամկետների փոփոխություն, նախկին խախտումների կանխում ^	76	վերանայել ուսումնական պլանները
մասնագիտական կողմնորոշման աշխատանքների և պրակտիկայի փոխկապակցում=	88	աշխատանքներն առավել թիրախավորել ըստ մասնագիտությունների
մասնագետների անհարկի բացակայությունների կանխում, պարբերական այցելությունների և հսկողության ավելացման շնորհիվ, ^	93	ներդրված վերահսկողության մեխանիզմները կիրառել պարբերաբար
բոլոր նախապատրաստական և ամփոփիչ կոնֆերանսների կազմակերպում և պրակտիկայի գործընթացի ուժեղ թույլ կողմերի մշտական վերլուծություն և բարելավում=	87	մատուցել խորհրդատվություն, իրականացնել սեմինարներ
բազաների ընտրության նոր քաղաքականության ներդրում, ^	93	ներդնել բազաների կողմից հետադարձ կապի ստացման նոր մեթոդներ, ներգրավել նոր
կամավորական պրակտիկաների ընդլայնում և դրանց նկատմամբ վերահսկողություն, v	100	վերանայել, մշակել կանոնակարգ և ներդնել նոր համակարգ
ինքնագնահատման, փոխադարձ գնահատման դերի և մեխանիզմների բարելավում, ^	80	իրականացնել հաջողված փորձի տարածում սեմինարների միջոցով
ուսանողների և դասախոսների համար մշտական խորհրդատվությունների կազմակերպում =	85	իրականացնել սույն գնահատման պարբերացման հիման վրա


ՀԱՎԵԼՎԱԾ 1
googleforms հարցման գործիքի շնորհիվ ստացված արդյունքների ամփոփ պատկերը

Ցուցիչների արտահայտվածությունն ըստ ֆակուլտետների




Ո՞րքան կգնահատեք տվյալ հիմնարկի մատուցած ծառայությունը


(798 ответов)



Ի՞նչպիսի դժվարությունների եք հանդիպել պրակտիկայի ընթացքում



Ուսանողներ



դասախոսներ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
2017թ պրակտիկա մեկնած ուսանողների քանակը ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	1 կիս				2 կիս								
	առ 3	առ 4	մագ 2	ընդամենը 1 կիս.	առ 2	առ 3	մագ 1	հեռ 4	հեռ 5	ընդամենը 2-րդ կիս	Ընդամենը	անվճար	Ամառային
ՄՖԻ	107	90	54	251	98	94	54	50	68	364	605	255	120
ԿՔԱ	68	78	58	204	70	80	53	59	63	325	527	144	127
ՊԻ	90	88	47	225	85	73	46	48	144	396	636	172	35
Կ	50	186	69	305	50	157	61	16	66	350	648	400	34
ՀԿ	157	145	69	371	168	143	69	104	77	561	940	230	0
ՕԼ	58	70	66	194	58	65	62	38	135	358	552	225	0
ԲՍ	55	50	42	147	62	47	15	42	44	210	372	166	0
ԳԿ	131	191	45	367	155	149	30	74	35	443	802	236	283
ՍԿ	96	125	107	328	85	123	37	135	156	536	842	430	0
ԿՀՍ	124	170	71	365	80	137	71	116	163	567	938	218	15
Ընդամենը	936	1193	628	2757	911	1068	498	682	951	4110	6862	2476	614
													7476

44. Գիտահետազոտական կենտրոն

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի Գիտահետազոտական կենտրոնի հիմնական առաքելությունը համալսարանում իրականացվող գիտական, գիտահետազոտական, գիտամեթոդական, փորձագիտական և

տեխնոլոգիական աշխատանքների համակարգումն է, գիտական ներուժի զարգացումը և միջազգային գիտական ծրագրերում նրա արդյունավետ օգտագործումը:
2017թ-ի համար Գիտահետազոտական կենտրոնի համար նույնպես առաջնային է եղել.

- Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:
- Խթանել համալսարան-դպրոց հետազոտական համագործակցության զարգացումը, հետազոտությունների արդյունքների ապրանքայնացման նպատակով ձևավորել գիտության ինովացիոն ենթակառուցվածք:
- Խթանել Համալսարանի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել Համալսարանի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին:
- Վերակառուցել Համալսարանի ասպիրանտուրան որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ որակավորումների համաեվրոպական հենքի պահանջներին համապատասխան:
- Նպաստել գիտական ներուժին արդյունավետ շարժունակությանը:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	Տարվա ընթացքում	Ստեղծել համալսարանի առաքելությունից բխող գիտական դպրոցներ (որոշակի գիտական թեմաներ զարգացնող գիտական ներուժ):	Կատարված է
2.	Տարվա ընթացքում	Ընտրել արդիական և կարևորագույն արդյունքների առևտրայնացման գործընթացին նպաստող հետազոտական թեմաներ: Բարձրացնել մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների որակը, ստացված արդյունքները ներդնել գործնական շրջանառության մեջ:	Կատարված է
3.	Տարվա ընթացքում	Նպաստել միջազգային և հանրապետական գիտական ծրագրերի մրցույթներին դասախոս գիտնականների մասնակցության աճին:	Կատարված է
4.	Տարվա ընթացքում	Բարձրացնել համալսարանի գիտական ներուժը՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ՝ գիտական հետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով:	Կատարված է

5.	Տարվա ընթացքում	Ապահովել գիտնականի զարգացման և կատարելագործման շարունակականությունը:	Կատարված է
6.	Տարվա ընթացքում	Ստեղծել մրցունակ, սարքավորումներով հագեցած գիտական ինստիտուտներ, կենտրոններ և լաբորատորիաներ:	Կատարված է
7.	Տարվա ընթացքում	Ապահովել գիտական աշխատողների երկկողմանի ակտիվ գործունեություն:	Կատարված է
8.	Տարվա ընթացքում	Նպաստել համալսարանի գիտական դպրոցների կողմից ստացված արդյունքների հիման վրա միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպմանը:	Կատարված է
9.	Տարվա ընթացքում	Ստեղծել և խրախուսել համապատասխան գիտական հարթակ շտեմարաններին ինտեգրված կառույցներ:	Կատարված է

բ/ տարեկան պլանի համաձայն

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Կազմակերպչական աշխատանքներ	Համալսարանի գիտական ստորաբաժանումների ղեկավարների հետ տարվա գիտական միջոցառումների պլանների կազմում	Աշխատանքային պլանների ստեղծում	Ստորաբաժանումների օրացույցային պլաններ	հունվար	Ի եռամսյակ 1680.1
2.	Կազմակերպչական աշխատանքներ	Թեմատիկ և բազային ֆինանսավորվող գիտական նոր թեմաների նախագծում	Հայտարարության ուղարկում ամբիոններ, Խորհրդատվական աշխատանք	Բազային և թեմատիկ ֆինանսավորվող հայտեր	փետրվար	
3.	Կազմակերպչական աշխատանքներ	Վերապատրաստման գործընթացի իրականացում	Բաժնի գործառույթների նախագծում	Համապատասխան բաժին	Տարվա ընթացքում	

4.	Կազմակերպչական աշխատանքներ	Մագիստրոսական կրթության աշխատանքների համակարգում	Մշտադիտարկում, նորարարական առաջարկներ	Համապատասխան բաժին	Տարվա ընթացքում	II եռամսյակ 2100.1
5.	Կազմակերպչական աշխատանքներ	Գիտաժողովի ժողովածուի հրատարակում	Գրախոսում Խմբագրում Հրատարակում	Ժողովածու	Տարվա ընթացքում	
6.	Կազմակերպչական աշխատանքներ	Միջազգային երկու կոնֆերանսների նախագծում:	Հետազոտական աշխատանք, արդյունքների մեքենագրում	Մենագրություններ, ձեռնարկներ, Հոդվածներ, ուղեցույցներ, բառարաններ	Տարվա ընթացքում	III եռամսյակ 2100.1
7.	Կազմակերպչական աշխատանքներ	Նոր պարբերականների նախագծում Մենագրությունների, ձեռնարկների, Հոդվածների, ուղեցույցների, բառարանների հրատարակում	Խմբագրական խորհրդի առաջադրում, վերնագրերի ընտրություն Նյութերի հավաքագրում, խմբագրում, հրատարակում	Ծրագիրը Մենագրություններ ձեռնարկներ, Հոդվածներ, ուղեցույցներ, բառարաններ	Տարվա ընթացքում	
8.	Կազմակերպչական աշխատանքներ	Գիտահետազոտական կենտրոնի ռազմավարական ծրագրի մշակում	Նյութերի ձեռքբերում, մասնագետի ընդգրկում, ծրագրի մշակում	Ռազմավարական ծրագիր	Սեպտեմբեր	
9.	Կազմակերպչական աշխատանքներ	Մագիստրոսների ընդգրկում գիտական աշխատանքների ն	Ուսանողական գիտական նստաշրջանների կազմակերպում, հոդվածների տպագրում	Հոդվածներ, թեզիսներ, ավարտական աշխատանքներ	Հոկտեմբեր	IV եռամսյակ 2520.2
10.	Կազմակերպչական աշխատանքներ	Հսկողություն գիտ. աշխատանքների կատարմանը, տարեվերջյան հաշվետվության կազմում, գիտ խորհրդում հաշվետվություն	Խորհրդատվություն ֆակուլտետներում, ամբիոններում կատարած գիտ. Աշխատանքներ	Հոդվածներ, թեզիսներ, գյուտեր, դասագրքեր, ձեռնարկներ, հաշվետվություն	Նոյեմբեր-դեկտեմբեր	

			ի հավաքում, վերլուծություն			
Ընդամենը						8 400.5

3. Հաշվետու տարում Վարչության պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Արդի դարաշրջանում խիստ կարևորվում է հետազոտական համալսարանների դերը, որտեղ կրթական գործընթացին զուգահեռ նախատեսվում է գիտական ակտիվ գործունեություն, արդյունքների արդյունավետ արտադրական շրջանառություն, ինչպես նաև մասնագետների ժամանակակից պահանջներին համապատասխան պատրաստում և վերապատրաստում: Նման խնդրի իրականացմանը ձեռնամուխ է եղել համալսարանում գործող Գիտահետազոտական կենտրոնը:

Գիտահետազոտական կենտրոնում առանձնացվել է գիտական քաղաքականության իրավական դաշտի մշակման և նորմատիվային փաստաթղթաստեղծ գործունեության ապահովման խումբը: Այս առումով սա կարևոր քայլ է, որը հնարավորություն կտա գիտնականներին գործելու միասնական իրավական դաշտում: Կենտրոնի կողմից շարունակում է հրատարակվել մի շարք կանոնակարգեր և նորմատիվային ակտեր, որոնք միտված են կանոնակարգելու գիտնականի գործունեությունը և ստեղծելու նպաստավոր պայմաններ մտավոր ներուժի պահպանման և զարգացման համար: Ինչպես նաև ստեղծվել են մշտադիտարկման մեխանիզմների մի շարք մոդելներ: Ավանդույթ է դարձել Գիտահետազոտական կենտրոնի կողմից Նորմատիվային տարբեր տեղեկատուների հրատակումը: Այսպես, 2015թ. Գիտահետազոտական կենտրոնի «Մանկավարժական կրթության հայեցակարգ» ծրագրի շրջանակներում Մ.Գ. Աստվածատրյանի, Մ.Հ. Ավագյանի, Գ.Հ. Թերզյանի և ծրագրի փորձագետ Կ. Մելքոնյանի հետ համատեղ մշակել են Մանկավարժական կրթության հայեցակարգը, 2017թ. Գիտահետազոտական կենտրոնի և Գիտական գրադարանի համատեղ ջանքերով /հեղինակ՝ Տ.Պետրոսյանց/ կազմվել են 1968-2016թթ. մանկավարժության և հոգեբանության ատենախոսությունների մատենագրութունը:

Կարևորագույն ձեռքբերում է խորհրդատվական գործունեությունը: Գիտահետազոտական կենտրոնը այն կառույցն է, որտեղ գիտական արդյունավետ աշխատանքներ կատարելու նպատակով տրամադրվում է մասնագիտական խորհրդատվություն: Հաստատվել են արդյունավետ և սերտ ստեղծագործական կապեր դեկանների, դեկանների գիտության գծով տեղակալների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ: Այս տարի խորհրդատվություն ենք իրականացրել նաև մագիստրոսական ծրագրերում ընդգրկված ուսանողների համար: Կարծում ենք, որ աշխատանքի այս ուղղությունը առավել մասսայականացման կարիք ունի:

Այսօր համալսարանի ֆակուլտետային և համահամալսարական ամբիոններում շարունակվում են գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներն իրականացվել 6 ուղղություններով.

- թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված պետ.բյուջեից ֆինանսավորվող գիտական հայտերին համապատասխան,
- բազային ֆինանսավորման շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված պետ.բյուջեից ֆինանսավորվող գիտական հայտերին համապատասխան,
- ամբիոնային գիտական հետազոտությունների շրջանակներում, դասախոսների տարեկան անհատական պլաններում նշված թեմաներին համապատասխան,
- «Ազգային դպրոցական դասագիրք» ՀՀ ԿԳ նախարարության և Համաշխարհային բանկի կողմից հաստատված մրցույթային ծրագրի շրջանակներում,
- այլ գրանտային ծրագրերի շրջանակներում,
- նախասիրությունների շրջանակներում:

Կենտրոնի կողմից իրականացվել են տեղեկատվական-վերլուծական հետազոտություններ համալսարանի գիտական ներուժի վիճակի և զարգացման հեռանկարների պարզաբանման ուղղությամբ, որոնց արդյունքների հիման վրա կատարվել են նաև նախապատրաստական աշխատանքներ համալսարանում գիտահետազոտական կենտրոնի համակարգում գիտական նոր ենթակառուցվածքների ներդրման ուղղությամբ:
Համալսարանի ամբիոններում և գիտական ենթակառուցվածքներում գիտաշխատողների կողմից իրականացվել են ծավալուն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներ: Ըստ գործող կանոնադրության՝ համալսարանում իրականացվում են հիմնարար, տեսական, կիրառական, փորձարարական գիտական և գիտամեթոդական հետազոտություններ՝ հայագիտության, ընդհանուր, կիրառական և զինվորական հոգեբանության, ընդհանուր, նախադպրոցական, տարրական և հատուկ մանկավարժության, դպրոցական առարկաների դասավանդման մեթոդիկաների, մշակութաբանության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, բնագիտության, ինչպես նաև այլ՝ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերին համապատասխան: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմում առկա են հիմնարար հետազոտություններ իրականացնող բավարար թվով մասնագետներ, ովքեր կատարում են գիտության և տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող տեսական և կիրառական բնույթի հետազոտություններ: Համալսարանում մեծ ուշադրություն է դարձվում ուսուցման գիտականության վրա. հաշվետու տարվա ընթացքում գիտամանկավարժական կադրերը համալրվել են ՀՀ ԳԱԱ անդամներով և թղթակից անդամներով, առաջատար և ճանաչված գիտնականներով: Բացի այդ տարվա ընթացքում արտասահմանյան մի շարք լավագույն մասնագետներ հրավիրվել են կարդալու արդիական դասախոսություններ, որոնք իրենց դերն ու նշանակությունն ունեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման գործում: Ստորև ներկայացնենք այդ այցելություններից՝

- Մարտի 16-ից 5-օրյա այցով մեր համալսարանում էր Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի Ներառական կրթության ինստիտուտի Սուրդոմանկավարժության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Չուրիլո Նատալյան, ով դասախոսություններ կարդաց «Նեյրոահոգեբանական աշխտորոշում և միջամտություն», «Ուշադրության դեֆիցիտ և հիպերակտիվության համախտանիշ ունեցող երեխաների նյարդահոգեբանական մոտեցումների վերլուծություն» առարկաների շրջանակներում:
- Մարտի 21-22 երկօրյա պաշտոնական այցով Մանկավարժական համալսարան է այցելել Ա.Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի պատվիրակությունը՝ ընդհանուր և ռուս լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նատալյա Բոժենկովայի և Նախապատրաստական ֆակուլտետի դեկան Նատալյա Տատարինովայի գլխավորությամբ: Նրանք «Ակտիվ գործընթացները ժամանակակից ռուսերենում» և «Կրթությունը ռուսերենով» պորտալի շրջանակներում հանդես են եկել դասախոսություններով:
- Ապրիլի 7 Մանկավարժական համալսարանում Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի դասախոս, Արվեստի պատմության ամբիոնի վարիչ, դոկտոր Բելա Ժոլտ Սաքաչը հանդես եկավ «Պատմական հուշարձաններն ու ժամանակակից դիտողները» թեմայով հանրային դասախոսությամբ:
- Ապրիլի 14 Մանկավարժական համալսարանում «Ազգային և միջազգային օրենքների միջև փոխհարաբերությունը» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ լեհ դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, եվրոպական պառլամենտի անդամ Կարոլ Կարսկին:
- Ապրիլի 19-20 Երկօրյա այցով Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի

ամբիոնի հրավերով բուհում էին ՌԴ-ի կրթական հաստատությունների առաջատար մասնագետներ՝ Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի Չերեպովեց քաղաքի մասնաճյուղի պրոֆեսոր Ստանիսլավ Բոյկոն, Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր Իրինա Սինովան, պրոֆեսոր Սերգեյ Բիստրյանցովը: Նրանք հանդես եկան հետաքրքիր դասախոսություններով:

- Ապրիլի 20 Մանկավարժական համալսարանի Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հրավերով բուհ էր այցելել Ֆրանսիայի Լորենի համալսարանի և Կենտրոնական Սուպելեկի պրոֆեսոր Նինել Կոկանյանը, ով ներկայացրել է բուհի կառուցվածքը, կրթագիտական գործունեությունը՝ նկատելով, որ այն Ֆրանսիայի առաջատար բուհերից է, որը մի շարք չափորոշիչներով զբաղեցնում է 2-3-րդ տեղերը:
- Ապրիլի 26-29 Եռօրյա այցով Մանկավարժական համալսարանում է եղել ամերիկահայ հայտնի գիտնական, Չիկագոյի Իլինոյսի համալսարանի կրթական հոգեբանության ֆակուլտետի պրոֆեսոր Արթին Գոնչուն, նա ներկայացրել է «Երեխայի հոգեկան զարգացումը և դաստիարակության խնդիրները», «Խաղը երեխայի կյանքում», «Ծնող-երեխա փոխհարաբերությունների հոգեբանությունը. մշակութային ազդեցություններն անձի զարգացման վրա» թեմաներով դասախոսությունները, պրոֆեսորադասախոսական կազմի հետ քննարկել միջազգային հեղինակավոր ամսագրերում գիտական հոդվածներ տպագրելու առանձնահատկությունները:
- Մայիսի 5 Բաց դասախոսությամբ Մանկավարժական համալսարանում էր Կիրառական հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ հրավիրված Ուկրաինայի Այցելուակենտրոն և փորձարարական հոգեթերապիայի ինստիտուտի տնօրեն, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Քոչարյանը՝ «Այցելուակենտրոն թերապիայի սուբվերբալ (ոչ խոսքային) մոդելը» թեմայով դասախոսությամբ:
- Մայիսի 16 Մանկավարժական համալսարանում դասախոսությամբ հանդես եկավ Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի Հայագիտական ամբիոնի վարիչ, դոկտոր Բալինտ Կովաչը: Հունգարացի հայագետը հերթական դասախոսության ընթացքում ներկայացրեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հայկական սփյուռքի ձևավորումը, զարգացումն ու արդի հիմնախնդիրները:
- Հոկտեմբերի 19 «Մաթեմատիկական կրթություն» միջազգային գիտաժողովի շրջանակներում Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը դասախոսությամբ հյուրընկալել էր գիտաժողովի կազմկոմիտեի անդամ, Չերկասի Բոգդան Խմելնիցկու անվան ազգային համալսարանի (Ուկրաինա) պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Եվգենի Լոդատկոյին:
- Նոյեմբերի 21-24 Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի և սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի նախաձեռնությամբ համալսարանում դասախոսություններով հանդես եկավ ՌԴ-ի Չերեպովեցի պետական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, Վոլոգդայի գիտական կենտրոնի գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Տատյանա Անատոլիի Գուժավինան:

Տեղի են ունեցել նաև Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ դասախոսական կազմի այցերը այլ երկրների բուհեր՝ դասախոսություններ կարդալու նպատակով: Այսպես, հոկտեմբերի 18-22-ը Մանկավարժական համալսարանի ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Անդրանիկ Ստեփանյանը հյուրընկալվել էր Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում: Վերջինս այնտեղ էր նույն համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ և փիլիսոփայության բնագավառում դոկտորական ծրագրերի տնօրեն, պրոֆեսոր, դոկտոր Բոլաժ Մեզեյի հրավերով: Վերոնշյալ համալսարանում նախնական պայմանավորվածության հիման վրա դասախոսություններ են կարդացել նաև պատմաբաններ Էդգար Հովհաննիսյանը, Խաչատուր Ստեփանյանը, Սամվել Պողոսյանը, Երվանդ Գրեկյանը, Միքայել Բադալյանը:

Այս տարի ակտիվ է եղել ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում: Այդ շարքում առանձնացվում են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի նախաձեռնությամբ կազմակերպված միջազգային գիտաժողովները՝

1. Դաստիարակությունը որպես անձի ձևավորման տարր, միջազգային վեբինար, ապրիլի 14
2. «Օտար լեզուների ուսուցումը ինստիտուցիոնալ բազմալեզվության պայմաններում», միջազգային ուսանողական գիտաժողով, ապրիլի 18-19
3. «Մաթեմատիկական կրթություն» 5-րդ միջազգային գիտաժողով, 12-14 հոկտեմբերի
4. «Մեծահասակների անընդհատ կրթությունը՝ որպես ժամանակակից հասարակության բնորոշ առանձնահատկություն» միջազգային II համաժողով- հոկտեմբերի 24-25

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է ներքոնշված հանրապետական և միջազգային համաժողովներին՝

5. «Ներառական կրթություն. մարտահրավերներ, հիմնախնդիրներ, լուծումներ» թեմայով գիտապրակտիկ համաժողով, մայիսի 2-3
6. «Թանգարաններ և քաղաքը. Մարքեթինգ և ավելին» գիտաժողով, Ամստերդամ, հոկտեմբերի 1-5 /No 13/
7. «Ֆիզիկայի բնագավառում կանանց կարիերայի առաջընթաց» խորագրով գիտաժողով, Իտալիայի Տրիեստե քաղաքի Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն, հոկտեմբերի 9-13 /No14/
8. «Ինստիտուցիոնալիզացիայից դեպի ներառում» ազգային կոնֆերանս, նոյեմբերի 17
9. «Русский язык- гарант диалога культур, научногп сотрудничества, межнационального и межличностного общения в XXI веке», международная научнопрактическая конференция, Երևան, նոյեմբերի 20
10. Արտասահմանյան գրականության ամբիոնի կազմակերպած միջբուհական գիտագործնական գիտաժողով, նոյեմբերի 20
11. «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի հարցեր» հանրապետական գիտական նստաշրջան, նոյեմբերի 23
12. «Ներառական կրթության ոլորտի մասնագետների պատրաստման և գործող մասնագետների վերապատրաստման դասընթացների հզորացում» աշխատաժողով, նոյեմբերի 29


Կարևոր իրադարձություն է նաև այն, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանների համագործակցության շրջանակներում ՄՄՊՀ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների դեկան Յ. Պարամոնովայի կողմից «Воспитатель ДОУ» ամսագրի ապրիլյան համարում հրատարակվել են Հայաստանի նախադպրոցական կրթության ներկա վիճակի և զարգացման միտումների վերաբերյալ հայ հեղինակների նյութեր:

Գիտահետազոտական կենտրոնի կողմից մանկավարժական համալսարանում կազմակերպվել են նաև գրքերի շնորհանդեսներ՝


- Հոկտեմբերի 6 Սերգո Երիցյանի, Արմեն Ճուղուրյանի, Ատոմ Մխիթարյանի համահեղինակած «Դոկտորանտուրա. Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կազմակերպման հիմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկի շնորհանդեսը
- Նոյեմբերի 17 Բ.Նահապետյանի, Ա. Աբրահամյանի, Վ. Արզումանյանի, Ս. Դալալյանի, Հ. Հարությունյանի, Հ. Ղազարյանի «Մաթեմատիկական տերմինների բացատրական բառարան» (I-VI դասարանների համար) գրքի շնորհանդեսը
- Նոյեմբերի 24 Արա Հակոբյանի «Հայազգի ծովանկարիչները», Արտաշես Քեշիշյանի «Մարդու պլաստիկ անատոմիա» գրքերի շնորհանդեսը

ՀՊՄՀ-ում իրականացվող հետազոտական աշխատանքները, որպես կանոն, հիմնարար բնույթ են կրում, իսկ դրանց արդյունքները մասնագիտական լայն հասարակությանն են ներկայացվում

գիտական ժողովածուների, պարբերականների, գրքերի և ինֆորմացիայի տարածման այլ միջոցներով: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման համար ավելի ու ավելի մեծ չափով օգտագործվում են համացանցի ընձեռած հնարավորությունները: Կատարվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են համապատասխան զեկույցներում և հրապարակումներում:
2017 թվականին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների կողմից հրատարակվել են 575 հոդված, որից 164-ը ցիտվող (SCOPUS, РИНЦ... և այլն) պարբերականներում, 10 մենագրություն, 95 ձեռնարկ, 60 գիրք:



Միջազգային պարբերականներում տպագրված հոդվածներից 114-ը գիտական հողումների ռուսաստանյան ցուցիչում (РИНЦ) են, իսկ մյուս 50-ը՝ միջազգային պարբերականներում կամ գիտաժողովներում, որոնք ներգրավված են Web of science, Web of knoweladge, Scopus, British library և այլ հեղինակավոր շտեմարաններում:



Միջազգային գրախոսվող պարբերականներում
հրատարակված հոդվածները

	2013-2014թթ.	2015թ.	2016թ.	2017թ.
Scopus, Web of science	38- (30%)	20- (23%)	50- (37%)	50- (30%)
РИНЦ	92- (70%)	68- (77%)	82- (63%)	114- (70%)
Ընդամենը	130	88	131	164

Գիտահետազոտական կենտրոնի կողմից աշխատանքներ են տարվում նոր ժողովածուների ստեղծման ուղղությամբ: Հատկապես կարևորվում է այլ բուհերի և գիտական հաստատությունների /հատկապես արտասահմանյան/ հետ համատեղ գիտական պարբերականների լույս ընծայումը: Համալսարանում 2017թ. շարունակվել է հետևյալ 7 գիտական հանդեսների հրատարակումը.

1. «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» /միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես/
2. «Գիտական տեղեկագիր»
3. «Հայագիտական հանդես»
4. «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» հանդես
5. «Իմաստություն» պարբերական
6. «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք
7. «Ռուսագիտության արդի հիմնախնդիրները» գիտամեթոդական հանդես

Մանկավարժական համալսարանի Իմաստություն հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական ժողովածուների ցանկում և գրանցված է Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), Advanced Scientific Index (ASI), eLIBRARY, EBSCO, CYBERLENINKA, CROSSREF, PHILPAPERS, WORLDCAT և Google Scholar միջազգային գիտաչափական շտեմարաններում:

Իմաստություն հանդեսն 2017 թվականից Հրատարակչական էթիկայի հանձնաժողովի (COPE - Committee on Publication Ethics) անդամ է:

Ժողովածուն հրատարակվում է անգլերեն լեզվով տարեկան երկու անգամ և նպատակ ունի հարթակ լինելու գիտական արժեքավոր գաղափարների ու հետազոտությունների արդյունքները հրապարակելու, դրանց շուրջ քննարկումներ ու բանավեճեր կազմակերպելու, ինչպես նաև երիտասարդ խոստումնալից հետազոտողներին ու նրանց ուսումնասիրությունները գիտական հանրությանը ներկայացնելու համար:

Գիտահետազոտական կենտրոնը նախապատրաստում և կազմակերպում է նաև տարբեր գիտական մրցույթներին դասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը: Դրա վառ ապացույցն է Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված թեմատիկ և բազային ֆինանսավորման մրցույթին ներկայացված հայտերը: Ներկայացված թեմաներն իրենց որակական առումով բավականին զարգացում ունեն: Մասնավորապես՝ 2018թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության ծախսային ծրագրերում ներառելու նպատակով ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հաստատման են ներկայացվել գիտական ենթակառուցվածքների պահպանման հետևյալ 14 ծրագրերը.

1. «Գիտահետազոտական կենտրոնի պահպանում և զարգացում»
2. «Շախմատ առարկայի ուսուցման գործընթացի հոգաբանական, սոցիոլոգիական և մանկավարժական ուսումնասիրություններ (շախմատի կրթական հետազոտությունների կենտրոն և հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա)»
3. «Սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման հմտությունների ձևավորում»

4. «Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի գիտամանկավարժական և արժեբանական հիմունքները կրթական նոր հարացույցի պայմաններում»
5. «Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիա»
6. «ՀՀ կրթության համակարգի գործունեության արդյունավետության վերլուծության ծրագիր»
7. «Ընդհանուր մեթոդաբանության և մանկավարժական նորարարության լաբորատորիա»
8. «Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությունը մանկության վրա»
9. «Փոխակերպական հասարակության հիմնախդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ (ՀՊՄՀ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն)»
10. «Շարունակական մաթեմատիկական կրթություն»
11. «Հայաստանը 1920-1991թթ»
12. «Խաղերի և խաղալիքների բազմաֆունկցիոնալ ազդեցությունը երեխաների ուսումնաճանաչողական կարողությունների զարգացման գործում»
13. «Սփյուռքը հայկական քաղաքակրթության համատեքստում»
14. «Կենսաբանական ակտիվ միացությունների ուսումնասիրման և կենսաանվտանգության գիտական լաբորատորիա»

Գիտահետազոտական կենտրոնը կոորդինացնում է նաև բազային և պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքները: 2017թ-ին համալսարանում իրականացվել են ֆինանսավորվող 9 բազային և 4 թեմատիկ և 2 ներհամալսարանական գիտահետազոտական ծրագրեր, որտեղ ընդգրկված են եղել 50-ից ավելի գիտնականներ:

2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
2	4	5	7	9	9	9

ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից բազային ֆինանսավորվող թեմաների քանակն ըստ տարիների

ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից թեմատիկ ֆինանսավորվող թեմաների քանակն ըստ տարիների

2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
2	3	3	3	2	2	4

Համալսարանում ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից գիտական թեմաների ֆինանսավորման չափաքանակներն ըստ տարիների

2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
28 080 000 ՀՀ դրամ	39 260 840 ՀՀ դրամ	39 484 000 ՀՀ դրամ	59 870 000 ՀՀ դրամ	71 588 200 ՀՀ դրամ	69 559 900 ՀՀ դրամ	69 520 400 ՀՀ դրամ

Հաշվետու տարում համալսարանում իրականացված գիտական ծրագրերն են.
«Մանկության ժամանակակից հիմնախնդիրների ուսումնասիրման լաբորատորիայի պահպանում և զարգացում» ծրագիր
Լաբորատորիայի վարիչ՝ Աիդա Թոփուզյան

1) հունվարին մշակվել է լաբորատորիայի տարեկան աշխատանքային պլանը և կատարվել աշխատանքային պարտականությունների բաշխում
2) հունվար-ապրիլ ամիսներին անցկացվել է սոց. հարցում, որին մասնակցել են 120-ական ուսուցիչ, սովորող և ծնող: Սոց. հարցման արդյունքում բացահայտվել են ընտանիքում և ուսուցման գործընթացում երեխայի առողջությանը սպառնացող վտանգները, դրանց պատճառներն ու ազդեցության բնույթը: Ուսումնասիրությունների արդյունքների մասին զեկուցվել է ԵՊՀ-ի "Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում" միջազգային գիտաժողովում (2017թ. հոկտեմբերի 19-20):
3) մայիս-հունիս ամիսներին 50 ուսուցիչների, բժիշկների, դպրոցի տնօրենների շրջանում անցկացվել է սոց. հարցում «Մանկավարժական համատեղելիություն» հիմնախնդրի էությունն ու առանձնահատկությունները բացահայտելու նպատակով: Հարցումների արդյունքներով սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին մշակվել են «Մանկավարժական համատեղելիություն» եզրույթի էությունը, բովանդակությունը, դրա հաստատման սկզբունքներն ու մեթոդները, մանկավարժական պայմանները, այն իրականացնող ուսուցչի մոդելը: Մշակվել են նաև «Մանկավարժական համատեղելիության» բացակայության պատճառներն ու հետևանքները:
4) հուլիս-հոկտեմբեր ամիսներին մշակվել և N 124 դպրոցում փորձարկման ընթացքի մեջ են դրվել կրթական միջավայրի վալեոլոգիականացման մանկավարժական պայմաններն ու դպրոցի վալեոլոգիական ծառայության մոդելը:
5) Տարվա ընթացքում խմբի անդամների կողմից պատրաստվել է 4 հոդված, որոնք գտնվում են տպագրության ընթացքում («Մանկավարժական միտք», «21-րդ դար», և այլ ամսագրերում և ՀՊՄՀ-ի «Նախադպրոցական կրթության և տարրական ուսուցման հիմնախնդիրները» միջազգային կոնֆերանսի ժողովածուում):
6) հունիս-նոյեմբեր ամիսներին մշակել ենք ուսումնա-մեթոդական ձեռնարկ, որն ուղղված է ուսուցիչներին և ծնողներին: Դեկտեմբերի 10-ին «Վալեոլոգիական դաստիարակություն» վերնագրով գիրքը կհանձնվի տպարան: Հունվարի առաջին տասնօրյակում շահառուների ներկայությամբ կկազմակերպվի գրքի շնորհանդեսը:

«Ընդհանուր մեթոդաբանության և մանկավարժական նորարարության լաբորատորիայի» աշխատանքների վերաբերյալ
Լաբորատորիայի վարիչ՝ Մանուկ Մկրտչյան
Լաբորատորիայի աշխատակազմն անմիջական մասնակցություն է ցուցաբերել 2017 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 6-ը Սյունիքի մարզի Գորայք համայնքում կայացած <<Ամառային III մեթոդաբանական դպրոցի>> կազմակերպման և իրականացման աշխատանքներին:
Աշխատակազմը 2016 թվականից մինչ օրս <<Սպարտակ Մկրտչյանի անվան <<Բյուրակն>> կրթական համալիրում իրականացնում է գիտահետազոտական և գործնական աշխատանքներ, ինչի արդյունքում մշակվել և տպագրման են հանձնվել գիտական հոդվածներ:
Յուրաքանչյուր շաբաթ ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցների, հանրակրթական դպրոցների տնօրենների, ուսուցիչների, շահագրգիռ անձանց մասնակցությամբ շարունակվում են ընդհանուր մեթոդաբանական ուղղվածության սեմինար-քննարկումները:
Լաբորատորիայի աշխատակիցները գործուն մասնակցություն են ցուցաբերում կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին միտված աշխատանքներին, հանրային քննարկումներին, կրթության ոլորտի կարգավորումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակմանը:
Ներկայացված աշխատանքների մասին ծավալուն անդրադարձ կկատարվի տարեկան ամփոփիչ հաշվետվության տրամադրման ընթացքում:
Լաբորատորիայի աշխատակիցների մասնակցությամբ 2017 թվականի դեկտեմբերին նախատեսվում է կազմակերպել խոշոր գիտաժողով՝ կրթության և գիտության ոլորտի

ներակայցուցիչների, կրթության բնագավառի պատասխանատու բարձրաստիճան պաշտոնյաների, օտարերկրյա հյուրերի մասնակցությամբ:
2017 թվականի ընթացքում լաբորատորիայի աշխատակիցները հեղինակել են հետևյալ գիտական հոդվածները.
Լաբորատորիայի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր Մանուկ Մկրտչյանի հեղինակությամբ լույս տեսած գիտական հոդվածները՝

- Духовно-нравственный эффект как результат интеграции математического и гуманитарного знания в высшей школе, - (Ուղարկված է տպագրության) – համահեղինակությամբ՝ Մ. Մկրտչյան, С.Н. Дворяткина, С.А. Розанова
- Рассуждения о математике и математическом образовании // Եր: Րաբունի, 2017 - 44 էջ
- Становление не классно-урочных систем обучения: проблемы и перспективы // Современная дидактика и качество образования: становление не классно-урочных систем обучения: материалы IX Всероссийской научно-методической конференции 18-19 января 2017 года/ отв. ред. М.В. Минова, ред. кол. – Красноярск, стр. 13-25
- Մարդու և աղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկա վիճակը և հետագա բարելավման խնդիրը - Եր: Տիգրան Մեծ, 2017, 304 էջ – (համահեղինակությամբ)
- Լաբորատորիայի գիտաշխատող Արաքս Հարությունյանի հեղինակած <<Տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները 5-6-րդ դասարանների մաթեմատիկայի օրինակով>> հոդվածը հանձնվել է տպագրության:
- Լաբորատորիայի ավագ գիտաշխատող Նարինե Բաղոյանը հեղինակել է <<Տարրական դպրոցում քերականական գիտելիքների ուսումնասիրումը կոլեկտիվ պարապմունքների միջոցով>> հոդվածը (հանձնվել է տպագրության):
- Լաբորատորիայի լաբորանտ Վարդիթեր Մկրտչյանը հեղինակել է <<Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդիրները>> հոդվածը (հանձնվել է տպագրության):

«Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի գիտամանկավարժական և արժեբանական հիմունքները կրթական նոր հարացույցի պայմաններում» թեմայով գիտական ծրագիր
Թեմայի ղեկավար՝ Համլետ Միքայելյան
Հաշվետու ժամանակաշրջանում խմբի կողմից իրականացվել են ծրագրով նախա-տեսված աշխատանքները: Հ. Միքայելյանը ավարտել է մաթեմատիկական կրթության արժեբանական հիմունքներին նվիրված ուսումնասիրության առաջին մասը, որում բացահայտվել են արժեքների և արժեքային հարաբերությունների հետ մաթեմատիկական կրթության փոխհարաբերությունները: Նույն համատեքստում Ա. Մկրտչյանը ուսումնասիրել է ճանաչողական, Մ. Միքայելյանը՝ հոգեկան արժեքները: Ա. Ենոքյանը հանգամանորեն ուսումնասիրել բարոյական արժեքների հետ մաթեմատիկական կրթության կապը, ինչը որպես թեկնածուական ատենախոսություն ներկայացվում է պաշտպանության: Այսպիսով, բացահայտվել է մաթեմատիկայի կրթական ներուժը արժեբանական, բարոյական, հոգեկան, ճանաչողական արժեքների ձևավորման ուղղությամբ: Ստացված արդյունքները հրատարակվել են որպես հոդվածներ գրախոսվող ամսագրերում և ժողովածուներում /ընդամենը 28 հոդված/, տպագրվել է կոլեկտիվ մենագրություն՝ Հ. Միքայելյան /Կենտրոնական Եվրոպայի մասնագետների հետ համատեղ/, „Wert(e)voll wachsen. Ethische Bildung für eine nachhaltige, dialogische Zukunft“ 2017, Գրաց, Ավստրիա և պատրաստվում է տպագրության այս մենագրությունը՝ Հ. Միքայելյան, «Մաթեմատիկան կրթության արժեբանական հիմունքները, մաս 1, Արժեքներ և արժեքային հարաբերություններ», 240 էջ ծավալով: Ստացված արդյունքների հիման վրա Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկա մասնագիտության մագիստրանտների համար ստեղծվել են արժեբանության, բարոյականության, գեղագիտական և հոգեկան արժեքների ձևավորման ուղղությամբ մաթեմատիկական կրթության դերի

վերաբերյալ դասընթացներ: Ստացված արդյունքները տպագրվել են «Մաթեմատիկան դպրոցում», «Մարդ և հասարակություն» ամսագրերում և ներկայացվել հանրապետության ուսուցիչներին և ծառայել որպես մաթեմատիկական կրթության արդյունավետության բարձրացման միջոց: Խմբի անդամները իրենց ստացած արդյունքները պարբերաբար զեկուցել են Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի հարցերին նվիրված ՌԴ Սոլիկամսկի, Պենզայի, Ուկրաինայի Չերկասի, Սումիի, Ավստրիայի Գրացի, ՀՀ Մանկավարժական համալսարանի միջազգային կոնֆերանսներում: Ստացված հետազոտությունները հիմք են ծառայել «Մաթեմատիկական կրթություն 5» միջազգային կոնֆերանսի անցկացման համար /12-14 հոկտեմբեր/, որտեղ խմբի անդամների կամ նրանց ղեկավարությամբ իրականացված աշխատանքները ներկայացվել են զեկուցումներով:

«Սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման հմտությունների ձևավորում» գիտական ծրագիր
Թեմայի ղեկավար՝ Մելս Մկրտումյան
Աշխատանքի նպատակն է՝ սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման հմտությունների ձևավորումը: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- հետազոտվել են սովորողների հոգեկան աշխատունակության բնութագրերի յուրահատկություններն ու ոչ ստանդարտ իրավիճակներում դրանց փոփոխությունների հավանական միտումները: Ուսուցման միջոցով սովորողների մոտ ձևավորվել են հոգեբանական անվտանգության ապահովման հմտություններ:
- ուսումնասիրվել են հիմնախնդրին վերաբերվող 50 և ավելի գրական աղբյուրներ,
- մշակվել է հետազոտությունների հայեցակարգն ու ռազմավարությունը,
- համալրվել են հետազոտական խմբեր, մշակվել հետազոտության մեթոդաբանությունն ու իրականացման ուղիները,
- համալիր մեթոդներով հետազոտվել են 120 ուսանողներ: Մշակվել են հոգեբանական անվտանգության ապահովման չափորոշիչներ,
- համեմատության նպատակով հետազոտվել են Արցախի պետ. Համալսարանում սովորող երիտասարդների հոգեբանական անվտանգության բնութագրերը,
- բարելավվել են երիտասարդների հոգեբանական անվտաբգության կանխարգելման և հոգեկան առողջության վերականգնողական աշխատանքների արդյունավետությունը,
- հետազոտությունների հիման վրա արվել են եզրակացություններ, մշակվել գործնական առաջարկություններ և հանձնարարականներ:

Հրատարակված է 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 հոդված: Հրատարակության է հանձնված 1 հոդված, մասնակցել ենք 2 միջազգային գիտաժողովների, որոնց զեկուցումները հրատարակվել են գիտաժողովների նյութերում:

«Կենսաբանական ակտիվ միացությունների և կենսանավատանգության» լաբորատորիա
Լաբորատորիայի վարիչ՝ Ռուզաննա Սադոյան
Հաշվետու ժամանակաշրջանում նորաստեղծ լաբորատորիրայի հենքի վրա իրականացվել են կենսաբանական ակտիվ միացությունների լաբորատոր փորձարկումներ՝

- միացությունների քիմիական բաղադրության, ազդող նյութի օպտիմալ չափաբաժնի և այլ նյութերի հետ համատեղելիության ու կիրառման նպատակահարմարության որոշում:
- կենսաբանական ակտիվ նյութերի ազդեցությունը բույսերի ֆենոլոգիական փուլերի անցման և կենսաչափական ցուցանիշների վրա
- ստացված արդյունքները կիրառվել են դաշտային պայմաններում՝ ՀՀ տարբեր ագրոէկոլոգիական գոտիներում:

Հետազոտությունների արդյունքների մասին զեկուցվել է ս.թ. մայիսի 29-ից հունիսի 2-ը Ղազախստանի Ալմաթի քաղաքում կայացած “PlantGen 2017” 4-րդ միջազգային կոնֆերանսին:

Տպագրության է հանձնված “Մելանինի խթանիչ ազդեցությունը ցորենի օնտոգենետիկ զարգացման վրա ՀՀ Արարատյան դաշտավայրի պայմաններում” վերնագրով հոդվածը:

«Շախմատ առարկայի ուսուցման մանկավարժական, սոցիոլոգիական և հոգեբանական հիմնախնդիրներ» ծրագիր
Ծրագրի ղեկավար՝ Վահան Սարգսյան
ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Բացահայտվել է, որ շախմատի ուսուցիչների հուզական ինտելեկտի մակարդակի բարձրացումը կհանգեցնի ուսուցչի գովասանքին կամ բարձր գնահատականին արժանանալու սովորողի ձգտմանը,
- Շախմատ առարկայի ուսուցումը նպաստում է սովորողների առաջանցիկ արտացոլման կարողության և հուզական ինտելեկտի մակարդակի բարձրացմանը:
- Վեր է հանվել շախմատ առարկայի դերն ու առաքելությունը տարրական դպրոցի ուսուցիչների պատկերացումներում
- Տղայնացվել է մեծ շախմատի տեխնոլոգիան սովորողների հոգեշարժողական կարողությունների զարգացման համար:

ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

- Վերանայվել են շախմատի ուսուցիչների վերապատրաստման նյութերը և կազմակերպվել են ՀՀ և ԼՂՀ շախմատի ուսուցիչների վերապատրաստումներ
- Հետազոտության արդյունքների հիման վրա վերանայվել են շախմատի դպրոցական դասագրքերը
- Մշակվել և լրամշակվել են շուրջ 20 գիտահետազոտական մեթոդներ և տեխնիկաներ՝ ուղղված սովորողների հուզական ինտելեկտի և դրա առանձին բաղադրիչների, որոշումների կայացման, պրոբլեմներ լուծելու կարողության, ուսուցիչների դասավանդման ռազմավարության, առաջանցիկ արտացոլման, սովորողների ուսուցման ոճերի և այլ ցուցանիշների գնահատմանը
- Վեր են հանվել շախմատի ուսուցիչների դժվարությունները և դրանց համապատասխան լուծումները ներառվել ուսուցիչների առցանց պատրաստման դասընթացի ծրագրում

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
3 գիտագործնական ձեռնարկ, 1 միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 25 գիտական հոդված, որից 12-ը միջազգային շտեմարաններում (РИНЦ, EBSCO, etc)
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՄԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

- «Интеграция науки и образования в XXI веке: психология, педагогика, дефектология» 2017 г. г. Саранск (Россия)
- Одиннадцатая Годичная Научная Конференция РАУ, 5-9 декабря 2016 г. Российско-Армянский университет
- Международная научно-практическая конференция Перспективы психологической науки и практики Москва, 16 июня 2017 г.
- Международная научно-практическая студенческая конференция Психология в современном мире Москва, 28 апреля 2017 г.

«Հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի և բուհական կրթական ծրագրերի վերլուծություն՝ Որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխանության տեսանկյունից» ծրագիր
Ծրագրի ղեկավար՝ Կարինե Հարությունյան
2006 թվականից, 12-ամյա հանրակրթության անցնելուց հետո, պարբերաբար վերանայվում և արդիականացվում են ուսումնական ծրագրերը, իրականացվում են ուսուցման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր, համալրվում են համակարգչային սարքավորումներով և

մեծանում է ինտերնետ հասանելիությունը, գործում են ավագ դպրոցներ ցանցի: Բոլոնիայի և Կոպենհագենի գործընթացների սկզբունքներին համապատասխան իրականացվում են մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական ստանդարտներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը: Սակայն, կրթության որակի ապահովումը ՀՀ ներկա կրթական համակարգի խնդիրներից է: Միևնույն ժամանակ 2011 թվականի մարտի 31-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ որակավորումների ազգային շրջանակը, որտեղ սահմանվել էին ՀՀ կրթության բոլոր մակարդակների նկարագրիչները, այն է կրթական որակավորումներին ներկայացվող նվազագույն պահանջները:
Թեմայի շրջանակներում ուսումնասիրել և վերլուծվել են.

- հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և կրթական (հանրակրթական և բուհական) ծրագրերի բովանդակությունը, սովորողների ծանրաբեռնվածությունը,
- գնահատման նոր համակարգի ներդրման և կիրառման արդյունավետությունը,
- մեկ բուհի՝ Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի կրթական ծրագրերը,
- ՀՀ բուհերում գործող գնահատման համակարգերը՝ ուսումնառության վերջնարդյունքների արդյունավետությունը ապահովելու տեսանկյունից:

Ուսումնասիրության նպատակից և խնդիրներից ելնելով՝ կիրառել է հիմնականում փաստաթղթային վերլուծություն և դիտարկումներ: Ուսումնասիրվել են ոչ միայն Հայաստանի հանրակրթության պետական չափորոշիչը, չափորոշչի բովանդակային պահանջներ, նրա ընդհանուր կառուցվածքը, այլև այդ ուղղությամբ իրականացված տեղական և միջազգային հետազոտություններ: Ուսումնասիրվել է տվյալ բուհի կրթական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին: Ուսումնասիրության արդյունքները համադրվել են ՀՀ կրթության որակավորումների և դրանց ընդհարական բնութագրերի հետ:

«Փոխակերպական հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական
և մեթոդական տեսանկյուններ» ծրագիր
Ծրագրի ղեկավար՝ Հասմիկ Հովհաննիսյան

ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Հրատարակված գիտական հոդվածներ
- Միջազգային գիտաժողովներին և խորհրդաժողովներին ներկայացված զեկույցներ
- Դասախոսություններ, հետբուհական և արտաբուհական դասընթացներ
- Արտոնագիր

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

- Hovhannisyan, Hasmik & Djidjian, Robert (2017). “Building the General Theory of Meta-Argumentation”. In: Metaphilosophy. Edited By: Armen T. Marsoobian, USA. Volume 48, Issue 3, April 2017. Pages 345–354. 24 April 2017. DOI: 10.1111/meta.12242. Wiley publication. Web of Science. Online ISSN: 1467-9973. http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/meta.12242/full
- Hovhannisyan, Hasmik (2017). “Problems of Argumentation in Medieval Armenian Philosophy”. In: Wisdom. ISSN 1829-3824. Vol. 8, ISSUE 1: Jun 29, 2017. DOI: https://doi.org/10.24234/ Yerevan, “TASK” LLC. РИНЦ. Pages 81–94. http://wisdomperiodical.com/index.php/wisdom/article/view/177
- Djidjian, Robert (2017). “The Secret of Geniality Noema Comitetul”. In: Român de Istoria şi Filosofia Ştiinţei şi Tehnicii, XVI. Pp. 417-433. Bucharest.
- Հովհաննիսյան Հ.Օ., Բանավեճի մեթոդի առանձնահատկությունները դասավանդման և սովորողների մտավոր կարողությունների զարգացման գործընթացներում: «Մանկավարժական

միտք»: 2016 (3-4), «Զանգակ» հրատ., Երևան, 150-159: http://zangak.am/pdf/Mank.mitq/2016/Mankavarzhakan-Mitq-2016-3-4.pdf

- Hovhannisyan H.O., Idea and Models of civil Socicty: Developnent Tendencics, Argurcnts pro and con. «Wisdom», 2(7), 2016. ASPU, Yerevan. P. 95-102. http://www.wisdomperiodical.com/index.php/wisdom/article/view/14
- Հովհաննիսյան Հ.Օ., Քաղաքացիական հասարակության գաղափարն ու մոդելները. զարգացման միտումները, թեր և դեմ փաստարկներ: «Բանբեր Երևանի համալսարանի»: Հասարակական գիտություններ. փիլիսոփայություն, հոգեբանություն: No1(22), Երևան, 2017: էջ 3-13: http://publishing.ysu.am/files/banber1514.pdf

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

- Հասմիկ Հովհաննիսյան, Ռոբերտ Ջիջյան, Հովհաննես Հովհաննիսյան. «Կյանքը և փիլիսոփայությունը» Միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Գ.Բրուտյանի 90-ամյակին: 22-23-ը նոյեմբերի, 2016 թ.:
- Հովհաննես Հովհաննիսյան. Международная конференция «Роль институтов граждансого общества в евразийской интеграции». Ереван, 4-ое сентября, 2017г.
- Հասմիկ Հովհաննիսյան, Հովհաննես Հովհաննիսյան. Միջազգային գիտաժողով «Կովկաս-2016»: Երևան, 9-ը հունիսի, 2017 թ.:
- Հովհաննես Հովհաննիսյան. Ռուսաստանի և Եվրասիայի ժողովուրդների 1-ին միջազգային համաժողով: ՌԴ, Մոսկվա, 2-3-ը նոյեբերի, 2016թ.:
- Հովհաննես Հովհաննիսյան. Եվրասիայի ժողովուրդների ասամբլեայի համագումար: ՌԴ, Մոսկվա, 28-29-ը մայիսի, 2017թ.:
- Հովհաննես Հովհաննիսյան. Խորհրդաժողով՝ նվիրված եվրասիական ինտեգրացման գործընթացներին: Սերբիայի Հանրապետություն, Տարա, 22-23-ը հուլիսի, 2017թ.:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

- «Փաստարկում և հռետորություն». դասընթաց ՀՀ արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար: Մարտ-մայիս, 2017թ.:
- «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ». դասընթաց ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիր, 2016, 2017 թթ.:
- «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ», «Հաղորդակցում, բանակցություններ կազմակերպում և վարում», «Հասարակական համակարգի զարգացման և կառավարման առանձնատկությունները» թեմաներով դասախոսություններ և պարապմունքներ ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների ծրագրում: ՀՀ Քաղծառայության խորհուրդ, Երևանի պետական համալսարան, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ: 2015, 2016, 2017 թթ.:
- «Քաղաքական բանավեճ և ճարտասանություն». Դասընթաց Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի «Քաղաքական դպրոց» դեպարտամենտում, Էթիկայի դպրոցում, Լիբերալ քաղաքականության դպրոցում:
- «Քաղաքացիական հասարակություն. ինստիտուտները և գործառույթները», «Հասարակական համակարգի փոխակերպման և կառավարման առանձնահատկությունները: Կանանց մասնակցության հիմնախնդիրներ», «Հասարակական - քաղաքական երկխոսության մշակույթ» թեմաներով դասախոսություններ և պարապմունքներ Կանանց լիդերության դպրոցի ունկնդիրների համար: Ծաղկաձոր, 27-30 մարտի, 20-23 մայիսի, 2017 թ.:

ԱՐՏՈՆԱԳԻՐ

Ռոբերտ Ջիջյան, Հայաստանի Հանրապետություն, 3021 A, «Ճանապարհային երթևեկության կարգավորման ինտերակտիվ համակարգ, գրանցված է պետական գրանցամատյանում 16.05.2016:

Ծրագրի ղեկավար՝ Էդվարդ Կոկանյան
Հաշվետու ժամանակաշրջանում Horiba-XpLoRa PLUS ռամանյան մանրադիտակի օգնությամբ հետազոտվել են լիթիումի նիոբատի բյուրեղի կառուցվածքային փոփոխությունները կախված ցիրկոնիումի խառնուրդային իոնների կոնցենտրացիայից:
Ստացված ռամանյան կորերը վերլուծվել են հարմոնիկ օսցիլիատորների ստանալով հիմնական E[TO1], A[TO1] և A[TO2] ֆոնոնների հաճախությունները և մարումները: Ստացված արդյունքները վկայում են, որ խառնուրդային իոնի 2% կոնցենտրացիան կրիտիկական է, որն անցնելիս ցիրկոնիումի բյուրեղական ցանց ներմուծման մեխանիզմը լիովին փոխվում է: Ինչպես ցույց է տալիս բյուրեղական ցանցում նիոբիումի դիրքի հետ կապված ֆոնոնների վարքը՝ 2% կոնցենտրացիան համապատասխանում է իր հանգույցում չգտնվող նիոբիումի իոնների ամբողջովին վերացման մասին և հետևաբար բյուրեղի օպտիկական վնասման վերացման շեմային արժեքին:
Հետազոտվել են ցիրկոնիումի և ինդիումի խառնուրդային իոններով լեգիրված լիթիումի նիոբատի բյուրեղի էլեկտրաօպտիկական և դիէլեկտրիկական հատկությունները:
Ցիրկոնիումի համար ստացված արդյունքները լիովին համապատասխանում են ռամանյան ցրման արդյունքների հետ ցուցաբերելով առանձնահատկություն խառնուրդային իոնի 2% կոնցենտրացիայի համար:
Ինդիումի խառնուրդային իոններով լեգիրված լիթիումի նիոբատի բյուրեղի համար ստացված արդյունքները վկայում են, այս բյուրեղները նույնպես կարող են հանդիսանալ հեռանկարային նյութ կիրառությունների համար, որի հիմնական հատկությունները պահպանվում են ի համեմատություն նոմինալ մաքուր բյուրեղի հետ: Խառնուրդային իոնի կոնցենտրացիայի շեմային արժեքը ֆոտոռեֆրակցիայի զսպման համար գտնվում է 1.7%-ի շուրջ:
Լաբորատորիայի կողմից ստացված արդյունքները զեկուցվել են “Laser Physics 2017” Միջազգային գիտաժողովում, Աշտարակ, 19-23 Սեպտեմբեր 2017:
Տպագրվել է 5 աշխատանք, որից 4-ը “Scopus” շտեմարանի ամսագրերում:
ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- A.Yeganyan, T.Butaeva, E.Kokanyan. Определение коэффициента теплопроводности кристаллов со структурой граната при высокых температурах. Известия НАН Армении, Физика, 4, 67-72 (2017).
- N.Kokanyan, D.Chapron, E.Kokanyan, M.Fontana. Zr doping on lithium niobate crystals: Raman spectroscopy and chemometrics. Journal of Applied Physics, 121, 095103 -095108 (2017).
- M.Abarkan, A.Danielyan, N.Kokanyan, M.Aillerie, A.Movsesyan, S.Kostritskii, E.Kokanyan. The clamped and unclamped effective electro-optic coefficients of zirconium-doped congruent lithium niobate crystals. Journal of Physics: Conf. Series, 879, 012004-1-012004-9 (2017).
- M.Abarkan, A.Danielyan, S.Sewastianow, N.Theofanous, M.Aillerie, S.Kostritskii, E.Kokanyan. The r22 electro-optic coefficients in indium-doped congruent lithium–niobate crystals. Journal of Physics: Conf. Series, 879, 012005-1-012005-10 (2017).
- Danielyan A., Kokanyan E., Aillerie M., Bazzan M. Structural and physical properties of iron doped various composition lithium niobate crystals. International Conference Laser Physics 2017, Ashtarak, Armenia, September 19-23. Book of Abstracts, pp. 42-43, (2017).

Հայ-ռուսական հումանիտար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՌՀԳՀ – 2016» միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Բազմամշակութային կրթության ռիսկերը և դրանց նվազեցման տեխնոլոգիաները Ռուսաստանի և Հայաստանի բարձրագույն կրթական հաստատություններում» թեմա
Թեմայի ղեկավար՝ Ինա Սարգսյան
Թեմայի հետազոտության երկրորդ տարվա ընթացքում ներկայացվել են բազմամշակութային կրթության ռիսկերի դասակարգումը և էմպիրիկ հետազոտության արդյունքում առանձնացվել են ռազմավարական, անձնային, հոգեբանական, հաղորդակցական, հանրամշակութային

ռիսկերը: Մշակվել են բազմամշակութային կրթության իրականացման ռիսկերի նվազեցման տեխնոլոգիաներ բուհի պայմաններում:
Հիմնախնդրի հետազոտական արդյունքների գործնականում ներդնումը իրականացվում է թեմայի մասնակիցների կողմից կուրսային, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ուսանողների գիտահետազոտական աշխատանքների թեմաների առաջադրման, գիտամեթոդական հոդվածների և մենագրության նախապատրաստման գործընթացում:
Ծրագրի հիմնախնդրի առանցքային հարցերը քննարկվել են մի շարք գիտաժողովներում, այդ թվում՝

- Международная научно-практическая конференция – вебинар «Воспитание как фактор развития личности в современной России». Ереван-Калуга, апрель 2017 г.
- III Международная научно-методическая конференция. Омск, 2017.
- 37-ая Международная научно-практической конф. «Приоритетные научные направления: от теории к практике». Новосибирск, 2017.
- Междунар. научная конференция «Язык и личность в гармоничном диалоге культур. Ставрополь, 2017.
- Ծրագրի շրջանակներում Աննա Սիմոնյանը ս.թ. նոյեմբերի 22-23-ը ՌԴ Մոսկվա քաղաքում, ՌԴ նախագահին կից Ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ռուսական Ակադեմիայում մասնակցելու է “Գիտությունը կրթության ծառայությանը” խորագրով սեմինարին:
- 2017 թ.-ի հետազոտական աշխատանքների արդյունքում տպագրվել է՝

2 մենագրություն

- И.Р. Саркисян. МОНОГРАФИЯ. Риски поликультурного образования и способы их минимизации в свете идей билингвального обучения. Ереван, 2017, 180 с.
- Манукян И.Ю. Мультикультурное образование: проблемы и перспективы развития. - Асогик, г.Ереван 2017. 110 с.

20 հոդված

- И.Р. Саркисян. Межкультурная адаптация в учебно-профессиональной деятельности как один из возможных способов минимизации рисков поликультурного обучения на уроках РКИ. Проблемы модернизации современного высшего образования: лингвистические аспекты. Материалы III Международной научно-методической конференции. Омск, 2017, с.327-331
- И.Р. Саркисян, Ван Хайчжень. Приставочные глаголы в методической системе обучения китайских учащихся РКИ. Сборник материалов 37-ой Международной научно-практической конф. «Приоритетные научные направления: от теории к практике». Новосибирск, 2017, с.60-66..
- И.Р. Саркисян. Конструкции с нереализованными валентностями в синтаксисе разговорной речи русского и армянского языков. Международный научный журнал «Инновационная наука». Часть 2., Уфа: Аэтерна, 2017, с.87-89.
- И.Р. Саркисян. Лексикографическое описание языка в аспекте подготовки поликультурной личности. Русский язык – гарант диалога культур, научного сотрудничества, межнационального и межличностного общения в XXI в. Материалы Межд. н.-практич. конф. преподавателей и учителей рус. яз. и лит., студентов, магистрантов и аспирантов. Ер.: Изд-во «Ван Арьян», 2016. – 404 с. - С. 220-227
- И.Р. Саркисян. Дискуссионные вопросы терминологических систем современных теорий билингвального обучения, межкультурной коммуникации и поликультурного обучения и воспитания. Современные тенденции в развитии методики преподавания русского языка. Коллективная монография. Москва, 2017, с. 450-455.
- И.Р. Саркисян. Факторы актуализации поликультурного образования в современных условиях (в продолжение идей Б.М. Есаджанян). Русский язык в Армении, 2017, N 1,17-25.

- И.Р. Саркисян. Проблема эквивалентности русских и армянских фразеологизмов, выражающих чувства и эмоции, в ракурсе минимизации рисков недопонимания в межкультурном диалоге. Журнал “Инновационная наука”, №8, Уфа, 2017, с. 47-53. (Журнал зарегистрирован Федеральной службой по надзору в сфере связи, информационных технологий и массовых коммуникации под номером ПИ № ФС77-61597 от 30.04.2015 Размещение журнала в Научной электронной библиотеке elibrary.ru по договору №103-02/2015 Placement of the journal in the Scientific electronic library elibrary.ru under the contract №103-02 / 2015 Размещение журнала в КиберЛенинке" по договору №32505-01) ; соавтор - Мидоян М.А.
- И.Р. Саркисян. Межкультурный диалог на уроках РКИ: пути решения проблемы Матер. междунар. научной конференции «Язык и личность в гармоничном диалоге культур. Ставрополь, 2017 с. 11-116
- И.Р. Саркисян. Антропоцентрический подход к формированию “второй” языковой личности. Ж-л “Русский язык в Армении”, N 5, Ереван, 2017, с. 8-12.
- Геворкян М.М. Поликультурное образование в Армении: новая стратегия развития образования. 21-ый век. Информационно-аналитический журнал № 2 (43), с. 103-113, г. Ереван, РА, 2017 г.
- Геворкян М.М. Синягина Н.Ю. Классификация рисков поликультурного образования в моноэтнической и полиэтнической среде //«Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես. - № 1. г. Ереван, РА, Էջ 35-41. 2017.
- Геворкян М.М. Поликультурное образование в Армении. Особенности, возможности и риски. Образование личности. Научно-методический журнал. № 1, с. 27-33, г. Москва, РФ, РИНЦ, ВАК РФ, 2017,
- Геворкян М.М. Теоретико-методологическое обоснование поликультурного образования в Армении. Инновации в образовании, № 4, с. 5-11, г. Москва, РФ, РИНЦ, ВАК РФ, 2017 г.
- Геворкян М.М. Социокультурные риски поликультурного воспитания . Воспитание как фактор развития личности в современной России: Материалы Международной научно-практической конференции – вебинара. С. 60-66, Калуга: КГУ им. К.Э. Циолковского, 2017
- Манукян И.Ю. Поликультурное образование: новые потребности, новые модели. Проблемы современной русистики, N 1, Ереван 2017. – С. 127-136
- Манукян И.Ю. Стратегия поликультурной модели образования. - Русский язык в Армении, г.Ереван, 2017, N 6. – С. 25-34
- Манукян И.Ю. Когнитивно-коммуникативный подход к обучению в процессе формирования межкультурной компетенции. - Международный научный журнал Инновационная наука, Уфа, 2017. – С. 65-75 Проблемы современной русистики, N 1, Ереван 2017. – С. 127-136
- Геворкян А.М. Диалог культур как способ взаимодействия национальных культур в процессе музыкально-педагогического образования. – С. 149-156

«Ներառական կրթության արդյունավետության մշտադիտարկման և որակի գնահատման չափանիշային - ախտորոշիչ գործիքակազմ» հայ-բելառուսական ծրագրի վերաբերյալ
Ծրագրի ղեկավար՝ Արմենուհի Ավագյան
«Ներառական կրթության արդյունավետության մշտադիտարկման և որակի գնահատման չափանիշային - ախտորոշիչ գործիքակազմ» հայ-բելառուսական ծրագիրը մեկնարկել է ս.թ. հունիսի 1-ին: Հաշվետու ժամանակահատվածում.
Ուսումնասիրվել է ներառական կրթության որակի գնահատման միջազգային փորձը: Որպես ուղեցույց ընտրվել է Մեծ Բրիտանիայում մշակված, այնուհետև մի շարք երկրների կողմից ընդունված,,Ներականության ցուցիչները,, ձեռնարկը, որը կիրառվում է ներառականության արդյունավետության գնահատման նպատակով:

Թարգմանվել և Բելառուսի Մ. Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի Ներառական կրթության ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ մշակվել է 5 հարցարան՝ ուղղված ներառական դպրոցների բազմամասնագիտական թիմերի անդամների, տարրական և միջին դպրոցի ուսուցիչների, ծնողների, աշակերտների հարցմանը:
Հարցարանների միջոցով հարցման է ենթարկվել 82 անձ՝ Երևանի թիվ 20, 27 132 դպրոցներում, Հրազդանի և Կապանի մեկական դպրոցներում:
Այժմ կատարվում է անցկացված հետազոտության արդյունքների սոցիոլոգիական վերլուծություն:
Ներառական կրթության մշտադիտարկման և որակի գնահատման հիմնախնդիրները քննարկվել են ս.թ. հոկտեմբերի 31-ին «ՄԱՅՐԻ» բուժական մանկավարժության և սոցիալական թերապիայի կենտրոն հասարակական կազմակերպությունում անցկացված «Մտավոր խնդիրներով անձանց անցումը ինքնուրույն կյանքի և աշխատանքի» խորագրով միջազգային աշխատաժողովի ժամանակ:

«ՌԴ Հարավի և Հայաստանի չորային ագրոկլիմայական գոտիներում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի կայունությունը բարձրացնող պրեպարատների ստեղծում»
Հայ-Ռուսական միջազգային գրանտային ծրագիր
Ծրագրի ղեկավար՝ Ռուզաննա Սադոյան
Գրանտային ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.
Լաբորատոր պայմաններում ցորենի և գարու վրա SkQ3-ի հիման վրա ստեղծված Ագրիմիտին պրեպարատի ազդեցության արդյունավետության ուսումնասիրություն, ախտահանիչի հետ համատեղելիության որոշում սերմերի նախացանքային մշակության համար:
ՀՀ Սյունիքի և Արմավիրի մարզերի ագրոկլիմայական պայմաններում Ագրիմիտինի օպտիմալ չափաբաժնի դաշտային փորձարկումներ:
Ագրիմիտին պրեպարատի կիրառման արդյունքում գարնանացան գարու զարգացման առանձնահատկությունների և արդյունավետության ուսումնասիրություն:
Ստացված տվյալների համեմատական վերլուծություն և գնահատում:
Հետազոտությունների արդյունքների մասին զեկուցվել է ս.թ. նոյեմբերի 2-4-ը ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում կայացած “Генетика – фундаментальная основа инноваций в медицине и селекции” միջազգային կոնֆերանսին: Տպագրության է հանձնված “Ագրիմիտինի ազդեցությունը գարնանացան գարու զարգացման վրա ՀՀ Արարատյան դաշտավայրի չորային պայմաններում” վերնագրով հոդվածը:
Հետազոտությունները կրում են շարունակական բնույթ:

«Er3+ և Yb3+ իոններով լեգիրված լիթիումի նիոբատի բյուրեղները՝ որպես նոր նյութեր ջերմաստիճանային օպտիկական սենսորների համար» թեմատիկ ծրագիր
Ծրագրի ղեկավար՝ Էդվարդ Կոկանյան
Հաշվետու ժամանակաշրջանում կոբալտի իոններով լեգիրված համընկնելի և տարրաչափական բաղադրության լիթիումի նիոբատի բյուրեղների էլեկտրոնային պարամագնիսական ռեսոնանսի հետազոտությունների արդյունքում մշակվել է բյուրեղական ցանցում նշված իոնների տեղակայման և լիցքերի համակշռման մեխանիզմի մոդել:
Ուսումնասիրվել է կուլոնյան փոխազդեցության խնդիրը կիսահաղորդիչ / մեկուսիչ / մետաղ համակարգում նանոմետրական կարգի մեկուսիչ շերտերի պարագայում: Ցույց է տրվել, որ նման համակարգերում նյութական պարամետրերի փոխադարձ համադրության միջոցով կարելի է իրագործել արդյունավետ պայմաններ արագագործ համակարգերում օպտիկական տարբեր բնութագրերի կառավարման համար:
Դիտարկվել է կոոպերատիվ լյումինեսցենցիայի հենքի վրա իտերբիումի իոններով լեգիրված լիթիումի նիոբատի բյուրեղների կիրառման հնարավորությունը օպտիկական ջերմաստիճանային սենսորներում: Ցույց է տրվել, որ 200-500Կ ջերմատիճանային տիրույթում

նշված բյուրեղները կարող են կիրառվել, որպես աշխատող տարր ջերմաստիճանային օպտիկական սենսորներում 0.12 % K-1 զգայնությամբ:
Թեմայի շրջանակներում ստացված արդյունքները զեկուցվել են ԱՄՆ Սան ԱՆտոնիա քաղաքում կայացած «International meeting on Ferroelectricity IMF-2017) միջազգային գիտաժողովում (բանավոր զեկույց), և Աշտարակի “Laser Physics 2017” միջազգային գիտաժողովում (մեկ բանավոր և մեկ ստենդային զեկույց), Երևանի «Semiconductor Micro- and Nanoelectronics. Proceedings of 11-th International Conference» միջազգային գիտաժողովում (բանավոր զեկույց):
Տպագրվել է 8 աշխատանք, որից 2-ը “Scopus” շտեմարանի ամսագրերում:
ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- E.Kokanyan, A.Movsesyan, M.Bazzan. Lithium niobate thin films of stoichiometric composition doped with Ho3+ ions. International meeting on Ferroelectricity San Antonio, USA, September 4-9, 2017, Book of Abstracts, p.148, (2017).
- E.Kokanyan, A.Movsesyan, M.Bazzan, I.Ghambaryan, A.Eganyan, A.Arzumanyan, M.Aillerie, N. Kokanyan. Ho-doped lithium niobate thin films of stoichiometric composition. International Conference Laser Physics 2017, Ashtarak, Armenia, September 19-23. Book of Abstracts, pp. 19-20, (2017).
- E.Kokanyan, A.Movsesyan, M.Bazzan, N. Kokanyan. The structure of Ho-doped lithium niobate thin films. International Conference Laser Physics 2017, Ashtarak, Armenia, September 19-23. Book of Abstracts, pp. 64-65, (2017).
- V.G.Grachev, K.Hansen, M.Meyer, E.P.Kokanyan, G.I.Malovichko. Substitution mechanisms and location of Co2+ ions in congruent and stoichiometric lithium niobate crystals derived from electron paramagnetic resonance data. Materials Research Express, v.4, pp 036204-03617 (2017).
- E.Kokanyan, A.Movsesyan, M.Bazzan, I.Ghambaryan, A.Eganyan, A.Arzumanyan, M.Aillerie, N. Kokanyan. Ho-doped lithium niobate thin films. Growth and properties. Вестник РАУ, 1, 68-75 (2017).
- K.Aharonyan, E.Kazaryan, E.Kokanyan. Coulomb interaction in the finite dielectric-environment mediated mosfet structures. Вестник РАУ, 1, 107-114 (2017).
- K. Aharonyan, E.Kazaryan, E.Kokanyan. Coulomb interaction in the finite dielectric environment based mosfet structures. Semiconductor Micro- and Nanoelectronics. Proceedings of 11-th International Conference, Yerevan, June23-25, pp. 41-47 (2017).
- А.Демирханян, Г.Демирханян, Е.Коканян. Кристалл LiNbO3:Yb3+: Материал для Отического Сенсора Температуры. Известия НАН Армении, Физика, 4, 515-521 (2017).

Բուհի կողմից ֆինանսավորվել են հետևյալ երկու ծրագրերը՝
«Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիա»
Լաբորատորիայի վարիչ՝ Ռ. Սաֆրաստյան

- սույն թվականի մարտի 29-ին կազմակերպել է միջազգային գիտաժողով՝ «Սփյուռքը հայկական քաղաքակրթության համատեքստում» խորագրով: Գիտաժողովին մասնակցել են ՀՊՄՀ-ի, ԵՊՀ-ի ինչպես նաև ԱՄՆ- և Ֆրանսիայի համալսարանների պրոֆեսորներ:
- տպագրության է պատրաստում «Սփյուռքը հայկական քաղաքակրթության համատեքստում» գիտաժողովի հիմնադրույթները և մինչև տարեվերջ այն կներկայացվի տպագրության:
- Նախատեսվում է նաև հայկական քաղաքակրթության դասավանդման ուսումնամեթոդական խնդիրներին նվիրված խորհրդակցություն:
- Նախատեսվում է նաև կազմակերպել «Պետականության դերը հայկական քաղաքակրթության հայեցակարգում» խորագրով գիտական միջբուհական սեմինար՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ:
- Իրականացվում է մասնագիտական գրականության հավաք և գրադարանի ստեղծում նվիրված հայկական քաղաքակրթությանը:

«Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիա»
Լաբորատորիայի վարիչ՝ Բորիս Նահապետյան
Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ծավալվել է դասագրքաստեղծ գործունեություն. ուսումնասիրվել է թղթային և էլեկտրոնային դասագրքերին ներկայացվող չափորոշչային պահանջների միջազգային փորձը և կատարվել համեմատական վերլուծություն:
- Շարունակվել են մաթեմատիկայի պատմության ուսումնասիրությունները, պաշտպանվել և պատրաստվում են մի քանի մագիստրոսական թեզեր՝ նվիրված նշված հարցերին:

Շարունակվում է Լաբորատորիայի գիտական սեմինարը:

- Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի հետ համատեղ Լաբորատորիան մասնակցել է Համալսարանի տարբեր գիտագործնական համաժողովներին:
- Մայրենիի և նրա դասավանդվան մեթոդիկայի ամբիոնի հետ համագործակցության շրջանակում դեկտեմբերին նախատեսվում է մաթեմատիկայի և մայրենիի առնչություններին նվիրված գիտաժովով:
- Իրականացվել է Լաբորատորիայի Կանոնադրությամբ նախատեսված գործունեության նախագծերից՝ եզրութաբանական բառարանի ստեղծման առաջին փուլը. հրապարակվել է 1–6 դասարանների ծրագրերին համապատասխանող մաթեմատիկական տերմինների բացատրական բառարանը:
- Պատրաստվել են մանկավարժական ԲՈՒՀ–երի ուսանողներին համար նախատեսված «Հավանականության տեսության տարրերը» ուսումնական ձեռնարկներ (հայերեն և ռուսերեն):

Լաբորատորիայի անդամների կողմից 2017թ. հրատարակվել են գիտական և մեթոդական աշխատանքներ.

- Нахапетян Б.С., О некоторых функционалах на пространстве конфигураций, ассоциированных со спецификациями случайных полей. Труды Математического центра имени Н. И. Лобачевского, Казанское математическое общество. Материалы Тринадцатой международной Казанской летней научной школы-конференции «Теория функций, ее приложения и смежные вопросы», т.54, Казань, 21–27 августа 2017г., 271–275 (совместно с Хачатрян Л.А.)
- H.G.Ghazaryan "Comparison of power of generalized - homogeneous polynomials", Armenian Mathematical Union, Yerevan, 32 -33, 2017.
- V.N.Margaryan, H.G.Ghazaryan "Lower bounds for polynomials of many variables", Izvestiya NAN Armenii, Math., vol.52, no.5, 52 -67, 2017.
- H.G.Ghazaryan "Semilocality and Density of Multy - Anisotropic Sobolev Spaces", Research and Communications in Mathematics and Mathematical Sciences. vol.8, Issue 1, pages 37 - 56, 2017.
- Աբրահամյան Ա.Ս. Ցուցանշանից խորհրդանշանին անցումը լեզվում: «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2017 հմր. 2 (23), էջ 32-39
- «Լեզու, խոսք, իրականություն» Միջազգային գիտաժողով – Վանաձորի պետական համալսարան 2017թ. Հունիսի 23-24
- Hovhannisyan K.A. The basic problem of formation of multidisciplinary competences in the process of mathematics teaching: Web of Scholar5(14), August 2017, 57-59, Kiev, Ukraine
- Арутюнян А.А. О построении одного отборочного курса математического или экономического потока старшей школы, Web of Scholar Multidisciplinary Scientific Journal, 5(14), August 2017, 64-67, Kiev, Ukraine
- Арутюнян А.А.,Оганесян К.А. Интеграция дискретной математики в программу математики средней и старшей школы, Психология и педагогика: Методика и проблемы практического применения //Сборник материалов LVIII, 23 августа, Новосибирск, 2017
- Harutyunyan H.H., Hovhannisyan K.A. Psychological and Pedagogical Grounds of Applying Modelling Method in Teaching Students at Teacher Training (Pedagogical) Universities, Web of Scholar Multidisciplinary Scientific Journal 7(16),, 32-36: October, Kiev, Ukraine, 2017

- Оганесян К.А., Самостоятельные работы как форма развития творческого мышления учащихся ; Конференция по психологии и педагогике. Сборник статей Международной научно - практической конференции 10 октября 2017 г. Оренбург, МЦИИ ОМЕГА САЙНС, 2017
- Гущян А.Х., Оганесян К.А. Педагогические условия внедрения инновационных технологий ; Сборник статей Международной научно - практической конференции 20 октября 2017 г. Казань, МЦИИ ОМЕГА САЙНС, 2017

Գիտահետազոտական կենտրոնը համակարգել է նաև վերապատրաստումների և մագիստրոսական կրթության գործընթացները: Համալսարանում 2017թ-ի ընթացքում իրականացվել են վերապատրաստման հետևյալ ծրագրերը.

ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում	ՀՊՄՀ կողմից ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում
114	255

Մագիստրատուրայի գծով հաշվետու տարում իրականացվել է հետևյալ գործընթացները.

✓ Մագիստրոսական կրթության արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար կատարվել են 10 ֆակուլտետների ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացվել են ռեկտորատի նիստերի ժամանակ:

✓ Արդիականացվել են մագիստրոսների կողմից կատարվող գիտական թեզերի թեմաները:

✓ Ընտրվել են այնպիսի թեմաներ, որոնք պարունակում են նորույթ և նպաստում մագիստրոսի ինքնուրույնության դրսևորմանը:

✓ Արդիականացվել են թեզերի պաշտպանման ձևաչափերը՝ արդյունքների օբյեկտիվ գնահատման նպատակով:

✓ Առավել շեշտադրել ենք թեզերի իրականացման գործընթացը, որի նպատակով մեր համապատասխան մասնագետը պարբերաբար ներկա է եղել ինչպես նախապաշտպանական գործընթացներին, այնպես էլ արդյունքների մշտադիտարկմանը և վերլուծմանը:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում մագիստրատուրայի առկա համակարգ ընդունվել են 1159 ուսանող, որից 1-ին կուրսում՝ 602, իսկ 2-րդ կուրսում՝ 557 ուսանողներ: Հեռակա համակարգ ընդունվել են 325 ուսանողներ, որից 1-ին կուրսում՝ 121, 2-րդ կուրսում՝ 106, իսկ 3-րդ կուրսում 98 ուսանողներ:

Համալսարանի գիտամանկավարժական կադրերի պատրաստման կարևորագույն օղակներից է հետբուհական կրթությունը, որի գործունեությունն իրականացվում է երեք ուղղություններով՝ ասպիրանտուրա, դոկտորանտուրա և հայցորդություն:

2017-2018 ուս.տարվա դրությամբ հետբուհական համակարգն ունի 29 ասպիրանտ, որից 4-ը սովորում են առկա համակարգում, 25-ը՝ հեռակա: Ընդ որում, 2017-2018 ուս. տարվա համար համալսարանին հատկացվել է առկա–անվճար, տարկետման իրավունքով մեկ ասպիրանտական տեղ և հեռակա անվճար հիմունքներով յոթ ասպիրանտական տեղ, որոնք համալրվել են, թափուր տեղեր չեն եղել, ասպիրանտուրա են ընդունվել 1 առկա և 7 հեռակա ասպիրանտներ:

Բաժնում ուսումնառության ժամկետը լրանալու կապակցությամբ՝

ավարտել են	4	
ընդունվել են	7/հեռակա	1/առկա
տեղափոխվել են	2	

Համալսարանում առավել մեծ տեղ է գրավում հայցորդության համակարգը.

2017-2018 ուս.տարվա դրությամբ հետբուհական համակարգն ունի 94 հայցորդ: Այս ուս. տարում հայցորդություն են ձևակերպել 28 հայցորդներ: Ներկա դրությամբ կան հայցորդներ, ովքեր

տարկետման մեջ են	3
ազատվել են	4
հեռացվել և չեն ատեստավորվել	0
հայցորդական ժամկետում թեկնածուական թեզը պաշտ. են	0
ժամկետից շուտ մասնագիտական խորհուրդ են ներկայացրել	0
ժամկետը լրանալու կապակցությամբ ազատվել են	2
զեղչային համակարգում սովորում են	18

Համալսարանը ասպիրանտներ և հայցորդներ է պատրաստում բանասիրական, ֆիզիկամաթեմատիկական, պատմական, աշխարհագրական, քիմիական, կենսաբանական, տեխնիկական, սոցիալ-մշակութային, հոգեբանական և մանկավարժական գիտությունների գծով:

2017թ. կազմակերպվել է 2 քննաշրջան՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, որոնց ընթացքում, որակավորման քննություններ են հանձնել ասպիրանտներ, հայցորդներ մեր համալսարանից և այլ բուհերից:

2017թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Դեկանատների և ամբիոնների միջոցով կազմվել է ասպիրանտների ընդունելության տարկան պլանը,
2. Ըստ գործող կարգի՝ կազմակերպվել է ասպիրանտուրայի և հայցորդների ընդունելության նախապատրաստական գործընթացը (թերթի հայտարարություն, փաստաթղթերի ընդունում, ժամանակացույցի կազմում, քննաթերթիկների նախապատրաստում),
3. Ներկայացվել է հրամանագրման ասպիրանտուրա ընդունող հանձնաժողովի կազմը, որը դիմորդներին թույլ է տալիս մասնակցելու ընդունելության քննություններին,
4. Կազմակերպվել է ասպիրանտուրայի ընդունելության քննությունները ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգով և ժամկետներով: Քննությունների ավարտից հետո ընդունող հանձնաժողովի որոշման համաձայն ասպիրանտներն հրամանագրվել են,
5. Իրականացվել է ամբիոններում և ֆակուլտետներում գիտամանակավարժական կադրերի պատրաստման կազմակերպչական աշխատանքների հսկողությունը, (գիտ. թեմաների և գիտ. ղեկավարների հաստատում, վերահաստատում, հանձնում, ատեստավորում, անհատական պլանների կազմման հսկողություն),
6. Ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել են դասընթացներ՝ օտար լեզվից (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) և ինֆորմատիկայից,
7. Կրեդիտային համակարգով սովորող ասպիրանտ – հայցորդների համար կազմվել է ժամանակացույց և կազմակերպվել են ընդհանուր պատրաստվածության դասընթացներ (որոնք նույնպես վերահսկվել են),
8. ՀՀ ԲՈՀ-ի պահանջներին համապատասխան կազմակերպվել է որակավորման քննություններ,
9. Հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է ասպիրանտների և հայցորդների ատեստավորում,
10. Իրականացվել է ընթացիկ գործավարությունը (փաստաթղթերի, անձնական գործերի վարում և պահպանում),
11. Ձևակերպվել է ասպիարնտների և հայցորդների շարժը (ընդունման, տեղափոխման, ավարտման, հեռացման, կրթաթոշակների նշանակման, քննական հանձնաժողովների հրամանագրման, քննությունների մասնակցման, որակավորման քննությունների տեղեկանքների պատրաստման),

12. Կազմակերպվելու է ուսումնառության ժամկետը լրացած, հեռացված ասպիրանտների և հայցորդների անձնական գործերի մուտքագրում համալսարանի արխիվ, սահմանված կարգով,
13. Կազմակերպվել է վճարովի համակարգում սովորող ասպիրանտների և հայցորդների ուսման տարեկան վարձերի ժամանակին գանձումը, համալսարանի հաշվապահության հետ համատեղ,
14.Բաժնի մեկ տարվա հաշվետվությունը նախապատրաստվել և ներկայացվել է ՀՀ պետ. վիճակագրական վարչություն (ՀԿ – 1 ձև),
15. Ֆին-պլան բաժին է ներկայացվել ամենամսյա տեղեկանքները ասպիրանտների, հայցորդների, դոկտորանտների շարժի վերաբերյալ,
16. Ուսումնական վարչություն է ներկայացվել ասպիրանտների, հայցորդների, գիտ. ղեկավարների վարձատրման ճիշտ ժամաքանակը,
17. Ուսումնասիրվել, մշակվել և պատրաստվել է ասպիրանտուրայի բաժնի հետազոտողի բարձրագույն որակավորման աստիճանի և որակի կառավարման համակարգի ձեռնարկի նախագիծ:

2018թ.-ից համալսարանում Հետբուհական մասնագիտական կրթության ուսումնառությունն իրականացվելու է նոր ծրագրով, այդ նպատակով Գիտահետազոտական կենտրոնը կազմել է համապատասխան ուսումնական ծրագիր և պլան ներկայացրել Գիտական խորհրդի հաստատմանը:

Հետբուհական մասնագիտական ծրագրերի /ասպիրանտուրա և հայցորդություն/ ուսումնական պլան

22	Ծածկագիր և համարակալում	ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ, ԱՌԱՐԿԱՆԵՐ	Աշխատածավալը /ժամերով (1կրեդիտը 30 ժամ աշխատանք)				I տարի							II տարի							III տարի							Ամեն տարվա ամփոփում	
			Ընդհանուր	Լսարանային	Ինքնուրույն աշխատանք		Ընդհանուր	Լսարանային	Դասախոսություն	Գործնական պարապմունք	Ինքնուրույն աշխ.	Ստուգարք	Քննություն	Ընդհանուր	Լսարանային	Դասախոսություն	Գործնական պարապմունք	Ինքնուրույն աշխ.	Ստուգարք	Քննություն	Ընդհանուր	Լսարանային	Դասախոսություն	Գործնական պարապմունք	Ինքնուրույն աշխ.	Ստուգարք	Քննություն		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	•	23	•	25	•	•	•	•	30
		ԿՐԹԱԿԱՆ ԲԼՈՒԿՆԵՐ																										
	1.ԿՅ.00	Պարտադիր դասընթացներ և քննություններ																										
1	ԿՅ.01	Մասնագիտություն ատենախոսության թեմայի բնութագիրը /դասավանդման մեթոդիկա, հոգեբանություն, մանկավարժություն, հումանիտար առարկաներ/	8	240	120	120	4	60	40	20	60			4	60	40	20	60		x									
2	ԿՅ.02	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն	4	120	60	60	2	30	20	10	30			2	30	20	10	30		x									
3	ԿՅ.03	Մասնագիտական օտար լեզու	4	120	60	60	2	30	20	10	30			2	30	20	10	30		X									
4	ԿՅ.04	Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ	4	120	60	60	2	30	20	10	30			2	30	20	10	30		x									
5	Կ.00	Դրակտիկա[1]	10	300																								
	2. ԸՅ.00	Ընտրովի դասընթացներ և առաջադրանքներ[2]																										
7	1	Բուհական մանկավարժություն և հոգեբանություն	7	210	120	90	3	60	30	30	30			4	60	30	30	60	x									
	2	Օրկրող օտար լեզու	7	210	120	90	3	60	30	30	30			4	60	30	30	60	x									
	3	Կրթության կառավարում	6	180	90	90	3	60	30	30	30			3	60	30	30	60	x									
8	4	Գիտության փիլիսոփայություն, մեթոդաբանություն /տեխնոլոգիաներ/																										
9	5	Մտավոր սեփականության և պատենտագիտության հիմունքներ																										
10	6	Մարդային և նյութական ռեսուրսների կառավարում																										
11	7	Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում																										
		Հետազոտական բաղադրիչ																										
12	ՀՄ.00	Ատենախոսության թեմայով հրատարակված անհրաժեշտ նվազագույն աշխատություններ	30	900																								
13	ՍՄ.00	Տարեկան ատեստավորումներ	20	600																								
14		Ատենախոսություն և թեմա հաստատված հիմնարկի գրանցման հաշվառումներ ատենախոսության	80	2400																								
		Ընդհանուր՝	180	5400	630	570	19	330	190	140	240			21	330	190	140	330											

Կրեդիտային համակարգով հայցորդներ ձևակերպելու նպատակով ամբողջական փաթեթ է պատրաստվել և մշակվել, որը իր մեջ ներառում է՝
ա) պայմանագրի ձև (հայցորդ – հետազոտող ձևակերպվողների համար),
բ) կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կամակերպման կարգ (գիտակրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը),
գ) հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլան
դ) հետազոտողի կրթահետազոտական ծրագիր (ըստ տարիների և կրեդիտների),
ե) ընթացիկ և հանրագումարային ստուգումների ամփոփագիր,
զ) հետազոտական աշխատանքների գնահատման տեղեկագիրը,
է) ակադեմիական տեղեկանքի ձև:

Ընդհանուր առմամբ գիտահետազոտական կենտրոնի աշխատանքները ընթացել են արդյունավետ՝ ըստ նախատեսված պլանի:

45. ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհուրդ

Մանկավարժության 020 մասնագիտական ներկայիս խորհուրդը ստեղծվել է ՀՀ ԲՈՀ-ի նախագահի 04.10.2016թ. 80Ա հրամանի համաձայն:

No.	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտականաստիճանը	Թվանիշը խորհրդում
1.	Աստվածատրյան Մելանյա Գրիգորի (նախագահ)	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.01
2.	Մկրտչյան Մանուկ Աշոտի (նախագահի տեղակալ)	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.01
3.	Սվաջյան Արաքիսա Հովհաննեսի (գիտքարտուղար)	մանկ. գիտ. թեկն.	ԺԳ.00.01
4.	Բրուտյան Վաչիկ Արամայիսի	մանկ. գիտ. թեկն.	ԺԳ.00.01
5.	Ազարյան Ռոբերտ Նիկոլայի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.01
6.	Ասատրյան Լաուրա Թոռնիկի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.01
7.	Մանուկյան Մնացական Միքայելի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.01
8.	Թոփուզյան Աիդա Օնիկի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.01
9.	Ավագյան Արմենուհի Վոլոդյայի	մանկ. գիտ. թեկն.	ԺԳ.00.01

1. ԺԳ.00.01- Մանկավարժության տեսություն և պատմություն
2. ԺԳ.00.02- Դասավանդման և դաստիարարկության մեթոդիկա (հայոց լեզու, ռոմանագերմանական լեզուներ, արվեստ)

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճանը	Թվանիշը խորհրդում
1.	Աստվածատրյան Մելանյա Գրիգորի (նախագահ)	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
2.	Մկրտչյան Մանուկ Աշոտի (նախագահի տեղակալ)	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
3.	Սվաջյան Արաքիսա Հովհաննեսի (գիտքարտուղար)	մանկ. գիտ. թեկն.	ԺԳ.00.01
4.	Ներսիսյան Լեմսիկ Սուրենի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
5.	Կարապետյան Իգոր Կարապետի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
6.	Հովակիմյան Գառնիկ Պատվականի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
7.	Յուզբաշյան Յուրա Վաղարշակի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
8.	Գյուլամիրյան Ջուլիետա Հարությունի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
9.	Ղազարյան Դոնարա Մեխակի	մանկ. գիտ. թեկն.	ԺԳ.00.02

3. ԺԳ.00.02- Դասավանդման և դաստիարարկության մեթոդիկա (բնական գիտություններ)

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճանը	Թվանիշը խորհրդում
1.	Աստվածատրյան Մելանյա Գրիգորի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02

	(նախագահ)		
2.	Մկրտչյան Մանուկ Աշոտի (նախագահի տեղակալ)	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
3.	Սվաջյան Արաքիսա Հովհաննեսի (գիտքարտուղար)	մանկ. գիտ. թեկն.	ԺԳ.00.01
4.	Արաբաջյան Լևոն Գուրգենի	ֆիզմաթ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
5.	Խոյեցյան Աշոտ Վոլոդյայի	աշխ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
6.	Թանգամյան Տիգրան Վարազդատի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
7.	Կոկանյան Էդվարդ Պիերի	ֆիզմաթ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
8.	Սահակյան Լիդա Արշակի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02
9.	Միքայելյան Համլետ Սուրենի	մանկ. գիտ. դոկտ.	ԺԳ.00.02

2017 թ-ին «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում կայացել է 13 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսական աշխատանքների պաշտպանություն: Թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել ներքոնշյալ անձինք

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Թեման	Մասնագիտությունը	Պաշտպ. օրը	Աշխատանքի վայրը	Խորհրդի որոշումը	ԲՈՀ-ի որոշումը
1.	Զադոյան Անահիտ Մերուժանի	Մանկավարժական խորհրդատվության իրականացման պայմաններն ու միջոցները հանրակրթական համակարգում	ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»	28.02.2017	Մ.Նալբանդյանի անվանա Շիրակի պետական համալսարան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան
2.	Դավթյան Սոնա Ռաֆիկի	Տեսողության խանգարումներով ն/դ-երի տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորումը ընտանիքում	ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» (հատուկ մանկավարժություն)	06.04.2017	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան
3.	Բլբուլյան Հովիկ Վլադիմիրի	Սովորողների հանրամշակութային հաղորդակցման կոմպետենտության ձևավորման հիմնախնդիրն ավագ դպրոցում	ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»	06.04.2017	Թիվ 64 դպրոց	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի	Վերադարձվել է խորհուրդ կրկնակա կն պաշտպանության

						գիտական աստիճան	
4.	Ավագյան Մարիաննա Սամվելի	Նախադպրոցական համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները	ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»	31.05.2017	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան
5.	Պարսամյան Վարդան Ռազմիկի	Տեխնոլոգիական գործոնները որակյալ ուսուցման գործընթացում	ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»	31.05.2017	ԳԹԿ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան
6.	Դավթյան Նելլի Նորիկի	Ավագ դպրոցի աշակերտի գիտական աշխարհհայացքի ձևավորման մեթոդական համակարգը կենսաբանության ուսուցման գործընթացում	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (կենսաբանություն)	07.06.2017	Արցախի պետական համալսարան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան
7.	Ավդալյան Լիաննա Հայկի	Էլեկտրոդինամկիայի խորացված թեմաների ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկա)	07.06.2017	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	Վերադարձվել է խորհուրդ կրկնական պաշտպանության
8.	Քրիստինե Սամվելի Եղիզարյան	Ավագ դպրոցի ֆիզիկայի դասընթացի <Մոլեկուլային ֆիզիկա> բաժնի	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության	27.09.2017	Երևանի պետական բժշկական	Շնորհվել է մանկավարժական գիտությունների	

		խորացված թեմաների ուսուցման մեթոդաբանությունը	մեթոդիկա» (ֆիզիկա)		համալսարան	թեկնածուի գիտական աստիճան	
9.	Հայկազն Սարիբեկի Նավասարդյան	Հանրակրթական դպրոցում մաթեմատիկայի արտդասրանային աշխատանքների կազմակերպումն արդի պայմաններում	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (մաթեմատիկա)	27.09.2017	Ֆիթմաթ դպրոց	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	
10.	Անահիտ Ռաֆիկի Պետրոսյան	Մանկավարժական հասկացությունների նորացման հիմնախնդիրը	ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»	01.10.2017	Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	
11.	Աթոյան Լուսինե Սամվելի	Անգլերեն թեստերի մշակման և կիրառման մեթոդական համակարգը ՀՀ-ում	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (անգլերեն լեզու)	15.10.2017	ԳԹԿ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	
12.	Հոսսեին Ասլանաբադի	Մշակութային իրազեկության զարգացումը Իրանի միջնակարգ դպրոցի անգլերենի դասարաններում	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (անգլերեն լեզու)	20.12.2017	-		
13.	Բարոյան Գոհար	Լոգոպեդական աշխատանքների	ԺԳ.00.01-«Մանկավարժության	20.12.2017	ՀՊՄՀ		

		առանձնահատկությունները վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում	տեսություն և պատմություն» (հատուկ մանկավարժություն)				

Դոկտորական ատենախոսություն են պաշտպանել ներքոնշյալ անձինք՝

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Թեման	Մասնագիտությունը	Պաշտպ. օր	Աշխատանքի վայրը	Խորհրդի որոշումը	ԲՈՀ-ի որոշումը
1	Դալյան Նաիրա Երվանդի	Արդի լեզվակրթական համակարգում մշակույթների խաչաձևման մոտեցումը ռուսերենի որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ռուսաց լեզու)	03.05.2017	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան	Վերադարձվել է խորհուրդ կրկնական պաշտպանության
2	Պայլոզյան Ժաննա Հարությունի	Խոսքային հաղորդակցման վերականգնումը աֆազիայի ժամանակ	ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (հատուկ մանկավարժություն)	06.12.2017	ՀՄՊՄ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան	

Կրկնական պաշտպանություն են անցել ներքոնշյալ անձինք՝

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Թեման	Մասնագիտությունը	Աշխատանքի վայրը	Խորհրդի որոշումը	ԲՈՀ-ի որոշումը
1.	Բաղրամյան Անահիտ Իլյայի	Профессионально-ориентированное обучение русскому языку студентов исторических факультетов педвузов в контксте лингвострановедения	ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ռուսաց լեզու)	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան

2.	Խուգեյան Արևիկ Վարդանի	Ավագ նախադպրոցականի կապակված խոսքի զարգացումը համատեղ գործունեության ընթացքում	ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»	ՀՊՄՀ	Չի շնորհվել մանկավարժական գիտություններ ի թեկնածուի գիտական աստիճան	
3.	Դալյան Նաիրա Երվանդի	Արդի լեզվակրթական համակարգում մշակույթների խաչաձևման մոտեցումը ռուսերենի որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում	ԺԳ.00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ռուսաց լեզու)	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտություններ ի դոկտորի գիտական աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտություններ ի դոկտորի գիտական աստիճան
4.	Բլբուլյան Հովիկ Վլադիմիրի	Սովորողների հանրամշակութային հաղորդակցման կոմպետենտության ձևավորման հիմնախնդիրն ավագ դպրոցում	ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն»	Թիվ 64 դպրոց	Շնորհվել է մանկավարժական գիտություններ ի թեկնածուի գիտական աստիճան	

Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, 2017թ-ին պաշտպանված 15 աշխատանքներից ԲՈՀ-ի կողմից հաստատվել է 6-ը և վերադարձվել է 3-ը՝ կրկնական պաշտպանության կազմակերպման համար:
1 թեկնածուական ատենախոսությունների համար 020 գիտական խորհրդի կողմից չի շնորհվել հայցվող գիտական աստիճանը:

46. Հոգեբանության 064 մասնագիտական խորհուրդ

Հոգեբանության 064 մասնագիտական խորհուրդը ստեղծվել է ԲՈՀ-ի 11.10.2016թ. 92-Ա հրամանով:
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից թույլատրվել է ատենախոսությունների պաշտպանություններ կազմակերպել հոգեբանական գիտությունների բնագավառում՝ ըստ Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի՝

1. ԺԹ.00.01- Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն

	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճանը	Թվանիշը խորհրդում
1.	Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի (նախագահ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
2.	Բերբերյան Ասյա Սուրենի (նախագահի տեղակալ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
3.	Վարդանյան Կամո Երեմի (գիտքարտուղար)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01

4.	Խուդոյան Սամվել Սուրենի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
5.	Մկրտումյան Մելս Պարգևի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
6.	Ավանեսյան Հրանտ Միքայելի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
7.	Նաղդյան Ռուբեն Միքայելի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
8.	Պողոսյան Ռուբեն Հակոբի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.01
9.	Բաբայան Հարություն Արտավազդի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.01

2. ԺԹ.00.03- Սոցիալական հոգեբանություն, (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)

	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճանը	Թվանիշը որիրդում
1.	Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի (նախագահ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
2.	Մարգարյան Վազգեն Հենրիկի (նախագահի տեղակալ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
3.	Վարդանյան Կամո Երեմի (գիտքարտուղար)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
4.	Կարապետյան Վլադիմիր Սևանի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
5.	Հակոբյան Նաիրա Ռաֆիկի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
6.	Սեդրակյան Սեդրակ Աղասու	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
7.	Աղուզումցյան Ռուբեն Վազգենի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.03
8.	Պետրոսյան Ռուզաննա Համբարձումի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.03
9.	Պողոսյան Վազգեն Վլադմիրի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.03

2017 թվականի ընթացքում խորհրդում պաշտպանվել են թվով 8 թեկնածուական ատենանախոսություններ՝

1. Արմինե Մուրադյան - «Ախտածին դերերի ազդեցությունը ներընտանեկան հարաբերությունների վրա», ԺԹ.00.03
Գիտական ղեկավար՝ Սեդրակյան Սեդրակ / հ.գ.դ.
Ընդդիմախոսներ՝ Հակոբյան Նաիրա/հ.գ.դ.
Հարությունյան Գայանե/ հ.գ.թ.
Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան

2. Նաիրա Նազարյան - «Ոստիկանի անձի հոգեբանական առանձնահատկությունների պայմանավորվածությունը մասնագիտական գործունեությամբ», ԺԹ.00.01
Գիտական ղեկավար՝ Ավանեսյան Հրանտ / հ.գ.դ.
Ընդդիմախոսներ՝ Բերբերյան Ասյա /հ.գ.դ.
Սահակյան Կարինե /հ.գ.թ.
Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական համալսարան

3. Վազգեն Մկրտումյան - «Անցումային հասարակությունում արդյունավետ գործարարի սոցիալ-հոգեբանական նախադրյալները», ԺԹ.00.03,
Գիտական ղեկավար՝ Գևորգյան Սրբուհի/հ.գ.դ.
Ընդդիմախոսներ՝ Սեդրակյան Սեդրակ/հ.գ.դ.

Հարությունյան Գայանե/հ.գ.թ. Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ

4. Զարուհի Շահինյան - «Անձի բնութագրերի և ինքնակառավարման փոխներգործության օրինաչափությունները՝ հարաբերական հանգստի և քննական լարվածության պայմաններում», ԺՌ.00.01,
Գիտական ղեկավար՝ Փիլոսյան Սուսաննա/ հ.գ.թ.
Ընդդիմախոսներ՝ Խուդոյան Սամվել/ հ.գ.դ.
Պապոյան Վարդուհի /հ.գ.թ.
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

5. Ռուբեն Մկրտչյան - «Խնդրահարույց իրավիճակներում կոնֆլիկտների դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները (քննչական գործունեության օրինակով)», ԺՌ.00.01
Գիտական ղեկավար՝ Մկրտումյան Մելս/ հ.գ.դ.
Ընդդիմախոսներ ՝ Ավանեսյան Հրանտ/հ.գ.դ.
Փիլոսյան Սուսաննա/ հ.գ.թ.
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

6. Դիանա Մարկոսյան- «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրը», ԺՌ.00.03
Գիտական ղեկավար՝ Գևորգյան Սրբուհի/ հ.գ.դ.
Ընդդիմախոսներ ՝ Հակոբյան Նաիրա/հ.գ.դ.
Արամյան Լիդա/ հ.գ.թ.
Առաջատար կազմակերպություն՝ Ուրարտու համալսարան

7. Հասմիկ Շահինյան - «Սոցիալական դիրքորոշումների դերը սննդային վարքի շեղումների ձևավորման գործում», ԺՌ.00.03,
Գիտական ղեկավար՝ Հակոբյան Նաիրա / հ.գ.դ.
Ընդդիմախոսներ ՝ Կարապետյան Վլադիմիր/ հ.գ.դ.
Հարությունյան Գայանե / հ.գ.թ.
Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան

8. Արմինե Ստեփանյան - «Հայ ընտանիքի գործառման սոցիալ-հոգեբանական գործոնները (Հայաստանում և ԱՄՆ-ում բնակվող հայ ընտանիքների օրինակով)», ԺՌ.00.03,
Գիտական ղեկավար՝ Սեդրակյան Սեդրակ / հ.գ.դ.
Ընդդիմախոսներ՝ Հակոբյան Նաիրա/հ.գ.դ.
Հարությունյան Նարինե/հ.գ.թ.
Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Այժմ խորհրդում թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության նպատակով առկա են 20 անձնական գործեր:

47. Սփյուռք գիտաուսումնական կենտրոն

1. Կենտրոնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

1. իրականացնել սփյուռքահայ և հայրենի ուսուցիչների հայագիտական վերապատրաստման ծրագրեր, 2. կազմել Սփյուռքի կրթօջախների, մշակութային կազմակերպությունների համար ուսումնական եւ մշակութային ծրագրեր, 3. ՀՀ Կրթության եւ Գիտության եւ ՀՀ Սփյուռքի նախարարությունների հանձնարարությամբ, Համալսարանի նախաձեռնությամբ Կենտրոնում իրականացնել ուսումնական նպատակներից բխող կարճաժամկետ ծրագրեր, այդ թվում՝ առարկայական դասընթացներ, գիտական նստաշարջաններ, կոնֆերանսներ, դասախոսություններ, հանդիպումներ, մասնագիտական դասընթացներ հայրենի ուսուցիչների համար, ուսումնակրթական հատուկ աշխատանքներ սփյուռքահայ եւ օտար ուսանողների հետ, արևմտահայերենի նպատակային և փորձարարական կրթական ծրագրերի իրագործում հանրապետության դպրոցներում՝ սփյուռքահայ կազմակերպությունների հետ համատեղ,
4. գիտական եւ ուսումնամեթոդական աշխատանքներ, գիտական ժողովածուների, ուսումնաօժանդակ ձեռնարկների, դասագրքերի, գեղարվեստական ծրագրային գրականության տպագրություն, 5. իր իրավասությունների շրջանակներում եւ Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ այլ գործառույթների իրականացում:

2. Հաշվետու տարվա համար կենտրոնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	փետրվար-ապրիլ	ՀՀ ԿԳՆախարարության հայտարարած սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացի անցկացման համար անցկացվող մրցույթի հայտի պատրաստում	Համալսարանի անունից փաթեթի հանձնում ՀՀ ԿԳՆ
2.	հուլիս	Սփյուռքահայ ուսուցիչների դասընթացի անցկացում	02-28.07.2017
3.	հունվար-դեկտեմբեր	Գիտական զեկուցումներ եւ հոդվածների հրատարակում գիտական հանդեսներում	Կատարված տարվա կտրվածքով
4.	սեպտեմբեր	Մասնակցություն Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողովին	18-20.09.2017
5.	հոկտեմբեր	մասնակցություն սփյուռքահայ եւ օտարագիր գրողների համահայկական համաժողովին	09-11.10.2017 Ծաղկաձոր

բ/ տարեկան պլանի համաձայն

	Ամիս	գործողություն	Տեղեկություն կատարման մասին
6.	հունվար	Այց Լիբանան՝ Անթիլիասում կազմակերպվելիք հայագիտական դասընթացներում դասավանդելու համար	կատ. 07-21.01.2017

7.	հունվար-մայիս	Ավետիսյան դպրոցի 10-11-րդ դասարաններում արեւմտահայերենի դասավանդում	կատարված
8.	հունվար-դեկտեմբեր	Կենտրոնի գործունեության լուսաբանում պաշտոնական կայքէջի եւ Սփյուռքի մամուլի միջոցով	կատարված
9.	հունվար-դեկտեմբեր	Սփյուռքագիտական ընթերցասրահի սպասարկում, ստացված գրականության մշակում	կատարված
10.	մայիս	հրավեր եւ մասնակցություն Պոլսի Կեդրոնական վարժարանի 130 ամյակի տոնակատարությանը	կատ. 13.05.2017
11.	հունվար-դեկտեմբեր	«Արեւմտահայ ընդարձակ կենսագրական բառարան»-ի համակարգման ամփոփիչ աշխատանքներ	ընթացքի մեջ
12.	հունվար-դեկտեմբեր	Գ. Աճեմյանի երկերի 4-րդ հատորի հրատարակություն	հանձնված է տպագրության
13.	հունվար-դեկտեմբեր	«Ամբողջական Օշական» ծրագրի առաջին գրքի՝ պատմվածքների հրատարակության նախապատրաստական աշխատանք	ընթացքի մեջ

3. Հաշվետու տարում կենտրոնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հունվարի 7-ից 21-ը Կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանը դասավանդել է Անթիլիասում կազմակերպվող հայագիտական դասընթացներում (16 ժամ), որին մասնակցել են սիրիահայ եւ լիբանանահայ վարժարանների ուսուցիչներ, ուսանողներ (թվով 35): Այցի շրջանակում հունվարի 17-ին Կենտրոնի տնօրենը դասախոսություններով հանդես է եկել Բիքֆայայի Դպրեվանքում, հունվարի 20-ին՝ «Էհրամճյան» Կենտրոնում, նույն օրը՝ «Ազդակ» օրաթերթի մամլո 123-րդ լսարանում:

2017 թ. հուլիսի 2-ից 28-ը Կենտրոնում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության պատվերով կազմակերպվել են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Դասընթացին ընդգրկվել է 16 երկրի 53 մասնակից, որոնց թվում՝ 47 ուսուցիչ եւ 6 օտարերկրացի ուսանող:

Նրանցից 52-ին շնորհվել են ՀՀ ԿԳՆ եւ մանկավարժական համալսարանի հավաստագրեր, մեկին տրվել է տեղեկանք:

Պարապմունքները կազմակերպվել են ուսումնական 6 խմբերում, 120-ական ժամ ծանրաբեռնվածությամբ՝ ա. ուսուցում մանկապարտեզում, բ. մեկօրյա ուսուցում, գ. տարրական ուսուցում, դ. հայոց լեզու եւ գրականություն՝ արեւելահայ եւ արեւմտահայ ենթախմբերով, ե. լրացուցիչ կրթության կազմակերպում, զ. հայերենը սկսնակների համար:

Ուսուցիչների համար դասերից հետո եւ շաբաթ եւ կիրակի օրերին կազմակերպվել են արտասլսարանային, գրամշակութային միջոցառումներ եւ ճամփորդություններ պատմաճանաչողական վայրերով՝ ըստ նախապես որոշված ծրագրի:
Դասընթացին ընդգրկված են եղել 54 դասավանդող մասնագետներ, որոնցից 39-ը՝ մանկավարժական համալսարանից:
Դասընթացը ղեկավարել է Համալսարանի աշխատակազմի եւ միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը, համակարգել եւ ուսումնամեթոդական հարցերը տնօրինել է «Սփյուռք» Գիտաուսումնական Կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանը: Կազմակերպական աշխատանքները համակարգել են «Սփյուռք» Գիտաուսումնական Կենտրոնի մեթոդիստ Քնարիկ Աբրահամյանը եւ Գարունա Երանոսյանը:
Դասընթացի բովանդակային կողմի հետ կապված հաշվետվությամբ հանդես է եկել Կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանը:
✓ «Ծրագիր» / հայ նոր գրականություն, հայ նորագույն շրջանի գրականություն, սփյուռքահայ գրականություն, հայ գրականության դասավանդման մեթոդիկա գլխավոր խմբագիր՝ Սուրեն Դանիելյան, կազմողներից եւ պատասխանատու խմբագիր՝ Քնարիկ Աբրահամյան, Եր., «Զանգակ – 97», 2017, 88 էջ:

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
✓ Հոկտեմբերի 10-ին Կենտրոնի հրավերով Համալսարանի բանասիրական բաժանմունքի ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի համար «Լեւոն Շանթ» թեմայով հրապարակային դասախոսությամբ հանդես է եկել գրող, մտավորական, խմբագիր Հակոբ Պալյանը (Ֆրանսիա):

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ
✓ Փերտրվարի 24-ին Սուրեն Դանիելյանը եւ Քնարիկ Աբրահամյանը մասնակցել են ՀՀ Սփյուռքի Նախարարության կազմակերպած Երեւան-Բեյրութ «Արեւմտահայերենի վտանգվածությունը եւ պետական լեզվաքաղաքականության խնդիրները» տեսաժողովին, հանդես եկել ելույթներով:
✓ Մարտի 1-2-ը Սուրեն Դանիելյանը մասնակցել է ՀՀ ԳԱԱ Գրականության Ինստիտուտի, Երեւանի Պետական Համալսարանի եւ Հայաստանի Գրողների Միության կազմակերպած գիտաժողովին՝ նվիրված Նար-Դոսի 150 ամյակին (զեկուցման նյութը՝ «Նար-Դոսի գրական ուղղության խնդրի շուրջ. զուգահեռներ»):
✓ Սեպտեմբերի 18-20-ը Սուրեն Դանիելյանը եւ Քնարիկ Աբրահամյանը մասնակցել են Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողովին (ելույթ՝ Սուրեն Դանիելյան):
✓ Սեպտեմբերի 9-11-ը Սուրեն Դանիելյանը եւ Քնարիկ Աբրահամյանը մասնակցել են Սփյուռքահայ եւ օտարագիր գրողների համահայկական 6-րդ համաժողովին (զեկուցումներ՝ «Երկվությունը իբրեւ միասնական գրական զարգազման խոչընդոտ», «Հայ-թուրքական գրամշակութային թնջուկներ. Հակոբ Խաչիկյան եւ Էլիֆ Շաֆաք»):
✓ Նոյեմբերի 23-ին Սուրեն Դանիելյանը եւ Քնարիկ Աբրահամյանը բանասիրական ֆակուլտետում կազմակերպված «Մայրենիի դասավանդման մեթոդիկայի հիմնահարցեր» խորագրով ՀՊՄՀ 95 ամյակին նվիրված հանրապետական նստաշրջանին հանդես են եկել «Արեւմտահայ գրականության եւ լեզվի ուսուցման հիմնախնդիրների շուրջ» եւ «Սփյուռքահայ հեղինակների ուսումնասիրումը ավագ դպրոցում» զեկուցումներով:
✓ Դեկտեմբերի 5-ին Սուրեն Դանիելյանը եւ Քնարիկ Աբրահամյանը Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կազմակերպած ՊԴԱ գիտական

նստաշրջանում հանդես են գալու համապատասխանաբար «Գրիգոր Զոհրապ. հարցադրումներ եւ վիճարկումներ» եւ «Դեպի նոր հորիզոն Իգնա Սարսըասլանի հետ» զեկուցումներով:
✓ Դեկտեմբերի 14-ին Քնարիկ Աբրահամյանը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում կազմակերպվող երիտասարդ գիտնականների հանրապետական նստաշրջանում հանդես է գալու «Ե. Չարենց – Զ. Խրախունի. բանաստեղծական զուգահեռներ» թեմայով զեկուցումով:

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
✓ Սեպտեմբերի 1-ին՝ ՀՀ Սփյուռքի Նախարարությունում կազմակերպված Գեւորգ Հակոբյանի «Պատմություն իսթանպուլահայ ուսումնական կյանքի եւ կրթական հաստատություններու» գրքի շնորհանդեսին:
✓ Սեպտեմբերի 18-ին՝ կամերային երաժշտության տանը Անուշ Նագգաշյանի (Իսրայել) «Այդ սերմը ես էի» գրքի շնորհանդեսին:
✓ Սեպտեմբերի 10-ին՝ Բեյրութի «Զարթօնք» օրաթերթի 80 ամյակին նվիրված Ազգային Գրադարանում կազմակերպված հանդիսությանը:

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ
ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ
1. «Ահարոնյանի գրական արժեքները արեւելահայ քննադատական մտքի գնահատմամբ», «Ավետիս Ահարոնյան» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 82-95:
2. “Послед са прозора јЕерменије”, Бдење / Часопис за књижевност, уметност и културну баштину, број 52, година XV, април - јун, Сврљиг, с. 115-119.

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԿԱՆ
1. «Լռություն» վեպի գեղագիտական մի քանի հարցերի մասին, «Ավետիս Ահարոնյան» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 17-25:
2. «Սամվել Մուրադյանի շիրազապատումը», «Վէմ» համահայկական հանդես, թիվ 3 (59), հուլիս-սեպտեմբեր, Եր., 217, էջ 214-220:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
✓ Հրատարակության է հանձնված Գեւորգ Աճեմյանի երկերի Դ. հատորը / Դանիելյան Սուրեն, Աբրահամյան Քնարիկ / կազմում, խմբագրում եւ առաջաբան (972 էջ):
✓ Հրատարակության է պատրաստվում «Արեւմտահայ ընդարձակ կենսագրական բառարան»-ը, որի բառահոդվածների թիվը անցնում է 8.000 անունից:
✓ Հրատարակության է պատրաստվել «Ամբողջական Օշական» ծրագրի առաջին հատորը:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ)
✓ 2017-ին ԲՈՀ-ի 003 մասնագիտական խորհրդի ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի գրական գրականության ինստիտուտում գործող Ժ.01.02 «Հայ նորագույն շրջանի գրականություն» մասնագիտության հանձնախմբի նախագահ:
✓ «Վէմ» համահայկական հանդեսի խմբագրական խորհրդի անդամ:
✓ ՀՊՄՀ-ի «Հայագիտական հանդես»-ի խմբագրական խորհրդի անդամ:
✓ ՀՀ Նախագահի կողմից ամեն տարի կազմակերպվող մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ: ՀՀ Կրթության եւ Գիտության եւ Սփյուռքի Նախարարների համատեղ հրամանով՝ Արեւմտահայերենի զարգացման, անաղարտության պահպանման եւ կանոնարկման ռազամավարական ծրագրի մշակման հանձնախմբի անդամ: Այդ առթիվ

առաջարկություն է ներկայացվել ՀՀ Սփյուռքի Նախարարին, ռեկտորի հանձնարարությամբ եւ անունից՝ ՀՀ Կրթության եւ Գիտության նախարարին:
✓ «Հայկ Նագգաշյան» գրական հիմնադրամի (Կանադա) անդամ:
✓ ՀՀ Մշակույթի Նախարարության պետական հրատարակչական մրցույթի հանձնաժողովի անդամ:

ՊԱՐԳԵՎՆԵՐ
Փետրվարի 21-ին Սուրեն Դանիելյանը պարգեւատրվել է Սփյուռքի Նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալով:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ
✓ 2017 թ. ընթացքում արեւմտահայ եւ սփյուռքահայ հեղինակներին վերաբերող զեկուցումներով հանդես են եկել Սուրեն Դանիելյանի ղեկավարությամբ՝ Հովհաննես Սարգսյանը (ՀԲ-5, հանրապետական ուսանողական գիտական կոնֆերանս, 5 մայիս), Լենա Բաղդասարյանը (ԱԲ-4, հանրապետական ուսանողական գիտական կոնֆերանս, 5 մայիս), Քնարիկ Աբրահամեանի ղեկավարությամբ՝ Թերեզա Բարսեղյանը (ԱԲ-3, Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողական գիտական նստաշրջան, 20 մարտ):

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ)
Միջնորդագիր է հանձնվել ՀՀ Սփյուռքի Նախարարին՝ ռումինահայ գրամշակութային գործիչ, թարգմանիչ Մադլեն Գարագաշյանին ՀՀ Նախագահի կողմից «Մովսես Խորենացի» մեդալով պարգեւատրելու համար:

ԿԵՆՏՐՈՆ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ
✓ Հունվար-հունիս ամիսներին Կենտրոնի մեթոդիստ Քնարիկ Աբրահամյանը շաբաթական մեկ ժամով արեւմտահայերենի դասընթաց է վարել «Ավետիսյան» կրթահամալիրի 10-րդ եւ 11-րդ դասարաններում:
✓ Մայիսի 13-ին Քնարիկ Աբրահամյանն այցելել է Պոլսի Կեդրոնական վարժարան՝ մասնակցելու վարժարանի 130 ամյակին նվիրված «Հայ դպրոցը անցյալեն դեպի այսօր» հանդիսությանը, հանդիսության ընթացքում հանձնել Համալսարանի ռեկտորի շնորհավորագիրը, հանդես եկել ելույթով:
✓ Այս տարի կուլտուրայի ֆակուլտետ են ընդունվել Հակոբ Կյուլեչը (Թուրքիա) եւ Հարություն Խաչիկյանը (Ավետիսյան դպրոցի շրջանավարտ):

ԳՐԱԴԱՐԱՆ
Կենտրոնի կազմում շարունակել է գործել սփյուռքագիտական ընթերցասրահը (ավագ գրադարանավար՝ Նելլի Թադեւոսյան), ուր կենտրոնացած է արեւմտահայ եւ սփյուռքահայ գրականութային դաշտին վերաբերող 7.132 կտոր գիրք, որը համալրվում է նոր հրատարակություններով եւ հիմնականում հեղինակային նվիրատվություններով, մի մասն էլ ձեռք է բերվում համալսարանի միջոցների հաշվին (միայն այս տարի՝ 175), 120 անուն մամուլ (այս հատվածը դեռեւս մշակման փուլում է):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Կենտրոնի գործունեությունը, ինչպես նաեւ Սփյուռքի գրամշակութային դաշտին վերաբերող անցուդարձերը լուսաբանվում են Կենտրոնի պաշտոնական՝ www.spyurk-center.am կայքէջի, Հայաստանի («Ազգ», «Գրական թերթ») եւ Սփյուռքի («Մարմարա», «Նոր յառաջ», «Ազդակ», «Ձարթօնք», «Նոր օր») մամուլի միջոցով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
«Արեւմտահայ գրամշակութային կյանքը խիստ վտանգված է ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Սփյուռքում» թեմայով հարցազրույց «Հայ ձայն» կայքին (Սուրեն Դանիելյան, 20 փետրվար):
Հայաստան-Սփյուռք համաժողովի արդյունքների մասին հարցազրույց «Վէմ» ռադիոկայանին (Սուրեն Դանիելյան, 29 սեպտեմբեր):
«Սփյուռք» Կենտրոնի գործառույթների եւ սփյուռքահայ եւ օտարագիր գրողների համաժողովի աշխատանքների շուրջ հարցազրույց Բեյրութի «Վանա ձայն» ռադիոկայանին (Քնարիկ Աբրահամյան, 11 հոկտեմբեր):
Վահան Թեքեյանին նվիրված հաղորդում Հ1 հեռուստաընկերության «Հայից հայ» ծրագրում (Սուրեն Դանիելյան)

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ
ԱՄՆ - Մարալ եւ Գեւորգ Գալայճյաններ, Հովսեփ Նալբանդյան, Պայծիկ Գալայճյան
ԱՐԳԵՆՏԻՆԱ – Սոսի Հաճյան
ԹՈՒՐՔԻԱ – Հակոբ Կյուլեչ
ԻՍՐԱՅԵԼ - Անուշ Նագգաշյան
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - Անահիտ Յահիա
ԼԻԲԱՆԱՆ - Արամ Սեփեթճյան, Մարալ Պաղչաճյան, Սիլվի Աբելյան, Շահե Գալուստյան
ԿԱՆԱԴԱ – Շահե Նագգաշյան
ԿԻՊՐՈՍ - Հրայր Ճեպեճյան
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ – Մանվել Ադամյան
ՖՐԱՆՍԻԱ - Հիլդա Գալֆայան-Փանոսյան, Կարապետ Դաքեսյան,Հրայր Հրաչյան, Հակոբ Պալյան
ՌՈՒՍԱՍՏԱՆ – Աննա Գիվարգիզյան

կատարման վերլուծություն

✓ Բավական բարդ ու ծանրաբեռնված է եղել սփյուռքահայ ուսուցիչների վերապատատրաստության ծրագրի իրագործումը: 2008 թվականից ի վեր Կենտրոնը նման գործառույթ չէր իրականացրել (մինչ այդ, սակայն, 2000-2008 թթ. այս դաընթացը իրագործվել է Կենտրոնի պատրաստած ծրագրերով եւ ջանքերով), ուստի բավական աշխատատար էր հատկապես ծրագրերի, առարկայացանկերի վերակազմումը, դասախոսական կազմի ընտրությունը: Իհա՛րկե, արդեն դասընթացի ընթացքում կարողացել ենք շատ ու շատ հարցերի վերաբերյալ ընթացիկ շտկումներ կատարել: Ետադարձ վերլուծության արդյունքում բավական նոր մտահղացումներ կան: Այնպես որ, եթե նախարարությունը այս դասընթացի իրականացումը նորից վստահի մանկավարժական համալսարանին, կունենանք անհամեմատ ավելի բարձր կատարողականություն, թեպետ ամենատարբեր մակարդակներում, այդ թվում՝ Սփյուռքում, մեր համալսարանում կազմակերպված դասընթացի մասին արձագանքները բարձր են եղել:

✓ Կենտրոնը իր մտահոգությունն է հայտնում համալսարանում սփյուռքահայ դիմորդների ընդունելության հնարավորության հետ կապված: Օրինակ, Սուրեն Դանիելյանի Բեյրութ այցելության ընթացքում բավական խանդավառություն էր ստեղծվել, մանավանդ հաշվի առնելով մեր համալսարանի հեռավար ուսուցման հնարավորությունը: Սակայն դիմորդները քննության համար ներկայանալու հնարավորության բացակայության պատճառով չկարողացան ուսանող դառնալ, թեպետ նախարարությունը ընդունելության կարգը թողել է բուհերի հայեցողությանը: Տվյալ պայմաններում տեխնիկական միջոցների կիրառումով թերեւս հնարավոր էր հարցը կարգավորել հեռավար քննության ճանապարհով, թեկուզ դեսպանատների միջոցով:

Առաջարկում ենք սփյուռքահայ դիմորդների ընդունելության կարգը որոշակի փոփոխության ենթարկել, մանավանդ մենք այսօր բարձրագույն կրթությամբ սփյուռքահայ ուսուցիչներ էստ էության չունենք, իսկ մեր համալսարանը միակն է, որ կարող է նրանց մանկավարժի որակավորում շնորհել:
ինքնագնահատում Հաշվետու ժամանակաշրջանում Կենտրոնի գործունեությունը կարելի է համարել արդյունավետ, թեպետ երբեմն ժամանակի սղության պատճառով առանձին ծրագրերի իրագործումը դանդաղում է:

48. Գիտական գրադարան

1. Գիտական գրադարանի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

1. Գրապաշարների համալրում ռազմավարական պլանի համաձայն
Գրադարանի գրքային ֆոնդը առ 2017 թ-ի դեկտեմբերի 1-ը կազմել է 507.337 օրինակ, որից ուսումնական 235.500, գիտա-տեղեկատվական՝ 165.044, գեղարվեստական՝ 101.000 գիրք, 5793 օրինակ այլ գրականություն: Հաշվետու ժամանակաշրջանում ստացվել է 2000 անուն 7925 օրինակ գրականություն, որից գնվել է 222 օրինակ՝ ընդհանուր 691.593 դրամ գումարով: Գնված գրականությունը հիմնականում դասագրքեր են, ձեռնարկներ, ուսումնամեթոդական գրականություն: Այդ թվից 7296 օրինակը նվիրատվական գրականություն է: Էջմիածնի Մայր Աթոռը նվիրել է ավելի քան 40 օրինակ, Մկրտիչ Ավագյանը՝ 300 օրինակ հայերեն, ռուսերեն, անգլերեն մասնագիտական գիրք, դոկտոր-պրոֆեսոր Վաչագան Հովհաննիսյանի հարազատները՝ 150 օրինակ մասնագիտական գիրք, իրավաբան Լուսինե Հակոբյանը՝ 80 օրինակ մասնագիտական իրավաբանական գիրք, ակադեմիկոս Գևորգ Բրուտյանի հարազատները՝ 100 օրինակ փիլիսոփայական գրքեր: Մյուս գրքերը հիմնականում հեղինակային նվիրատվություններ են: Գրադարանը ընթերցողներին ապահովում է պարբերական մամուլով և գիտատեսական ամսագրերով: 2017 թ-ին համալսարանն առաջին կիսամյակում բաժանորդագրվել է 42 անուն թերթ և ամսագիր, երկրորդ կիսամյակում՝ 43 անուն թերթ և ամսագիր 2.301.240 դրամ ընդհանուր գումարով:Գրքերի և մամուլի ձեռքբերման համար հաշվետու ժամանակում ծախսվել է 2.992.833 դրամ գումար: Գրադարանում պահվում են 873 դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ՝ մանկավարժության և հոգեբանության գծով: Ընթերցողները կարող են օգտվել նաև տարբեր գիտությունների գծով 3041 սեղմագրերից: 2017 թ-ին ավելացել է 23 ատենախոսություն, 30 այլ սեղմագիր: Գրադարանն ունի 25 հնատիպ /24 հայերեն, 1 ռուսերեն/, ավելի քան 5000 հազվագյուտ գրքեր /այդ թվում 1000-ից ավելի մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ նախախորհրդային գրքեր ռուսերեն լեզվով/, 769 նախախորհրդային հայկական ամսագրեր: 2. Ընթերցողների թվաքանակ և տպագիր նյութի տացք
2017 թ-ի ընթացքում գրադարանն ունեցել է 23.225 ընթերցող /նախորդ տարվանից 305-ով պակաս/, որից առկա, հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ 15286, դասախոսներ, աշխատակիցներ, ասպիրանտներ, հայցորդներ 2155, ավագ և հիմնական դպրոցի աշակերտներ 350, այլ բուհերի ուսանողներ 2973, պատվո ընթերցողներ 479, քաղաքացիներ 1982: Հաշվետու ժամանակաշրջանում ընթերցողների հաճախումը կազմել է 1.449.618 այց, տպագիր գրականության տացքը՝ 3.745.729 միավոր: Տարվա ընթացքում գրադարանի համակարգիչներից սեփական հասցեին նամակով փոխանցվել է 1.962.697 նամակ:

Ուսանողներին և ընթերցողներին փոխանցվել է շուրջ 106.348 էլեկտրոնային նյութ /գիրք, հոդված/: Թե հաճախման, թե տպագիր նյութի տացքի քանակները պակասել են, իսկ համակարգիչներից օգտվողների քանակը, էլեկտրոնային նյութերի առաքման թվերը գերազանցում են 2016 թ-ի արդյունքները:
Տարվա ընթացքում ընթերցողներին սպասարկել են՝
- Հին շենքի հիմնական գրապահոց՝ 279.700 միավոր գիրք,
- Բանասիրակն ֆակուլտետի շենքի նկուղայի հարկի գրապահոցը՝ 107.000 միավոր գիրք:
– թիվ 1 մասնաշենքի 2-րդ հարկի հումանիտար գրականության ընթերցասրահը /84.637 միավոր գիրք, 100 ընթերցողական տեղ, 13 համակարգիչ/,
– բանասիրական գրականության ընթերցասրահը թիվ 3 մասնաշենքում /8000 միավոր գիրք, 55 ընթերցողական տեղ, 12 համակարգիչ/,
– պատմական գրականության ընթերցասրահը պատմության ֆակուլտետի շենքի 4-րդ հարկում /8000 միավոր գիրք, 55 ընթերցողական տեղ, 12 համակարգիչ/,
– թիվ 1 մասնաշենքի 7-րդ հարկի բնագիտատեխնիկական գրականության ընթերցասրահը /4000 միավոր գիրք, 60 ընթերցողական տեղ, 9 համակարգիչ/:
Աշխատել են նաև 6 լսարան–ընթերցասրահներ՝
Կուլտուրայի ֆակուլտետի շենքում՝
– մատենագիտության /1500 միավոր գիրք, 26 ընթեցողական տեղ/,
– լրատվության /500 միավոր գիրք, 24 ընթերցողական տեղ, 5 համակարգիչ/,
– թանգարանագիտության /300 միավոր գիրք, 20 ընթերցողական տեղ/,
Գեղարվեստական կրթության ֆակուլտետի շենքում՝
– երաժշտական գրականության գրադարան–ընթերցասրահը /8000 միավոր գիրք և տպագիր նոտաներ, 10 ընթերցողական տեղ/,
Բանասիրական ֆակուլտետի շենքում՝
– ″Սփյուռք″ գիտաուսումնական կենտրոնի ընթերցասրահ /3000 միավոր գիրք, 30 ընթերցողական տեղ/,
Պուշկինի անվան ռուսաց լեզվի կաբինետ /3000 միավոր գիրք, 30 ընթերցողական տեղ/:
2. Հաշվետու տարվա համար գիտական գրադարանի պլանավորած աշխատանքները
Տարեկան պլանի համաձայն

Տարվա ընթացքում գրադարանի
- Հումանիտար գրականության ընթերցասրահի «Նոր գրքեր» ցուցավահանակներում տարվա ընթացքում կազմակերպվել է շուրջ 100 ցուցադրություն և ներկայացվել ավելի քան 4000 նոր գիրք ու այլ հրատարակություններ, կազմակերպվել է ավելի քան 80 հեղինակային գրքի շնորհանդես:
- 11 ամսում ինտերնետում արդեն ութ տարի գործող mankavarzh.do.am կայք է այցելել ավելի քան 15000 մարդ աշխարհի 57 երկրից:
- 2010 թ-ին Հայաստանում առաջին անգամ գիտական գրադարանը կազմակերպել է «Լավագույն ընթերցող» մրցույթ: 2017 թ-ի դեկտեմբերի 21-ին կանցկացվի 8-րդ մրցույթը: Յուրաքանչյուր մրցույթի համար տպագրվել է մրցույթի հաղթողներին նվիրված գրքույկ ֆակուլտետային հաղթողների և համալսարանի հաղթողի, առավել կարդացված դասախոսների լուսանկարներով ու կենսագրականներով:
- Հինգերորդ տարին գրադարանում գործում է «Չորեքշաբթի» գրական ակումբը, որը 2013 թ-ի մարտի 14-ից սկսյալ յուրաքանչյուր չորեքշաբթի, ապա՝ շաբաթ օրերին ունեցել է 236 հանդիպում-քննարկում: Ակումբի անդամ են նաև հանրապետության հիգ այլ բուհերի ուսանողներ, հանրապետության այլ բնակավայրերում, այլ պետություններում ապրող բուհերի շրջանավարտ-երիտասարդներ: Ակումբի մասնաճյուղ է գործում Արցախի պետական համալսարանում: 2017 թ-ին հրատարակվել է ակումբի անդամների ստեղծագործություններն ընդգրկող «Չորեքշաբթի» Գ և Դ ժողովածուները: Ակումբը ունի «Ֆեյսբուքյան» էջ և ամենօրյա

կապ է ապահովում հազարավոր հասակակիցների համար, գործում է ակումբի «Յութուբյան» էջը:

- Գրադարանի ցուցասրահի «Ցուցահանդեսային» պատին հունվար-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է ուսանողների, շրջանավարտների նկարչական գործերի երկու ցուցահանդես:
- Տարելիցային միջոցառումներին նվիրված ցուցավահանակում տարվա ընթացքում բացվել է ՀՊՄՀ դասախոսների հոբելյաններին նվիրված 25-ից ավելի ցուցադրություն:
- Հատուկ ցուցադրություններ են կազմակերպվել ՀՀ բանակի օրվա, Կանանց տոնի /ցուցադրվել են համալսարանի կին դասախոսների գրքերը/, Հայոց ցեղասպանության, Հայոց պետական խորհրդանիշների /դրոշ, զինանշան/, Շուշիի ազատագրման, Երեխաների միջազգային օրվա, ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ:
- Գրադարանը հաշվետու ժամանակաշրջանում համագործակցել է Հայաստանի ազգային գրադարանի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի, Հայաստանի ագրոակադեմիայի, Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի գիտական գրադարանների, Ավ.Իսահակյանի անվան քաղաքային գրադարանի և տեղեկատվական այլ կենտրոնների հետ:
- Հաշվետու տարվա ընթացքում գրադարանը գրքահավաք է կազմակերպել և ՀՀ պաշտպանության նախարարության երկու զորամասի գրադարանների հանձնել 500 գիրք: 100 գիրք հանձնվել է Արցախի Շահումյանի շրջանի Եղեգնիկ գյուղի դպրոցին: Գրքեր են տրվել Արագածոտնի մարզի Արտաշավան գյուղի դպրոցի, Օշական գյուղի հանրային, Երևանի պետական համալսարանի, Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանների, Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ավագ դպրոցի գրադարաններին:
- Տարվա ընթացքում գիտական գրադարանում հյուրընկալել է Երևանի և հարակից շրջանների 51 դպրոցների բարձր դասարանների աշակերտներ և քոլեջների ուսանողներ, ինչպես նաև համալսարան այցելած 10-ից ավելի այլ երկրների համալսարանների պատվիրակություններ:
- Տարվա ընթացքում գրադարանի ընթերցասրահներում տեղի են ունեցել գիտական կոնֆերանսների 60 նիստեր:

Գրադարանի աշխատակիցների գիտական աշխատանքներ

Գրադարանի տնօրեն Տիգրան ՊետրոսՅանցը

- Հրատարակել է «Ատենախոսություններ» մատենագիտությունը /200 էջ/,
- Հրատարակել է «Կայք» հանրագիտարանը /համահեղինակ, 243 էջ/,
- Հրատարակել է «Հայաստան, իմ սեր» գեղարվեստական գիրքը /283 էջ/,
- Կազմել, խմբագրել, հրատարակել է «Չորեքշաբթի» Դ և Զ ժողովածուները /միասին 250 էջ/,
- Շարունակել է նյութերի հավաքումը և ներբեռնումը «Աբովյանցիներ» կենսագրական հանրագիտարանում /1000 էջ/,
- ՀՀ ԲՈՀ-ի կողմից ճանաչված գիտական հանդեսներում տպագրել է 7 գիտական հոդված Զաքարյան Հայաստանի ժամանակահատվածի մասին,
- Հայկական հեռուստաընկերությունների /«Արարատ», «Երկիր Մեդիա»/ և Հայկական ազգային ռադիոյի եթերից մասնակցել է 14 հաղորդում-քննարկումների:
- 2017 թ-ի մարտ, հունիս ամիսներին ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի դասախոսական խմբի կազմում եղել է Արցախում, ելույթ ունեցել առաջնագծի զինվորների համար:

Գրադարանի ավագ գրադարանավար Նարինե Դանիելյանը

- Պաշտպանել է ատենախոսություն «Գրադարանային-մատենագիտական գործունեությունը Հայաստանում 20-րդ դ. 70-80-ական թվականներին» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գրադարանի բաժնի վարիչ Աննա Մարտիրոսյանը

- 2017 թ-ին հանրապետական թերթերում գրադարանի աշխատանքների մասին տպագրել է 9 հոդված և տեղեկատվություն: Միջազգայնացուման ուղղությամբ կատարված աշխատանքներ
- Համալսարանի գիտնական-դասախոսների հրատարակած 71 գիրք ուղարկվել է ԱՄՆ կոնգրեսի գրադարան, 2 գիրք Մեծ Բրիտանիայի Մետրոպոլիտեն գրադարան, 2 գիրք Չեխիայի ազգային գրադարան, 10 գիրք Արցախի ազգային գրադարան: - 2017 թ-ի 11 ամսվա ընթացքում գրադարանի մասին հաղորդումներ ու հոդվածներ են տպագրել «Ազգ» /6 անդրադարձ/, «Մանկավարժական համալսարան», «Հայ զինվոր» «Կրթություն», «Ավանգարդ», «Իրատես» թերթերը, հաղորդումներ են պատրաստել «Արարատ», «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունները, Հայաստանի ազգային ռադիոն, տեղեկատվություն է տարածել «Արմենպրես» գործակալությունը, armspu.am, mankavarzh.do.am կայքերը:

3. Հաշվետու տարում գիտական գրադարանի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

- Գրադարանը շարունակել է աշխատանքը գրադարանից գրքեր վերցնելու ձևաչափի, ընթերցասրահների տպագիր նյութերից, համակարգիչներից օգտվելու կարգերի, ՀՀ «Հեղինակային իրավունքի մասին» օրենքի պահանջները կատարելու ուղղությամբ՝ գործառույթների քարտեզագրումով: - Գրադարանը ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր 2017 թ-ին չի ունեցել: - Գրադարանը ամեն շաբաթ կատարված սպասարկման մասին հաշվետվություն է ներկայացրել համալսարանի ռեկտորին: - Գրադարանը հրատարակել է «Ատենախոսություններ. 1967-2016» մատենագիտությունը /200 էջ/ գիրքը, որը կարևոր մեթոդական ուղեցույց է Համալսարանում գործող ԲՈՀ-ի գիտական խորհուրդների, ամբիոնների վարիչների համար՝ ասպիրանտների, հայցորդների թեմաների ընտրության, կրկնությունների բացառման ուղղությամբ:
- Պլանավորված աշխատանքները, միջոցառումները իրականացվել են մանկավարժական պահանջի համապատասխան, բարձր մակարդակով, կրել են դաստիարակչական լիցք:
ինքնագնահատում - Գրադարանը հաշվետու ժամանակում ապահովել է ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի, հանրային ընթերցողների ընթերցողական պահանջները:

49. Թանգարան

Հաշվետու ժամանակահատվածում բուհի թանգարանի աշխատանքները ընթացել են հետևյալ ուղղություններով՝

1. Թանգարանի ֆոնդերի համալրում, հաշվառում և պահպանում

1.1. Թանգարանի աշխատակիցները ձեռք են բերել թանգարանային առարկաներ և տեղեկություն բուհի հիմնադրման, պատմության, կառուցվածքի, ստորաբաժանումների, վաստակաշատ դասախոսների, գիտական և հրատարակչական գործունեության վերաբերյալ: 2017թ. ձեռք է բերվել 68 նյութ:

1.2. Թանգարանի ֆոնդապահոցում կատարվել են առարկաների պահպանման և հաշվառման աշխատանքներ:

1.3. Ֆոնդային նյութերի հիման վրա ստեղծվել է 10 ֆոտոշարք՝ էկրանների վրա ցուցադրելու համար:

1.4. Ֆոնդում պահվող 400 լուսանկար (բնօրինակ և թվայնացված տարբերակով՝ բացատրագրերի հետ միասին) թվայնացվել, նախապատրաստվել և տրամադրվել են բուհի 95-ամյակի կապակցությամբ տպագրվող պաստառների համար:
1.5. Ֆոնդում պահվող 30 լուսանկարներ նախապատրաստվել և տրամադրվել են բուհի 2017թ. օրացույցի համար:
1.6. Նյութեր են տրամադրվել տարբեր ֆակուլտետների 10 ուսանողների կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար:

2. Թանգարանի ցուցադրական գործունեություն

2.1. Թանգարանի հիմնական ցուցադրությունը համալրվել է 7 ցուցանմուշով:
2.2. Կազմակերպվել են ժամանակավոր ցուցահանդեսներ՝

- Հայոց Մեծ եղեռնի 102-ամյա տարելիցի կապակցությամբ կազմակերպվել է ժամանակավոր ցուցահանդես՝ բուհի շրջանավարտ, ցեղասպանագետ Վերժինե Սվազլյանի Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատություններին:
- «Պատմում են բռնագաղթվածների հարազատները» խորագրով ցուցահանդես՝ նվիրված 1930-ական թթ. ստալինյան բռնաճնշումների զոհ դարձած Մանկավարժական ինստիտուտի դասախոսներին:
- «Ազատամարտիկի հիշատակարանը»խորագրով ցուցահանդես՝ նվիրված արցախյան պատերազմի մասնակից Մանկավարժական ինստիտուտի դասախոսներին և շրջանավարտներին:
- «Ստեղծագործում են համալսարանի աշխատակիցները» խորագրով ժամանակավոր ցուցահանդես մանկավարժական համալսարանի հիմնադրման 95-ամյակի և համալսարանի թանգարանի բացման 5-ամյակի կապակցությամբ:

3. Գիտա-մեթոդական և կրթական աշխատանք

3.1. Հաշվետու ժամանակահատվածում թանգարանում իրականացվել է 8 միջոցառում նվիրված հիշարժան դեպքերին և իրադարձություններին:
3.2 Իրականացվել են կոնսուլտացիաներ բուհի ուսանողների, դասախոսների, այլ բուհերի դասախոսների, թանգարանների աշխատակիցների, դպրոցների ուսուցիչների համար, ցույց է տրվել խորհրդատվական օգնություն, մասնավորապես թանգարանային մանկավարժության բնագավառում:
3.3. Բուհի 10 ֆակուլտետների բարձր կուրսի ուսանողները նախապատրաստվել են որպես էքսկուրսավարներ և անցկացրել են առաջին կուրսի ուսանողների համար էքսկուրսիաներ:
3.4. Հաշվետու ժամանակահատվածում թանգարան է եկել 9115 այցելու:
3.5. Կազմակերպվել է 650 էքսկուրսիա բուհի ուսանողների, դասախոսների, աշխատակիցների, դպրոցականների, ինչպես նաև տեղի և արտասահմանցի հյուրերի համար:
3.6. Թանգարանի գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է «Մանկավարժական համալսարան» թերթում, համալսարանի կայքում, թանգարանի ֆեյսբուքյան էջում և համացանցի այլ կայքերում:
3.7. «Դի-Վի-Վի» Ինթերնեյշնալ կազմակերպության հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ և Թանգարանային կրթության կենտրոնի աջակցությամբ Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանը իրականացրել է «Հինը նորով» ինտերակտիվ ծրագիրը, որը, ելնելով բովանդակությունից և ընձեռած հարավորություններից, նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր տիրապետում են բուհի մասին տեղեկատվության, վավերագրերի և կարող են լինել ոչ միայն դիտող, այլև ակտիվ օգտատեր՝ համալսարանի մասին իրենց ունեցած տեղեկատվությամբ համալրելով թանգարանի ֆոնդերը և դրանք հասանելի դարձնել հասարակության լայն շրջանակների համար (ծրագիրը կայքի տեսքով գործում է օնլայն հարթակում http://tangaran.aspu.am/):

4. Գիտական գործունեություն և մասնագիտական աճ

Թանգարանի տնօրեն Ա. Գրիգորյանը՝

- Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն բաժնում ղեկավարել է ուսանողների ավարտական և կուրսային աշխատանքներ:
- Փորձի փոխանակման նպատակով մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել ԼՂՀ Քաշաթաղի շրջանի երկրագիտական թանգարանի տնօրեն Մուշեղ Ալավերդյանին:
- Համահեղինակել և կազմակերպել է ժամանակավոր ցուցադրություններ թանգարանում:
- Համահեղինակել է «Դի-Վի-Վի» Ինթերնեյշնալի և Թանգարանային կրթության կենտրոնի աջակցությամբ իրականացված «Հինը նորով» ինտերակտիվ ծրագիրը:
- Ապրիլի 5-8-ը մասնակցել է «Թանգարանային ցուցադրություն. նախագծում և դիզայն» խորագրով դասընթաց-վարժանքին, որն իրականացվում է ՀՀ մշակույթի նախարարության, Սմիթսոնյան Ինստիթյուշնի կողմից և «Իմ Հայաստան» ծրագրի, ԻԿՕՄ Հայաստանի աջակցությամբ:
- Հուլիսի 17-ին մասնակցել է Խոսրով Կոտակից մինչև Կարո Ղաֆադարյան, հանրապետական գիտաժողովին՝ նվիրված մեծանուն հնագետ, վիմագրագետ, պատմաբան, թանգարանագետ Կարո Ղաֆադարյանի 110-ամյա հոբելյանին՝ հանդես գալով «Թանգարանային լսարանի հետ աշխատանքի հոգեբանամանկավարժական յուրահատկությունը» խորագիրը կրող զեկույցով:
- Նոյեմբերի 22-25-ը մասնակցել է ԻԿՕՄ-ի կրթության և մշակութային գործունեության միջազգային կոմիտեի, ԻԿՕՄ Հայաստանի, ԻԿՕՄ-ի Մարքեթինգի և հանրահռչակման միջազգային կոմիտեի կազմակերպած «Թանգարանային կրթական ծրագրերի նախագծում և մարքեթինգ» թեմայով տարածաշրջանային դասընթացին:
- Դեկտեմբերին մասնակցել է պրոֆեսոր Լ. Բարսեղյանի 80-ամյակին նվիրված գիտաժողովին՝ հանդես գալով «Լ. Բարսեղյանի թանգարանագիտական գործունեությունը Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանում» զեկույցով:
- դեկտեմբերի 12-16-ը կազմակերպել և անցկացրել է «Այցելուների սպասարկման կառավարում» խորագրով վերապատրաստման դասընթաց Հայստանի թանգարանների աշխատողների համար:

Թանգարանի ֆոնդապահ Հ. Անանյանը՝

- Ուսումնասիրել է ֆոնդային աշխատանքի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ուսումնասիրել է ֆոնդային նյութը և ներկայացրել ցուցադրությունների համար:
- Ապահովել է թանգարանի ֆոնդապահոցի առարկաների պահպանությունը:
- Անցկացրել է ճանաչողական և մասնագիտական էքսկուրսիաներ:
- Համահեղինակել և կազմակերպել է ժամանակավոր ցուցադրություններ թանգարանում:
- Նոյեմբերի 8-10-ը մասնակցել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտնականների 15-րդ միջազգային գիտաժողովին՝ հանդես գալով «Հայ ավանդական պարերը իրանահայոց մեջ: Փերիա գավառ (Բանահավաք Ռուդիկ Հարոյանի գրառած պարերի հիման վրա)» զեկույցով:
- Փորձի փոխանակման նպատակով մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի թանգարանի աշխատակցին:
- Փորձի փոխանակման նպատակով մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարանի տնօրեն Արկադի Դուրինյանին:

Թանգարանի գիտաշխատող Մ. Մանուչարյանը՝

- Պատրաստել է նոր ֆոտոշարքեր ցուցասրահների էկրաններով ցուցադրելու համար:
- Անցկացրել է ճանաչողական և մասնագիտական էքսկուրսիաներ:
- Համահեղինակել և կազմակերպել է ժամանակավոր ցուցադրություններ թանգարանում:
- Համահեղինակել է «Դի-Վի-Վի» Ինթերնեյշնալի և Թանգարանային կրթության կենտրոնի աջակցությամբ իրականացված «Հինը նորով» ինտերակտիվ ծրագիրը
- Փորձի փոխանակման նպատակով մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել ԼՂՀ Քաշաթաղի շրջանի երկրագիտական թանգարանի տնօրեն Մուշեղ Ալավերդյանին:
- Ապրիլի 5-8-ը մասնակցել է «Թանգարանային ցուցադրություն. նախագծում և դիզայն» խորագրով դասընթաց-վարժանքին, որն իրականացվում է ՀՀ մշակույթի նախարարության, Սմիթսոնյան Ինստիթյուշնի կողմից և «Իմ Հայաստան» ծրագրի, ԻԿՕՄ Հայաստանի աջակցությամբ:
- Հուլիսի 3-9 մասնակցել է Թանգարանային կրթության կենտրոնի և ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կազմակերպած ուսումնական և մասնագիտական վերապատրաստման դասընթացին Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի 6 թանգարաններում:
- Հոկտեմբերի 24-ին մասնակցել է Ռուսաստանում հայտնի մեդիաքննադատ, լրագրող, Մոսկվայի էկոնոմիկայի բարձրագույն դպրոցի մեդիահաղորդակցության բաժնի պրոֆեսոր Աննա Կաչկաևայի «Թանգարանների թվային փոխակերպում» խորագրով դասախոսությանը:
- Նոյեմբերի 22-25-ը մասնակցել է ԻԿՕՄ-ի կրթության և մշակութային գործունեության միջազգային կոմիտեի, ԻԿՕՄ Հայաստանի, ԻԿՕՄ-ի Մարքեթինգի և հանրահռչակման միջազգային կոմիտեի կազմակերպած «Թանգարանային կրթական ծրագրերի նախագծում և մարքեթինգ» թեմայով տարածաշրջանային դասընթացին:

50. Արխիվ

1. Արխիվի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
1. Արխիվային ֆոնդի համալրումը համալսարանի ֆակուլտետներից,ամբիոններից և կառուցվածքային ստորաբաժանումներից, գործավարությամբ ավարտված երկարատև պահպանության ժամկետ ունեցող փաստաթղթերով: 2. Փաստաթղթերի անվտանգ և անկորուստ պահպանությունը: 3. Փաստաթղթերի օգտագործումը սոցիալ իրավական և այլ նպատակներով: 4. Պետական և հասարակական կազմակերպությունների, բուհի շրջանվարտների, քաղաքացիների դիմում հարցումների պատասխանելը սեղմ ժամկետներում: 5. Տեղեկանքների պատրաստում՝ արխիվում պահպանվող փաստաթղթերի հիման վրա:
ԽՆԴԻՐՆԵՐԸ
1. Արխիվ ընդունված փաստաթղթերի ցուցակագրում և արխիվացում: 2. Մշտական պահպանության փաստաթղթերի նախապատրաստում և հանձնում ՀՀ Ազգային արխիվ: 3. Արխիվային փաստաթղթերի անվտանգ և անկորուստ պահպանության ապահովում:

2. Հաշվետու տարվա համար արխիվի պլանավորած աշխատանքները

Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին

Սեպտեմբեր-դեկտեմբեր	Արխիվային ֆոնդի համալրում համալսարանի բոլոր ֆակուլտետներից և ստորաբաժանումներից	
Ընթացիկ տարում	Փաստաթղթերի առավել անվտանգ պահպանություն և ապահովում	
Սեպտեմբեր-դեկտեմբեր	1.Շրջանվարտների անձնական գործերի արխիվացում	2767 գործ
	2.Աշխատանքից ազատված աշխատակիցների անձնական գործերի արխիվացում	460 գործ
	3.ավարտած ասպիրանտների և հայցորդների անձնական գործերի արխիվացում	370գործ

3.Հաշվետու տարում արխիվի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները

Համալսարանի արխիվում աշխատանքները համակարգելու և հետագա ընթացքը կազմակերպելու նպատակով շրջանավարտների և աշխատնաքից ազատված աշխատակիցների անձնական գործերը արխիվացնել համապատասխան կարգով և ձևաչափով՝ Հր. 3254-Լ 20.09.2017թ.

Մշտական պահպանության փաստաթղթերի պատրաստման և ՀՀ Ազգային արխիվ հանձնման համար դիմումի նախապատրաստում.

Արխիվային ֆոնդը ներառում է համալսարանի գիտա-պատմական նշանակություն ունեցող փաստաթղթերը, հրամանագրքերը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, վարչակառավարչական ապարատի, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական անձնակազմի, ասպիրանտների և շրջանվարտների անձնական գործերը սկսած 1968թվից:

Ուսանողության և աշխատակիցների հրամանագրքերը՝ սկսած 1935թ., աշխատավարձի ցուցակները, ժամավճարային աշխատողների աշխատավարձի ցուցակները, պետական քննությունների արձանագրությունների մատյանները և այլ երկարաժամկետ պահպանության փաստաթղթեր:

Արխիվ հանձնված յուրաքանչյուր գործ ցուցակագրվում, արխիվացվում և պահպանվում է: Արխիվը շրջանվարտներին է վերադարձնում իրենց ատեստատները, դիպլոմների հավելվածները, տալիս է տեղեկանքներ աշխատանքային ստաժի և ասպիրանտական որակավորման քննությունների վերաբերյալ:

Պատասխանում է Անձնագրային և վիզաների վարչության, սոցիալական բաժինների, ինչպես նաև միջազգային կրթական ծրագրերի հարցումներին: Տեղեկատվություն է տրվում տարբեր ֆակուլտետների, դասախոսական կազմի ներկայացուցիչներին գիտական ասպարեզում մեծ համբավ ունեցող անվանի մարդկանց վերաբերյալ: Արխիվը համագործակցում է համալսարանի պատմության թանգարանի հետ, տրմադրելով անժեքավոր նյութեր ֆակուլտետների և ամբիոնների ստեղծման և պատմության վերաբերյալ:

Արխիվը նախապատպաստում և կազմակերպում է մշտական պահպանության փաստաթղթերի՝ Ազգային արխիվին հանձնման աշխատանքները: 2017թ. ընթացքում տրվել է 1450 տեղեկանք, տրամադրվել են ատեստատներ, միջնակարգ կրթության դիպլոմներ և դիպլոմների հավելվածներ: Տեղեկանքներ են տրվել նաև համալսարանի մագիստրատուրայի շրջանվարտներին, պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ասպիրանտներին և հայցորդներին իրենց ուսումնառության տարիների վերաբերյալ:

Արխիվը ստուգել և պատասխանել է ՀՀ Ոստիկանության կադրերի վարչության հարցումներին, ինչպես նաև այլ երկրների կրթական ծառայության գրավոր հարցումներին, որոնք հիմնականում վերաբերվել են համալսարանի տարբեր տարիների շրջանվարտների դիպլոմների իսկությանը:

2017թ. կտրուկ ավելացել է նաև ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կողմից կատարված հարցումները, որոնք վերաբերվում են

համալսարանում սովորած վիրահայ շրջանվարտների դիպլոմների իսկությանը: Հարցումներ են ստացվել նաև ՌԴ-ից, որոնք վերաբերվել են համալսարանի նախկին աշխատակիցների ստաժին և աշխատավարձի չափերին ստանալով սպառիչ պատասխան:

51. Հիմնական դպրոց

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Դպրոցում ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
(01.01. 2017- 01.01. 2018) Հաշվետու ժամանակահատվածում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցի գործունեությունն ուղղված է եղել կրթական գործընթացի բարելավմանը՝ ապահովելով սովորողակենտրոն մոտեցում ինչպես գիտելիքների ձեռքբերման, այնպես էլ սովորողների կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորման գործում: Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցն իր գործունեությունն իրականացրել է դպրոցի գործող կանոնադրությանը և աշխատանքային պլաններին համապատասխան: Հիմնական դպրոցը ավագ դպրոցի հետ համատեղ աշխատանք է իրականացրել ՀՊՄՀ-ի ռազմավարական պլանով նախատեսված ուղղություններով, մշակվել են փաստաթղթերի նախագծեր: Դպրոցում գործում են չորս առարկայական մեթոդ միավորումներ, խորհրդակցական մարմիններ՝ աշակերտական, ծնողական խորհուրդները, մանկավարժական խորհուրդը: Գործում է նաև «Ծնողական հանրագիտարան» ակումբը, որը պարբերաբար կազմակերպում է սեմինար-քննարկումներ ծնողների համար: Դպրոցն ունի իր պաշտոնական կայքէջը (http //hpmh57dproc.wix.com//hpmh57dproc), որտեղ պարբերաբար թարմացվում և ներկայացվում են ուսումնական հաստատության գործունեության հետ կապված բոլոր նորությունները : Դպրոցում իրականացվում է ռուսաց լեզվի խորացված ուսուցում, առաջին, երկյրորդ և երրորդ դասարաններում գործում են անգլերենի և չինարենի խմբակները: Դպրոցում գործում են անվճար երկարօրյա խմբակներ, որտեղ իրականացվում են աշակերտների դասապատրաստումները, կազմակերպվում և անցկացվում են ճանաչողական խաղեր: Խմբակի գործունեության ծրագիրը մշակվել է ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության ֆակուլտետի հետ համատեղ: Դպրոցում գործում են (անվճար հիմունքներով) 12 խմբակներ (երգեցողություն, երգչախումբ, ակրոբատիկա, անգլերեն, ֆրանսերեն, չինարեն, ռուսերեն, ֆիզիկա, շախմատ, կերպարվեստ, մաթեմատիկա, ընթերցանություն), որոնցում ընդգրկված են մոտ 210 աշակերտ : ՀՊՄՀ–ի նախաձեռնությամբ դպրոցի առաջինից չորրորդ դասարանների սովորողները (285 աշակերտ) ստանում են անվճար սնունդ: Դպրոցի տարրական դասարաններում (1-4-րդ դաս.) շարունակվում է արդյունավետ գործել ուսուցչի օգնականի ինստիտուտը: Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսները ակտիվ ներառված են դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում (ներկայումս 30 կամավոր գործունեություն է ծավալում դպրոցում): Դպրոցում պարբերաբար իրենց մանկավարժական պրակտիկան են անցկացնում համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողները: Հաշվետու ժամանակահատվածում 343 ուսանող իրենց մանկավարժական պրակտիկաներն անց են կացրել դպրոցում : Դպրոցի աշակերտները ընթացիկ տարում մասնակցել են «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մեղու», «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթներին: Ընդհանուր թվով երեք մրցույթներին մասնակցել է 80 աշակերտ: «Այբ» կրթական հիմնադրամի

կողմից դպրոցը ստացել է 3 շնորհակալագիր՝ բոլոր մրցույթները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար : 2017-2018 ուսումնական տարում դպրոցում բացվեց երեք առաջին դասարան (ընդհանուր թվով՝ 102 աշակերտ): Ներկայումս դպրոցում սովորում է 417 աշակերտ:

ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

Դպրոցում հաշվետու տարում իրականացված սովորողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:			
Դպրոցում սովորողների թիվը՝ըստ դասարանների:			
N⁰	դասարան	դասարանների քանակը	սովորողների քանակը
1.	I	3	105
2.	II	3	94
3.	III	2	55
4.	IV	1	31
5.	V	2	44
6.	VI	1	24
7.	VII	1	24
8.	VIII	1	21
9.	IX	1	19
	Ընդամենը I- IX	15	417

Սովորողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		Աշ. թիվ
1	Նույն մարզի այլ դպրոցներ	30
2	Այլ մարզերի դպրոցներ	2
3	Հանրապետությունից դուրս	8
4	Արտահոսք, ընդամենը	40

Սովորողների ներհոսք		
	Հաստատություն / երկիր	Աշ. թիվ
1	Նույն մարզի այլ դպրոցներից	50
2	Այլ մարզերի դպրոցներից	5
3	Այլ երկրներից	1
4	Ներհոսք, ընդամենը	56

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Դպրոցում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող ուսուցչական կազմի ընտրության հստակ մոտեցումներ համապատասխան ՀՊՄՀ քաղաքականությանը:
Վերլուծել դպրոցի ուսուցչական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում: Վերլուծել դպրոցի ուսուցչական կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը կրթական ծրագրերի նպատակներին Դպրոցում աշխատող ուսուցիչների ընդհանուր թիվը՝ 42 Նոր ընդունվածները՝ 10. Դասվար – 4 Հայոց լեզու և գրականություն – 2

Ռուսաց լեզու – 1 Ֆրանսերեն – 1 Կերպարվեստ – 1 Երկարօրյայի դաստիարակ – 1 Տարրակարգ ունեցող ուսուցիչներ՝ 1 Նախաատեստացիոն վերապատրաստում անցած ուսուցիչներ՝ 3
Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները հաշվետու տարում:
Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների: ԿԱԻ-ի կողմից կազմակերպված օնլայն դասընթացներին դպրոցից մասնակցել են 4 ուսուցիչ: Անգլերենի 2 ուսուցիչներ մասնակցել են երկօրյա սեմինարի ‘Մանմար’-ում: Տեխնոլոգիայի ուսուցիչը մասնակցել է ‘Հայաստանի պետական նվաճումներ’ հիմնադրամի կողմից կազմակերպված 2-4-րդ դասարաններում ձեռնարկատիրական կրթության ներդրման վերաբերյալ եռօրյա վերապատրաստմանը:

ԴՊՐՈՑԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Դպրոցում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը:
Վերլուծել առկա կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝լսարանների, լաբորատորիաները, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Դպրոցի որոշ դասարաններ մասնակի վերանորոգվել են: Դպրոցը կարիք ունի հիմնանորոգման:

52. Հենակետային վարժարան (ավագ դպրոց)

ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Վարժարանում ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
Հաշվետու ժամանակահատվածում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի (ավագ դպրոցի) գործունեությունն ուղղված է եղել կրթական գործընթացի բարելավմանը. ապահովել, որպեսզի բոլոր սովորողերը ստանան որակյալ միջնակարգ կրթություն՝ ինքնուրույն կյանքի լիարժեք պատրաստված լինելու, կրթության հաջորդ աստիճանում ուսումն արդյունավետ շարունակելու և արժանապատիվ աշխատանքային գործունեությանն անցնելու նպատակով, ինչպես նաև ամրապնդել դաստիարակության բաղադրիչը: Պետականության դերի գիտակցման, հայրենասիրական, քաղաքացիական և էկոլոգիական ուսուցման և դաստիարակության միջոցներով բոլոր սովորողներին զինել հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով: Վարժարանում կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակներում նախատեսվում է. օժանդակություն նորարարական, այլընտրանքային, կրթության գերազանցության, փորձարարական և միջազգային հանրակրթական ծրագրերի ներդրմանը և իրականացմանը, կրեդիտային համակարգի ներդրում՝ ավագ դպրոցում, երեխայակենտրոն միջավայրի ստեղծում՝ ներդնելով ուսումնաօժանդակ ծառայություններ, արտադասարանական խմբակներ, դպրոցի գործունեության արդյունավետ աշխատակարգ:

Վարժարանն ունի իր պաշտոնական կայքէջը (http://www.varjaran.am), որտեղ պարբերաբար թարմացվում և ներկայացվում են ուսումնական հաստատության գործունեության հետ կապված բոլոր նորությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում վարժարանում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են մանկխորհրդի կողմից հաստատված տարեկան աշխատանքայինի պլանի, ուսումնական պլանների, ծրագրերի և դասացուցակի հիման վրա: Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով գործել են մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները, առարկայական մեթոդական միավորումները, որոնք մշտապես համագործակցում են համալսարանի համապատասխան ամբիոնների հետ: Շարունակվում են համալսարանի առաջավոր դասախոսների կողմից դասախոսությունների անկացումը թե սովորողների և թե ուսուցիչների համար:

Հաշվետու ժամանակաշրջանում վարժարանում իրենց մանկավարժական պրակտիկան են անցկացրել մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության, բանասիրական, պատմության և իրավագիտության, օտար լեզուների, գեղարվեստական կրթության ֆակուլտետների ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում սովորող ուսանողները: Ասպիրանտների և հայցորդների կողմից կատարվել են տարբեր մասնագիտությունների գծով ատենախոսությունների վերաբերյալ փորձարարական աշխատանքներ:

Վարժարանի կոլեկտիվը ակտիվ մասնակցություն է ունեցել մեր համալսարանի և այլ կրթօջախների կողմից կազմակերպված գիտաժողովներին, հրատարակել և հրատարակման ներկայացրել 25 գիտական աշխատանքներ:

Վարժարանի շրջանավարտներից տարբեր մասնագիտությունների գծով գիտությունների 30 թեկնածուների շարքը այս տարի համալրվեց ևս 2-ով:

Ելնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից և ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգի» հենակետային վարժարանում /ավագ դպրոցում/ կատարվել է ներքին գնահատում, այսինքն հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկում, որի նպատակն է՝ բարելավել հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և բարձրացնել արդյունավետությունը կամ, այլ կերպ ասած, նպաստել ուսումնական հաստատության գործունեության հետագա բարելավմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով: Ըստ էության՝ ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության մանրամասն վերլուծությունն ու դիտարկումն է:

Ներքին գնահատման հաշվետվությունը ներկայացվել է մանկավարժական, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովվել դրա հրապարակումը /այն ամբողջությամբ տեղադրված է վարժարանի պաշտոնական կայքում/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի (2017թ.) գործողությունների կատարման պլանի ԽՆԴԻՐ 4.6.-ում նախատեսվում է համալսարանի կազմում գործող դպրոցների հիման վրա ստեղծել ժամանակակից ուսումնագիտական կենտրոն, որի նպատակն է՝ կրթական գիտությունների ոլորտում ուսումնառողների մասնագիտական կողմնորոշում, ապագա դիմորդների նախաբուհական աջակցման (ուղեկցման, ուղղորդման) համակարգի զարգացում, ուսումնառողների ներգրավում և առաջընթացի ապահովում համալսարանական միջավայրում:

Այդ նպատակով նախատեսվում է՝

1.Մշակել ուսումնագիտական կենտրոնի կանոնակարգ, 2.Մշակել ուսումնագիտական կենտրոնի ռազմավարական ծրագիր, 3.Կազմել տեսանելի ապագայում անհրաժեշտ քայլերի կատարման ժամանակացույց: Որի համար դեռևս 2016թ. ձևավորվել էր աշխատանքային խումբ: Շուտով ավարտին կհասցվեն նախատեսվող աշխատանքները՝ նախագծի տեսքով և կներկայացվի քննարկման և հաստատման:

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

Վարժարանում հաշվետու տարում իրականացված սովորողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:			
Հաշվետու ժամանակահատվածում հենակետային վարժարանը 12-ամյա կրթությամբ տվել է 121 շրջանավարտ, որոնցից գերակշիռ մասը մեր համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներ են: 2017-2018թ. ուսումնական տարում մրցույթի արդյունքներով վարժարանի բնագիտամաթեմատիկական հոսքի /ֆիզմաթ ենթահոսքի/, հումանիտար հոսքի /հոգեբանություն, անգլերեն և լրագրություն ենթահոսքերի/ և մշակութային /նկարչություն-դիզայն ենթահոսքի/ հոսքերի 10-րդ դասարաններ են ընդունվել 143 աշակերտներ:			
Վարժարանում սովորողների թիվը՝ըստ դասարանների			
N^0	դասարան	դասարանների քանակը	Սովորողների քանակը
1.	X	5	140
2.	XI	5	126
3.	XII	5	98
	Ընդամենը X- XII	15	364
Սովորողների արտահոսք			
Հաստատություն/երկիր			Աշ. թիվ
1	Նույն մարզի այլ դպրոցներ		9
2	Այլ մարզերի դպրոցներ		1
3	Հանրապետությունից դուրս		10
4	Արտահոսք, ընդամենը		20
Սովորողների ներհոսք			
	Հաստատություն / երկիր		Աշ. թիվ
1	Նույն մարզի այլ դպրոցներից		6
2	Այլ մարզերի դպրոցներից		5
3	Այլ երկրներից		2
4	Ներհոսք, ընդամենը		8

Վարժարանում պարբերաբար կազմակերպվել են տարբեր բնույթի մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, բաց դասեր, միջոցառումներ: Վարժարանի սովորողները նաև պարբերաբար մասնակցել են համալսարանի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին և գրանցել լավագույն արդյունքներ (մասնավորաբար 2017թ. միջֆակուլտետային մրցաշարի հաղթող դարձան վարժարանի սաները): Վարժարանում գործում են անվճար խմբակներ (ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, վոլեյբոլի և բասկետբոլի), որոնցում ընդգրկված են մեծ թվով սովորողներ: Վարժարանի աշակերտները ընթացիկ տարում մասնակցել են «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մեղու», «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթներին և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից վարժարանը արժանացել է շնորհակալագրերի՝ բոլոր մրցույթները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար :

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վարժարանում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող ուսուցչական կազմի ընտրության հստակ մոտեցումներ համապատասխան ՀՊՄՀ քաղաքականությանը:
• Վարժարանում աշխատող ուսուցիչների ընդհանուր թիվը՝ 44, • Նոր ընդունվածները՝ 4, ▪ Աշխարհագրություն-1 ▪ Լրագրություն – 1 ▪ Հոգեբանություն-1 ▪ Կերպարվեստ –1 • Տարրակարգ ունեցող ուսուցիչներ՝ 9, • Գիտությունների թեկնածուներ՝ 10, • Գիտությունների դոկտոր՝ 1, • Դոցենտներ՝ 5, • Նախաատեստացիոն վերապատրաստում անցած ուսուցիչներ՝ 5, • Տարրակարգի ներկայացված ուսուցիչներ՝ 2:
Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները հաշվետու տարում:
Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի կողմից կազմակերպված հնգօրյա վերապատրաստում են անցել երկու ուսուցիչ՝ Իրինա Գրիգորյան, Վանուհի Բաղրամյան: Մեկ ուսուցիչ՝ Արմինե Եփրիկյանը մասնակցել է Մոսկվայի նորարական մանկավարժություն, գիտահետազոտական ինստիտուտի կողմից կազմակերպված օնլայն դասընթացներին: Ինֆորմատիկայի ուսուցիչ՝ Ռուզաննա Նիկոյանը մասնակցել է Հայ Հնդկական ԴՀՏ գերազանցության կենտրոնի և Google-ի հետ համատեղ <<EU Code Week 2017>> -ի ծրագրի շրջանակներում աշխատել է որպես մենթոր դասընթացավար:

ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վարժարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը:
Վարժարանի որոշ դասարաններ (առաստաղներ, հատակներ) մասնակի վերանորոգվել են, սակայն շենքը կարիք ունի հիմնանորոգման:

53. Ուսանողական խորհուրդ

1. Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանություն

Ուսանողական խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները ՀՊՄՀ-ի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների շահերը ու իրավունքները: Այդ նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին տեղի է ունենում հանդիպումներ 1-ին կուրսեցիների հետ, որի ժամանակ ուսանողներին ներկայացվում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ուսանողական խորհրդի ծրագրերը, դրանց դերն ու նշանակությունը: Ուսանողական խորհրդում մշտապես քննարկվում են ուսանողների բողոքները, դիմումներն ու առաջարկությունները և դրանք ներկայացվում ՀՊՄՀ ղեկավար մարմիններ: Ինչպես նաև ուսանողներին հուզող խնդիրները վեր հանելու նպատակով պարբերաբար անցկացվում են սոցիոլոգիական հարցումներ:

2. Սոցիալական բնույթի ծրագրերի իրականացում.

ՀՊՄՀ ուսանողական խորհուրդը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ տրամադրում են կրթաթոշակներ առաջին կուրսում սովորող վճարովի համակարգում ընդգրկված, ուսման մեջ բարձր առաջադիմություն ունեցող, հասարակայնորեն ակտիվ և սոցիալապես անապահով ուսանողներին: 2017 թվականին բազմաթիվ ուսանողներ ներգրավվել են ինչպես Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից տրամադրվող կրթաթոշակի ուսման վարձի փոխհատուցման ծրագրին, այնպես էլ Ջինիշյան հիմնադրամի կողմից իրականացվող կրթաթոշակային ծրագրերին: Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կրթաթոշակ է տրամադրել նաև Քառօրյա պատերազմին մասնակից ուսանողներին:

Ուխ սոցիալական հանձնաժողովը իրականացնում է մի շարք բարեգործական ծրագրեր՝ այցեր մանկատներ, ծերանոցներ, հատուկ դպրոցներ և այլն: Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները:

3. Սպորտային բնույթի միջոցառումներ

Ուսանողական խորհուրդն իր աշխատանքներում մեծ տեղ է հատկացնում սպորտային միջոցառումներին: Այդ նպատակով խորհրդի սպորտի և առողջ ապրելակերպի հանձնաժողովը և համալսարանի Սպորտի և շախմատի ամբիոնը իրականացնում են միջֆակուլտետային ֆուտբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, շախմատի, հրաձգության ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների առաջնություններ:

Պարբերաբար կազմակերպվում են առողջ ապրելակերպին վերաբերող սեմինար-քննարկումներ:

4. Համահայկական և միջբուհական ծրագրեր

Յուրաքանչյուր տարի ՀՊՄՀ ուսանողներից կազմված ջոկատը մեծ ոգևորությամբ և պատվով է մասնակցում «Բազե» ամենամյա համահայկական երիտասարդական հավաքին: Ջոկատի կազմում ընդգրկվում են մշակութային և սպորտային մրցույթներում հաջողութուն գրանցած ուսանողները:

Կազմակերպվում և իրականացվում են մի շարք միջբուհական ծրագրեր՝ բանավեճեր, ինտելեկտուալ խաղեր և այլն:

5. Բնապահպանական միջոցառումներ և ակցիաներ

Ուսանողական խորհրդի բնապահպանության ակումբը կատարում է այցեր «Հայաստանի բնության պետական թանգարան» և Երևանի բուսաբանական այգի՝ հիմնական թիրախային խումբ դարձնելով բուհի առաջին կուրսեցիներին: Իրականացվում են նաև էկոլոգիական խնդիրներին վերաբերող սեմինար-քննարկումներ, շաբաթօրյակներ և ծառատունկեր:

6. Միջազգային համագործակցություն

ՀՊՄՀ և ՀԵՀ համագործակցության շնորհիվ ուսանողական խորհուրդն իրականացնում է արդեն ավանդական դարձած «Ամառային դպրոց» ուսանողների փոխանակման ծրագիրը: Այն հնարավորություն է ընձեռում բուհի լավագույն ուսանողներին իրենց ամառային հանգիստն անցկացնել ինչպես հանրապետությունից դուրս, այնպես էլ Աղավնաձորի ուսումնամարզական բազայում: Ծրագրում առկա դասընթացները նպաստում են նոր գիտելիքների ձեռքբերմանը, լեզվական իմացության բարելավմանն ու փորձի փոխանակմանը:

7. Ռազմահայրենասիրական բնույթի ծրագրեր

Ուսանողական խորհուրդը կարևորում է հատկապես ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումների առկայությունն ուսանողների առօրյայում՝ հայրենասիրական ոգին բարձր պահելու, բանակ-հասարակություն կապի ամրապնդման նպատակով: Իրականացվել են բազմաթիվ այցեր տարբեր զորամասեր, Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, «Եռաբլուր» հուշահամալիր և այլուր: Ավանդույթ է նաև ամեն տարի մարտի 5-ին՝ Վ. Սարգսյանի ծննդյան օրը, ուսանողների այցելությունը սպարապետի տուն-թանգարան և նրա անունը կրող զորամաս:

Պարբերաբար իրականացվում են նաև հանդիպումներ բարձրաստիճան զինվորականների հետ:

8. Ուսանողների համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրեր

Հետևելով արդի մարտահրավերներին՝ ուսանողական խորհուրդը կարևորում է ուսանողների համակողմանի զարգացումը, որի նպատակով ՈւԽ ինտելեկտուալ ակումբը պարբերաբար իրականացնում է ինչպես ներֆակուլտետային, այնպես էլ միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ-մրցույթներ: Իրականացվում է նաև օնլայն ինտելեկտուալ խաղ՝ «Facebook» սոցիալական կայքում:

Բանավեճի ակումբը կազմակերպում է բանավեճեր, սեմինարներ ու քննարկումներ ուսանողներին և երիտասարդներին հուզող հարցերի վերաբերյալ:

Օտար լեզուների ֆակուլտետի ուսանողական խորհրդում գործող «Speaking Club» ակումբը (օտար լեզուների ֆակուլտետի դեկանի անմիջական օժանդակությամբ) պարբերաբար իրականացնում է օտար լեզուների անվճար ուսուցում՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուներով: Դասընթացների ավարտին ուսանողներին տրվում են հավաստագրեր:

9. Մշակութային և հոգևոր բնույթի ծրագրեր

Ուսանողական խորհուրդը սերտորեն համագործակցում է Հայ առաքելական եկեղեցու հետ, որի շնորհիվ ուսանողները մշտապես մասնակցում են եկեղեցական տոներին և ծիսակատարություններին:

Կազմակերպվում են նաև հանդիպումներ հոգևոր դասի ներկայացուցիչների հետ:

Մշակույթի հանձնաժողովն ամեն տարի նախաձեռնում է բազում մշակութային ծրագրեր: Վերջիններս կյանքի կոչելով՝ ստեղծվում է հիմնարար հարթակ, որտեղ շնորհալի ուսանողները կարող են ինքնարտահայտվել և երևան հանել իրենց ստեղծագործական կարողություններն ու մտահաղացումները:

10. Մամուլ և լրատվություն

Ուսանողական խորհուրդն արդեն հինգ տարի ունի պաշտոնական կայքէջ (hpmhux.am): Կայքում տեղադրվում են ուսանողական խորհրդի իրականացրած միջոցառումների լուսաբանումները և հայտարարությունների տեսքով տեղեկացվում սպասվող միջոցառումները:

ՀՊՄՀ ՈւԽ առցանց հեռուսաալիքի՝ «Student TV»-ի կողմից ամեն ամիս նկարահանվող հաղորդումները տեղադրվում են ինչպես ՈՒԽ պաշտոնական կայքում, այնպես էլ «Student TV»-

ի Յութուբյան և Ֆեյսբուքյան էջերում: Հաղորդումներում ՀՊՄՀ ուսանողներից կազմված ստեղծագործական կազմն ամեն ամիս նկարահանում է ուսանողական խորհրդի կազմակերպած միջոցառումները: Պատրաստվում են ռեպորտաժներ ինչպես ընթացիկ միջոցառումների մասին, այնպես էլ ուսանողների կողմից առաջարկված թեմաներով:

11. Մմասնագիտական կողմնորոշում
ՈՒսանողական խորհուրդն իրականացնում է իրազեկող ծրագիր՝ այց ավագ և միջնակարգ դպրոցներ, որտեղ ուսանողներն աշակերտներին են ներկայացնում ՀՊՄՀ-ն՝ ֆակուլտետները, բաժինները, մասնագիտությունները, բուհում առկա ծրագրերը:

12. Խրախուսում լավագույն ուսանողներին
Գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվ գործունեություն, օտար լեզուների իմացություն, գիտական և ստեղծագործական աշխատանքներում ներգրավվածություն, օրինակելի վարք և այլ բացառիկ հանգամանքներ: Այս չափանիշներով ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017 թվականին ուսանողական խորհուրդը ընտրեց լավագույն ուսանողին: Մինչև մրցանակաբաշխության արարողությունը բուհի 10 ֆակուլտետներում ընտրվեցին ֆակուլտետների լավագույն ուսանողները: Վերջիններս խրախուսվեցին նվերներով և պատվոգրերով: «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը շարունակվեց տոնական համերգով: Նշենք, որ ծրագիրն իրականացվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ:

Ամփոփելով Ուսանողական խորհրդի աշխատանքները նշենք, որ Խորհրդի կազմում հասարակական գործունեություն են ծավալում ավելի քան 300 ուսանող և հետբուհական կրթություն ստացող անձինք: Վերջիններս իրենց գործունեությունը ծավալում են Ուսանողական խորհրդի կանոնադրությամբ ամրագրված ֆակուլտետային ուսանողական խորհուրդների, հանձնաժողովների և ակումբների կազմում:

54. Արհեստակցական կազմակերպության

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը ղեկավարվելով համերաշխության, ժողովրդավարության և օրինականության սկզբունքներով, իր գործունեությունը նպատակաուղղել է կազմակերպության անդամների աշխատանքային և սոցիալական շահերի պաշտպանությանը:Արհեստակցական կազմակերպությունը անցկացրել է արհկոմիտեի նիստեր, որտեղ քննարկվել են համալսարանի առօրյային՝ միջոցառումների կազմակերպմանը, նյութական օժանդակության տրամադրմանը, աշխատողների իրավունքներին և աշխատանքային կարգապահությանը վերաբերող բազմաբնույթ հարցեր:Արհեստակցական կազմակերպությունը համագործակցել է մշակութային օջախների հետ, ինչը նպաստել է աշխատողների ազատ ժամանակի կազմակերպմանը: Աղավնաձորի ուսումնական բազայում համալսարանի աշխատողների և նրանց ընտանիքների անդամների ամառային և ձմեռային հանգստի կազմակերպման համար ուղեգրերը հաշվառվել և տրամադրվել են արհեստակցական կազմակերպության կողմից: Ուղեգրերի արժեքի նկատմամբ կիրառվել են համապատասխան զեղչեր:
2017թ. արհկոմիտեի տնօրինության տակ եղել է 29.150.000դրամ գումար, որը ծախսվել է ներքոնշյալ տարբերակմամբ.
1. Անդամավճար ԲՈՒՀ-րի արհեստակց.կազմ-րի ճյուղային հ/մ - 600.000դրամ
2. Օգնություն համալսարանի աշխատողներին/ըստ դիմումների/- 6.350.000դրամ
/այդ թվում Աղավնաձորի ուղեգրերի զեղչ 2.470.000դրամ/

3. Ֆակուլտետային և համահամալսարանական միջոցառումներ - 13.330.000դր. /այդ թվում մշակութային օջախներից տոմսերի ձեռք բերում, ֆակուլտետների և համահամալս. ամբիոնների աշխատակիցների էքսկուրսիաներ, աշխատակիցների և նրանց երեխաների համար տոնական և ամանորյա միջոցառումներ /

4. Վճարվել է աշխատավարձ - 6.370.000դր.

5. Վճարվել է հարկեր -2.230.000դր.

6. Այլ ծախսեր/բանկի միջնորդավճար, գրասենյակային ծախս/ -270.000դրամ

Ընդամենը-29.150.000դր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առաջաբան 1
2. Վարչական կազմ 2
3. Ամբիոնի վարիչներ, դեկաններ 4
4. Ընդունելություն 2017 6
5. Գիտական խորհրդի կազմը 15
6. Գիտական խորհրդի գործունեությունը 17
7. Համալսարանի պատվավոր պրոֆեսորներ, դոկտորներ 19
8. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ 20
9. Ռեկտորատի գործունեությունը 21
10. Քարտուղարության 21
11. Ֆակուլտետների մասնագիտական կրթական ծրագրեր 23
12. Բանասիրական ֆակուլտետ 36
13. Մաթեմատիկայի, ֆիզիկայի եվ ինֆորմատիկայի ֆակուլտետ 66
14. Կենսաբանության, քիմիայի եվ աշխարհագրության ֆակուլտետ 101
15. Պատմության և իրավագիտության ֆակուլտետ 130
16. Գեղարվեստական կրթության ֆակուլտետ 166
17. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ 192
18. Կուլտուրայի ֆակուլտետ 230
19. Սկզբնական կրթության ֆակուլտետ 254
20. Հատուկ կրթության ֆակուլտետ 284
21. Օտար լեզուների ֆակուլտետ 315
22. Համահամալսարանական ամբիոններ 352
23. Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն 402
24. Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին 406
25. Կրթության որակի ապահովման և կառավարման բաժին 416
26. Ուսանողական ակադեմիական հետագծի (շարժի) կազմակերպման բաժին 422
27. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժին 433
28. Լրատվության եվ հանրության հետ կապերի վարչություն 451
29. Պաշտոնական կայքի ապահովման բաժին 459
30. Ռադիո Ֆամա 464
31. «Մանկավարժական համալսարան» թերթ 469
32. Հաշվապահություն 473
33. Ֆինանսների ծրագրավորման եվ վիճակագրության վարչություն 474

34. Տնտեսական վարչության գործունեության 494
35. Նյութատեխնիկական մատակարարման եվ գնումների բաժնի գործունեության 495
36. Միջազգային համագործակցության բաժին 498
37. Անձնակազմի հաշվառման բաժին 511
38. Հատուկ բաժին 516
39. Նախապատրաստական բաժին 517
40. Իրավաբանական կենտրոն 519
41. Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն 525
42. Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն 531
43. Պրակտիկայի կենտրոն 535
44. Գիտահետազոտական կենտրոն 544
45. ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհուրդ 570
46. Հոգեբանության 064 մասնագիտական խորհուրդ 575
47. Սփյուռք գիտաուսումնական կենտրոն 577
48. Գիտական գրադարան 584
49. Թանգարան 587
50. Արխիվ 590
51. Հիմնական դպրոց 592
52. Հենակետային վարժարան (ավագ դպրոց) 594
53. Ուսանողական խորհուրդ 597
54. Արհեստակցական կազմակերպության 600